# ՄԱՇՏՈՑ

## ԿԱՐԳ ԹԱՂՄԱՆ
## ԿԱՐԳԱՒՈՐԱՑ

ԱՅՍԻՆՔՆ

***ՀԱՅՐԱՊԵՏԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ***

ԵՒ

***ՔԱՀԱՆԱՅԻՑ***

Ըստ ամենայնի համաձայն մայր Մաշտոցի․

***Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս․ ԱԹՈՌՈՅՍ***

ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

**1896**

ՀԱՅԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ՄԿՐՏՉԻ Ա.

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱՒ

ՊԱՏՐԻԱՐՔԻ Ս. ԱԹՈՌՈՅՍ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Տ. ՅԱՐՈՒԹԻՒՆ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ

Տ. ՄԱՏԹԷՈՍԻ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ի ՅԻՇԱՏԱԿ

# ԾՆՈՂԱՑ ԻՒՐՈՑ

ՄԻՐԶԱՅԻ ԵՒ ԶԱՐԿԻԶԻ

ԵՏ ՏՊԱԳՐԵԼ

Տ· ԱՆԴՐԷԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԻՐԶԱՅԵԱՆ

ԲԱՂԻՇԵՑԻ

ՄԻԱԲԱՆ Ս· ՈՒԽՏԻՍ


I N R J

# ԿԱՐԳ

## ԹԱՂՄԱՆ ԿԱՐԳԱՒՈՐԱՑ

Կանոն յորժամ Հայրապետ՝ կամ Եպիսկոպոս՝ կամ ուխտի Առաջնորդ կամ Քահանայ կատարի մահուամբ․ զայս կարգաւորութիւն արասցեն լուացման և պատանաց և այլ կանոնեալ պայմանաւոր կարգացն։ Երթան նախ ուր զհանգիստն պատրաստեն քահանայք ժողովրդովքն հանդերձ։
Եւ առեն Սաղմոս․ ՁԹ․ ողբաձայն՝ կցորդ։

*Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա 'ի մեզ, Տէր,*
*զգործս ձեռաց մերոց յաջողեա՛ մեզ։*

*Տէր, ապաւէն եղեր մեր ազգէ մինչեւ յազգ․ մինչչեւ լերինք հաստատեալ էին, եւ մինչչեւ ստեղծեալ էիր զերկիր և զամենայն տիեզերս։ Յաւիտենից մինչեւ յաւիտեանս դու ես․ մի՛ դարձուցաներ զմարդ 'ի տառապանս․ և ասացեր, դարձարուք առ իս, որդիք մարդկան։ Հազար ամ յաչս Տեառն որպէս օր երեկի զի էանց, որպէս պահ մի գիշերոյ․ եւ ամք նոցա անարգութեամբ եղիցին։*

*Ընդ առաւօտս որպէս դալարի բուսցին, ընդ առաւօտս որպէս դալարի զուարճասցին և ծաղկեսցին․ ընդ երեկոյս թարշամեսցին չորասցին և անկցին։*

*Նուաղեցաք մեք 'ի բարկութենէ քումմէ, և 'ի սրտմտութենէ քումմէ խռովեցաք։*

*Եդեր զմեղս մեր առաջի քո, և զկեանս մեր 'ի լոյս երեսաց քոց։*

*Ամենայն աւուրք մեր նուաղեցան, և 'ի բարկութենէ քումմէ խռովեցաք։*

*Ժամանակ ամաց մերոց անդադար որպէս սարդի, եւ թիւ աւուրց ամաց մերոց 'ի նոսա եօթանասուն ամ։*

*Ապա թէ առաւել եւս՝ ութսուն ամ․ և որ ինչ աւելի քան զայն՝ ցաւօք և հեծութեամբ։*

*Եկն 'ի վերայ մեր հեզութիւն և խրատեցաք․ իսկ արդ ո՞ գիտասցէ զզօրութիւն բարկութեան քո, և կամ յահէ քումմէ զսրտմտութիւն քո համարեսցի։*

*Այսպէս ցոյց ինձ զաջ քո, եւ որ խոնարհ են սրտիւք՝ զիմաստութիւնս քո։*

*Դարձ, Տէր, մինչեւ յե՞րբ․ մխիթարեա 'ի ծառայս քո։*

*Լցաք առաւօտու ողորմութեամբ քով, ցնծացաք և ուրախ եղաք զամենայն աւուրս կենաց մերոց։*

*Ուրախ եղաք փոխանակ աւուրցն, յորս խոնարհ արարեր զմեզ, և ամացն՝ յորս տեսաք զչարչարանս։*

Հայեա՛, Տէր, 'ի ծառայս քո և 'ի գործս ձեռաց
քոց, և առաջնորդեա որդւոց նոցա. եղիցի լոյս
տեառն Աստուծոյ 'ի վերայ մեր։
Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա 'ի մեզ, Տէր,
զգործս ձեռաց մերոց յաջողեա՛ մեզ.

Ընթերցուած յԱռակաց։ Թ. 1։

Իմաստութիւն շինեաց իւր տուն, և կանգնեաց սիւնս եօթն։ Զեն զզենլիս իւր, և խառնեաց 'ի խառնելիս զգինի իւր, եւ պատրաստեաց զսեղան իւր։ Եւ առաքեաց զծառայս իւր, կոչել բարձր քարոզութեամբ 'ի խառնելիս իւր՝ և ասէ. Որ ոք իցէ անզգամ, եկեսցէ առ իս։ Եւ ցպակասամիտսն ասէ. Եկա՛յք կերա՛յք 'ի հացէ իմմէ, և արբէ՛ք զգինի իմ՝ զոր խառնեցի ձեզ։ Թողէ՛ք զանզգամութիւն և կեցջի՛ք, խնդրեցէ՛ք զիմաստութիւն զի ապրեսջի՛ք. եւ ուղղեցէ՛ք գիտութեամբ զհանճար, եւ ուղիղ ճանապարհաւ իմացարուք զխրատ։

Ընթերցուած յԱնգեայ մարգարէէ։ Բ. 4։

Ա՛յսպէս ասէ Տէր. Ո՞յր ուրուք 'ի ձէնջ տեսեալ իցէ զտունս զայս 'ի փառաւորութեան իւրում իբրեւ զառաջինն, եւ արդ տեսանէք զդա՝ որպէս զոչինչ առաջի ձեր. Արդ զօրացի՛ր դու, Զօրաբաբէլ, ասէ Տէր, եւ

զօրացիր․ Յեսու Յովսեդեկեանց քահանայ մեծ, եւ զօրասցի ամենայն ժողովուրդ երկրիդ․ ասէ Տէր․ եւ գործեցէք զի ես ընդ ձեզ եմ, ասէ Տէր ամենակալ։

Պօղոսի առաքելոյն յԵբրայեցւոց թղթոյն է ընթերցուածս ։ Գ․ 1։

Ուստի, եղբարք սուրբք, երկնաւոր կոչմանն բաժանորդք, նայեցարուք ընդ Առաքեալն և ընդ քահանայապետ խոստովանութեան մերոյ ընդ Յիսուս Քրիստոս․ որ հաւատարիմ է արարչին իւրոյ, որպէս եւ Մովսէս յամենայն տան նորա․ զի առաւել եւս փառաց քան զՄովսէս արժանի եղեւ, որչափ առաւել պատիւ ունիցի քան զտունն՝ տանն առնելն․ զի ամենայն տուն կազմի յումեմն կազմի․ իսկ որ զամենայն արար, Աստուած է ։

Ալէլուիա․ Սաղմոս ճլա։ Արի՛, Տէր, ՚ի հանգիստ քո՝ դու և տապանակ կտակի սրբութեան քոյ։

Ալէլուիա Օրհնի։

Խաղաղութիւն ամենեցուն ։

Սրբոյ աւետարանին Յիսուսի Քրիստոսի որ ըստ Ղուկասու ։ ԺԹ․ 5։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ։

Իբրև եկն ՚ի տեղին, հայեցաւ ՚ի վեր Յիսուս՝ և ասէ ցնա․ Զակքէ, փութա՛ էջ այտի, զի այսօր

*'ի տան քում արժան է ինձ ագանել. փութա- ցաւ և էջ՝ և ընկալաւ զնա ուրախութեամբ։ Իբրև տեսին ամենեքին, տրտնջէին և ասէին՝ թէ առ առն մեղաւորի եմուտ լուծանել։ Եկն եկաց Զակքէոս և ասէ ցՏէր. Տէր, ահա զկէս ընչից իմոց տաց աղքատաց. և եթէ զոք զրկեցի, հատուցից չորեքկին։ Եւ ասէ ցնա Յիսուս. Այսօր եղեւ փրկութիւն տանս այս- միկ. քանզի եւ սա որդի Աբրահամու է։ Զի եկն որդի մարդոյ խնդրել եւ կեցուցանել զկորուսեալն։*

Փարողէ Սարկաւագն։

*Վասն 'ի վերուստ խաղաղութեան եւ փրկու- թեան անձանց մերոց, զՏէր աղաչեսցուք։*

*Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի ա- ղաչանաց մերոց, զՏէր աղաչեսցուք։*

*Վասն քաւիչ և ներող լինելոյ Աստուծոյ 'ի վերայ մեղաց մերոց, զՏէր աղաչեսցուք։*

*Վասն թողլոյ մեզ զամենայն յանցանս մեր, ըղ- կամայ և զակամայ, զՏէր աղաչեսցուք։*

*Վասն զի մի՛ ընդ խոտանս գտանիցիմք յաւուրն պատասխանատուութեան, զՏէր աղաչեսցուք։*

*Վասն հոգւոյն հանգուցելոյ՝ որք ճշմարիտ և։*

*Եւ եւս միաբան վասն ճշմարիտ և սուրբ հա։*

*Զանձինս մեր և զմիմեանս Տեառն Աստուծոյ։*

*Ողորմեա՛ց մեզ Տէր Աստուած մեր ըստ մեծի։*

Եւ քահանայն ասէ զԱղօթս ։

Փառք քեզ Թագաւոր Թագաւորաց, յոյս և ակնկալութիւն ամենայն ծագաց երկրի, 'ի քեզ յուսով յուսացաք. որ փոխանակ ապականացու կենաց, զանապական և զանվախճան կեանսն շնորհեցեր մեզ. եւ փոխանակ տխրալից աշխարհիս՝ պարգեւեցեր զվերինն Երուսաղէմ, ըղզուարճալից ուրախութիւնսն ։ Վասն որոյ աղաչեմք զքեզ, Տէր, օրհնեա՛ զտեղի բնակութեան ծառայիս քո, զոր շնորհեցեր տաճար հանգստեան. հանգո՛ ընդ սուրբս քո՝ շնորհօք եւ մարդասիրութեամբ Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի. որում վայելէ փառք իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

Եւ ասեն .

Աստուած անեղ անժամանակ, հայր անըս-կիզբն և անքանակ, որդւոյ պատճառ ծնըն-դեամբ անճառ, Հոգւոյն բըղխմամբ անքըն-նաբար. աղաչեմք զքեզ զլծեալ՝ երկայնա-միտ եւ ողորմած, ողորմեա քո ստեղծուա-ծոյս՝ յուսով 'ի քեզ նընջեցելոյս :

Բանդ որ 'ի ծոց Հօր միածին և կերպարան սկըզբնատըպին, որով երկինք գոյացան, աշխարհ լըրիւ հաստատեցան. հայցեմք 'ի քէն Տէր և փըրկիչ ամենողորմ և կեցուցիչ. ողորմեա քո :

Երգ :

Ի գնել բեմին բազմի փեսային և ա-ռագաստին զարդարի. զարթիկեան փա-ղին գոչէ սուրբք ամենայն անդր հա-ւաքին. արդարոց դասքըն բերկրին իսկ մեղաւորքըն թախանձին. ողորմած Տէր ողոր :

Մաղթանք :

Հոգւոյն հանգուցելոց, Քրիստոս Աստուած, արա հանգիստ և ողորմութիւն, և մեզ մեղա-ւորացս՝ շնորհեա զթողութիւն յանցանաց :

Քարոզ։

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչես։

Վասն հանգուցելոյ հոգւոյն աղաչեսցուք զփրկիչն մեր Քրիստոս՝ զի զնոսա ընդ արդարսն դասեսցէ. և զմեզ կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ։ Ամենակալ Տէր Աստուած մեր. կեցո և ողորմեա։

Տէր ողորմեա. Տէր ողորմեա. Տէր ողորմեա։

Մաղթանք։

Քրիստոս, որդի Աստուծոյ անոխակալ և բարեգութ, գթա քո առաջնական սիրովդ 'ի հոգիս հանգուցեալ ծառայից քոց։ Յիշեա յաւուր մեծի գալստեան արքայութեան քո։ Արա արժանի ողորմութեան քաւութեան եւ թողութեան մեղաց։ Դասաւորեալ պայծառացո ընդ սուրբս քո յաջակողման դասուն։ Զի դու ես Տէր և արարիչ ամենեցուն. դատաւոր կենդանեաց և մեռելոց։ Եւ քեզ վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Հայր մեր որ յերկինս։

Եւ ապա առեալ քահանայն զբրիչն. և գրոշմէ զուղին խաչանման. և տայ գործել ժողովրդեանն զխորութիւն բրածին, մէջ թիզ կամ եօթն. և զերկայնութիւնն ըստ չափոյ մարմնոյն ։ Եւ ապա երթայցեն առ փոխճանեալն ։ Նախ կարեսցեն զպատանն ամենայն պարագայիւքն՝ որպէս ՚ի վայրդ գրեալ է. և ՚ի պատրաստելն այս կարգ կատարի մինչեւ վճարեսցեն ։

Նախ ասեն ։

Օրհնեալ Հոգին սուրբ Աստուած ճշմարիտ ։
Ողորմեա՛ ինձ Աստուած ըստ մեծի ողորմութեան քում ։ (Օրհնեմ զՏէր ամ՚ն ժամ) ։
Յամենայն ժամու աղաչանք իմ այս են ։
Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ։
Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգ ։
Եւ ասասցեն ի նեղութեան կանոնն, և ասեն վեց ծնրադրոյ. և յաւելն ծնրադրոյն. Եւ եւս խաղաղութեան զՏէր ։ Օրհնութիւն և փառք Հօր և ։

Եւ ասեն կանոնագլուխ թիւ. Սաղմոս ՃԽԵ ։

Օրհնեա՛, անձն իմ, զՏէր. օրհնեցից զՏէր ՚ի կեանս իմ, սաղմոս ասացից Աստուծոյ իմոյ մինչև եմ ես ։
Մի՛ յուսայք յիշխանս՝ յորդիս մարդկան, զի ոչ գոյ փրկութիւն ՚ի նոսա ։
Ելցէ հոգի ՚ի նոցանէ՝ և դարձցին անդրէն ՚ի հող, և յայնմ աւուր կորիցեն ամենայն խորհուրդք նոցա ։
Երանի ում Տէր Աստուած Յակոբայ օգնական է նմա, և յոյս նորա ՚ի Տէր Աստուած է ։

Որ արար զերկինս և զերկիր, զծով և զամենայն
որ է ՚ի նոսա։

Ո՛ պահէ զճշմարտութիւն յաւիտեան, եւ առնէ
իրաւունս զրկելոց։

Տայ հաց քաղցելոց, և արձակէ զկապեալս Տէր։

Տէր բանայ զաչս կուրաց, և կանգնէ զգլորեալս
Տէր։

Տէր սիրէ զարդարս, Տէր պահէ զպանդուխտս.
զորբս և զայրիս ընդունի Տէր, և զճանապարհս
ամբարշտաց կորուսանէ։

Թագաւորեսցէ Տէր յաւիտեան, Աստուած քո,
Սիովն, ազգէ մինչեւ յազգ։

Զայլն։

Օրհնեցից ընդ քեզ գոհութեամբ ՚ի կեանս իմ. սաղմոս ասացից քեզ Քրիստոս Թագաւոր. յաղթական նոր երգով օրհնութեամբ։

Երեք նիւթ։

Սաղմոս, ճխզ. ՃԽԶ.

Օրհնեցէք զՏէր՝ զի բարի են սաղմոսք. Աստուծոյ
մերում քաղցր եղիցի օրհնութիւն.

Շինէ զԵրուսաղէմ Տէր, եւ զցրուեալսն Իսրա-
յէլի ժողովէ.

Բժշկէ զբեկեալս սրտս, եւ պատէ զամենայն
վէրս նոցա։

Ո՛ թուէ զբազմութիւն աստեղաց. եւ զամենե-
սեան զնոսա յանուանէ կոչէ։

Մեծ է Տէր մեր, եւ մեծ է զօրութիւն նորա, իմաստութեան նորա ոչ գոյ թիւ։

Ընդունի զհեզս Տէր, եւ խոնարհ առնէ զամբարտաւանս մինչեւ յերկիր։

Օրհնեցէք զՏէր խոստովանութեամբ, սաղմոս ասացէք նմա օրհնութեամբ։

Զգեցոյց զերկինս ամպովք, և պատրաստ արար զանձրեւ իւր յերկիր։

Բուսոյց զխոտ 'ի լերինս, եւ զդալարի 'ի ծառայութիւն մարդկան։

Այն որ տայ անասնոց զկերակուր, ձագուց ագռաւուց՝ որ կարդան առնա։

Ո՛չ թէ ընդ զօրութիւնս ձիոյ կամեցաւ Տէր, և ոչ ընդ իրանս առն հսկայի հաճեցաւ։

Այլ հաճեցաւ Տէր ընդ երկիւղածս իւր, և ընդ այնոսիկ ոյք յուսան յողորմութիւն նորա։

Զայնիւ։

Քա՛ղցրա՛ցի՜ն քե՛ղ Քրիստոս՝ գո՛հութի՛ւնք Երկիւղա՛ծա՜ց անուա՛ն քո․ զո՛ր յուսա՛ցուցե՛ր ողորմութեամբ քո՛վ 'ի խո՛րհրդո՛ւրդս կենսաբե՛ր գալստեա՜նդ քո՛։ Երէշ Նէնէ․

Սաղմոս, Թիւ․ ճխէ։

Գովեա՛ Երուսաղէմ զՏէր, եւ օրհնեա՛ զԱստուած քո Սիովն։

Զի զօրացոյց զնիգս դրանց քոց, եւ օրհնեաց զորդիս քո 'ի քեզ։

Ո եդ զսահմանս քո 'ի խաղաղութիւն , պարարտութեամբ ցորենոյ լցոյց զքեզ ։

Առաքէ զբան իւր յերկիր , վաղվաղ ընթանան պատգամք նորա ։

Դնէ զձիւն որպէս զասր , և զմէգ որպէս փոշի ցանեաց ։

Արկանէ զսառն որպէս պատառս , առաջի ցրտոյ նորա ո՞ կարէ կալ ։

Առաքէ զբան իւր եւ հալէ զնոսա , շնչեսցեն հողմք և գնասցեն ջուրք ։

Պատմէ զբան իւր Յակովբայ ; զարդարութիւն և զիրաւունս Իսրայէլի ։

Ո՛չ այսպէս արար ամենայն ազգաց Տէր , եւ զդատաստանս իւր ոչ յայտնեաց նոցա ։

Փառք Հօր և Որդւոյ և ։ Այժմ և միշտ և ։

Ձայնիւ ։

Զքեզ Քրիստոս գովէ եկեղեցի փրկեալ քո սուրբ . ցնծալով տեսանէ ըզքեզ ըզփրկողդ եկեալ հայրական իշխանութեամբ 'ի պսակել ըզսուրբս քո ։

Երիցս կրկնէ ։

Եւ ապա ։

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ։

Օրհնութիւն և փառք Հօր և ։

Աղօթք Ամբակումայ մարգարէին . Գ ։

Տէր , զլուր քո լուայ և երկեայ · Տէր , նայեցայ 'ի
 գործս քո՝ և զարհուրեցայ ։
Ի մէջ երկուց կենդանեաց ծանիցիս դու , 'ի
մերձենալ ամացն յայտնեսցիս , եւ 'ի հասանել
 ժամանակին երեւեսցիս ։
Ի խռովել անձին իմոյ 'ի ժամանակի բարկու-
 թեան զողորմութիւն յիշեսցես ։
Աստուած 'ի հարաւոյ եկեսցէ , եւ սուրբն 'ի
 Փառան լեռնէ ։
Ցայտնեսցեն երկինք զվայելչութիւն փառաց նո-
 րա , և օրհնութեամբ նորա լցան տիեզերք ։
Ճառագայթք որպէս 'ի լուսոյ հատան 'ի նմանէ ,
և եղջիւրք 'ի ձեռին նորա գտան · և անդ հաս-
 տատեցաւ զօրութիւն փառաց նորա ։
Ցերեսաց նորա ելցեն հարուածք , և զհետ շաւ-
 ղաց նորա երթիցեն մեծամեծք 'ի թռչնոց ։
Եկաց և չափեաց զերկիր , հայեցաւ և դիտեաց
 զհեթանոսս ։
Լերինք հալեցին և անտառք վատնեցին · ճա-
նապարհք որք 'ի սկզբանէն էին , կուրասցին ·
 և 'ի նմանէ դողասցի ամենայն երկիր ։
Տեսի զբանակս Քուշացւոց , խռովեցան բնակիչք
 վրանացն Մադիամու ։
Միթէ 'ի վերայ գետոց բարկասցիս դու , Տէր · կամ
սրտմտութիւն քո 'ի վերայ գետոց , կամ բար-
 կութիւն քո 'ի վերայ ծովու ։



ՀԱՅԿ ՍՍՌ ...ՆԵՐԻ ՖՈՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

Եղեր դու 'ի կառս քո. հեծելութիւնդ քո փըրկութիւն եղեւ յելանելն քո։

Զարթեաւ աղեղն քո, զնետս կապարճից քոց արբեցուցեր. զգետս ցրուեցեր, զերկիր դողացուցեր 'ի սաստկութենէ անձրեւի, որք անցանեն ընդ սա։

Անդունդք աղաղակեցին մեծապէս, լոյս փայլման արեգականն արգելաւ. եւ ծագումն լուսնին դադարեաց։

Որպէս 'ի նշոյլս սլաքաց քոց գնասցես, և որպէս 'ի լոյս փայլատակման սրոյ քո։

Բարկութեամբ զարթիցես 'ի վերայ երկրի, եւ դողութեամբ կասցես զհեթանոսս։

Երեւեցար 'ի փրկութիւն ժողովրդեան քոյ՝ 'ի փրկել զընտրեալս քո։

Նետաձիգ եղեր 'ի գլուխս մարդկան ամբարտաւանից, եւ մինչեւ յանդունդս ծովու ընկըղմեցան։

Խնդրեցեր զվրէժ զօրութեամբ քով 'ի զօրագըլխացն մեղաւորաց, որք յուսացեալ էին յանդըգնութիւնս իւրեանց. զի կերին զաղքատն 'ի գաղտնիս։

Առաքեցեր 'ի վերայ ծովու զերիվարս քո, եւ խռովեցան յաղթ ջուրք անդնդոց։

Կացի ես և գելան աղիք իմ 'ի ձայնէ բերանոյ իմոյ. եմուտ դողումն յոսկերս իմ, և ես յանձն իմ խռովեցայ։

Զայս պահեսցես յաւուր նեղութեան ածել 'ի

վերայ ազգի ամենայնի, որք մարտնչին ընդ ժողովրդեան քում։

Թզենի ոչ տացէ զպտուղ իւր, և յայգւոջ բեր մի՛ գտցի․ ձիթենիք սնասցին, եւ երկիր մի՛ բուսուսցէ զդալարի։

Պակասեսցին հօտք 'ի ճարակաց, եւ եզինք մի՛ գտցին առ մսուրս։

Ես 'ի Տէր յուսացայ, ցնծացայց և ուրախ եղէց յԱստուած փրկիչ իմ։

Տէր Տէր ետ ինձ զզօրութիւն, և կացոյց զոտս իմ 'ի հաստատութեան․ 'ի վերայ պարանոցի թշնամւոյն կացոյց զիս և հանգոյց զիս երագ երագ։

Շարական․ Դկ․

Լուայ զսքանչելի տնօրէնութեան քո Բղխոր․ քանզի յերկնից խոնարհեալ մարմնացար 'ի սուրբ կուսէն, եւ խառնեցար ընդ մարդկան․ և զարհուրեալ հիացայ ընդ քո ընդ անհաս մարդասիրութիւնդ ։ Զխնանաբար զյարութիւնդ գուշակեաց մեզ մարգարէն․ ասէ Ելե՛ր դու 'ի կայանս քո․ հեծելութիւնդ քո Քրիստոս փրկութիւն եղեւ յերամնելոյդ քո ։ Երեւեցար 'ի փրկել զարարածս 'ի մահուանէ․ և դրժողք հիացեալ սասանեցան 'ի յահէ ամենազօր փառաց քոց ։

Աղաւ. Քրիստոս Աստուած յոյս ապաշխարո-ղաց. շնորհեա զթողութիւն բազում յանցա-նաց իմոց։ Առ քեզ բազմագութ ապաւի-նեալ կարդամք. մի մերժեր ըզմեզ յողոր-մութենէ քումմէ։ Որպէս զաւազակն ա-ղաղակեմ առ քեզ. յիշեա և զիս Տէր ի
քում արքայութեանդ։

Զմեղս իմ խոստովանիմ առ քեզ Քրիստոս՝ որ միայնդ ես բազմագութ թշ-ուառութեամբ. ողորմեա ինձ Աստուած։ Դու Տէր որ ճշմարտութեանց ես աղբիւր եւ քննես ըզծածուկս գաղտնեաց սրտի իմոյ. ողորմ։ Տուր ինձ ցնծութիւն փըր-կութեան, և հոգւով տէրութեանդ քո
հաստատեա զիս. եւ ողորմեա ինձ Ա(ստուա)ծ։

Ալիք յանցանաց զիս ալէկոծեն, և մեղք իմ բազում զիս յանդնդամանեն։ Արդ զինչ ա-րարից մեղուցեալս անձամբս, որ չեմ ապ-րելոց յահագին հրոյն։ Մեղայ քեզ Քրիս-տոս որդի Աստուծոյ, շնորհեա զթողութիւն
բազում յանցանաց իմոց։

Տէր, որ ի մէջ լերինն աղբերացուցեր ըզ-ջուրն ի վիմէն։ Տէր, ի սրտէ իմմէ հան ինձ արտասուս ապաշխարութեան։ Զի կե-

ցից եւ ապաշխարութեամբ ապրեցայց 'ի
հանդերձեալ քոյ դատաստանիդ:

Մեղուցեալ անձամբ կարդամ առ քեզ Հայր երկնաւոր. օգնեա ինձ 'ի նեղութեանս, որ մեղօքս եմ մեռեալ, ծգնեա ինձ: Վիրաւորեցայ ես յաներեւոյթ թշնամւոյն. բժիշկ հիւանդաց, բժշկեա զիմ զհիւանդութիւնս, որ մեղօ: Մոլորեցայ ես որպէս ոչխար կորուսեալ. խնդրող գերելոց խնդրեա զիս զմոլորեալս, որ մեղօքս եմ:

Մեղայ քեզ Տէր քաւեա զիս եւ ողորմեա ինձ Աստուած: Ոչխար եմ բանաւոր հօտի քո եւ առ քեզ ապաւինիմ հովիւ բարի, խնդրեա զիս զմոլորեալս եւ ողորմ: Ի ծովու մեղաց ալէկոծեալ եմ եւ առ քեզ աղաղակեմ նաւապետ բարի, փրկեա զիս 'ի վտանգէս եւ ողորմ:

Զարհուրեալ դողացեալ է ամենամեղ անձն իմ, յահեղ քոյ դատաստանացդ, յաններելի տանջանացն: Քանզի կամաւ մերձեցայ 'ի մեղս մեծամեծս. որդ կայ եւ մնայ ինձ աններելի պատուհաս: Արդ անկեալ աղաչեմ փրկիչ եւ բարերար. խնայեա յիս 'ի մեղուցեալս, եւ ողորմ:

Ամենակալ քաւեա ըզմեղս իմ. զի Աստուած ես ապաշխարողաց : Եւ զհոգեւորդ սուրբ մի հաներ յինէն. զի Աստ : Եւ փրկեա զիս յանհագին հրոյն. զի Աստ :

Հաւ. Ես ասացի Տէր ողորմեա հոգւոյ իմոյ բազմամեղի, որ բնակեալդ ես ՚ի յերկինս և յանմարմնոց փառաբանիս . յիս մարդասիրեա բազմագութ փրկիչ, և փարատեցո զցաւս անձին իմոյ : Պսակաւեցայ յաղգատոհմէ լուքեալ թողի ըզկեանս աշխարհի. և մարմին ունայնութեան դարձաւ ՚ի հող ուստի ըստեղծաւ . յիս մար : Յաւուր յայնմիկ մահանեցոյ ՚ի ձեռս ահեղ հրապարակին . և աքեզ ապաւինիմ ստեղծող բնաւից Տէր բարերից . յիս մար :

Հայեցայ ՚ի բարձունս առ քեզ կարօղ յամենայնի . ընկալ զիս յարկս արդարոց ամբածածուկ աչօք քո . յիս մար : Ահա ՚ի խաղաղութիւն դարձայ ՚ի հող յորմէ ստեղծայ . նորոգող ձայնարարապես պարգեւատու ողորմութեան . յիս մար : Այլ կենդանիքս օրհնեմք ըզքեզ Քրիստոս Թագաւոր յաւիտենից . որ փառօք փառաւորիս ՚ի յերկնայնոց և յերկրայնոցս . յիս մարդա :

Ասփ. Ի՛ քե՛զ եմք ապաւինեալ՝ Քրի՛ստոսի մայր Աստուածոյ մերո՛յ: Ո՛ր քան զերկի՛նս բարձրագո՛յն Մարի՛ամ, պա՛րծանք ե՛կեղեցւոյ. Քրի՛ս: Ո՛րքան զարեգակըն պայծառագո՛յն Մարի՛ամ, մի՛ դադարե՛ր բարեխօսե՛լ վասն մեր. Քրի՛ս: Խաչ: Ս՛ուրբ զխաչ քո շնորհեցե՛ր զէն եկեղեցւո՛յ քում սրբոյ. ո՛րով դատապարտեա՛լ պարտեցա՛ւ թշնամի՛ն: Ս՛ովա՛ւ պահպանեա՛ զժողովո՛ւրդս քո Քրիստոս. ո՛րով երկրպագե՛մք քե՛զ ընդ Հօ՛ր և Հոգւո՛յն:

Փառք Հօր և Որդւոյ և:

Ի՛քեզ ապաւինիմք Քրի՛ստոս որ գալո՛ց ես խաչիւ. ո՛րպէս զի փրկեսցես ըզմե՛զ յայնմ աւո՛ւր ահեղ ա՛տենի՛ն:

Այժմ և միշտ և յաւի:

Ընդ սուրբս քո դասեա՛ և ընդ արդարսըն պսակեա 'ի տեղի՛ անկելոց հրեշտակաց ըզնը՛նջեցեալսըն մեր կարգաւորեա՛. որ ողորմա՛ծդ ես յամե՛նայնի՛:

Քարոզ.

Վասն գտանելոյ մեզ զշնորհս և զողորմութիւն 'ի բարերար Տեառնէ մերմէ, զՏէր աղաչեսցուք: Վասն փրկելոյ զմեզ 'ի գրպարտութենէ մարդկան և յորոգայթից սատանայի, զՏէր աղա:

Վասն ամենայն անձանց քրիստոնէից, և տանց հաւատացելոց, զՏէր աղաչեսցուք։
Վասն որք 'ի լերինս, յայրս և 'ի փապարս բնակեալ են սուրբ հարքն մեր, զՏէր աղաչեսցուք։
Վասն որք սաղմոսիւք և օրհնութեամբ կատարեն զամենայն ժամանակս կենաց իւրեանց, զՏէր աղաչեսցուք։
Վասն հոգւոցն հանգուցելոց որք ճշմարիտ և ուղղափառ հաւատով ննջեցին ի Քրիստոս, զՏէր աղաչեսցուք։

Եւ ևս միաբան։ Զանձինս մեր և։ Ողորմեա՛ց մեզ։

Աղօթք։

Գոհանամք զքէն, տէր Աստուած մեր, որ զարթուցեր զմեզ 'ի հանգստենէ քնոյ շնորհիւ ողորմութեան քո։ Զարթո՛ զմիտս մեր արդարութեամբ առ քեզ տէր Աստուած մեր. զի տեսցեն աչք մեր զփրկութիւն քո. եկեսցէ և բնակեսցի առ մեզ աստուածութիւն քո. եւ ողորմութիւն քո հովանի և պահապան լիցի 'ի վերայ պաշտօնէից քոց։ Եւ զմեզ զծառայքս քո արժանի՛ արա 'ի տուէ և 'ի գիշերի և յամենայն

*ժամու միշտ խորհիլ ’ի սէր պատուիրանաց քոց ։ Եւ գոհանալով փառաւորեսցուք զՀայր եւ զՈրդի և զսուրբ Հոգի, այժմ և ։*

Խաղաղութիւն ամենեցուն ։

Աստուծոյ երկիրպագեսցուք ։

*Կենդանարար զօրութիւն և աղբիւր անմահութեան դու ես Քրիստոս Աստուած փրկիչ մեր, որ շնորհեցեր մեզ ’ի մէջ գիշերի յառնել և խոստովան լինել առ քեզ վասն իրաւանց և արդարութեան քոյ ։ Եւ այժմ աղաչեմք զքեզ, տէր Աստուած, արա՛ զմեզ արթունս և պատրաստս ’ի ժամ առաւօտու ընդ սուրբս քո ։ Եւ ընդ նոսին գոհանալով փառաւորեսցուք զքեզ ընդ Հօր և ընդ Հոգւոյդ սրբոյ․ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից․ ամէն ։*

Հոգւոյն հանգուցելոց ։ Վասն հանգուցեալ ։
Քրիստոս , որդի Աստուծոյ ։ Հայր մեր ։

Եւ ապա լուասցեն քահանայք 'ի ծածուկ տեղւոջ․ և թէ կրօնաւոր է՝ կրօնաւորք լուասցեն եւ կին մի մերձեսցի ։
Եւ 'ի լուանալն , կատարի այս կարգ ։

Շարական , ԳՁ ․

Վերամձգողն երկնից մըշտնջենաւոր Հօր որդին՝ ներգործեալ խմռվս 'ի վեր քան զհրաշս ․ ծառայի առեալ ըզկերպ անկողմպահելի աստուածութեամբն ։ Բանին զմաքրեցելոցն ջրով զոտս լուանոյ ․ զի զխոնարհութիւն 'ի նոսա տըպաւորեսցէ , երրորդութեանն գոլ օթեւան ։ Բաշխէ զմարմին իւր եւ զարիւն , ընդ նոցին ուխտ անուանեալ եւ յիշատակ կամաւոր մահուանն , մերձեցելոցս 'ի նա սրբութեամբ ։

Աղբիւր լուսոյ և ճառագայթ անշիջանելի լոյս ․ որ լուանալ յանձն առեր զոտս աշակերտացն ․ մաքրեա 'ի մէնջ ըզմեղս խաւարին խորհրդոց եւ լուսաւորեա զմեզ ։ Որ մարմնով և արեամբ քո ցուցեր ըզթողութիւն մեղաց , որ միշտ պատարագիս

'ի մեզ անձանխապէ՛ս. մաղ։ Որ քաւիչ զայս նոր ուխտ ցուցեր յետ առաջնոյ քո մահացելո՛ցս 'ի ճաշակմանէ նախահօ ծրն. մաղ։

Սաղմոս ողբոյոյն։ Ցօղեա՛ յիս մշտկաւ։ Ողորմեա ինձ Աստուած. մինչ ցայն տուանն. Ցօղեա՛ յիս։

Ընթերցուածս յեզեկիէլէ մարգարէէ։ ԼԶ. 25։

Այսպէս ասէ Ադոնայի Տէր. Եւ ցանեցից 'ի վերայ ձեր ջուր սուրբ, եւ սրբեսջիք յամենայն պղծութեանց ձերոց, եւ յամենայն կռոց ձերոց սրբեցից զձեզ. եւ տաց ձեզ սիրտ նոր, եւ ոգի նոր նորոգեցից 'ի ձեզ. եւ հանից զսիրտն քարեղէն 'ի մարմնոց ձերոց, եւ տաց ձեզ սիրտ մարմնեղէն, եւ զոգի իմ տաց ձեզ։ Եւ արարից՝ զի յարդարութիւնս իմ գնասջիք, և զիրաւունս իմ պահիցէք եւ առնիցէք զնոսա. եւ բնակիցէք յերկրին՝ զոր ետու հարցն ձերոց, եւ եղիջիք ինձ 'ի ժողովուրդ եւ ես եղէց ձեզ յԱստուած։

Պօղոսի առաքելոյն յեբրայեցւոց թղթոյն է ընթերցուածս։ Ժ. 19։

Ունիմք այսուհետեւ, եղբարք, համարձակութիւն 'ի մուտս սրբութեանցն արեամբն Յիսուսի, զոր նորոգեաց մեզ ճանապարհ նորոգ եւ կենդանի 'ի ձեռն վարագուրին,

*այսինքն է՝ մարմնոյն իւրոյ. եւ քահանայ մեծ 'ի վերայ տանն Աստուծոյ. մատիցուք ճշմարիտ սրտիւք, լրութեամբ հաւատոց, լուացեալ զսիրտս 'ի խղճէ չարեաց եւ մկրտեալ զմարմինս 'ի ջուրն սրբութեան. պինդ կալցուք զխոստովանութիւն անշարժ յուսոյն, զի հաւատարիմ է որ խոստացաւն: Եւ զգուշասցուք միմեանց յորդորմամբք սիրոյ և գործոց բարեաց. եւ մի թողցուք զժողովս միմեանց, որպէս սովոր են ոմանք. այլ մխիթարեսցուք, եւ այնչափ եւս առաւել՝ որչափ տեսանիցէք զօրն մերձեալ:*

Եւ յետ լուացմանն պատուեցեն՝ այսու օրինակաւ: Ագուցանեն պարեգօտ սպիտակ և անդրավարտիս 'ի ներքոյ. և օգ-
'ի յատոն. և գօտի ընդ մէջն. և կնկուղ սպիտակ 'ի գլուխն. և փակեղն զուսովն. և փիլոն սպիտակ շուրջն. և զոյգ ափն 'ի վեր. և գիր դնեն 'ի ձեռսն. այսինքն՝ յաւետարանէն մէկ տուն սկիզբն՝ մէկ տուն վերջն Ելի 'ի Հօրէ և եկի յաշխարհ. դարձեալ թողում զաշխարհ և երթամ առ Հայր. և փոքր դաստառակաւ խունկ դիցեն: Եւ եթէ կրօնաւոր իցէ՝ իւր զգեստիւն պարտ է դնել:

Եւ ապա ասեն. Սաղմոս ճԼԱ:

Ալէլուիա ալէլուիա:

Քահանայք քո զգեցցին զարդարութիւն, եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն.
Յիշեա, Տէր, զԴաւիթ, և զամենայն հեզութիւն նորա:

Որպէս երդուաւ Տեառն, և ուխտս եդ Աստուծոյ Յակոբայ։

Թէ ո՛չ մտից 'ի յարկս տան իմոյ, թէ ելից յանկողինս մահճաց իմոց։

Թէ տաց քուն աչաց իմոց. կամ նինջ արտեւանաց իմոց, կամ հանգիստ իրանաց իմոց, մինչեւ գտից զտեղի յարկի տեառն Աստուծոյ Յակոբայ։

Ահա՛ լուաք զնմանէ յԵփրաթա, և գտաք զնա 'ի դաշտս մայրեաց։

Մտցուք 'ի յարկս նորա, երկիրպագցուք 'ի տեղւոջ ուր կացեալ են ոտք նորա։

Արի, Տէր, 'ի հանգիստ քո, դու և տապանակ կտակի սրբութեան քո։

Քահանայք քո զգեցցին զարդարութիւն, եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն։

Վասն Դաւթի սիրելւոյ քո, մի՛ դարձուցաներ զերեսս քո յօծելոյ քումմէ։

Երդուաւ Տէր Դաւթի ճշմարտութեամբ եւ ո՛չ ստեաց նմա, 'ի պտղոյ որովայնի նորա նստուցանել յաթոռ նորա։

Թէ պահեսցեն որդիք քո զօրէնս իմ, և զվկայութիւնս իմ զոր ուսուցից նոցա։

Որդիք նոցա նստցին յաւիտեանս յաւիտենից յաթոռ քո։

Հաճեցաւ Տէր ընդ Սիովն, և ընտրեաց բնակել 'ի նմա. ասէ, ա՛յս է հանգիստ իմ յաւիտեանս յաւիտենից. 'ի սմա բնակեցայց զի հաճեցայ ընդ սա։

*Զորս սորա օրհնելով օրհնեցից եւ զաղքատս*
*սորա լցուցից հացիւ.*
*Երիցանց սորա զգեցուցից զփրկութիւն, եւ*
*սուրբք սորա ցնծալով ցնծասցեն.*
*Անդ ծագեցից զեղջիւր ՚ի Դաւիթ, պատրաստ*
*արարից զճրագ օծելոյ իմոյ.*
*Թշնամեաց նորա զգեցուցից զամօթ, այլ ՚ի վե-*
*րայ նորա ծաղկեսցի սրբութիւն իմ.*
*Փառք Հօր և Որդւոյ և. Այժմ և միշտ և.*

*Ալէլուիա Օրհնի.*

*Խաղաղութիւն ամենեցուն.*

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի
որ ըստ Յովհաննու. ԺԳ. 3.

*Տէրն մեր Յիսուս Քրիստոս:*

*Գիտաց՝ զի զամենայն ինչ ետ Հայր ՚ի ձեռս նորա, եւ թէ յԱստուծոյ ել՝ եւ առ Աստուած երթայ. յառնէ յընթրեաց անտի եւ դնէ զհանդերձն, եւ առեալ զընջակ մի՝ սփածաւ. եւ ապա առեալ ջուր՝ էարկ ՚ի կոնք, և սկսաւ լուանալ զոտս աշակերտացն, եւ սրբէր զընջակաւն՝ զոր սփածեալ էր: Գայ առ Սիմոն Պետրոս. և նա ասէ ցնա. Տէր, դու զիմ զոտս լուանաս: Պատասխանի ետ նմա Յիսուս եւ ասէ. Զոր ինչ ես գործեմ, դու այժմ ոչ գիտես, բայց ապա գի-*

*տամջիր։ Ասէ ցնա Պետրոս. Ո՛չ լուասցես զոտս իմ՝ յաւիտեան։ Պատասխանի ետ նմա Յիսուս. Եթէ ո՛չ լուացից զքեզ, ո՛չ ունիս ընդ իս մասն։ Ասէ ցնա Սիմոն Պետրոս. Տէ՛ր, մի՛ միայն զոտս իմ, այլ և զձեռս՝ և զգլուխ։ Ասէ ցնա Յիսուս. Լուացելոյն չէ՛ ինչ պիտոյ, բայց զի զոտսն լուանայցէ. քանզի ամենեւին սուրբ է. և դուք սուրբ էք, այլ ո՛չ ամենեքեան։*

Քարոզ։

*Վասն գտանելոյ մեզ զշնորհս և զողորմութիւն 'ի բարերար տեառնէ մերմէ, զՏէր աղաչեսցուք։*

*Վասն փրկելոյ զմեզ 'ի գրպարտութենէ մարդկան և յորոգայթից սատանայի, զՏէր աղա։*

*Վասն ամենայն անձանց քրիստոնէից եւ տանց հաւատացելոց, զՏէր աղա։*

*Վասն որք 'ի լերինս յայրս և 'ի փապարս բնակեալ են սուրբ հարքն մեր, զՏէր աղա։*

*Վասն որք սաղմոսիւք եւ օրհնութեամբ կատարեն զամենայն ժամանակս կենաց իւրեանց, զՏէր աղա։*

*Վասն հոգւոցն հանգուցելոց՝ որք ճշմարիտ և։ Եւ ևս միաբան։ Զանձինս մեր և։ Ողորմեաց մեզ։*

Աղօթք.

***Տէր մեր և փրկիչ Յիսուս Քրիստոս, որ 'ի ժամանակի փրկագործ***

տնօրէնութեան քո 'ի սուրբ
վերնատանն անձառելի խոնար-
հութեամբ՝ առեալ զջուր քով
ամենասուրբ ձեռօքդ արկեր 'ի
կոնք եւ լուացեր զոտս աշակեր-
տացդ՝ մաքրելով զնոսա յամե-
նայն հաղբից և յարատոյ մեղաց.
և զարդարեցեր զնոսա պատրաս-
տութեամբ աւետարանին խա-
ղաղութեան, գնալ 'ի յերկիր
ուղիղ։ Արդ՝ և մեք ծառայք քո
ժողովեալք առ հանգուցեալ (այս
անուն) ծառայս քո՝ կատարեմք ըղ-
նոյն մաքրարար խորհուրդն քո։
Վասն որոյ աղաչեմք զքեզ, մար-
դասէր Տէր, առաքեա՛ 'ի մեզ և
'ի ջուրս յայս զնոյն մաքրարար
շնորհս քո՝ և օրհնեա՛ և սրբեա՛
զսա, որով լուացեալ զմարմին
սորա՝ սրբեսցի յամենայն արա-
տոյ մեղաց եւ 'ի խաբէութեանց

աշխարհիս. և ագուցեալ ոտիւք պատրաստութեամբ աւետարանիդ խաղաղութեան՝ եկեսցէ առ քեզ ճշմարիտ սրտիւ, լրութեամբ հաւատոյ, եւ լուացեալ զմիտս իւր յամենայն խղճէ չարեաց. և մտցէ 'ի յառագաստ երկնաւոր փեսայիդ ընդ սրբոց քոց առաքելոց։ Ընդ որում եւ մեք գոհութեամբ փառաւորեսցուք զքեզ ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյդ, այժմ և միշտ և։

Ալէլուիա. Դարձոյց զսուգ իմ յուրախութիւն. եզերծ յինէն զքուրձ, և ինձ զգեցոյց զուրախութիւն։

Ալէլուիա Օրթի։

Խաղաղութիւն ամենեցուն։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի
որ ըստ Յովհաննու։ ԻԱ. 18։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ։

Ամէն ամէն ասեմ քեզ, զի մինչ մանուկն էիր՝ անձամբ անձին գօտի ածէիր, եւ եր-

թայիր յո՛ և կամէիր. և յորժամ ծերասցիս, ձեռս ՚ի վեր կալցես՝ եւ այլք ածցեն քեզ գօտի, և տարցին ուր ոչ կամիցիս։ Զայս ա-սաց՝ նշանակեալ թէ որով մահու փառաւոր առնիցէ զԱստուած։

Ժողովեալքս ՚ի հրաժարումն ծառայի քո յաշխարհէ, հայցեմք ՚ի քէն արտասուելով եւ պաղատելով զայս ասելով. Զմնացորդս ընդ քեզ եկեալ՝ նմանեցելոյս լեր ուղեկից. ՚ի յօթեւանս հօր քո լուսոյ ըզննջեցեալս մեր հանգո՛։

Ի փրկութեան մերոյ ակնկալեալ մկրտու-թեան ՚ի Յորդանան. զոր շնորհեցեր նոր ա-ւազան ՚ի մաքրութիւն մեղաց մարդկան. հայցեմք կրկին կարապետին մեծին ՚ի ծնունդքս մկրտչին. ՚ի յօթ։

Երգ. Ի վերին Երուսաղէմ ՚ի բնա-կարանս հրեշտակաց, ուր Ենովք եւ Եղիաս կան ծերացեալ աղաւնակերպ, ՚ի դրախտին եդեմական պայծառա-ցեալ արժանացո. ողորմ։

Հոգւոցն հանգուցելոց։ Հայր մեր որ յերկինս։

Ապա ամփոփեսցեն դնելով անդրէն 'ի մահիճսն ուր վախճանեցաւ. զերեսն յարուցեալ եւ զաչսն յերկինս. եւ դարք պաշտօնէիցն պար առեալ զվախճանելովն՝ ասասցեն Սացմոս. Երկինք պատմեն. ցկանոնն 'ի ժման տաւ.

Կանոնագլուխ ցմաճու Դատեայն.

Դատեա, Տէր, զայնոսիկ որք դատեն զիս. ալէլուիա՛ ալէ՛լուիա:

Մարտիր ընդ այնոսիկ որք մարտնչին ընդ իս. Ալէլուիա՛:

Ա՛ռ զզէն և զասպար քո, և արի՛ յօգնել ինձ. հան զսուր քո ընդդէմ հալածչաց իմոց, արգել զնոսա. և ասա դու ցանձն իմ՝ թէ փրկութիւն քո ես եմ: Ալէլուիա.

Ամաչեսցեն և յամօթ լիցին ոյք խնդրէին զանձն իմ. դարձցին յետս և ամաչեսցեն, ոյք խորհէին ինձ չար. Ալէլուիա՛:

Եղիցին նոքա որպէս փոշի առաջի հողմոյ, եւ Հրեշտակ Տեառն նեղեսցէ զնոսա: Ալէլուիա՛:

Եղիցին ճանապարհք նոցա 'ի խաւար և 'ի գայթակղութիւն, և Հրեշտակ Աստուծոյ հալածեսցէ զնոսա: Ալէլուիա.

Ի նանիր թագուցին ինձ որոգայթ յապականութեան իւրեանց, եւ 'ի նանիր նախատեցին զանձն իմ. Ալէլուիա.

Տէր, յերկինս է ողորմութիւն քո, ճշմարտութիւն քո մինչեւ յամպս: Ալէ՛՛, ալէ՛՛, ալէ՛՛.

Արդարութիւն քո որպէս լերինք Աստուած, իրաւունք քո որպէս խորք բազումք. զմարդիկ և զանասուն կեցուցանես դու, Տէր։ Ալէ"։
Որպէս զի բազում արարեր զողորմութիւն քո Աստուած. այլ որդիք մարդկան 'ի հովանի թեւոց քոց յուսասցին։ Ալէ"։
Արբեսցին նոքա 'ի պարարտութենէ տան քո, և զուղխս փափկութեան քո տացես ըմպել նոցա։
Ալէլուիա, ալէ", ալէ"։
Ի քէն է Տէր, աղբիւր կենաց, և լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս։ Ալէ"։
Ծագեա զողորմութիւնս քո այք ճանաչեն զքեզ, զարդարութիւնս քո որ ուղիղ են սրտիւք։ Ալէ"։
Մի' եկեսցեն 'ի վերայ մեր ոտք ամբարտաւանից, և ձեռք մեղաւորաց մի' դողացուսցեն զմեզ։ Ալէ"։
Անդ անկցին ամենեքեան այք գործեն զանօրէնութիւն, մերժեսցին եւ այլ մի' կարասցեն հաստատիլ։ Ալէ"։
Փառք Հօր և. Այժմ և. Ալէ"։
Սարկաւագն. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղա.
Քահանայն. Օրհնութիւն և փառք Հօր և Որդ.

Շարական. ԱՁ.

Որ ստեղծմամբ ըստ պատկերի քո Տէր պատուեցեր ըզմեզ. ընկալ և այժմ ըզնըն-ջեցեալսն 'ի քեզ ուղիղ հաւատով, ըստ մե-ծի քում ողորմութեան։ Որ շնորհօք սուրբ

Հոգւոյն լուսաւորեցեր, յիշատակի խորանաց զհոգիս նոցա ընկալ մարդասէր, ըստ մե։ Որք հաղորդեցան մարմնոյ և արեան քո Տէր. հանգո զհոգիս նոցա ընդ սուրբս քո Քրիստոս Աստուած. քանզի գինք սուրբ արեան քո են։

Ա... Որ զաւետիս հոգւոյն ՚ի հրեղէն ՚ի հրեշտակէն ընկալար, ուրախ լեր բերկրեալդ Տէր ընդ քեզ Մարիամ անհարսնացեալ։ Անսկիզբն բանին հաճեցաւ անուլ մարդեղութեամբն ընկերն ՚ի կուսէդ, Քրիստոս Աստուած Թագաւորն յաւիտենից։ Աղաչեմք ըզքեզ սուրբ Աստուածածին բարեխօսեա փրկել ըզժողովուրդս իւր, որ գնեաց արեամբն իւրով։

Խաչ. Սուրբ խաչն օգնական հաւատացելոց, կանգնեցաւ ՚ի յերկրի յաղթող թըշնամւոյն. եկայք ժողովուրդք երկրպագեսցուք։ Արարիչն Աստուած բարձրացաւ ՚ի խաչին, և զմեռեալս մեղօք փայտին ճաշակմամբն ՚ի սմա նորոգեալ կենդանացոյց։

Փառք. Ի միւսանգամ գալըստեան Աստուածորդւոյն, սուրբ խաչն երևի և լուսաւորէ. զի նա է յոյս հաւատացելոց։

Այժմ. Հաշտեա՛ 'ի ձեռըն սուրբ մարմնոյ և արեան քո՛ Տէր. և պարգեւեա՛ նոցա դասե՛լ յաջակո՛ղմեա՛նըն քո՛ ։

Քարոզ։

Վասն խոստովանող հոգւոյս որ հրաժարեաց 'ի մէնջ, զՏէր աղաչեսցուք։

Վասն քաւութեան և թողութեան մեղաց սորա և մեր ամենեցուն, զՏէր աղա։

Վասն առաջնորդելոյ սմա հրեշտակին խաղաղութեան յօթեւանս սրբոց, զՏէր աղա։

Վասն պարգեւելոյ սմա մասն և բաժին ընդ ժառանգորդս արքայութեան երկնից, զՏէր աղա։

Վասն ընդունելոյ զաղաչանս միաբան ժողովելոցս՝ որք խնդրեն 'ի Տեառնէ զթողութիւն մեղաց սորա, զՏէր աղա։

Վասն հոգւոյն։ Եւ ես միա։ Զանձինս։ Ողորմեաց։

Աղօթք։

Տէ՛ր մեր եւ Աստուած՝ յոյս ամենեցուն, որ նստիս յաթոռս քերովբէականս՝ եւ երկրպագիս 'ի սրբոց հրեշտակապետաց. եւ ընդունիս զաղաչանս մարդկան, և գթաս 'ի հոգիս ննջեցելոցն 'ի

հաւաստացեալս ամենասրբոյ երրորդութեանդ · եւ զքահանայս զոր ընտրեցեր 'ի սպասաւորութիւն սրբոյ եկեղեցւոյ 'ի հաճոյս քո պաշտել զքեզ · եւ դարձեալ անդրէն կոչեցեր գալ առ քեզ ուստի ստեղծեր զնա · ըստ բանի քում զոր ասացեր , հող էիր և 'ի հող դարձցիս ։ Եւ այժմ 'ի ձեռն կոչման քո , Տէր , զհանգիստ քո շնորհեա՛ սմա · եւ զամենայն մեղս սորա զոր գործեալ իցէ , զկամայ եւ զակամայ՝ թո՛ղ սմա · և զհոգի սորա խաղաղութեամբ ընկա՛լ յերկնից արքայութիւնդ 'ի խորանս արդարոց ։ Եւ զմեզ արժանաւո՛րս արա գոհանալով փառաւորել զՀայր եւ զՈրդի եւ զսուրբ Հոգիդ · այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից · ամէն ։

Խաղաղութիւն ամենեցուն։

Աստուծոյ երկրպագեսցուք։

Սուրբ ես Տէր Աստուած մեր՝ որ բնակեալդ ես 'ի յերկինս եւ բարեբանիս երեքսրբեան օրհներգութեամբ. եւ քաղցրութեամբ քով խնամես զարարածս քո, զոր ընտրեցեր քեզ յամենայն ազգաց ժողովուրդ սուրբ՝ փառաւորել զանուն քո սուրբ. եւ խոստացար տալ մեզ զանանց բարութեանց հանգիստն։ Ընկալ և օրհնեա՛ և դասաւորեա՛ զհոգի ծառայիս այսորիկ ընդ ամենայն սուրբս քո, որք յաւիտենից հաճոյ եղեն քեզ՝ 'ի խոստացեալ հանգստեան քում։ Եւ զամենայն յանցանս սորա զոր յանցեալ իցէ առաջի քո, ներեա՛ և թո՛ղ սմա. եւ ողորմութեամբդ քո՛վ ազատեա՛ զհոգի սորա յան-

*մաքուր գործոց եւ 'ի կապանաց մեղաց. և հանգո՛ 'ի դասս սրբոց քոց։ Եւ զմեզ արժանի՛ արա՛ փա-ռաւորել զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին. այժմ և միշտ և յաւի։*

*Հոգւոցն հանգու։ Եւ եւս խաղաղութեան, Վասն հանգուցելոյ։ Քրիստոս որդի։*

*Եւ տեառնագրեն զդին*

*Ա՛լէլուիա. ա՛լէլուիա. ա՛լէ՜լուիա։ Օ՛րհ-նեսցի՛ և պահպանեսցի դի՛ հանգուցելոյ Տէր (այս անուն եղիցի նորա, ճարտարապետի, կամ ժառանգորդի.) սյս նշանաւ սուրբ խաչի՛ս և սուրբ աւետա-րանաւս եւ աւո՛ւրս շնորհի. անուամբ Հօ՛ր և Որդւոյ եւ Հո՛գւոյն սրբո՛յ. այժմ եւ միշտ և յաւիտեանս յաւի։ Երէց կրկնէ։ Օ՛րհնութիւն և փա՛ռք Հօ՛ր։ Հայր մեր որ։*

Շարական, Ակ։

*Ա՛րարիչ Աստուած և բաշխիչ ա՛զգի մարդ-կայն մի՛ անտես առնե՛ր ըզընծայեցեալսն մեր. այլ հանգո՛ զհոգիս նոցա ընդ սուրբս քո։ Որդի՛դ միածի՛ն յարութիւն տիեզե-րաց. մի՛ ան։ Հոգի՛դ ճշմարիտ մխի-թարիչ սգաւորաց. մի՛ ան։*

Աււ. Ուրախ լեր աստուածածին, տաճար
անխախտելի. զքեզ մեծացուցանեմք։ Յ-
ղացար անսերմնաբար, և զԱստուած վայել-
չապէս ծնար. ուրախ։ Երգէ մարգարէն,
սուրբ է տաճար քո սքանչելի արդարու-
թեամբ, և դուռն երկնային. ուրախ։

Խաչէ. Սեղան քո Տէր զօրութեանց հաստա-
տեալ կանգնեցաւ 'ի խորանի քում. եկայք
ժողովուրդք երկրպագեսցուք։ Վէմ պա-
տուական 'ի խորանի քում հիմնեցաւ այսօր.
եկայք ժողովուրդք Երկրր։

Փոխ. Ի սմա մատուցան ճշմարիտ պա-
տարագ, և զենումն անապական. եկայք։

Այժմ. Մխիթարիչ սուրբ Հոգի լուսաւորեա
զմեր ննջեցեալսն, և հանգո զհոգիս նոցա
ընդ սուրբս քո։

Սաղմոս, ԼԸ. 5։

Ահա չափով եդիր զաւուրս իմ, և կար զօրու-
թեան իմոյ որպէս ոչ ինչ է առաջի իմ. սակայն
ամենեւին ընդունայն է ամենայն մարդ մնեղի։
Ասացի թէ պահեցից զճանապարհս իմ, զի մի մե-
ղայց լեզուաւ իմով։ (Զփոխն ըստ ——)։

Ընթերցուածս 'ի Ծննդոց։

Եւ այս են ամք աւուրց կենացն Աբրահա-

մու զորս եկեաց, հարիւր եօթանասուն եւ հինգ ամ. եւ պակասեալ Աբրահամու մեռաւ 'ի բարւոք ծերութեան, ալեւորեալ և լի աւուրբք. և յաւելաւ առ ժողովուրդ իւր: Եւ թաղեցին զնա Իսահակ և Իսմայէլ որդիք նորա՝ յայրի անդ 'ի կրկնում յագարակին Եփրոնի որդւոյ Սահառայ քետացւոյ. որ է յանդիման Մամբրէի՝ ագարակն և այրն զոր ստացաւ Աբրահամ յորդւոցն Քետայ. անդ թաղեցին զԱբրահամ և զՍառա կին նորա: Եւ եղեւ յետ մահուանն Աբրահամու օրհնեաց Աստուած զԻսահակ, առ ջրհորի տեսլեանն: Անդ թաղեցին զԻսահակ, և զՌեբեկա զկին նորա. անդ թաղեցին զԼիա: Եւ դադարեաց Յակոբ 'ի պատուիրելոյ որդւոցն իւրոց, եւ առեալ զոտս իւր անդրէն 'ի մահճին պակասեաց, եւ յաւելաւ առ ժողովուրդ իւր: Եւ անկեալ Յովսէփ 'ի վերայ երեսաց հօր իւրոյ ելաց զնա, և համբուրեաց զնա: Եւ հրաման ետ Յովսէփ ծառայից իւրոց դիապատրաստաց՝ պատել զհայրն իւր, և պատեցին դիապատիքն զԻսրայէլ. և տարան զնա որդիքն իւր յերկիրն Քանանացւոց և թաղեցին յայրին կրկնում: Եւ խօսեցաւ Յովսէփ ընդ եղբարս իւր և ասէ. Ես ահաւասիկ մեռանիմ. այցելութեամբ այց արասցէ ձեզ

Աստուած, և հանցէ զձեզ յերկրէս յայսմանէ յերկիրն՝ զոր երդուաւ Աստուած տալ հարցն մերոց Աբրահամու, Սահակայ և Յակոբայ: Եւ երդմնեցոյց Յովսէփ զորդիսն Իսրայէլի և ասէ. յայցելութեանն յորում այց առնիցէ ձեզ Աստուած՝ հանջիք և զիմ ոսկերս աստի ընդ ձեզ: Եւ վախճանեցաւ Յովսէփ ամաց հարիւր և տասանց. և թաղեցին զնա, և եդին զնա ՚ի տապանի յԵգիպտոս:

Ընթերցուածս յԱռակաց: ԺԱ. 2.

Բերան խոնարհաց խօսի զիմաստութիւն. կատարելութիւն ուղղոց առաջնորդեսցէ նոցա, և գայթակղութիւն արհամարհողաց աւերեսցէ զնոսա: Ոչ օգնեսցեն ինչք յաւուր բարկութեան, այլ արդարութիւն փրկէ ՚ի մահուանէ: Մեռաւ արդարն՝ և եթող զզջումն յոյժ. յանդուգն եւ ամնհարութեամբ լինի կորուստ ամբարշտաց: Արդարութիւն անարատի ուղղէ զճանապարհս, և յամբարշտութիւնս արկանէ անիրաւութիւն: Արդարութիւն արանց ուղղոց փրկէ զնոսա, անմտութեամբ կորնչին անօրէնք: Ի վախճանել առն արդարոյ ոչ կորնչի յոյս, բայց պարծանք ամբարշտաց կորիցեն: Արդարն՝ յորսողաց փրծանի, և փոխանակ նորա մատնի ամբարիշտն:

ի բերանս ամբարշտաց՝ որդւոյն քաղաքակցաց, իմաստութիւն արդարոց յաղթեաց է:

Ընթերցուած յԵսայեայ մարգարէ է: ԿԱ. 6:

Բայց դուք՝ քահանայք Տեառն կոչեսջիք, պաշտօնեայք Աստուծոյ մերոյ անուանեսջիք, զզօրութիւն ազգաց կերիջիք, եւ մեծութեամբ նոցա սքանչելի լինիջիք: փոխանակ ամօթոյ ձերոյ՝ կրկին ուրախութիւն, և փոխանակ անարգանաց ձերոց՝ ցնծութիւն, և ապա զերկիրն յերկրորդում ժառանգեսցեն, և ուրախութիւն յաւիտենից 'ի վերայ գլխոց նոցա: Զի ես եմ Տէր որ սիրեմ զարդարութիւն, և ատեմ զյափշտակութիւնս յանիրաւութենէ. տաց զվաստակս նոցա արդարոց, և ուխտ յաւիտենից ուխտեցից ընդ նոսա: Եւ ծանիցի 'ի մէջ ազգաց զաւակ նոցա. և ծնունդք նոցա 'ի մէջ ժողովրդոց. ամենեքին որ տեսանիցեն՝ ճանաչիցեն զնոսա՝ եւ ասիցեն թէ սոքա են զաւակք օրհնեալք յԱստուծոյ. և ուրախութեամբ ուրախ եղիցին 'ի Տէր:

Պետրոսի առաքելոյն 'ի կաթուղիկեայց երկրորդ թղթոյն է ընթերցուած: Ա. 10:

Վասն որոյ, եղբարք, առաւել փութասջիք՝ զի բարեաց գործովք հաստատուն զձեր կո-

չուածն և զընտրութիւն պահիցէք ։ Զայս ա-
րարեալ՝ ոչ երբէք յանցանիցէք ․ զի այսպէս
առատապէս շնորհեսցի ձեզ մուտ 'ի յաւի-
տենական արքայութիւն Տեառն մերոյ եւ
փրկչի Յիսուսի Քրիստոսի ։ Որով պատրաստ
իցեմ միշտ ձեզ յիշեցուցանել վասն սոցին,
առաւել եւս գիտակացն եւ հաստատելոցն
ելեալ հասեալ ճշմարտութեանն ։ Քանզի
իրաւունս համարիմ մինչդեռ եմ 'ի մարմնի
աստ՝ զարթուցանել զձեզ յիշատակօք ։ Գի-
տեմ թէ վաղվաղակի է լինելոց մերկանալ
յինէն մարմնոյս, որպէս և Տէր մեր Յիսուս
Քրիստոս եցոյց ինձ ․ և փութամ ձեպիմ միշտ
զձեզ յորդորել, զի եւ յետ իմոյ ելանելոյ
յաշխարհէս՝ առնիցէք զյիշատակս այսոցիկ ։

Ալէլուիա․ Որպէս սիրելիք են յարկք քո Տէր զօ-
րութեանց, ցանկայ եւ փափագի անձն իմ 'ի
գաւիթս քոյ ։

Ալէլուիա Օրհնի ։
Խաղաղութիւն ամենեցուն ։
Սրբոյ աւետարանին Յիսուսի Քրիստոսի
որ ըստ Յովհաննու ։ Ժ․Գ․ 31 ։
Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ ։

Այժմ փառաւորեցաւ Որդի մարդոյ, և Աս-
տուած փառաւորեցաւ 'ի նմա ։ Զի եթէ Աս-

տուած փառաւորեցաւ 'ի նմա , և Աստուած փառաւորեսցէ զնա յանձն իւր . և վաղվաղակի փառաւորեսցէ զնա ։ Որդեակք իմ, մանր ինչ ժամանակ ընդ ձեզ եմ . խնդրեցէք զիս . և որպէս ասացի ցՀրէայսն , թէ ուր ես երթամ՝ դուք ոչ կարէք գալ , և արդ ձեզ ասեմ ։ Պատուիրան նոր տամ ձեզ , զի սիրիցէք զմիմեանս . որպէս սիրեցի ես զձեզ , զի և դուք սիրեսջիք զմիմեանս ։ Յայսմ գիտասցեն ամենեքեան՝ եթէ իմ աշակերտք էք , եթէ սիրիցէք զմիմեանս ։ Ասէ ցնա Սիմովն Պետրոս . Տէր , յո՞ երթաս ։ Պատասխանի ետ Յիսուս . Ուր ես երթամ , դու ոչ կարես այժմ գալ զկնի իմ , բայց ապա եկեսցես զկնի իմ ։

Ասէ ցնա Պետրոս . Տէ՛ր , ընդէ՞ր ոչ կարիցեմ գալ այժմ զկնի քո . արդէն զանձն իմ իսկ եդից 'ի վերայ քո ։ Պատասխանի ետ Յիսուս . Զա՞նձն քո դիցես 'ի վերայ իմ . ամէն ամէն ասեմ քեզ . չեւ իցէ հաւու խօսեալ , մինչ դու երիցս ուրասցիս զիս ։ Մի՛ խռովեսցին սիրտք ձեր , այլ հաւատացէք յԱստուած , և յիս հաւատացէք ։ Ի տան Հօր իմոյ օթեւանք բազում են . ապա թէ ոչ՝ ասացեալ էր իմ ձեզ , եթէ երթամ և պատրաստեմ ձեզ տեղի ։ Եւ եթէ երթամ եւ պատրաստեմ

ձեզ տեղի, դարձեալ գամ՝ և առնում զձեզ առ իս. զի ուր եսն իցեմ, եւ դուք անդ իցէք. եւ ուր երթամն՝ գիտիցէք, եւ զճանապարհն գիտիցէք։ Ասէ ցնա Թովմաս, Տէր, ոչ գիտեմք յո՞ւր երթաս, եւ զիա՞րդ զճանապարհն կարասցուք գիտել։ Ասէ ցնա Յիսուս. Ես եմ ճանապարհն եւ ճշմարտութիւն եւ կեանք. ոչ ոք գայ առ Հայր՝ եթէ ոչ ինեւ։ Եթէ զիս գիտէիք, ապա և զՀայր իմ գիտէիք, և այսուհետեւ գիտասջիք զնա։

Քարոզ։

Վասն 'ի վերուստ խաղաղութեան եւ փրկութեան անձանց մերոց, զՏէր աղաչեսցուք։

Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց, զՏէր աղաչեսցուք։

Վասն քաւիչ և ներող լինելոյ Աստուծոյ 'ի վերայ մեղաց մերոց, զՏէր աղաչեսցուք։

Վասն թողլոյ մեզ զամենայն յանցանս մեր, ըզկամայ և զակամայ, զՏէր աղաչեսցուք։

Վասն զի մի՛ ընդ խոտանս գտանիցիմք յաւուրն պատասխանատուութեան, զՏէր աղաչեսցուք։

Վասն հոգւոյն հանգուցելոյ՝ որք ճշմարիտ և։

Եւ ևս միաբան։ Զանձինս մեր և։ Ողորմեաց մեզ։

Աղօթք։

Աստուած յաւիտենական, անըս-կիզբն՝ անեղ՝ անիմանալի անհա-

սանելի խորհուրդ. Հա՛յր բարերխնամող և ծնող միածնի Որդւոյ, եւ բղխող Հոգւոյդ սրբոյ, որ 'ի քէն ելանէ եւ լնու զամենայն արարածս: Դու, Տէր, կարող զօրութեամբ քով առեալ հող յերկրէ՝ արարեր զմարդն և բնակեցուցեր զնա յանցաւ եւ յանաշխատ եւ յանախտ կեանս անմահս՝ աստուածագործ տնկոցըն վայելչութեամբ և պատուիրանադրութեամբ քով. զգեցուցեր զնա անամօթ փառօք 'ի դրախտին փափկութեան: Սակայն չարին խանդացեալ ընդ մեծութիւն պատուոյ նորա զոր 'ի քումմէ բարերարութենէդ ընկալեալ էր, և պատրեալ զնա յաղագս անհասից ցանկութեանց. որ եւ զիւրն զտեղի փառացն ո՛չ պահեաց, կամակոր եղեալ յե-

րեսաց քոց, Տէր։ Իսկ յանցանելն նորա զպատուիրանաւ քով՝ հանեալ եդեր զնա արտաքոյ դրախտին փափկութեան՝ զգեցուցանելով նմա զմաշկեղէն հանդերձն, զխիրալի և զախտաւոր մարմինս. և սահմանեցեր հողադարձիլ հողոյն 'ի հող։ Եւ ոչ այնու անտես արարեր, այլ առաքեցեր զմիածին Որդիդ քո, որ եկեալ մարմնացաւ 'ի սուրբ և յանարատ կուսէն Մարիամայ. զգեցաւ զհնացեալ մարմին ծառայութեան մերոյ (զոր ծառայեցուցաք մահու մեղացն տարագրութեամբ 'ի ձեռըն կնոջն դաւաճանութեան) և ազատեցոյց աստուածութեամբ իւրով՝ 'ի ձեռն կենարար խաչին իւրոյ և անապական թաղմամբն իւրով։ Զի զոր վասն անսուտ բանի քոյ հարկիւ պարտ էաք մեռանիլ,

եբարձ սքանչելագործ յարու-
թեամբն իւրով, եւ լուսաւոր-
եաց զազգս որդւոց մարդկան 'ի
նոյն նմանութիւն պատկերի քոյ
որով ստեղծեր զնախնին մեր ըղ-
հայր. և ծանոյց մեզ զանուն քո՝
որով արժանաւորեցաք կոչել
զքեզ Հայր: Վասն զի նստելով
ընդ աջմէ քում մարմնովն զոր
'ի մէնջն էառ, եւ մեզ խոստա-
ցաւ յարութիւն կենաց 'ի միւ-
սանգամ գալստեանն իւրոյ 'ի
դատաստան յաւուրն յետնում.
և պարգեւեաց մեզ ժամադրու-
թիւն գործոց բարեաց զանցա-
ւոր կեանս՝ որով մարթասցուք
գտանել զերկիրն կենդանեաց 'ի
ձեռն վարդապետութեան սրբոց
առաքելոց իւրոց, որովք եբարձ
զդիւամոլ կռապաշտութիւն յաշ-
խարհէ: Եւ այժմ, Տէ՛ր բարերար

եւ բազումողորմ, ընկա՛լ զհոգի ծառայիս քոյ, որ ելից զժամանակ պանդխտութեան նշդեհութեան իւրոյ 'ի վերայ երկրի, և ընկալաւ զլուծումն յերկրաւոր աշխատութեանցս, և յաշխարահակոծ պատրողական խաբէութեանցս. եւ դասաւորեա՛ զսա ընդ սուրբս քո յարքայութեան քում, ուստի մերժեալ են ցաւք եւ տրտմութիւնք եւ հեծութիւնք. միշտ յարազուարճ բերկրանօք պայծառացեալ տեսլեամբ աստուածային փառաց քոց, ուր ուրախանան ամենայն ընտրեալք քո։ Ընդ նոսին դասաւորեա՛, Տէ՛ր, զհոգի հանգուցելոյս մերոյ. զի և մեք սովաւ հանդերձ փառաւորեսցուք զքեզ, Հայր, հանդերձ Որդւովդ եւ Հոգւովդ սրբով։

Այժմ և միշտ և յաւի։

Խաղաղութիւն ամենեցուն ։

Աստուծոյ երկիրպագեսցուք ։

Հայր մեր, որ յերկինս և յերկրի, եւ յամենայնի սուրբ եղիցի անուն քո 'ի վերայ մեր. եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի, եւ փառաւորեսցի անուն քո յաւիտեան ։ Որ պատրաստեցեր մեզ հանգիստ յերկրաւոր աշխատութեանցս՝ յանցաւ և յանաշխատ 'ի կեանսդ . որ 'ի ձեռն միածնի Որդւոյ քո սպաներ զմահ, և լուսաւորեցեր զմեզ 'ի կեանս եւ յանեղծութիւն ։ Որ փրկեցեր զսուրբս քո յիշխանութենէ խաւարի, եւ փոխեցեր յարքայութիւն որդւոյ քոյ սիրելւոյ Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի ։ Ընկա՛լ, մա՛րդասէր Տէր, աղաչեմք ըզքեզ և ըզհոգի սորա ընդ սուրբս

քո 'ի հանգստեանդ արդարոց, և թողեալ 'ի համարս սրբոց քոց 'ի ձեռն փրկութեան Միածնի քո՝ և Նորոգութեամբ Հոգւոյդ սըրբոյ. որովք փառաւորիս, Հայր ամենակալ. այժմ և։

Ճանապարհ մոլորելոց և ճառագայթ խաւարելոց. հրաւիրեցեր զորդիս լուսոյ 'ի յերկնային հարսանիս քո. ընդ ուրախալից անդ ժողովոց արժանացո զսա դասուց. ընդ լապտերօք մեծ յառագաստ ընդ իմաստուն սուրբ կուսանացն։

Մերով բնութեամբ զոր ըզգեցար 'ի փայտ խաչին բևեռեցար. լուծանելով զմեզ 'ի մեղաց 'ի նախահօրն կապանաց. լոյծ և զսա 'ի յանցանաց վասն քո սուրբ չարչարանաց. ընդ լոյս։

Երգ. Արարիչ և մարդասէր անոխակալ եւ բարեգութ. որ գովեալդ 'ի սրովբէից Տէր դատաւոր արդարութեան. ընդ սրբոց առաքելոց Տէր պսակեա զմեր ննջեցեալսն. ողորմած Տէր մըր-

մեա՛ ԲԲ՜ հոգւոյ՛ն մե՛ր ննջե՛ցելո՛ց ։
Հոգւոյն հանգուցելոց ։ Հայր մեր որ յերկինս ։

---

Եւ դնեն 'ի դագաղն. և բառնան քահանայք և հանեն 'ի դուրս. և կատարի այս կարգ առ դրանն ։

Շարական, ԲՁ ։

Ո՛ր կոչեցեր առ քեզ Տէ՛ր ըզտիեզերս ամենայն, ընկալ ըզմեր ըզննջեցեալսն 'ի գոգ նահապետին Աբրահամու, ողորմած Տէր փրկիչ և բարերար ։ Ո՛ր թողութեանց ես տուող Աստուած, թող ըզմեղս մեր ննջեցելոցն, կարող յամենայնի և հզօր . ողոր ։ Ո՛ր լուսատու ես տիեզերաց Քրիստոս Աստուած, լուսաւորեա և ըզմեր ըզննջեցեալսն լուսով երանաւէտ զուարթնոցն . ողոր ։
Աստ . Սուրբ եւ աստուածածին Մարիամ, ցանկալի կուսից և պարծանք ազգի մարդկան, մայր եւ աղախին մեծացուցանեմք ։ Անկէզ մորենի և տաճար ընդհանուր լուսոյն, անարատ և անխախտելի կուսութիւն . մայր ։ Խորհուրդ կենաց և մայր կենդանութեան, և առագաստ հրափայլ ծածկմամբ . մայր և ։

Խաչ. Այսօր խնդրի՛ պատուակա՛ն փայտ խաչի՛ն աւանդեա՛լն ՚ի գողգոթա, ՚ի՛ ձեռն աստուածասէ՛ր դշխոյին. Եկայք հաւատացեալք երկրպագեսցուք աստուածայի՜ն սուրբ նշանին: Այսօր ընծայէ՛ գողգոթա՛ ըզծածկեա՛լն ՚ի յերկրի, վերաբերեա՛լ անուշահոտ խնկովք, ՚ի ձեռն երանելւո՛յն Յուդայի. Եկայք հա:

Փառ. Այսօր ՚ի ձեռըն փրկակա՛ն սուրբ Խաչին կենագործի՛ պատուանին մեռեալ. եւ ողբա՛յ սատանայ ըզկործա՛նումն իւր. Իսկ մեք Քրիստոսի հաւատացեալք Երկիր:

Այժմ. Արժանաւորաց քոց աղօթիւք յիշեա ըզմեր ըզննջեցեալսն, յորժամ գայցես անձա՜մբ փառօք հատուցանել մարդկան ըստ գործս. Եւ մեր ննջեցելոցն շնորհեա՛ դասե՜լ ընդ սուրբըս քո:

Սաղմոս, ճԼԷ.

Տէր ողորմութիւն քո յաւիտեան, զգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ:

Խոստովան եղէց քեզ, Տէր, բոլորով սրտիւ իմով. առաջի հրեշտակաց սաղմոս ասացից քեզ:

Ընթերցուածս ՚ի Թուոց. Ի. 23:

Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ընդ

Ահարոնի 'ի Հովր լերինն, 'ի սահմանս երկրին Եդովմայեցւոց, և ասէ. Յաւելցի Ահարոն առ ժողովուրդ իւր, զի մի մտցէք յերկիրն զոր ետու որդւոցն Իսրայելի. քանզի բարկացուցէք զիս 'ի վերայ Ջուրցն բամբասանաց: Ա՛ռ դու զԱհարոն և զԵղիազար զորդի Նորա, և հա՛ն զնոսա 'ի Հովր լեառն յանդիման ամենայն ժողովրդեանն. եւ մերկացո՛ յԱհարոնէ զպատմուճան Նորա, եւ զգեցուսցես Եղիազարու որդւոյ Նորա. եւ Ահարոն յաւելեալ մեռցի անդ: Եւ արար Մովսէս որպէս և հրամայեաց Նմա Տէր, և եհան զնոսա 'ի Հովր լեառն առաջի ամենայն ժողովրդեանն. եւ մերկացոյց յԱհարոնէ զհանդերձս Նորա, եւ զգեցոյց զնոսա Եղիազարու որդւոյ Նորա: Եւ մեռաւ Ահարոն 'ի գլուխ լերինն. և իջին Մովսէս եւ Եղիազար 'ի լեռնէ անտի. եւ ետես ամենայն ժողովուրդն թէ վախճանեցաւ Ահարոն, եւ լացին զԱհարոն զերեսուն օր ամենայն տունն Իսրայելի: Իւ վախճանեցաւ Մովսէս ծառայ Տեառն յերկրին Մովաբու ըստ բանի Տեառն. եւ թաղեցին զնա 'ի Գայի մերձ 'ի տունն Փոգովրայ. և ոչ ոք գիտաց զգերեզման Նորա մինչեւ ցայսօր: Եւ Մովսէս էր ամաց հարիւր և քսանից 'ի վախճանելն իւրում, եւ ո՛չ վատեցին աչք Նորա

*և ոչ խորշոմեցան ծնօտք նորա ։ Եւ լացին որդիքն Իսրայելի զՄովսէս 'ի Յարաբովթ Մովաբու առ Յորդանանու յանդիման Երիքովի աւուրս երեսուն. եւ կատարեցան աւուրք սգոյ լալեացն Մովսիսի ։ Եւ Յեսու որդի Նաւեայ լցաւ հոգւով իմաստութեան, զի եդ Մովսէս զձեռն իւր 'ի վերայ նորա. և հնազանդեցան նմա որդիքն Իսրայելի, և արարին որպէս պատուիրեաց Տէր Մովսիսի ։ Եւ ոչ եւս եկաց մարգարէ յԻսրայելի իբրեւ զՄովսէս, այր՝ զոր ծանեաւ Տէր դէմ՝ յանդիման, ամենայն նշանօք և արուեստիւք՝ զոր առաքեաց Տէր առնել յերկրին եգիպտացւոց, 'ի փարաւոն և 'ի ծառայս նորա և յամենայն երկիր նորա զնշանս մեծամեծս, զձեռն հզօր եւ զբազուկ բարձր՝ զոր արար Մովսէս առաջի ամենայն որդւոցն Իսրայելի ։*

Ընթերցուածս յԱռակաց ։ Իմաստ. Դ. 7.

*Իսկ արդարն եթէ հասցէ 'ի վախճանել՝ 'ի հանգստեան եղիցի ։ Զի ծերութիւն պատուական՝ ոչ բազմաժամանակեայն է, եւ ոչ որ թուով ամացն չափիցի. այլ ալիք՝ իմաստութիւն մարդոյ են, և հասակ ծերութեան՝ կեանք անարատք ։ Զի հաճոյ եղեալ Աստուծոյ սիրեցաւ, և կենդանւոյն 'ի միջոյ մեղա-*

ւորաց փոխեցաւ։ Յափշտակեցաւ՝ զի մի՛ չարութիւն ինչ շրջեսցէ զիմաստութիւն նորա, կամ՛ նենգութիւն պատրեսցէ զանձն նորա։ Զի չարակնութիւն անզգամութեան շլացուցանէ զբարիս, և յածումն ցանկութեան խուճապէ զմիտս անմեղս։ Կատարեալ ՚ի սակաւուն ելից զժամանակս երկայնս. զի ցանկալի էր Տեառն անձն նորա, վասն այնորիկ տագնապեցաւ ՚ի միջոյ չարեաց։ Իսկ ժողովուրդք տեսին և ոչ իմացան, և ոչ եդին ՚ի մտի այնպիսի ինչ, եթէ իրաւունք Աստուծոյ ՚ի վերայ սրբոց իւրոց, եւ այցելութիւն ՚ի վերայ ընտրելոց նորա։ Դատապարտէ արդար հանգուցեալ զամբարիշտս կենդանիս, և մանկութիւն վաղվաղակի վախճանեալ՝ զբազմամեայ ծերութիւն անիրաւի։ Զի տեսցեն զվախճան իմաստնոյ, եւ ոչ իմասցին՝ զի՞նչ խորհեցաւ վասն նորա, և առ իմէ՞ զգուշացաւ նմա Տէր։

Ընթերցուած յԵրեմիայ մարգարէէ, ՈՂԲ. Գ. 1։

Աստուած հզօր, հայեաց յաղքատութիւն իմ. ՚ի ձեռն գաւազանի սրտմտութեան իւրոյ ընկալաւ զիս, և ած ՚ի վերայ իմ խաւար՝ և ոչ լոյս. բայց սակայն դարձոյց ՚ի վերայ իմ զձեռն իւր հանապազ։ Մաշեաց զմորթ եւ

զմարմին իմ, զոսկերս իմ փշրեաց առ հասարակ. շինեաց 'ի վերայ իմ և պատեաց զգլուխ իմով. եւ ջանացաւ նստոյց զիս 'ի խաւարի իբրեւ զմեռեալ յաւիտենից: Կուտեաց 'ի վերայ իմ, և ոչ եւս կարեմ խլրտել. ծանրացոյց 'ի վերայ իմ քան զպղինձ. և արար զիս նետալէց, և եղէ ծաղր ժողովրդեան իմոյ:

Պօղոսի առաքելոյն 'ի Կորնթացւոց երկրորդ թղթոյն է ընթերցուածս: Դ. 14:

Զայս գիտեմք՝ եթէ որ յարոյցն զՅիսուս, և զմեզ ընդ Յիսուսի յարուսցէ. և յանդիման կացուսցէ ձեօք հանդերձ, քանզի ամենայն ինչ վասն ձեր է. զի շնորհքն յաճախեալք 'ի բազմաց գոհութենէ անտի, առաւելասցին 'ի փառս Աստուծոյ: Վասն որոյ և ոչ ձանձրանամք. այլ թէպէտ և արտաքին մարդս մեր ապականի, այլ ներքին մարդն մեր նորոգի օր ըստ օրէ. զի առժամայն յաճախութիւն թեթեւ նեղութեանս մերոյ 'ի յաւիտենական առաւելութիւն, զմեծութիւն փառացն գործէ 'ի մեզ: Քանզի ոչ գիտեմք զերեւելիսս, այլ զաներեւոյթսն. զի երեւելիքս առժամանակ մի են. և աներեւոյթքն յաւիտենականք: Քանզի գիտեմք՝ զի եթէ երկրաւոր տաճար շինուածոյս մերոյ քակտեսցի, շի-

նած յԱստուծոյ ունիմք՝ տաճար առանց ձեռագործի յաւիտենական յերկինս . եւ ընդ այս տաղտկամք , քանզի զբնակութիւնն երկնից փափագեմք զգենուլ . միայն թէ յոր-ժամ զգենուցումքն , ոչ մերկ գտանիցիմք ։ Քանզի որ եմք ընդ յարկաւս ընդ այսուիկ՝ տաղտկամք ծանրացեալք . զի ոչ կամիմք մեր-կանալ , այլ զայն 'ի վերայ այսր զգենուլ , զի ընկղմեսցի մահկանացուս 'ի կենաց անտի ։ Այլ որ յաջողէն մեզ 'ի սոյն , Աստուած է . որ ետ մեզ զառհաւատչեայ Հոգւոյն ։ Արդ հա-մարձակիմք յամենայն ժամ, և գիտեմք եթէ որչափ յամեմք 'ի մարմնի աստ , օտարանամք 'ի Տեառնէ . զի հաւատովք գնամք , եւ ոչ կարծեօք ։ Այլ համարձակիմք , և առաւել եւս հաճեալ եմք ելանել 'ի մարմնոյ աստի՝ և մտանել առ Աստուած . վասն որոյ և ա-ռատանամք . զի եթէ յամիցեմք և եթէ ե-լանիցեմք , հաճոյ և եթ լիցեմք նմա ։ Քանզի ամենեցուն մեզ յանդիման լինել կայ առաջի ատենին Քրիստոսի , զի ընկալցի իւրաքանչիւր իւրով մարմնով՝ զոր ինչ գործեաց յառաջ , եթէ բարի և եթէ չար ։

Աւետարան . Հաւատացի զոր եւ խօսեցայ , եւ ես խոնարհ եղէ յոյժ ։

Ալէլուիա Օրթի ։

Խաղաղութիւն ամենեցուն ։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի
որ ըստ Յովհաննու ։ ԺԴ . 15 ։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ ։

Եթէ սիրէք զիս՝ զպատուիրանս իմ պահեսջիք . եւ ես աղաչեցից զՀայր , եւ այլ մխիթարիչ տացէ ձեզ , զի ընդ ձեզ բնակեսցէ 'ի յաւիտեան . զՀոգին ճշմարտութեան , զոր աշխարհս ոչ կարէ ընդունել . զի ոչ տեսանէ զնա եւ ոչ ճանաչէ զնա . բայց դուք ճանաչէք զնա , զի առ ձեզ բնակեսցի , և ընդ ձեզ եղիցի ։ Ոչ թողից զձեզ որբս , գամ առ ձեզ . փոքր միւս եւս , և աշխարհս ոչ եւս տեսանէ զիս . բայց դուք տեսանիցէք զիս . զի ես կենդանի եմ , եւ դուք կենդանի լինելոց էք ։ Յայնմ աւուր գիտասջիք դուք , զի ես 'ի Հօր իմում , և դուք յիս , և ես 'ի ձեզ . որ ունի զպատուիրանս իմ եւ պահէ զնոսա , նա է որ սիրէ զիս , և որ սիրէն զիս՝ սիրեսցի 'ի Հօրէ իմմէ , եւ ես սիրեցից զնա , և երեւեցուցից նմա զիս ։ Ասէ ցնա Յուդա՝ ոչ Սկարիովտացին . Տէր , զի՞ եղեւ՝ զի մեզ յայտնելոց ես զքեզ՝ և ոչ աշխարհի ։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնա . Եթէ ոք սիրէ զիս՝ զբանն

իմ պահեսցէ, եւ Հայր իմ սիրեսցէ զնա. եւ առ նա եկեսցուք, եւ օթեվանս առ նմա արասցուք: Եւ որ ո՛չն սիրէ զիս՝ զբանս իմ ո՛չ պահէ. եւ բանն իմ զոր լսէք՝ ո՛չ է իմ, այլ Հօրն՝ որ առաքեացն զիս:

Քարոզ.

Վասն ՚ի գիշերի և ՚ի տունջեան և յամենայն ժամու խօսել մեզ զբանն Տեառն, զՏէր աղաչեսցուք:
Վասն չանկանելոյ մեզ ՚ի փորձութիւն, որում ոչ կարեմք հանդուրժել, զՏէր աղա.
Վասն անբիծ և անդատապարտ կալ մեզ առաջի ահեղ ատենին Քրիստոսի, զՏէր աղա:
Վասն առաջնորդելոյ մեզ ՚ի նաւահանգիստն կենաց անվախճանից, զՏէր աղա.
Վասն արժանի լինելոյ մեզ վերին կոչմանն եւ երկնից արքայութեանն, զՏէր աղա.
Վասն հոգւոցն: Եւ ևս: Զանձինս մեր. Ողորմեայց:

Աղօթ.

Օրհնեալ ես արդար դատաւոր և ողորմած Աստուած. որոյ ճշմարտութիւնդ անպատում է, և ողորմութեանդ ո՛չ գոյ թիւ, և վասն արդար դատաստանի քոյ՝ լուծեր ՚ի հող զհնչաւոր մարմինս

մեր զպատրեալս 'ի բանսարկուէն՝
ասելով հող էիր և 'ի հող դարձ-
ցիս . ըստ որում խոնարհեցան
անձինք մեր՝ եւ յերկիր մածան
մէջք մեր ։ Իսկ վասն բազում ո-
ղորմութեան քոյ, մարդասէր Տէր,
խոնարհեցար միւսանգամ նորո-
գել 'ի մարմին հոգեւոր . առա-
քեցար դու առ մեզ ինքնին Միա-
ծինդ Հօր, և տպաւորեցեր յան-
ձին քում կամաւորութեամբ ըզ-
մեր մահս . եդար 'ի գերեզմանի,
համարեցար ընդ մեռեալս, յա-
րուցեալ համբարձար փառօք՝ նըս-
տար ընդ աջմէ Հօր . և զտնկակիցս
մահու քոյ, խոստացար առնել
ըստ նմանութեան քոյ զփրկելիս
քո . և զմարմին խոնարհութեան
նոցա կերպարանակից առնել մար-
մնոյ փառաց քոց յերեւել յայտ-
նութեան քոյ 'ի փող յետին՝ յոր-

ժամ գայցես տալ նոցա վարձս ։ Վասն որոյ աղաչեմք զքեզ, Տէր բարերար, արա՛ եւ զսա արժանի փառաւոր յարութեանդ ընդ սուրբս քո, յաւուր յայնմիկ հանդիպիլ քեզ ամպովք յօդս. որպէս զի զուարթերես կացցէ յաջակողման ընդ ընտրելոց քոց, և զնոցա խոստացեալ բարիսն ժառանգեսցէ, և գոհանալով փառաւորեսցէ զՀայր և զՈրդի և ։

Խաղաղութիւն ամենեցուն ։

Աստուծոյ երկիրպագեսցուք ։

Որ յերկնային զինուորութեանցն անդադար փառաբանիս սրբասացութեամբ 'ի հրեշտակացն, աթոռոց, զօրութեանց, տէրութեանց, պետութեանց, իշխանութեանց, սերովբէից եւ քերովբէից, որք անլռելի պարակցութեամբ հանապազ զքեզ գո-

վեալ փառաւորեն, հաճեցար և 'ի ստորայնոցս առնուլ քեզ երկրպագութիւնս ։ Դու, Տէր, անսուտ բանիւ քով խոստացար և ասացեր. եթէ որ հաւատայ յիս, զմահ մի՛ տեսցէ 'ի յաւիտեան. և զփոխումն որպէս 'ի մահուանէ 'ի կեանս օրինադրեցեր՝ կոչելով զքեզ Աստուած կենդանեաց. վասն զի ամենեքեան քեզ կենդանիք են ։ Ընկալ, մարդասէր Տէր, աղաչեմք զքեզ զխնդրուածս մեր. և դասաւորեա՛ զհոգի հանգուցելոյս (այս անուն) քահանայի 'ի քեզ ճշմարիտ հաւատով ընդ ամենայն սուրբս քո՝ յառաջագահ դասուն 'ի միւսանգամ քո գալստեանդ. զի և սա արժանաւոր եղիցի գոհանալով փառաւորել զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգիդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւի ։

Ուհ գործեալ երկնաւորաց՝ զան մաւաղջի քո նախընթաց , զինուորեալս քո ժողովելով քեզ ընդ առաջ բերեն ամպով . ընդ աղաւնեաց օդապարից խառնեալ ընդ սուրբ երամից . դասաւորեալ ընդ վերնոցն Երգել ըղփառս ընդ զուարթնոցն :

Սարսափին տարերք երկրի՝ յորժամ փառօք գաս հայրենի . որեգական լոյս խաւարի լուսինն աստեղքն նուաղին . ընդ յաւուրն աներեկի լուսաւորեալ լուսով քոյին . դասս :

Երգ . Տէրունահաղորդ չարչարանօք ՚ի յանձն առեր ըղմահ խաչին . եւ փայտին բարձող եղեր վասն ադամայ նախաստեղծին . օղոր :

Հոգւոյն հանգուցելոց : Հայր մեր որ յերկինս :

---

Եւ բառնան տանին դէպ յեկեղեցին . բայց ՚ի ճանապարհին ՚ի չորս տեղւոջ հանգիստ առնեն :

Յառաջին հանգիստն այս կարգ կատարի : Շարական ԱՁ .

Այսօր գոլով ՚ի Բեթանիա քո ամենազօր հրամանաւդ ձայնեցեր Ղազարու , և դողացաւ մահ . դժոխք պարտեցաւ , ապականութիւն լուծաւ . կենդանարար Քրիս-

տօս կեցն ըղմեզ։ Այսօր գոչէ՛ ՚ի Բեթանիա զքո՛ զաշխարհակեցո՛յց սուրբ զյարութիւնդ յառաջագո՛յն ծանուցեր անմապականաւո՛ր կոչմամբ զչորեքօրեայն ՚ի թաղմանէ. կեն։ Այսօր գոչէ՛ ՚ի Բեթանիա Եբրայեցւո՛ց մանկունքն սքանչացեալ աւէ՛տին. զՄարիամու զեղբայրն ՚ի թաղմանէ յարուցեալ որդւոյն Մարիամու. կեն։

Ընթերցուած յեսայեայ մարգարէ է։ Թ. 8։

Մահ առաքեաց Տէր ՚ի վերայ Յակովբայ, եկն եհաս ՚ի վերայ Իսրայէլի։ Եւ ծանիցեն ամենայն ժողովուրդն եփրեմեան և որ նստէինն ՚ի Սամարիա, որ հպարտութեամբ և ամբարտաւանութեամբ սրտից խօսեցան եւ ասեն. աղիւսք անկան, այլ եկայք վէմս տաշեսցուք. զմայրս և զեղեւնափայտս հարցուք, և շինեսցուք մեզ աշտարակ։ Եւ կործանեսցէ Աստուած զյարուցեալսն ՚ի վերայ լերին Սիովնի, և զթշնամիս Յուդայ ցրուեսցէ. զԱսորեստան յելիցն արեւու, եւ զՅոյնս ՚ի մտիցն արեւու. որք ուտէին զԻսրայէլ բերանալիր ամենայն բերանով։ Ի վերայ այսր ամենայնի ոչ դարձաւ բարկութիւն նորա, այլ տակաւին ձեռն իւր բարձրացեալ է։

Պօղոսի առաքելոյն 'ի Թեսաղոնիկեցւոց առաջին թղթոյն է ընթերցուածս։ Դ · 14։

Բայց զայս ասեմք Տեառն բանիւ, թէ մեք որ կենդանիքս եմք մնացեալք՝ 'ի գալստեանն Տեառն ոչ ժամանեմք ննջեցելոցն · զի ինքն Տէր հրամանաւ՝ 'ի ձայն հրեշտակապետի եւ 'ի փող Աստուծոյ իջանէ յերկնից, եւ մեռեալք 'ի Քրիստոս յարիցեն յառաջագոյն։ Ապա և մեք որ կենդանւոյն մնացեալ իցեմք՝ նոքօք հանդերձ յափշտակեսցուք ամպովք ընդ առաջ Տեառն յօդս, և այնպէս յամենայն ժամ ընդ Տեառն լինիցիմք։ Այսուհետեւ մխիթարեցէք զմիմեանս բանիւքս այսոքիւք։

Ալէլուիա · Եհան զիս 'ի գբոյ տառապանաց, 'ի կաւոյ և 'ի տղմոյ ։

Ալէլուիա Օրթի։

Խաղաղութիւն ամենեցուն ։

Սրբոյ աւետարանին Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մատթէոսի։ ԺԴ · 23։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ։

Եւ իբրեւ ընդ երեկս եղեւ, անդ էր միայն։ Եւ նաւն մեկնեալ էր 'ի ցամաքէն բազում ասպարիսօք՝ ծփեալ յալեացն · քանզի ընդդէմ էր հողմն։ Եւ 'ի չորրորդում պահու գի-

չերրն եկն առ նոսա Յիսուս գնալով 'ի վերայ ծովուն ։ Իբրեւ տեսին զնա աշակերտքն զի գնայր 'ի վերայ ծովուն՝ խռովեցան, եւ ասեն՝ թէ առ աչօք ինչ իցէ . և առ ահին աղաղակեցին ։ Եւ վաղվաղակի խօսեցաւ ընդ նոսա Յիսուս եւ ասէ . Քաջալերացարուք, ես եմ մի երկնչիք ։ Պատասխանի ետ նմա Պետրոս և ասէ . Տէր, եթէ դու ես, հրամայեա ինձ գալ առ քեզ 'ի վերայ ջրոցս ։ Եւ նա ասէ . Եկ ։ Եւ իջեալ 'ի նաւէն Պետրոս՝ գնաց 'ի վերայ ջուրցն, եւ եկն առ Յիսուս ։ Եւ տեսեալ զհողմն սաստիկ՝ երկեաւ . եւ իբրեւ սկսաւ ընկղմել՝ աղաղակեաց եւ ասէ . Տէր, փրկեա զիս ։ Եւ վաղվաղակի Յիսուս ձգեաց զձեռն իւր կալաւ զնա եւ ասէ . Թերահաւատ, ընդէ՞ր երկմտեցեր ։ Եւ իբրեւ ելին 'ի նաւն՝ հանդարտեաց հողմն ։ Եւ որ 'ի նաւին էին՝ մատեան երկիրպագին նմա եւ ասեն . Արդարեւ որդի Աստուծոյ ես դու ։ Եւ անցեալ եկին 'ի ցամաք 'ի Գեննեսարէթ . եւ իբրեւ ծանեան զնա արք տեղւոյն այնորիկ, առաքեցին ընդ ամենայն գաւառն՝ եւ ածին առ նա զամենայն հիւանդս ։ Եւ աղաչէին զնա, զի գոնէ միայն 'ի քղանցս հանդերձի նորա մերձեսցին . եւ որ միանգամ մերձեցանն՝ փրկեցան ։

Սարկաւագն. Եւ եւս խաղաղութեան զՏէր 'աղա.
Եւ ժողովուրդն ասէ, Երեք Տէր ողորմեա.

Աղօթք.

Որ Թագաւորդ ես յաւիտենից և եւս, որ առնես զամենայն ինչ առաւել քան զոր խնդրեմք եւ իմանամք, որ զամենայն ինչ 'ի բարի մատակարարեցեր որդւոյ մարդկան: Ընկա՛լ զհոգի քահանայիս (այս անուն.) և հանգո՛ ընդ սուրբս քո՝ որք 'ի սկզբանէ հաճոյ եղեն քեզ: Ընկալ զսա ընդ արդարս քո. և 'ի խորանս սիրողաց քոց բնակեցո՛ զսա: Եւ եթէ մարդկօրէն ինչ յանցեալ իցէ սորա բանիւ՝ կամ գործով՝ կամ մտածութեամբ, Դու, որպէս բարերար և մարդասէր և ողորմած Աստուած, թողութիւն շնորհեա՛ սմա: Եւ զմեր ամենեցուն ել յաշխարհէս խաղաղութեամբ յա-

ջողեա, լինել ժառանգորդ երկ-
նից արքայութեանդ ։ Զի և մեք
յամենայն ժամ փառաւորեսցուք
զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգիդ,
այժմ և միշտ և յաւիտեանս յաւ-
իտենից . ամէն ։

Հոգւոցն հանգուցելոց ։ Հայր մեր որ յերկինս ։

---

Եւ բարձեալ տանիցեն մինչեւ 'ի յերկրորդ հանգիստն ։
Եւ անդ դարձեալ սկսանին Շարական, ԱՋ .

Կենդանութեանց բաշխող Քրիստոս 'ի Բե-
թանիա եկաւորեալ այսօր, բարեկամին Ղա-
զարու պարգեւէ զկենդանութիւն ։ Տրտմ-
ընաբար արտասուելով ընդ Մարթայի և ընդ
Մարիամու ողբակցէր . և որպէս մարդ հար-
ցանէր ուր եդիք ըզՂազարոս ։ Եւ որպէս
զԱստուած բարբառով յարուցանէ 'ի մեռե-
լոց ըզչորեքօրեայն . եւ զուգընթաց ձայնին
մեռեալն եկն արտաքս անապական ։

Ընթերցուած յԵսայեայ մարգարէ է ։ ԻԹ . 22 .

Վասն այսորիկ այսպէս ասէ Տէր 'ի վերայ

տանն Յակովբայ զոր ընտրեաց յԱբրահամէ. ոչ այժմ ինչ ամաչեսցէ Յակովբ, և ոչ այժմ զերեսս այլագունեսցէ Իսրայէլ. այլ յորժամ տեսցեն որդիք նորա զգործս իմ, վասն իմ սուրբ արասցեն զանուն իմ, և սուրբ արասցեն զսուրբն Յակովբայ, և երկիցեն յԱստուծոյ Իսրայելի։ Եւ ծանիցեն մոլորեալք հոգւով զիմաստութիւն. Եւ տրտնջօղք ուսցին զհնազանդութիւն, Եւ լեզուք թոթովախօսք ուսցին խօսել զխաղաղութիւն։

Պօղոսի առաքելոյն 'ի Կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուածս։ Բ. 6։

Զիմաստութիւն խօսիմք ընդ կատարեալս, զիմաստութիւն ոչ զաշխարհիս այսորիկ եւ ոչ զիշխանաց աշխարհիս այսորիկ զխափանելեացս, այլ խօսիմք զԱստուծոյ իմաստութիւնն ծածուկ խորհրդով, զոր յառաջ քան զյաւիտեանս սահմանեաց Աստուած 'ի փառս մեր. զոր ոչ ոք յիշխանաց աշխարհիս այսորիկ ծանեաւ. զի եթէ էր ծանուցեալ, ոչ արդեօք զՏէր փառացն 'ի խաչ հանէին։ Այլ որպէս եւ գրեալ է, զոր ակն ոչ ետես, եւ ունկն ոչ լուաւ, և 'ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց։ Այլ մեզ յայտնեաց Աստուած Հոգ-

ւովն իւրով. զի Հոգին զամենայն քննէ, եւ զխորս Աստուծոյ։

Ալէլուիա. Փրկէ Տէր զանձինս ծառայից իւրոց, մի՛ զղջասցին ամենեքեան՝ որք յուսացեալ են ՚ի նա։

Ալէլուիա Օրթի։

Խաղաղութիւն ամենեցուն։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մարկոսի։ Ժ. 28։

Առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Սկսաւ ասել ցնա Պետրոս. Ահաւասիկ մեք թողաք զամենայն, և եկաք զկնի քո։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ. Ամէն ասեմ ձեզ, ոչ ոք է որ եթող զտուն, կամ զեղբարս, կամ զքորս, կամ զհայր, կամ զմայր, կամ զորդիս, կամ զագարակս՝ վասն իմ կամ վասն աւետարանին, եթէ ոչ առնուցու հարիւրապատիկ այժմ յայսմ ժամանակի տունս, և եղբարս, և քորս, և մարս, և որդիս, և ագարակս հալածանօք հանդերձ, և յաշխարհին որ գալոց է՝ զկեանսն յաւիտենականս։ Զի բազումք եղիցին առաջինք՝ յետինք, և յետինք՝ առաջինք։

Սարկաւագն. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչ.

Եւ ժողովուրդն ասէ, երեք Տէր ողորմեա։

Աղօթք ։

Տէր տէրանց՝ Աստուած աստուածոց՝ արարիչ ամենայն արարածոց, Հայր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ օրհնեալդ ես եւ փառաւորեալ յաւիտեան ։ Դու, Տէր, կարող յամենայնի նայեա 'ի մեզ՝ եւ ողորմեա՛ մեզ. եւ մի՛ անտես առներ զաստեղծուածս ձեռաց քոց ։ Թէպէտ տկար և անարժան եմք, սակայն յուսամք զթողութիւն մեղաց գտանել 'ի քէն. զի ողորմութիւն քո յաղթող գտանի 'ի վերայ բարերար կամաց քոց ։ Տէր բարերար և անոխակալ, տո՛ւր մեզ համարձակութիւն կալ առաջի աստուածութեանդ քո ։ Եւ զոր ընտրեցեր եւ կոչեցեր յառաջնորդութիւն՝ այժմ հրաժարեաց 'ի մէնջ, և դարձաւ 'ի հող յորմէ առեղծեր զդա ։ Վասն որոյ մեք

ժողովուրդք քո եւ գինք արեան Միածնի քոյ աղաչեմք զքեզ՝ զի հանգուսցես զհոգի սորա առ ամենայն սրբոց եւ սիրողաց անուան քոյ։ Եւ 'ի միւսանգամ գալստեանն քոյ յորժամ գայցես տալ վարձս ծառայից քոց՝ բարերարեա, մարդասէր Տէր, 'ի ծառայս քո՝ որ այժըմ հանգուցեալս է. և թող սմա զյանցանս իւր եւ զմտաւածութիւնս, որ խորհրդովք և որ գործովք, զկամայ և զակամայ, զգիտութեան եւ զանգիտութեան։ Եւ հոգւոյ սորա առաջնորդեա՛ յերկիր ուղիղ՝ որ տանի 'ի կեանսըն յաւիտենականս։ Եւ զմեզ զամենեսեան օրհնեա՛ հոգեւոր օրհնութեամբ քով, և առաջնորդեա՛ մեզ արժանաւորիլ արքայութեանդ ընդ ամենայն սուրբս քո։ Զի այժմ և յամենայն ժամու

միշտ գոհանալով փառաւորեսցուք զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին. այժմ և միշտ և ։

Հոգւոյն հանգուցելոց։ Հայր մեր որ յերկինս։

---

Եւ տաղցեն ՚ի յերրորդ հանգիստն։

Եւ անդ ասեն Շարական, ԲՁ։

Յաստուածային ձայնէ գոչմանըն սարսեցին դողալով կարապետութք դժոխոցն. եւ մեռեալըն ելին արտաքս ՚ի նմանապակն։ կոչեալ ՚ի դուրս այրին եւ ձայնէր ազդ արարող բարբառովն ՚ի գերեզմանն. Ղազարէ ել արտաքս ՚ի նմա։ Ելեալ ՚ի գերեզմանէն երիզապինդ պատանօքըն մեռեալն. հրամայեաց լուծանել ՚ի կենանին յանուրենից։

Ընթերցուած յԵսայեայ մարգարէէ։ խգ. 1։

Եւ արդ այսպէս ասէ տէր Աստուած որ արար զքեզ, Յակոբ, և որ ստեղծ զքեզ, Իսրայէլ։ Մի երկնչիր զի փրկեցի զքեզ, և կոչեցի զքեզ զանուն քո՝ թէ իմ ես։ Եւ եթէ անցանիցես ընդ ջուրս՝ ընդ քեզ եմ, և գետք զքեզ մի ողողեսցեն. եւ եթէ անցանիցես ընդ հուր՝ մի այրեսցիս, և բոց նորա զքեզ

մի կլիցէ ։ Զի ես եմ տէր Աստուած քո սուրբն Իսրայելի որ փրկեմ զքեզ․ արարի փոխանակ քոյ զԵգիպտոս և զԵթովպիա․ և զՍուենէն քեզ փոխանակեցի ։ Ուստի և պատուական խսկ եղեր, և առաջի իմ փառաւորեցար․ և ես սիրեցի զքեզ․ և տաց զմարդիկ փոխանակ քո, և զիշխանս փոխանակ գլխոյ քոյ ։ Մի երկնչիր՝ զի ընդ քեզ եմ․ յարեւելից ածից զզաւակ քո, եւ յարեւմտից ժողովեցից զքեզ ։

Պօղոսի առաքելոյն ՚ի Կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուածս ։ ԺԵ․ 35 ։

Այլ ասիցէ ոք․ զիա՞րդ յառնեն մեռեալք, կամ որո՞վ մարմնով գայցեն ։ Ա՛նմիտ, դու զոր սերմանեսն՝ ո՛չ կենդանանայ՝ թէ ոչ մեռանիցի․ եւ զոր սերմանեսն՝ ոչ զնոյն մարմին որ ծնանելոցն իցէ՝ սերմանես, այլ հատ մերկ, եթէ ցորենոյ իցէ և եթէ այլոց սերմանեաց․ եւ Աստուած տայ նմա մարմին՝ որպէս եւ կամի․ եւ իւրաքանչիւր սերմանեացն զիւր մարմին ։ Ո՛չ ամենայն մարմին՝ նոյն մարմին է․ այլ՝ այլ մարմին է մարդկան և այլ մարմին անասնոց, այլ մարմին թռչնոց և այլ մարմին ձկանց․ և մարմինք երկնաւորք, և մարմինք երկրաւորք․ այլ՝ այլ փառք

*երկնաւորաց են եւ այլ փառք երկրաւորաց, այլ փառք արեգական եւ այլ փառք լուսնի, այլ փառք աստեղաց. և աստղ քան զաստղ առաւել է փառօք։ Նոյնպէս եւ յարութիւն մեռելոց. սերմանի ապականութեամբ՝ եւ յառնէ առանց ապականութեան, սերմանի անարգութեամբ՝ և յառնէ փառօք, սերմանի տկարութեամբ՝ և յառնէ զօրութեամբ, սերմանի մարմին շնչաւոր՝ և յառնէ մարմին հոգեւոր։*

Ալէլուիա. Դու յարուցեալ գթասցիս 'ի վերայ Սիոնի. ժամանակ գթալոյ նորա հասեալ է ժամ։

Ալէլուիա Օրթի.

Խաղաղութիւն ամենեցուն.

Սրբոյ աւետարանին Յիսուսի Քրիստոսի
որ ըստ Ղուկասու։ ԻԱ. 34.

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ։

*Զգոյշ լերուք անձանց, գուցէ ծանրանայցեն սիրտք ձեր շուայտութեամբ եւ արբեցութեամբ և հոգովք աշխարհականօք. և յանկարծակի հասանիցէ 'ի վերայ ձեր օրն այն. զի իբրեւ զորոգայթ հասանիցէ 'ի վերայ ամենեցուն որ բնակեալ են ընդ ամենայն երեսս երկրի։ Արթո՛ւն կացէք այսուհետեւ, յամենայն ժամ աղօթս արարէք, զի արժա-*

նի լինիցիք զերծանել յայնմ յամենայնէ որ լինելոց է, եւ կալ առաջի Որդւոյ մարդոյ։ Եւ 'ի տուէ 'ի տաճարին ուսուցանէր, և ըզգիշերս ելեալ ագանէր 'ի լերինն՝ որ կոչէր ձիթենեաց։ Եւ ամենայն ժողովուրդն կանխէր ընդ առաւօտս առ նա 'ի տաճարն՝ լսել 'ի նմանէ։

Սարկաւագն · Եւ եւս խաղաղութեան զՏէր աղա·

Եւ ժողովուրդն ասէ, երեք Տէր ողորմեա։

Աղօթք ։

Որ արարիչդ ես ազգի մարդկան եւ ստեղծիչ, Քրիստոս Աստուած մեր, որ 'ի ձեռն սուրբ յարութեան քոյ ազատեցեր զմեզ 'ի ծառայութենէ մահու։ Նոյն ինքն եւ այժմ, Տէր, զառ 'ի յելս ճանապարհի յաշխարհէս զծառայիս քոյ խաղաղութեամբ յաջողեա՛. եւ առաջնորդեա՛ սմա 'ի ձեռն հրեշտակին խաղաղութեան 'ի յօթեվանս սրբոց քոց առաքելոցն։ Զի դու ես, տէր Աստուած

մեր, եւ քեզ վայելէ փառք՝ իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւի ։

Հոգւոյն հանգուցելոց ։ Հայր մեր որ յերկինս ։

---

Ասէն ՚ի չորրորդ հանգիստն ։ Եւ ասէն Շարական ԴՋ ։

Ա՛ղբիւր անմահութեա՛ն բղխեա՛լ ՚ի բեթա՛նիա կենա՛գործեաց զՂա՛զարոս ՚ի՛ թաղմանէ ։ Կանխեա՛լ մարխամանցն արտասուալից հառաչմամբ գտին կենդանացեալ զչորեքօրեայ զմեռեալն ։ Յանտառածային ձայնէ գոչմանըն սարսեցին դողալով դժոխք․ և երկրայինդ մեռեալն ընգեցաւ զանմահութիւն ։

Ընթերցուածս յԵսայեայ մարգարէ է ։ խթ․ 1 ։

Լուարո՛ւք ինձ՝ կղզիք, և ունկն դիք՝ հեթանոսք, յետ բազում ժամանակաց հաստատեսցի այդ, ասէ Տէր ։ Յարգանդէ կոչեաց զիս, եւ յորովայնէ մօր իմոյ կարդաց զանուն իմ․ եդ զբերան իմ իբրեւ զսուսեր սուր․ և ընդ հովանեաւ ձեռին իւրոյ թաքոյց զիս․ եդ զիս իբրեւ զնետ մի ընտիր, եւ ՚ի կապարճս իւր թաքոյց զիս․ և ասէ ցիս․ ծառայ իմ ես դու

խորշել, եւ 'ի քեզ փառաւորեցայց ։ Եւ ասեմ. զուր ուրեմն վաստակէի տարապարտուց, յոչինչ ետու զզօրութիւն իմ. վասն այսորիկ իրաւունք իմ 'ի Տեառնէ, եւ վաստակ իմ առաջի Աստուծոյ իմոյ ։ Եւ արդ այսպէս ասէ Տէր որ ստեղծ զիս յորովայնէ ծառայ իւր, ժողովել զՅակոբ եւ զԻսրայէլ առ ինքն. եւ ժողովեցայց եւ փառաւորեցայց առաջի Տեառն, և Աստուած իմ է ինձ զօրութիւն ։ Եւ ասէ ցիս. մեծ է քեզ այդ, կոչել զքեզ ծառայ իմ. հաստատել զազգս Յակոբայ, եւ զցրուեալսն Իսրայէլի դարձուցանել ։ Ահաւասիկ ետու զքեզ յուխտ ազգի և 'ի լոյս հեթանոսաց ։

Պօղոսի առաքելոյն 'ի Կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուածս ։ ԺԵ. 51 ։

Արդ խորհուրդ մի ասեմ ձեզ. ամենեքեան ննջեսցուք, այլ ոչ եթէ ամենեքեան ։ Նորոգեսցուք յանկարծակի յական թօթափել 'ի փող յետին. քանզի փող հարկանի, եւ մեռեալք յարիցեն առանց ապականութեան, և մեք նորոգեսցուք ։ Զի պարտ է ապականութեանս այսմիկ զգենուլ զանապականութիւն, և մահկանացուս այսմիկ զգենուլ զանմահութիւն ։ Այլ յորժամ մահկանացուս այս

զգեցցի զանմահութիւն, և ապականութիւնս զանապականութիւն, յայնժամ եղիցի բանն որ գրեցաւ, եթէ ընկլաւ մահ ՚ի յաղթութիւն։ Ո՞ւր է, մահ, յաղթութիւն քո. ո՞ւր է, դժոխք, խայթոց քո. խայթոց մահու՝ մեղք են, և զօրութիւն մեղաց՝ օրէնք։ Այլ շնորհք Աստուծոյ՝ որ ետ մեզ զյաղթութիւն ՚ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. որում փառք յաւիտեանս, ամէն։

Ալէլուիա. Տուր զօրութիւն ծառայի քոյ, կեցո զորդի աղախնոյ քո, և արա՛ առ իս նշան բարութեան։

Ալէլուիա Օրհի.

Խաղաղութիւն ամենեցուն.

Սրբոյ աւետարանին Յիսուսի Քրիստոսի
որ ըստ Յովհաննու։ ԺԲ. 46.

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ։

Ես լոյս յաշխարհ եկի, զի ամենայն որ հաւատայ յիս՝ ՚ի խաւարի մի՛ մնասցէ։ Եւ եթէ ոք լուիցէ բանից իմոց եւ ոչ պահեսցէ, ես ոչ դատիմ զնա. քանզի ոչ եկի թէ դատեցայց զաշխարհ, այլ զի փրկեցից զաշխարհ։ Որ անարգէ զիս, եւ ոչ ընդունի զբանս իմ. գոյ որ դատի զնա. բանն զոր ես խօսեցայ՝ նա դատի զնա յաւուրն յետնում. զի ես յանձնէ

*խմմէ ոչ խօսեցայ, այլ որ առաքեացն զիս Հայր՝ նա ետ ինձ պատուէր՝ զինչ ասացից և զինչ խօսեցայց։ Եւ գիտեմ եթէ պատուէրն այն կեանք են յաւիտենականք. արդ զոր ես խօսիմ, որպէս ասաց ինձ Հայրն, այնպէս խօսիմ։*

Սարկաւագն. *Եւ ևս խաղաղութեան զՏէր աղա.*
Եւ քահանայն ասէ, *երեք Տէր ողորմեա։*

Աղօթք.

*Աստուած հոգւոց և սանձիչ մարմնոց, որ զմահ խափանեցեր և զսատանայ կոխեցեր՝ և աշխարհի կեանս պարգևեցեր։ Հանգո՛ զհոգի ծառայիս քոյ* (այս անուն) *քահանայիս, 'ի տեղւոջ լուսոյ և 'ի տեղւոջ հանգստեան՝ ուստի փախուցեալ են ամենայն ցաւք եւ տրտմութիւնք և հեծութիւնք։ Եւ ամենայն մեղաց առ 'ի սմանէ գործելոց՝ ներո՛ւմն արասցես, եթէ բանիւ կամ գործով կամ մտածութեամբ. դու, որպէս բարե-*

*բար եւ ողորմած եւ մարդասէր Աստուած, թողութիւն շնորհեա սմա: Վասն զի ո՞վ է մարդ՝ որ կեցցէ եւ ոչ մեղիցէ. զի դու միայն ես առանց մեղաց, եւ արքայութիւն քո արքայութիւն յաւիտենից՝ որ ոչ անցանէ. եւ բանք քո ճշմարիտ են: Զի դու ես կեանք և յարութիւն ամենայն ննջեցելոց: Եւ քեզ վայելէ փառք՝ իշխանութիւն և պատիւ այժմ և:*

Հոգւոյն հանգուցելոց: Հայր մեր որ յերկինս:

---

Եւ բառնան քահանայքն, և բերեն ՚ի դուռն սրահի եկեղեցւոյն: Իսկ թէ սրահ ոչ իցէ, այսինքն ժամատուն, ածցեն յանդիման դրան եկեղեցւոյն ՚ի բացեայ: Եւ այս կանոնն կատարի:

Շարական, Բկ:

*Որ որդիդ ես և բանդ Աստուած հաւասարակից ընդ Հօր յէութեան, առ քեզ կարդամք մարդասէր. հանգո զհոգիս ննջեցելոց մեր ընդ սուրբս քո: Որ իջեր յերկնից վասն մեր, զառաջինն առեր զյանցանսն Ադամայ, մերով բնութեամբ բար-*

ձեր ՚ի վերայ խաչին անարատ ձեռօք. հա՛ն:
Որ լուծեր զիշխանութիւն մահու կամաւո-
րական մահուամբ քո Քրիստոս. բանաւորաց
զաղաչանս առաջի քո հեղեալ մաղթեմք.
հա՛նգո զհո՛:

Ատփ. Ընդ քեզ աստուածածին որ վերօրհնեալ
՚ի զօրաց հրեշտակաց. ամբ. մարդկան կեն-
դանեաց մեծացուցանեմք: Ընդ քեզ բնակ
հրեղէն աստուածութեան յիմանալի զօրացն
երանեալ, ամբ: Ընդ քեզ մայր էմմանուէլի,
մարգարէին յառաջ գուշակեալ, ամբ:

Խաչ. Խաչին կենդանարար որ եղեւ մեզ
փրկութիւն. ա՟վա. ամենեքեան ընդ քեզ
բարեբանեմք: Որ ՚ի հօրէ լուսոյ լոյս
ճառագայթեալ ՚ի յերկիր, և գաւազան
զօրութեան հաւատացելոց. ա՟վա:

Փառք. Որ լուսափայլ ծագմամբ հրաշափա-
ռապէս մեզ ցուցաւ ՚ի յօգնութիւն ընդ-
դէմ թշնամեաց. ա՟վա:

Այժմ. Որ մարմնացար վասն մեր. աղաչա-
նօք աստուածածնին Քրիստոս, յիշեա զննջ-
ջեցեալս ՚ի սուրբ անուն քո, և հանգո
զհոգիս նոցա ընդ սուրբս քո:

Սաղմոս, ԼԳ.

*Այս աղքատ կարդաց առ Տէր, եւ Տէր լուաւ սմա. յամենայն նեղութենէ նորա փրկեաց զսա։ Օրհնեցից զՏէր յամենայն ժամ, յամենայն ժամ օրհնութիւն նորա 'ի բերան իմ։*

Ընթերցուած Յեսուայ որդւոյ Նաւեայ։ ԻԴ. 29։

*Եւ պաշտեաց Իսրայէլ զՏէր զամենայն աւուրս Յեսուայ, և զամենայն աւուրս ծերոցն որ ձգեցին զժամանակս ընդ Յեսուայ, որք և տեսին զամենայն գործս Տեառն՝ զոր արար Իսրայէլի։ Եւ եղեւ յետ այսորիկ մեռանել Յեսուայ որդւոյ Նաւեայ ծառայի Տեառն՝ հարիւր և տասն ամաց. եւ թաղեցին զնա առ սահմանօք ժառանգութեան իւրոյ 'ի Թամնասաքար 'ի լերինն Եփրեմայ 'ի հիւսիսոյ լերինն Գայասու։ Եւ անդ եդին ընդ նմա՝ ուր թաղեցին զնա՝ առ 'ի յիշատակէ զսուրսն քարեղէնս, որով թլփատեաց զորդիսն Իսրայէլի 'ի Գաղգաղս, յորժամ եհան զնոսա յերկրէն Եգիպտացւոց՝ որպէս հրամայեաց Տէր. և անդ են մինչեւ ցայսօր ժամանակի։ Եւ զոսկերսն Յովսէփու հանին որդիքն Իսրայէլի յԵգիպտոսէ, և թաղեցին զնա 'ի Սիկիմ, 'ի բաժնի ագարակին զոր ստացաւ Յակոբ յամորհացւոցն բնակելոյն 'ի Սիկիմ՝*

ողջայց հարիւրոյ, եւ ետ զայն Յովսեփայ 'ի բաժնի: Եւ եղեւ յետ այսրիկ վախճանել Եղիազարու քահանայի որդւոյ Ահարոնի, և թաղեցաւ 'ի Գաբաաթ Փենեէսի որդւոյ իւրում՝ զոր ետ նմա 'ի լերինն Եփրեմայ: Յաւուրսն յայնոսիկ առեալ որդւոցն Իսրայէլի զտապանակ ուխտին Աստուծոյ շրջեցուցանէին ընդ իւրեանս: Եւ քահանայացաւ Փենեէս փոխանակ Եղիազարու հօր իւրոյ, մինչև մեռաւ եւ թաղեցաւ յիւրումն Գաբաաթ: Եւ որդիքն Իսրայէլի գնացին յիւրաքանչիւր տեղիս իւրեանց, եւ յիւրաքանչիւր 'ի քաղաքս իւրեանց:

Ընթերցուածս յԵրեմիայ մարգարէէ. ՈՂԲ. Ե. 1.

Յիշեա, Տէր, որ ինչ անցք անցին ընդ մեզ, նայեաց և տես զնախատինս մեր: Ժառանգութիւն մեր դարձաւ յօտարութիւն, եւ բնակութիւն մեր 'ի նժդեհութիւն: Որբ մնացաք մեք՝ և ոչ գոյր մեր հայր. մարք մեր իբրև այրիք 'ի ժամանակաց մերոց: Ջուր մեր գնոց արբաք, եւ փայտն մեր առանց փոխանակի եկն 'ի վերայ պարանոցի մերոյ: Հալածական եղեաք, և ոչ գտաք հանգիստ: Ձեռնաձիգ եղեն եգիպտացիքն և ասորեստանեայքն յագեցուցանել հացիւ: Հարքն մեր մեղան, և չիք

ուրեք 'ի միջի. և մեւք հարցն ընդ մեզ ելին. ծառայք տիրեցին մեզ, եւ այն որ փրկէրն զմեզ 'ի ձեռաց նոցա՝ չէր 'ի միջի։

Պետրոսի առաքելոյն 'ի Կաթուղիկեայց առաջին թղթոյն է ընթերցուած։ Ա. Յ.

Օրհնեալ է Աստուած և Հայր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ ըստ բազում ողորմութեան իւրում ծնաւ զմեզ վերստին 'ի յոյսն կենդանի 'ի ձեռն յարութեանն Յիսուսի Քրիստոսի 'ի մեռելոց։ Յանեղծ և յանարատ եւ յանթառամ ժառանգութիւնն՝ որ պահեալ է յերկինս ձեզ։ Որք զօրութեամբն Աստուծոյ պահեալք էք հաւատովք 'ի պատրաստեալ փրկութիւնն, յայտնիլ 'ի յետին ժամանակս։ Որով ուրախ լինիջիք՝ որք այժմ սակաւիկ ինչ ըստ պատշաճի իրացդ տրտմեալ էք 'ի պէսպէս փորձութիւնս։ Զի հանդէս ձերոյ հաւատոյն առաւել քան զոսկի կորստական պատուական է, որ հրով փորձեալ գտանի 'ի գովութիւն և 'ի փառս, և 'ի պատիւ յայտնութեանն Յիսուսի Քրիստոսի։ Զոր ոչն տեսիք՝ եւ սիրեցիք. ընդ որ այժմ ոչ հայեցեալք՝ բայց հաւատացէք. և ուրախ էք անճառ և փառաւորեալ խնդութեամբն։ Ընկալեալ զկատարումն հաւատոյն ձերոյ զոգւոյն փրկութիւն։

*Ալէլուիա. Տէր լոյս իմ և կեանք իմ, ես յումմէ՞ երկեայց, Տէր ապաւէն կենաց իմոց, ես յումմէ՞ դողացայց:*

*Ալէլուիա Օրհնի.*

*Խաղաղութիւն ամենեցուն:*

Սրբոյ աւետարանին Յիսուսի Քրիստոսի որ ըստ Յովհաննու: ԺԴ. 25.

*Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ:*

*Զայս խօսեցայ ընդ ձեզ մինչ առ ձեզս եմ. իսկ մխիթարիչն Հոգին սուրբ՝ զոր առաքեսցէ Հայր յանուն իմ, նա ուսուսցէ ձեզ զամենայն, և յիշեցուսցէ ձեզ զամենայն որ ինչ ասացի ձեզ: Խաղաղութիւն թողում ձեզ, զխաղաղութիւն զիմ տամ ձեզ. ոչ որպէս աշխարհս տայ՝ տամ ես ձեզ. մի խռովեսցին սիրտք ձեր, եւ մի զանգիտեսցեն: Լուայք զի ասացի ես ձեզ՝ թէ երթամ և գամ առ ձեզ. եթէ սիրէիք զիս՝ ապա ուրախ լեալ էր ձեր՝ եթէ ես առ Հայր երթամ, զի Հայր իմ մեծ է քան զիս: Եւ այժմ ասացի ձեզ մինչչեւ եղեալ, զի յորժամ լինիցի՝ հաւատասջիք: Ո՛չ ևս այլ շատ խօսեցայց ընդ ձեզ. գայ իշխան աշխարհիս այսորիկ, և յիս ինչ ոչ գտանէ. այլ զի ծանիցէ աշխարհ՝ եթէ սիրեմ զՀայր, և որպէս պատուիրեաց ինձ Հայրն՝ այնպէս առնեմ. ծ՛ն արիք գնասցուք աստի:*

Քարոզ.

Վասն ուղղելոյ զգնացս մեր 'ի ճանապարհս խաղաղութեան, զՏէր աղաչեսցուք.

Վասն ցրելոյ 'ի մէնջ զամենայն խորհուրդս չարին, զՏէր աղաչեսցուք.

Վասն պարգևելոյ մեզ առողջ խորհուրդս և առաքինի վարս, զՏէր աղաչեսցուք.

Վասն պահելոյ զմեզ ընդ հովանեաւ ամենազօր աջոյն իւրոյ, զՏէր աղաչեսցուք.

Վասն խորտակելոյ զհակառակորդն վաղվաղակի ընդ ոտիւք մերովք, զՏէր աղաչեսցուք.

Վասն հոգւոյն: Եւ ևս միա: Զանձինս: Ողորմեաց:

Աղօթք.

Տէր Աստուած փրկիչ մեր մարդասէր, կարդամք զմեծ և զամենասուրբ անունդ քո: Հանգո՛ զհոգի ծառայիս քոյ (այս անուն) քահանայի. աղաչանօք սրբուհւոյ Աստուածածնին և ամենայն սրբոց, և որք միաբանեալ հայցեմք 'ի քո առատ մարդասիրութենէդ՝ շնորհել ըզթողութիւն մեղաց սորա: Զի դու, Տէ՛ր, շնորհեցեր ծառայի քում

առաջնորդութիւն՝ հովուել ի-մաստութեամբ զժողովուրդս քո։ Նոյն ինքն և այժմ շնորհեա՛ սմա ընդ երջանիկ հայրապետացն վե-րադասիլ. զի ընդ նոսին փառա-ւորեսցէ զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին. այժմ և միշտ և։

Խաղաղութիւն ամենեցուն։
Աստուծոյ երկիրպագեսցուք։

Ո՜վ Տէր ամենեցուն և արարիչ. ո՜վ Աստուած ամենեցուն՝ և Տէր և Հայր և ուղղիչ։ Ո՜ կենաց և մահու Տէր։ Ո՜ հոգւոց մերոց շտեմարան և բարեգործ. որ առ-նես զամենայն, և յօրինեալ փո-փոխես արուեստաւոր բանիւդ ըստ ժամանակի՝ որպէս դու ինք-նին գիտես խորին քոյով իմաս-տութեամբդ և մատակարարու-թեամբ։ Ընկա՛լ եւ այժմ զաղա-չանս մեր, և զհոգի սորա հանգո՛

ընդ սուրբս քո 'ի խորանս սիրողաց անուան քոյ. և արժանի արա վերստին նորոգման. 'ի լսել զձայն աստուածային փողոյն՝ ընդ առաջ ելանել քեզ փառօք. զի կացցէ առաջի քո զուարթերես և պայծառ: Ընկալցիս եւ զմեզ յետոյ 'ի դէպ ժամանակի, շնորհօք եւ մարդասիրութեամբ Տեառնդ մերոյ և փրկչիդ Յիսուսի Քրիստոսի.

որում վայելէ փառք իշխա:

Շարական, Դկ:

Այսօր անճառ լուսոյն ծագումն, 'ի փրկութեան մեր կատարումն, խոնարհի 'ի վերնատունն 'ի ստուերական տօնից լրումն. Նախ քան զընթրիսըն խորհրդոյ ափածաւ զենջակ արկօղն լուսոյ, և ջուր առեալ ծառայաբար զոտըս լուանայր զաշակերտացն: Բանին Հօր փառացն լուսոյ Պետրոս մերձիլ յոտս ոչ ներէր, այնըմ ձեռաց որոյ են գործք երկնից երկինք և երկրաւորք. որով կուրացն աչք բացան, խուլք եւ համերք արձակե-

ցան․ որ վերածեաց զինքն 'ի ծովն, սաս-
տեաց ալեացն և լռեցին։

Գըլխոյն ընտրեալ հօտին փոքու սասանէր զխորհրդոյն ոչ գիտելոյ․ որով դառնայր և հնազանդէր, զոտս եւ ըզգլուխս մաքրել մաղթէր․ գըլխոյս ասէ չէ ինչ պիտոյ լուացմունըն ջրոյ զի լուացեալ է․ ոտքդ պէտք են մաքրութեան, յօդիլ 'ի գլուխս սրբութեամբ։

Գոսուց խորին աշակերտաց զոր նախ բաննի վարդապետեաց, այսօր գործով ըզծայրագոյնն եցոյց յինքեան զխոնարհութիւն․ սպասաւորեալ հողեղինաց այն որ անուանեալ է հրեղինաց․ առեալ պաշտօն խոր ծառա-
յիցն այն որ պաշտին 'ի սրովբէից։

Եթէ Տէրս ասէ էիք և վարդապետս բոլորից, զաշակերտացդ եւ զծառայից զոտս լուացի 'ի հնոյ ասոյից․ միմեանց և դուք համբերութեամբ՝ ցուցէք ըզնոյն խոնարհութիւն․ բարձրացելոյն 'ի կործանմանն
եւ անկելոյ բնութեանդ կանգնմանն։

Զոր մաքրեցեր յաւազանին մաքուր ձեռօք զոտս նոցին, եւ ուսուցեր խոնարհութեամբ՝ յաղթող լինել չար հրապուրին․ եւ զիմ լուա զախտն մեղաց աղաչանօք սրբոց

գընդին, և ըզգընացս ուղղեա զտուն խո-
նարհութեամբ ելեւք յերկինս։

Երգ. Յորժամ գրեանքըն կատարին որ զայնմ աւուր մեզ պատմեցին, մարգարէից բանքըն յարգին անուաքեղցըն վըճարին. որոր։

Հոգւոյն հանգուցելոց։ Հայր մեր որ յերկինս։

---

Եւ բառնան քահանայքն, և բերեն ՚ի ժամատունն, կամ մերձ առ դուռն եկեղեցւոյն։

Եւ ասեն Շարական. ԳՁ։

Հայր բարերգութ որ գըթացար ՚ի յազգս որդւոց մարդկան. առաքեցեր ըզմիածինդ ՚ի փրկութիւն. յիշեա զհոգիս ննջեցելոց մերոց, և հանգո ընդ սուրբս քո։ Որդիդ միածին որ յարեար ՚ի մեռելոց, ՚ի միւսանգամ գալըստեանն քո յարութիւն մեզ խոստացար. յիշ։ Հոգիդ ճշմարիտ մխիթարիչ սըգաւորաց, աղաչանօք սուրբ աստուածածնին և ամենայն քոց սրբոց. յիշ։

Առ. Աստուածածին երկնային դըրան աստուածային ձայնիւն աւետարանէր հրեշտակն. ուրախ լեր բերկրեալդ Տէր ընդ քեզ։

*Ի քերովբէս բազմեալ ընդ Հօր անապակա-նաբար բնակիլ հաճեցար ՚ի քում յորովայ-նի . ուր : Որ բոցեղէն սրովբէիւք շուրջափա-կեալ պահիւր, այսօր ՚ի մէջ մարդկան ՚ի գիրկս հողեղինի յայտնեալ . ուր :*

**Խաչ.** *Փայտ կենաց որ փոխանակ մահացու-ցողոյն ըզՔրիստոս պտղաբերեցեր . պա-րսպեալ պահեա զուխտս հաւատացելոց : Քեւ բացաւ մեզ ճանապարհ ծառոյն կե-նաց ՚ի սրովբէափակ պահպանութենէն . պարբս :*

**Փառք.** *Քեւ աղաւնեցաւ նախահայրն ՚ի ճա-շակմանէ պտղոյն . եւ քեզ երկրպագեն ամենայն հաւատացեալք . պարբս :*

**Այժմ.** *Ի խորան քում սիրողաց հանգուցես ընծաւոյս քո, եւ զհոգիս նոցա դասեցես ընդ սուրբս քո . զի մի դարձցի տնանկ ա-մաչեցեալ յաւուրն ահեղ ատենին :*

Սաղմոս, ԻԵ :

*Տէր սիրեցի զվայելչութիւն տան քո, և զտեղի յարկի փառաց քոց :*
*Դատ արա ինձ Տէր՝ զի ես յանբծութեան իմում գնացի . ՚ի Տէր յուսացայ զի մի՛ եղէց հիւանդ :*

Ընթերցուած յԵրրորդ Թագաւորութեանց ։ Բ. 1 ։

Եւ մերձեցան աւուրք Դաւթի մեռանելոյ, և պատուիրեաց որդւոյ իւրում Սողոմոնի, և ասէ. Ես երթամ զճանապարհ ամենայն երկրի. եւ դու զօրասցիս եւ եղիցիս յայր. եւ պահեսցես զպահպանութիւնս տեառն Աստուծոյ քոյ, գնալ 'ի ճանապարհս նորա եւ պահել զպատուիրանս նորա և զիրաւունս և զդատաստանս և զվկայութիւնս նորա, զգրեալս յօրէնս Մովսիսի. զի 'ի միտ առնուցուս զոր առնիցես, ըստ ամենայնի զոր պատուիրեմ քեզ։ Զի հաստատեսցէ Տէր զբան իւր զոր խօսեցաւ վասն իմ և ասէ, եթէ պահեսցեն որդիք քո զճանապարհս իւրեանց գնալ առաջի իմ ճշմարտութեամբ յամենայն սրտէ իւրեանց և յամենայն անձնէ իւրեանց, որպէս գնայեր դու, ասէ՝ մի պակասեսցի այր յաթոռոյ Իսրայելի։ Եւ ննջեաց Դաւիթ ընդ հարս իւր եւ թաղեցաւ 'ի քաղաքի Դաւթի։

Ընթերցուած յԵզեկիելէ մարգարէէ. Խ. 44։

Եւ տարաւ զիս 'ի սրահն ներքին. եւ ահա երկու պատշգամք 'ի ներքոյ սրահին, մի ընդ հարաւոյ դրանն որ հայէր ընդ հիւսիսի եւ հանէր ընդ հարաւ. եւ մի ընդ հիւսիսոյ

*դրանն որ հայէր ընդ հարաւ եւ հանէր ընդ հիւսիսի ։ Եւ ասէ ցիս . Այս պատշգամ որ հայի ընդ կողմանս հարաւոյ՝ քահանայից եղիցի որ պահեն զպահպանութիւնս տանն ։ Եւ պատշգամն որ հայի ընդ հիւսիսի՝ քահանայիցն եղիցի որ պահեն զպահպանութիւն սեղանոյն . Նոքա են որդիք Սադովկայ՝ որ մերձենան 'ի ղեւտացւոց առնի պաշտել զՏէր ։*

*Դարձեալ յԵզեկիելէ մարգարէէ . ԽԴ . 17 ։*

*Եւ եղիցի 'ի մտանել քահանայիցն ընդ դրունս սրահին ներքնոյ , զգեսցին զպատմուճանս կտաւիս . եւ մի զգենուցուն ասուիս 'ի պաշտամանն իւրեանց , 'ի դրանէ սրահին ներքնոյ ։ Եւ խոյրս կտաւիս ունիցին 'ի գլուխս իւրեանց , և անդրավարտիս կտաւիս յերանս իւրեանց , եւ ոչ զգենուցուն քրտնութիւն ։ Եւ յելանելն իւրեանց յարտաքին սրահն առ ժողովուրդն՝ մերկասցին զպատմուճանս իւրեանց որով պաշտիցենն . և դիցեն զնոսա 'ի սենեակն սրբութեանց , և զգեսցին այլ պատմուճանս . և մի սրբեսցեն զժողովուրդն պատմուճանօք իւրեանց ։ Եւ զգլուխս իւրեանց մի գերծցեն , և զվարսս իւրեանց մի անօսրացուսցեն . ծածկելով ծածկեսցեն զգլուխս իւրեանց ։*

Եւ զգինի մի՛ արբցեն ամենայն քահանայքն 'ի մտանելն իւրեանց 'ի ներքին սրահն ։

Պօղոսի առաքելոյն յԵբրայեցւոց թղթոյն է ընթերցուածս ։ ԺԳ . 17 ։

Ունկնդիր լերուք առաջնորդաց ձերոց և հպատակ կացէք նոցա . զի նոքա տքնին վասն ոգւոց ձերոց՝ որպէս թէ համարս տալոց իցեն ընդ ձեր . զի խնդութեամբ արասցեն զայն՝ եւ մի՛ յոգւոց հանելով . զի այն ոչ յօգուտ ձեր է ։ Աղօթս արարէք վասն մեր . զի հաւատացեալ գիտեմք՝ եթէ բարւոք միտս ունիմք . յամենայնի կամիմք բարւոք գնացս ցուցանել . և առաւել աղաչեմ՝ զի զայն առնիջէք , զի վաղագոյն պատսպարեցայց ձեզ ։ Եւ Աստուած խաղաղութեան՝ որ եհան 'ի մեռելոց զհովիւն հօտից՝ զմեծն արեամբ յաւիտենական ուխտին զՏէր մեր Յիսուս , հաստատեսցէ զձեզ 'ի գործս բարութեան՝ առնել զկամս նորա . եւ արասցէ 'ի մեզ զհաճոյսն առաջի իւր՝ 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի , որում փառք յաւիտեանս . ամէն ։

Ալէլուիա . Յիշեաց ողորմութեամբ իւրով զՅակոբ , ճշմարտութեամբ իւրով զտունն Իսրայելի , եւ տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ ։

Ալէլուիա Օրթի ։

Խաղաղութիւն ամենեցուն ։

Սրբոյ աւետարանին Յիսուսի քրիստոսի
որ ըստ Յովհաննու ։ Ժե. 11։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ ։

Զայս խօսեցայ ընդ ձեզ, զի ուրախութիւնն իմ ՚ի ձեզ լիցի, և ձեր ուրախութիւնն լցեալ եղիցի ։ Այս է պատուէր իմ, զի սիրեսջիք զմիմեանս, որպէս և ես զձեզ սիրեցի ։ Մեծ եւս քան զայս սէր՝ ոչ ոք ունի, եթէ զանձն իւր դիցէ ՚ի վերայ բարեկամաց իւրոց ։ Դուք բարեկամք էք իմ, եթէ առնիցէք զոր ես պատուիրեմ ձեզ. Ո՛չ եւս կոչեմ զձեզ ծառայս, զի ծառայն ոչ գիտէ զինչ գործէ տէրն նորա. այլ զձեզ կոչեցի բարեկամս, զի զամենայն զոր լուայ ՚ի Հօրէ իմմէ՝ ծանուցի ձեզ ։ Ոչ եթէ դուք ընտրեցէք զիս, այլ ես ընտրեցի զձեզ. եւ եդի զձեզ՝ զի դուք երթայցէք և պտղաբերք լինիցիք, և պտուղն ձեր կացցէ ։ Եւ զոր ինչ խնդրիցէք ՚ի Հօրէ իմմէ յանուն իմ, տացէ ձեզ ։ Զայս պատուիրեմ, զի սիրեսջիք զմիմեանս ։ Եթէ աշխարհ զձեզ ատեայ, գիտասջիք զի նախ զիս ատեաց ։ Եթէ յաշխարհէ աստի էիք, աշխարհ զիւրն սիրէր արդեօք. բայց զի չէք յաշխարհէ, այլ

*ես ընտրեցի զձեզ յաշխարհէ, վասն այնորիկ ատեայ զձեզ աշխարհ։ Յիշեցէք զբանն զոր ասացի ձեզ, թէ ոչ է ծառայ մեծ քան զտէր իւր. եթէ զիս հալածեցին, ապա եւ զձեզ հալածեսցեն. եթէ զբանն իմ պահեցին, ապա և զձերն պահեսցեն։ Այլ զնոյնս արասցեն ընդ ձեզ վասն անուան իմոյ, զի ոչ գիտեն զայն՝ որ առաքեացն զիս։ Իմ եթէ չէր եկեալ և խօսեցեալ ընդ նոսա, մեղ ինչ ոչ գոյր նոցա. բայց արդ չէք ինչ պատճառք վասն մեղաց իւրեանց։ Որ զիս ատեայ, եւ զՀայրն իմ ատեայ։ Եթէ զգործսն չէր գործեալ 'ի նոսա՝ զոր ոչ այլ ոք գործեաց, մեղ ինչ ոչ գոյր նոցա, բայց արդ տեսին և ատեցին՝ և զիս և զՀայր իմ. այլ զի լցցի բանն, որ յօրէնս նոցա գրեալ է, թէ ատեցին զիս տարապարտուց։ Բայց յորժամ եկեսցէ մխիթարիչն, զոր Ես առաքեցից ձեզ 'ի Հօրէ, զՀոգին ճշմարտութեան որ 'ի Հօրէ ելանէ, նա վկայեսցէ վասն իմ. եւ դուք վկայէք, զի ի սկզբանէ ընդ իս էք։ Զայս խօսեցայ ընդ ձեզ՝ զի մի գայթակղեսջիք. 'ի ժողովրդոց իւրեանց հանիցեն զձեզ։ Այլ եկեսցէ ժամանակ, զի ամենայն որ սպանանիցէ զձեզ՝ համարիցի պաշտօն մատուցանել Աստուծոյ։ Եւ զայն արասցեն ընդ ձեզ, քանզի ոչ ծանեան*

զՀայր և ոչ զիս ։ Այլ և զայս խօսեցայ ընդ ձեզ, զի յորժամ եկեսցէ ժամանակն՝ յիշիցէք՝ թէ ես ասացի ձեզ ։ Զայս 'ի սկզբանէ ոչ ա-սացի ձեզ, քանզի ընդ ձեզ էի ։

Քարոզ ։

Վասն գտանելոյ մեզ զշնորհս և զողորմութիւն 'ի բարերար Տեառնէ մերմէ, զՏէր աղաչեսցուք ։

Վասն փրկելոյ զմեզ 'ի գրպարտութենէ մարդ-կան և յորոգայթից սատանայի, զՏէր աղա ։

Վասն ամենայն անձանց քրիստոնէից եւ տանց հաւատացելոց, զՏէր աղա ։

Վասն որք 'ի լերինս յայրս և 'ի փապարս բնա-կեալ են սուրբ հարքն մեր, զՏէր աղա ։

Վասն որք սաղմոսիւք եւ օրհնութեամբ կա-տարեն զամենայն ժամանակս կենաց իւրեանց, զՏէր աղա ։

Վասն հոգւոցն հանգուցելոց՝ որք ճշմարիտ և ։ Եւ ևս միաբան ։ Զանձինս մեր և ։ Ողորմեաց մեզ ։

Աղօթք ։

Հովուապետ բարի, Քրիստոս, գտող կորուսելոյ և խնդրող մոլո-րելոցս . որ եղբարս քեզ անուա-նեցեր 'ի հողեղինաց զուրբ առա-քեալն, և Նոքօք որսացեր զմար-

դիկ 'ի կեանսն յաւիտենականս ։
Եւ այժմ ծառայս քո որ աւան-
դեաց զհոգի իւր 'ի ձեռս քո, զի
եւ սա՛ եղեւ փոքր 'ի շատէ սպա-
սաւոր Տէրութեանդ քո, յիշեա՛
զհոգի սորա եւ զմարմին որ կայ
առաջի քոյ· եւ թո՛ղ զմեղս սորա
զկամայ և զակամայ 'ի ձեռն կեն-
սաբեր խաչի քո· բարեխօսու-
թեամբ սրբուհւոյ Աստուածած-
նին եւ ամենայն սրբոց քոց· եւ
հա՛ն մասն և բաժին ընդ սուրբս
քո յարքայութեան քում։ Եւ
զմեզ արժանաւորեա՛ գոհանա-
լով փառաւորել զՀայր և զՈրդի
և զսուրբ Հոգին· այժմ և միշտ
և յաւի։

Խաղաղութիւն ամենեցուն ։
Աստուծոյ երկիրպագեսցուք ։

Դարձեալ մատուցանեմք զմաղ-
թանս մեր առ դրան սրբոյ եկե-

զեցուղ քոյ քահանայքս և ժողո-
վուրդքս. մի՛ թողուր զմեզ 'ի ձե-
ռանէ քումմէ. եւ մի՛ տար օտա-
րաց զժառանգութիւնս քո։ Եւ
'ի կատարման ծառայիս քո (այս անուն)
քահանայի, յանձն արա զմեզ ուղ-
ղափառ հովուի. զի 'ի կեանս սո-
րա դու պահէիր զմեզ և պահե-
ցեր. և այժմ եւս սուրբ Հոգւովդ
եւ խաչիւդ քով սրբով պահեա՛
զմեզ։ Եւ զվերակացուն մեր՝ որ
փոխեցաւ 'ի մէնջ 'ի յաշխարհէս՝
դասակից արա եւ աթոռակից
սուրբ հայրապետացն եւ հարց.
զի ահաւասիկ հրաժարեալ 'ի
մէնջ ողջունիւ՝ և ըստ հրամանի
քում դառնայ 'ի հող ուստի ըս-
տեղծեր զսա։ Դու, Տէր, եղիցիս
պահապան մարմնոյ սորա, և հան-
գիստ հոգւոյ սորա. յոյս յարու-
թեան 'ի մեծի աւուր գալստեանն,

յորժամ գաս ժողովել զկենդանիս և զմեռեալս, Քրիստոս, յոյս մեր և պսակ պարծանաց հաւատացելոց քոց։ Յիշեա՛ զծառայս քո ըզ-վախճանեալս, եւ կացո յաջակողմեանդ քո՝ ընդ սիրելիս երկնաւոր Հօրդ 'ի ժառանգութիւն 'ի ձեռն Նորոգող Հոգւոյդ սրբոյ։ Որում վայելէ փառք իշխանութիւն և պատիւ այժմ և։

Ելից զօրէնսըն Մովսէսի զոր խօսեցաւն 'ի Սինայի. Եկեր ըզգառն օրինակին և ըզբաղարջն ընդ եղեգբն. ըզհինն 'ի նորըս փոխելով զստուերն 'ի լոյս ճշմարտելով. փոխան գառինն ինքըն գալով գառն Աստուծոյ նըւիրելով։

Ընդ բաղարջին հաց անխմոր եա ըզմարմինն իւր զերկնաւոր, ըզկուսածինն անմերնաւոր զանապականն եւ զհոգեւոր. ընդ ոչխարին արեան մեւախն եա մեզ զարիւն իւր մեւխա կրկին, եւ եղեգան դառնանգունին փոխան ըզվարս աստուածային։

Թագաւորն արարածոց զհացըն կենաց ետ քաղցելոց, եւ ըզբաժակն ուրախարար որք յԱդամայ տրտմեցելոց. այս նոր ուխտ է իմոյ արեանն փոխան հընոյ ուխտին արեանց. զոր յիշատակ իմ առնիցէք մինչեւ եկից ես միւսանգամ:

Ժողովեալք 'ի քէն հայցեմք ընդ ժողովեալ մետասանեն, որ զկենարարըդ քո մարմին բաշխեալ ետուր ընդ բաժակին. շնորհեա և մեզ, Տէր, ընդ նոսին հաղորդ լինել քում սեղանին. կենաց հացիդ յոր փափագիմք և ըմպելւոյդ ում ծարաւիմք:

Ի յընթրելոյ աշակերտացն Յուդաս մեկնեալ 'ի սուրբ դասուց. զերծող մեղաց զգառն Աստուծոյ՝ մատնէր 'ի մահ ընդ արծաթոյ. 'Ի յընթրիսըն հոգեւոր մերձի ժըպիրհն եւ նենգաւորըն, ուտելով ընդ վարդապետըն յաճախէ զխաբէութիւն:

Լոյսըն խօսէր աշակերտացն խաւարելոյն վասըն դարձի. մի ոմն 'ի ձէնջ մատնէ, եղբարք, զիս մատնելոց է առ 'ի մահ. պետրոս լուեալ զայն զարհուրէր և անկանէր առ Յովհաննէս, հարցանել թէ ով իցէ՝ դաւաճանող վարդապետին:

Երգ․ Աղաչանօք սրբոյ խաչին եւ անբամբաս բարեխօսին. եւ սրբոյ Աստուածածնին եւ Յովհաննու կարապետին. և սրբոյն Ստեփաննոսին և առաջին մարտիրոսին. եւ սրբոյ լուսաւորչին հայաստանեայց հայրապետին. եւ սրբոյ առաքելոց և համօրէն մարտիրոսաց. օղորմ։

Հոգւոյն հանգուցելոյ։ Հայր մեր որ յերկինս։

---

Ապա տարեալ ՚ի դուռն եկեղեցւոյն՝ ասասցեն
Շարական, Գկ։

Յանըսկզբնական ծոցոյ Հօր խոնարհեալ բանդ մարմնացար ՚ի կուսէն վասն փրկութեան մերոյ, աղաչեմք ըզքեզ. զննջեցեալսն մեր ՚ի քեզ ուղիղ հաւատով յիշեա Տէր յորժամ գաս Թագաւորութեամբդ քո։ Անոխակալ քաղցրութեամբ որդի Աստուծոյ, հաճեցար բառնալ զմեղս աշխարհի քո խաչելութեամբն. աղա։ Կամաւորական մահուամբ քո լուծեր զերկունըս մահու, և արժանի արարեր Թողութեան յանցանաց քաւիչ քո արեամբ. աղա։ Որ փոխանակ մեղա-

ւորաց ըղձեւանի՛ց յանձն առեր. իջանելով 'ի դժոխս փրկեցեր 'ի մեղաւէր բանտէն զգերեալսն. ալա: Բարեբանեմք զանչափ քո զմարդասիրութիւնդ, որ երեքօրեայ յարուցեալ զկենդանութիւն պարգեւեցեր աշխարհի. ալա:

Առ. Մայր և կոյս աղախին Քրիստոսի որ բարեխօսդ ես միշտ աշխարհի. քեզ երանեն ամենայն ազինք: Մաքուր աղաւնի և հարսն երկնից Մարիամ, տաճար և աթոռ Աստուծոյ բանին. քեզ: Քեւ հաշտեցան իմանալիքն ընդ հողեղէնքս, եւ քեւ մերձեցաք 'ի փայտըն կենաց. քեզ:

Խաչ. Ով պահապան որ ծագեցար յեդեմայ, նշան յաղթութեան ընդդէմ աներեւոյթ թշնամւոյն: Դու փակելոյ դրախտին բացող և առաջնորդ մուազակին. որ զլուսեղէն սուրբն կապուտեանց անեղին հրամանաւ:

Փոխ. Քեւ ցնծան բարեպաշտքս ամենայն 'ի միւսանգամ քո գալստեանն. և յաւէժ զուարճանան դասք անմարմնոցն առ էիգս:

Այժմ. Ընդ քերովբէիցն փառաբանութեանց բարեբանեցէք զհոգին ճշմարիտ. զի հանգուցէ ընդմնջեցեալ ծառայս իւր յաւիտե-

Նկց 'ի միւսանգամ փառաց խորհ գալըստեանն ։

Սաղմոս · ՃԺԷ ։

Բացէք ինձ զդրունս արդարութեան՝ զի մտից ընդ այն, և խոստովան եղէց Տեառն ։

Խոստովան եղերուք Տեառն՝ զի քաղցր է, զի յաւիտեան է ողորմութիւն նորա ։

Ասասցէ տունն Իսրայելի՝ զի քաղցր է, զի յաւիտեան է ողորմութիւն նորա ։

Ասասցէ տունն Ահարոնի՝ զի քաղցր է, զի յաւիտեան է ողորմութիւն նորա ։

Ասասցեն երկիւղածք Տեառն՝ զի քաղցր է, զի յաւիտեան է ողորմութիւն նորա ։

Ի նեղութեան իմում ես առ Տէր կարդացի, եւ լուաւ ինձ յանդորր ։

Տէր է իմ օգնական եւ ես ոչ երկեայց · զի՞ արասցէ ինձ մարդ ։

Տէր է իմ օգնական, և ես տեսից 'ի թշնամիս իմ ։

Քաղցր է յուսալ 'ի Տէր քան յուսալ 'ի մարդիկ, քաղցր է յուսալ 'ի Տէր քան յուսալ յիշխանս ։

Ամենայն ազինք շրջեցան զինեւ, և անուամբ Տեառն յաղթեցի նոցա ։

Շրջելով շրջեցան զինեւ, պաշարեցին զիս 'ի միասին, և անուամբ Տեառն վանեցի զնոսա ։

Շուրջ եղեն զինեւ որպէս մեղուք, վառեցան բորբոքեցան որպէս փուշք 'ի հուր, և անուամբ Տեառն մերժեցի զնոսա ։

Ի մերժելն դրդուեցայ և եղէ մերձ 'ի գլորել, և Տէր ընկալաւ զիս։

Զօրութիւն իմ և օգնութիւն իմ Տէր , և եղեւ ինձ 'ի փրկութիւն։

Ձայն ցնծութեան փրկութեան 'ի յարկս արդարոց։

Աջ Տեառն արար զօրութիւն , աջ Տեառն բարձր արար զիս , և աջ Տեառն արար զօրութիւն։

Ո՛չ մեռայց , այլ կեցից եւ պատմեցից զգործս Տեառն։

Խրատելով խրատեաց զիս Տէր , եւ 'ի մահ ոչ մատնեաց։

Բացէք ինձ զդրունս արդարութեան՝ զի մտից ընդ այն , և խոստովան եղէց Տեառն։

Եւ բանան զդուռն և տանին յեկեղեցին՝ ասելով զՇարականս , Դ․Ն․։

Զօրութեա՛ն քո զդուռըն բա՜ց մե՜զ Տէր· և արժանի արա՛ զմեզ լուսեղէն յարկա՜ց քոց ընդ սու՛րբս քո՛ ։ Ի պատրաստեա՛լ քո յօթեվա՜նս սրբո՜ց քոց ընկա՛լ և զմեզ Փրկիչ յորդէգրութիւն 'ի դըպրութեա՛ն կենա՜ց ։ Ի Նըստիլ քո յատենի դատաւո՛ր ահեղ խնայեա՛ յարարա՛ծս քո , բարեխօսութեամբ և աղօթիւք սուրբ Ծընդնա՜ւորա՛ցն ։

Ա.ո.փ. Ի քե՛զ եմք ա՛պաւինեալ՝ Քրի՛ստոսի մե՜ր

Աստուածոյ մերոյ ։ Ո՛ր քան զերկինս բարձրագոյն Մարիամ, պարծանք Եկեղեցւոյ. Քրի՛ս ։ Ո՛ր քան զարեգակն պայծառագոյն Մարիամ, մի՛ դադարիր բարեխօսել վասն մեր. Քրի՛ս ։

Խաչ. Խաչի քո Քրիստոս երկրպագեմն արարածք ամենայն որ ՚ի փրկութիւն մեզ կանգնեցաւ. սովաւ եղիցի մեզ պահապան յաղթող, ապրեցուցանել զմեզ ՚ի պատրանաց Թշնամւոյն ։ Ի սմա բարձրացար բարձող անիծից որ փառաւորեալդ ես ընդ Հօր. ժողովեց և ըզհեռացեալսն կենաբեր փայտիւն. ապրէ ։

Փոխ. Սովաւ լուսաւորեցան արարածք ամենայն. սովաւ սպասէին արգելեալքն ՚ի մեղսասէր բանտին. որ ազատեաց զմեզ ՚ի պատ ։

Ալձ. Ընդ սուրբս քո դասեա և ընդ արդարոցն պսակեա ՚ի տեղի անկեղծ հրեշտակաց ըզննջեցեալսն մեր կարգաւորեա. որ ողորմածդ ես յամենայնի ։

Եւ գնեն ՚ի մէջ եկեղեցւոյն առաջի բեմին . և այս կանոն կատարի ։

Ընթերցուածս ՚ի Ծննդոց . ԻԸ . 10 ։

Եւ ել Յակոբ ՚ի Ջրհորոյ անտի երդման , եւ

գնաց 'ի Խառան . եւ եհաս 'ի տեղի մի եւ ննջեաց անդ , զի արեւն 'ի մուտս էր . եւ առ 'ի քարանց տեղւոյն եւ եդ ընդ սնարս իւր , և ննջեաց 'ի տեղւոջն յայնմ : Եւ ետես տեսիլ . և ահա սանդուղք հաստատեալ յերկրի՝ որոյ գլուխ իւր հասանէր յերկինս . եւ Հրեշտակք Աստուծոյ ելանէին եւ իջանէին ընդ նա . եւ Տէր հաստատեալ կայր 'ի նմա : Եւ ասէ . Ես եմ Տէր Աստուած Աբրահամու հօր քոյ , եւ Աստուած Սահակայ . մի երկնչիր . զի զերկիրդ յորում դու ննջեցեր , քեզ տաց զդա և զաւակի քում : Եւ եղիցի զաւակ քո իբրեւ զաւազ երկրի , եւ ընդարձակեսցի 'ի ծովակողմն եւ ընդ արեւելս եւ ընդ հիւսիսի եւ ընդ հարաւ . և օրհնեսցին 'ի քեզ ամենայն ազգք երկրի և 'ի զաւակի քում : Եւ ես ահաւասիկ ընդ քեզ եմ պահել զքեզ յամենայն ճանապարհս քո՝ յոր և գնասցես . և դարձուցից զքեզ յերկիրս յայս . զի ոչ թողից զքեզ մինչեւ արարից զամենայն ինչ զոր խօսեցայ ընդ քեզ :

Ընթերցուածս յԷսայեայ մարգարէէ : ԾԲ . 7 .

Իբրեւ զի գեղեցիկ են 'ի վերայ լերանց ոտք աւետարանչի համբաւոյն խաղաղութեան ,

իբրեւ աւետարանչի բարութեանց․ զի լսելի արարից զփրկութիւն քո, ասել ցՍիոն թէ թագաւորեսցէ քեզ Աստուած։ Զի ձայն պահապանաց քոց բարձրացաւ, եւ ՚ի նոյն բարբառ առ հասարակ ցնծասցեն․ զի դէմ յանդիման տեսցեն զժամանակ յորում ողորմեսցի Տէր Սիոնի։ Լերինք գոչեսցեն աւերակօքն հանդերձ Երուսաղէմի զցնծութիւն, զի ողորմեցաւ նմա Տէր․ եւ փրկեաց զԵրուսաղէմ։ Եւ յայտնի արասցէ Տէր զբազուկ իւր սուրբ առաջի ամենայն ազգաց, եւ տեսցեն ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ։

Ընթերցուածս ՚ի Մաղաքիայ մարգարէ է․ Բ․ Ե։

Այսպէս ասէ Տէր․ Ուխտն իմ որ ընդ նմա՝ կենաց եւ խաղաղութեան․ ես ետու նմա երկիւղ՝ երկնչել յինէն, եւ յերեսաց անուան իմոյ խորշել։ Օրէնք ճշմարտութեան էին ՚ի բերան նորա, եւ անիրաւութիւն ոչ գտաւ ՚ի շրթունս նորա․ խաղաղութեամբ եւ ուղղութեամբ գնաց ընդ իս, եւ զբազումս դարձոյց յանիրաւութենէ։ Զի շրթունք քահանային զգուշասցին գիտութեան, եւ օրէնս խնդրեսցեն ՚ի բերանոյ նորա․ զի հրեշտակ Տեառն ամենակալի է։

Պետրոսի առաքելոյն ՚ի Կաթուղիկեայ առաջին թղթոյն է ընթերցուածս։ Ե. 1.

Զերիցունս այսուհետեւ աղաչեմ իբրեւ զերիցակից եւ վկայ չարչարանացն Քրիստոսի, որ և հանդերձեալ փառացն յայտնելոյ՝ հաղորդ. արածեցէք որ ՚ի ձեզ հօտդ է Աստուծոյ. վերակացու լինել՝ մի՛ իբրեւ ակամայ, այլ կամաւ ըստ Աստուծոյ. մի՛ զօշաքաղութեամբ, այլ յօժարութեամբ. մի՛ իբրեւ տիրելով վիճակացն, այլ լինել օրինակ հօտին. զի յերեւել հովուապետին՝ ընդունիջիք զանթառամ փառաց պսակն։

Ալէլու-իա. Ողորմեա՛ ինձ Աստուած ըստ մեծի ողորմութեան քում, ըստ բազում գթութեան քում քաւեա՛ զանօրէնութիւնս իմ։

Ալէլուիա Օրթի.

Խաղաղութիւն ամենեցուն։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի
որ ըստ Յովհաննու։ ԺԶ. Ե.

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ։

Բայց արդ երթամ ես առ առաքիչն իմ, և ոչ ոք ՚ի ձէնջ հարցանէ ցիս՝ թէ յո՞ երթաս. այլ զի զայս խօսեցայ ընդ ձեզ, տրտմութիւն ելից զսիրտս ձեր։ Այլ ես զճշմարիտն ասեմ ձեզ. լաւ է ձեզ եթէ ես երթամ. զի եթէ

ես ոչ երթայց՝ մխիթարիչն ոչ եկեսցէ առ ձեզ. ապա եթէ երթամ, առաքեցից զնա առ ձեզ։ Եւ նա եկեալ յանդիմանեսցէ զաշխարհ վասն մեղաց, և վասն արդարութեան, և վասն դատաստանի։ Վասն մեղաց, զի ոչ հաւատան յիս. վասն արդարութեան, զի առ Հայր իմ երթամ, և ոչ եւս տեսանէք զիս. վասն դատաստանի, զի իշխան աշխարհիս այսորիկ դատապարտեալ է։ Եւս բազում ինչ ունիմ ասել ձեզ, այլ ոչ կարէք հանդարտել այժմիկ. յորժամ եկեսցէ նա Հոգին ճշմարտութեան, առաջնորդեսցէ ձեզ ամենայն ճշմարտութեամբ. զի ոչ եթէ յանձնէ ինչ խօսիցի, այլ զոր լուիցէ՝ խօսեսցի, և զգալոցն պատմեսցէ ձեզ։ Նա զիս փառաւորեսցէ, զի յիմմէ անտի առնուցու և պատմեսցէ ձեզ։ Զամենայն ինչ զոր ունի Հայր՝ իմ է. վասն այնորիկ ասացի ձեզ, թէ յիմմէ անտի առնու և պատմէ ձեզ։

Փոքր մի՝ և ոչ եւս տեսանիցէք զիս, և ապա սակաւիկ մի՝ և տեսանիցէք զիս. և ես երթամ առ Հայր։ Ասէին ոմանք յաշակերտաց անտի ցմիմեանս. զի՞նչ է այս՝ զոր ասէ ցմեզ, թէ փոքր մի՝ և ոչ տեսանէք զիս, և դարձեալ սակաւիկ մի՝ և տեսանիցէք զիս. և եթէ ես առ Հայր իմ երթամ։ Եւ ասէին.

Զի՞նչ իցէ այն փոքր միւս եւսն, չգիտեմք
զինչ խօսի։ Գիտաց Յիսուս եթէ կամին ցնա
հարցանել, եւ ասէ ցնոսա. Վասն այդորիկ
խնդրէք ընդ միմեանս զի ասացի՝ թէ փոքր
մի՝ և ոչ տեսանէք զիս, և դարձեալ սակաւիկ
միւս եւս՝ եւ տեսանիցէք զիս։ Ամէն ամէն
ասեմ ձեզ, զի լայջիք և ողբասջիք դուք, և
աշխարհ խնդասցէ. դուք տրտմեսջիք, այլ
տրտմութիւն ձեր յուրախութիւն եղիցի։
Կին յորժամ ծնանիցի՝ տրտմութիւն է նմա,
զի հասեալ է ժամ նորա. այլ յորժամ ծնցի
զմանուկն, ոչ ևս յիշէ զնեղութիւնն վասն
խնդութեանն, զի ծնաւ մարդ յաշխարհ։
Եւ դուք այժմ տրտմութիւն ունիք, այլ դար-
ձեալ տեսից զձեզ, եւ ուրախ լիցին սիրտք
ձեր, և զուրախութիւնն ձեր ոչ ոք հանիցէ
'ի ձէնջ։ Եւ յայնմ աւուր զիս ինչ ոչ հար-
ցանիցէք։ Ամէն ամէն ասեմ ձեզ, զի զոր ինչ
խնդրիցէք 'ի Հօրէ իմմէ յանուն իմ, տացէ
ձեզ։ Մինչեւ ցայժմ ոչինչ խնդրեցէք յանուն
իմ. խնդրեցէք՝ և առնուցուք. զի ուրախու-
թիւնն ձեր լցեալ եղիցի։ Զայս առակօք խօ-
սեցայ ընդ ձեզ. եկեսցէ ժամանակ՝ յորժամ
ոչ ևս առակօք խօսեցայց ընդ ձեզ, այլ յայտ-
նապէս զՀօրէ պատմեցից ձեզ։ Յայնմ աւուր
խնդրեսջիք յանուն իմ. և ոչ ասեմ ձեզ՝ եթէ

ես աղաչեցից զՀայր վասն ձեր. զի ինքն իսկ Հայր սիրէ զձեզ, զի դուք զիս սիրեցէք, եւ հաւատացէք եթէ ես յԱստուծոյ ելի։ Ելի 'ի Հօրէ՝ և եկի յաշխարհ, դարձեալ թողում զաշխարհ, և երթամ առ Հայր։

Հոգւոյն հանգուցելոց։ Հայր մեր որ յերկինս։

Եւ 'ի վերայ դիցին դիցեն զԱւետարան. և փակեսցեն զլոյս առ ընթեր։ Եւ ապա արձակին խաղաղութեամբ, և երթիցեն 'ի տեղիս իւրեանց։

---

Իսկ 'ի գիշերին մինչ գան 'ի կատարել զկարգ գիշերային պաշտամանն, կացցեն չորս քահանայք յաջմէ եւ յահեկէ ննջեցելոյն, և ընթեռնուցուն զչորեսին աւետարանսն բոլորապէս. այսինքն՝ զՄատթէոսին, զՄարկոսին, զՂուկասուն և զՅովհաննուն։ Եւ 'ի վճարելն ասասցեն.

Հոգւոյն հանգուցելոյ։ Հայր մեր որ յերկինս։

---

Եւ մինչ մատչիցի սուրբ Պատարագն, 'ի ժամ ողջունին առաջի բեմին այս կարգ կատարի։

Քարոզ։

Վասն քաւութեան և թողութեան մեղաց հոգւոյ հանգուցելոյս, զՏէր աղաչեսցուք։
Վասն առաջնորդելոյ սմա ընդ նեղ դուռն անձկացեալ ճանապարհին, զՏէր աղա։
Վասն ընդունելոյ զհոգի սորա 'ի խորանս սրբոցն, զՏէր աղա։

Վասն առաջնորդելոյ սմա ընդ առաջ Փրկչին, զՏէր աղա․

Վասն դասելոյ սմա յաջակողման դասուն յանբաւ ուրախութիւնսն, զՏէր աղա․

Վասն արժանի լինելոյ սմա անթառամ պսակացն, զՏէր աղա․

Վասն պարգեւելոյ սմա հանդիստ յերկնից արքայութեանն, զՏէր աղա․

Վասն վերադասելոյ սմա 'ի տեղի անկելոց հրեշտակացն, զՏէր աղա։

Վասն հոգւոցն։ Եւ Ես միա։ Զանձինս։ Ողորմեայ։

Աղօթք ։

Տէր Աստուած փրկիչ մեր, Աստուած յաւիտենական՝ արարիչ եւ իշխան հրեշտակաց եւ մարդկան․ դատաւոր կենդանեաց եւ մեռելոց․ օրհնեմք զքո մարդասիրութիւնդ, որ վասն բազում ողորմութեանդ քո՝ ոչ կարացեր անտես առնել զստեղծուածս ձեռաց քոց՝ զվերաւորեալս 'ի բանսարկուէ թշնամւոյն․ այլ կամաւ հօր եւ հաճութեամբ սրբոյ Հոգ-

ւոյն խոնարհեցար յարգանդ սըրբուհւոյ Կուսին. եւ հրաշափառ սուրբ ծննդեամբ քով զանիծիցն լուծեր զդատակնիք։ Ամենամեծդ Աստուած, որ վասն մեր աղքատացար՝ փառաւորեմք զքո անճառ Թագաւորութիւնդ. զի զկերպարանս ծառայի առեր, եւ բեւեռեցար 'ի վերայ խաչին, և սուրբ եւ պատուական արեամբ քով զգերեալսն 'ի ծառայութենէ Թշնամւոյն ազատեցեր 'ի կեանս։ Երկրպագութիւն և փառըս մատուցանեմք քեզ, հովիւ բանաւոր հօտի, Տէր մեր և փըրկիչ Յիսուս Քրիստոս, որ զցրուեալսն յաներևոյթ և յանմարմին գիւէն ժողովեցեր առ բնակութիւն սրբոց հրեշտակաց. և պարըսպեալ սուրբ խաչիդ նշանաւն, կարգեցեր տեսուչ և առաջնորդ՝

հոլովել իմաստութեամբ զժողովուրդս քո։ Իսկ ծառայս քո՝ զոր շնորհեցեր մեզ առաջնորդ 'ի ձեռըն սրբոյ առաքելոց քոց՝ այսօր հրաժարեցաւ 'ի մէնջ. և դարձաւ 'ի հող ըստ հրամանի քում։ Եւ մեք ժողովուրդք քո և ծառայք քո՝ 'ի տաճարի փառաց սրբութեան քոյ աղաչեմք և խնդրեմք 'ի քէն. բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնիդ և ամենայն սրբոց քոց, որք յաւիտենից հաճոյ եղեն քեզ՝ ընկա՛լ զբանս ողջունի սորա 'ի սուրբ եկեղեցւոջս առաջի սրբոյ սեղանոյ քոյ. և հանգո՛ զհոգի ծառայիս քոյ 'ի խորանս սիրողաց անուան քոյ։ Թող սմա, Տէր ողորմած, զյանցանս և զմտածութիւնս՝ որք գործովք և խորհրդովք. զի դու, Տէր, միայն կարո՛ղ ես թողուլ զմեղս։ Շնոր-

հեմ սմա յարդար դատաւորութեան քում ընդ Պետրոսեան աթոռակցութեանցն վերապատուիլ։ Եւ զմեզ զամենեսեան օրհնեա՛ հոգեւոր օրհնութեամբ քով. զի սրբեալք 'ի յանցանաց՝ գոհանալով փառաւորեսցուք ընդ Հայր և զՈրդի և զսուրբ Հոգին. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Խաղաղութիւն ամենեցուն։
Աստուծոյ երկիրպագեսցուք։

Ի մէջ եկեղեցւոյս եւ առաջի սրբոյ սեղանոյ քոյ՝ քեզ երկրպագանեմք եւ աղաչեմք զանհաս գթութիւնդ քո, որ ես առ ամենեսեան երկայնամիտ, Քրիստոս Աստուած մեր։ Ընկալ, Տէր, եւ այժմ բարերարութեամբ քով զխնդրուածս մեր. եւ հե՛զ աղբերաբար զառատաբուղխ շնորհս

Հոգւոյդ սրբոյ 'ի գանձս յայս պատուական, որ է տաճար կամաց քոց սրբոց: Զի 'ի ձեռն օծմանս այսորիկ՝ զոր յանուն քո օծանեմք սուրբ իւղովս այսուիկ՝ ընկալցին սուրբ նշխարքս ոսկերաց սորա զօրութիւն բժշկութեանց, եւ զհալածումն սեւագունդ դիւաց, և մեծ պարծանս կենաց, և յոյս մեծապէս սուրբ խոստովանութեամբ, որ 'ի Հայր եւ յՈրդիդ և 'ի Հոգիդ սուրբ: Որով ընկալեալ սորա զսուրբ օծումնս, եւ այդր եւս ճշմարտապէս գահակալեսցէ. եւ ընդ այլ ճշմարիտ հովուսն զբրաբիոնն յաղթութեան ընկալցի 'ի քէն, Քրիստոս. և ամենայն սրբովք ուրախացեալ՝ փառաւորեսցէ զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգիդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Եւ եթէ ննջեցեալն կաթուղիկոս իցէ, զայս աղօթս եւս հանդերձ կցորդիւն կարդա՛.

Օրհնեալ ես, տէր Աստուած ամենակալ, Հայր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ ըստ բազում ողորմութեան քում առեր զմեզ 'ի հեթանոսաց՝ և անուանեցեր զմեզ անուամբ միածնիդ քոյ։ Որ մարմնացաւ 'ի մերմէ բնութենէս. եւ մահուամբ եբարձ 'ի մէնջ զմեղս անիծաբերս և մահածինս յարութեամբ իւրով. ծնաւ զմեզ 'ի յոյսն կենդանի յանեղծ և յանարատ ժառանգութիւնդ և յանթառամ պսակացն ուրախութիւն, որ պահեալ է մեզ յերկինս։ Որոյ առհաւատչեայ շնորհեցեր մեզ զՀոգիդ քո սուրբ՝ որով ընկալաք զշնորհս որդեգրութեան քոյ. որով եղեր յեկեղեցւոջս առա‐

քեալս և մարգարէս և աւետա-
րանիչս՝ հովիւս և վարդապետս՝
՚ի հաստատութիւն հաւատոյ,
՚ի գործ պաշտաման փառաւոր
սեղանոյ քոյ, և ՚ի շինուած մարմ-
նոյ սիրելւոյ Որդւոյ քոյ՝ որ ընդե-
լումն մեօք առնու։ Յոր պատիւ
և զծառայս քո (այս անուն) արժանա-
ւորեցեր, ամբառնալով քոյին շը-
նորհօք ՚ի բարձրագոյն և ՚ի ծայ-
րագոյնն աստիճան առաքելական
և քահանայապետական, և ընտ-
րելով զսա ՚ի բազմաց՝ յատկա-
ցուցեր յատկականաւ շնորհիւ։
Եւ կարգեցեր զսա գլուխ և այ-
ցելու եկեղեցւոյ քում սրբոյ․
յանձնելով ՚ի սա զամենայն խոր-
հուրդս՝ զգործս եւ զպաշտօնս
փրկարարս աւանդեցեալս յՈրդ-
ւոյ քումմէ ՚ի սուրբ Եկեղեցիս
քոյ։ Որպէս զի յիշխանել աստուա-

ծայնով խաղաղ Հոգւոյդ սրբոյ, և 'ի ծագիլ պէսպէս շնորհայդ լուսափայլութեանց 'ի գլուխ, եւանտի 'ի ստորինս տարածեսցի ըստ մարգարէին. 'ի լրումն և 'ի շինութիւն ըստ իւրաքանչիւրոցն արժանաւորութեան 'ի փառս ամենասրբոյ անուանդ քո. եւ զօրացուցեալ պահպանեսցեր մինչեւ ցայսօր: Զոր և այժմ ըստ արարչագիր սահմանադրութեան քո կոչեցեր 'ի հանգիստ յերկրաւոր աշխատութենէս 'ի տրտմալից կենցաղոյս այսորիկ: Վասն որոյ աղաչեմք զքեզ, Հայր գթած, 'ի յարկի փառաց սրբութեան քո՝ ուստի բաշխես զքաւութիւն կենդանեաց եւ մեռելոց, զի ողորմեսցիս ծառայիս քո այսմիկ, և անտես արասցես զոր ինչ յանցեալ իցէ սորա 'ի մարդկային աղ-

*տեղութենէ։ Եւ զհեզգութիւն սորա եթէ իցէ լեալ 'ի սպասաւորութեան սեղանոյ քոյ՝ մոռասցիս վասն մարդասիրութեան քոյ։ Կամ թէ անփոյթ արարեալ է զկորստեամբ ուրուք, կամ թէ ծուլացեալ իցէ քարոզել զպատուիրանս քո 'ի խրատել զժողովուրդս քո, զամենայն թողցես սմա անոխակալ գթութեամբդ քո. քաւիչ լիցիս բովանդակ սխալանաց սորա քաղցր եւ բարերար շնորհօք քո։ Եւ զմեղս և զանօրէնութիւնս սորա՝ որ վասն կարեաց և փառաց մարմնոյ, և կամ վասն սիրոյ և ամօթոյ և երկիւղիւ մարդկան, մի եւս յիշեսցես. այլ յամենայնէ փրկեա՛ զհոգի ծառայիս քոյ, եւ արժանաւորեա համարձակապէս մտանել առաջի քոյ դէմ յանդիման. և ուրախու-*

Թէ ամք կալ յանդիման փառաւոր աթոռոյ քոյ. արդարութեամբ ե-րեւիլ երեսաց քոց. յորդիլ յե-րեւման մեծի եւ վայելուչ փա-ռաց քոց. և ցնծալի բերկրանօք զերկրպագութիւն ամենասուրբ Երրորդութեանդ մատուցանել յօթեւան հանգստեան 'ի տեղ-ւոջ բնակութեան սրբոց արդա-րոցն. և ընդ նոսին զուարճանալ ուրախարար յուսով: Ընդ որոց և սմա շնորհեսցես ժառանգու-թիւն զարքայութիւն Քրիստոսի Աստուծոյ մերոյ. ընդ որում քեզ Հօր բարերարի և Հոգւոյդ սրբոյ վայելէ փառք պատիւ և իշխա:

Խաղաղութիւն ամենեցուն:

Աստուծոյ երկիրպագեսցուք:

Քեզ Թագաւորի անմահի և մար-դասիրի, ամենեքեան միաբան ա-մենայորդոր փութով երկրպա-

գութիւնս վերառաքեմք 'ի վե-
րայ ծառայիս քոյ այսորիկ, զոր
ընտրեցեր 'ի վիճակ առաքելական.
զքեզ ինքնին ընկալեալ սորա բա-
ժին և ժառանգութիւն կալ ա-
ռաջի մեծութեան քոյ և աղօթս
մատուցանել յանուն քո ահա-
ւոր՝ և պաշտել զսեղանս քո փա-
ռաւոր. եւ 'ի հովուել զհօտ քո
բանաւոր. եւ ծնանիլ վերստին
զմարդիկ աւազանաւն յորդէգ-
րութիւն քեզ. և զպատրաստեալ
բարիսն միածնիդ քոյ վայելել եւ
վայելեցուցանել զբազումս. ու-
նիլ իշխանութիւն 'ի կապել եւ
յարձակել յերկինս եւ յերկրի.
և տալ թողութիւն մեղաց կեն-
դանեաց եւ մեռելոց։ Եւ այժմ
հրամայեցեր գալ առ քեզ. եւ
հանգչիլ 'ի հոգւոյ խորոց, եւ ա-
զատանալ 'ի տառապանաց կեն-

ցաղիս, եւ առնուլ զկեանս՝
յորմէ մերժեալ են ցաւք եւ
տրտմութիւնք և հեծութիւնք։
Եւ արդ, Տէր ողորմած և մարդա-
սէր, հաւատարիմ լիցի ամենայն
գործ սորա հոգեւոր՝ որ 'ի սուրբ
Եկեղեցիս և 'ի ժողովուրդս քո։
Յիշեալք եւ ընդունելի՛ք եղիցին
առաջի քո Տէր, աղօթք, պատա-
րագք և նուէրք կենդանեաց և
մեռելոց մատուցեալք 'ի ձեռն
սորա յանուն քո, 'ի շարժել ըղ-
գութ ողորմութեան քո յայնո-
սիկ՝ յորոց ընծայեցան. որպէս զի
և սա անդատապարտ գտանիցի 'ի
նոցին պարտուց՝ առնլով զմեծ
ողորմութիւն յամենառատ վար-
ձատուէդ։ Եւ թէ պակասումն
լեալ իցէ սորա 'ի հեզգութենէ,
լիապէս կատարումն պարգեւեա-
ցես. և ներեսցե՛ս սմա զոր սխա-

լեալ խբրեւ զմարդ. քանզի քեզ Արարչիդ յայտնի է տկարութիւնս մեր. և դու Տէր հրեշտակաց ներես բազում անգամ, զի ոչ ոք է առանց մեղաց. բայց միայն սուրբ Երրորդութիւնդ՝ որ ամենեցուն քաւիչ ես. որ և պարգեւեսցես զքաւութիւն ծառայիս քո այսմիկ՝ և ամենեցուն որք յուսացան ՚ի ձեռն սորա քաւութեան հասանել։ Եւ զամենեսեան զլուսաւորեալքս և զօրհնեալքս՝ և ըղխրատեալքս բանիւ վարդապետութեան սորա՝ խնամեսցես, և պահեսցես հաստատուն առանց գայթակղութեան ՚ի պարծանս սորա յաւուրն ահեղին։ Աղաչեմք զքեզ, տէր Աստուած, արարիչ հոգւոյ և մարմնոյ ամենայն կենդանեաց ստեղծուածոց մի երբէք ընդ վայր հարցես զհօտս սորա և

զհաւատացեալս քո հօտ՝ Թողլով
անհովիւ . այլ տացես այր 'ի վե-
րայ ժողովրդեան քոյ , զոր և լը-
ցուսցես Հոգւովդ քով սրբով .
լինիլ նոցա հովիւ ըստ սրտի քում,
հովուել զնոսա իմաստութեամբ :
Եւ մխիթարեա՛ զհոգի սորա , զոր
աւանդեաց 'ի քեզ , և հանգուս-
ցես 'ի դասս պաշտօնէից քոց ար-
ժանաւորաց , որք յամենայն սրտէ
իւրեանց ծառայեցին քեզ և պահե-
ցին զպատուիրանս քո յամենայն
'ի կեանս իւրեանց . և ընդ նոսին
շնորհեսցես զուրախարար կեանսն
'ի մէջ սրբոց հրեշտակաց : Եւ
յաւուրն վերջնում յորժամ ա-
ռաքես զՈրդիդ քո սիրելի առ-
նուլ համարս 'ի ծառայից քոց և
հատուցանել ըստ իւրաքանչիւր
վաստակոց , արա՛ և զսա կերպա-
րանակից մարմնոյ փառաց միածնի

Որդւոյ քո, լինել արժանի և հաղորդ նորին արքայութեան, ժառանգաւոր կենացն յաւիտենից։ Զի թէպէտ և մեք, որք հայցեմք՝ անարժան եմք, դու, Տէր ոգեսէր, բարեխօսութեամբ եւ հեղմամբ արեան սրբոյն Ստեփաննոսի առաջին պաշտօնէի սրբոյ սեղանոյ քո, և աղաչանօք սրբոց առաքելոց քոց եւ սրբոյն Գրիգորի լուսաւորչին մերոյ, որոց յաջորդ կարգեցեր զսա, և ամենայն հաճոյական ծառայից քոց՝ տուր սմա զամենայն հայցուածս նուաստութեան մերոյ։ Եւ զմեզ օրհնեա ամենայն հոգևոր օրհնութեամբ, եւ մխիթարեա շնորհօք սուրբ Հոգւոյդ, որով զօրացեալք արժանի լիցուք փառաւորել զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգիդ. այժմ և միշտ և յաւի։

Եւ բառնան քահանայքն, և հանեն 'ի բեմն առաջի սրբոյ սեղանոյն: Եւ ասեն Սաղմոս ԻԲ. 'ի Թիւ.

Տէր հովուեսցէ զիս, և ինձ ինչ ոչ պակասեսցէ: Ի վայրի դալարւոջ բնակեցոյց զիս, և առ ջուրս հանգստեան սնոյց զիս:

Դարձոյց զանձն իմ առ իս, առաջնորդեաց ինձ 'ի ճանապարհս արդարութեան վասն անուան իւրոյ:

Թէպէտ և գնացից ես 'ի մէջ ստուերաց մահու, ոչ երկեայց 'ի չարէ՝ զի դու, Տէր, ընդ իս ես: Ցուպ քո և գաւազան, նոքա մխիթարեցեն զիս:

Կցուրդ ողբաձայն. Պատրաստ ստ ապարէր առաջի իմ ըզսեղան. անկըն յանդիման նեղչաց իմոց: (Երեք կրկնել Սաղմոսն և կցուրդն:)

Դարձեալ Սաղմոս Ի Բ.:

Տէր հովուեսցէ զիս". մինչեւ ցվերջ տանն:

Կցուրդ ողբաձայն. Օծեր իւղով ըզգլուխ իմ. բաժակ քո որպէս անապակ արբեցոյց զիս: Երեք կրկնել, նոյնպէս Սաղմոսն և կցուրդն:

Շարական. ԴՋ:

Առաքելոյ աղաւնոյ իջանելով մեծաձայն հնչմամբ 'ի բարձանց, 'ի նմանութիւն լուսոյ փայլման հրաշէնեայց անկիզելի զաշակերտսն, մինչդեռ նստէին 'ի սուրբ վեր-

նուագ՟ն ։ Ա՟նխմթական ողանի, ա՟նքըն-
նելի որ քըննէ զխորս Աստուծ՟ոյ․ զոր ա-
ռեալ ՚ի հօրէ պատմէ՟ զահաւոր եւ ըզմխ-
ա՟նգամ գա՟լ՟ուստն․ զոր քարոզեցի՟ն
համագու՟մակա՟ն ։ Ո՟րհնութիւն ՚ի բարձունս,
Եղողին ՚ի Հօրէ Հոգւոյն սրբո՟յ․ որո՟վ առա-
քեալքն արբեցա՟ն անմահակա՟ն բաժա՟-
կա՟ւն, եւ հրաւիրեցի՟ն զերկիրս ՚ի յեր-
կի՟նս ։

Եւ ապա տեառնագրէ քահանայն ։ Եւ առեալ զսուրբ մե-
ռոնն՝ օծցէ նախ զճակատն, և ապա զաջոյ ձեռն ։ (Որպէս
և սուրբն Դիոնէսիոս աթենացի պատուիրէ, որ է աշակերտ
սրբոյ առաքելոյն Պօղոսի ։ Եւ այն Դիոնէսիոս կարգաւ մեկնէ
զխորհուրդն՝ զոր ունիմք այսպիսի կարգ քրիստոնէութեան,
զի մի հեթանոսական գարշանօք ինչ աղարտեսցէ ոք․ զի առա-
քելական է կանոնս ։) Եւ համբուրեն զսուրբ սեղանն որպէս
յերեսաց փախճանելոյն․ եւ զխորանն, եւ զամենայն սրբու-
թիւնն ։ Եւ զսուրբ աւետարանն դնեն ՚ի գիրկն և համբուրեն ։

Եւ ասեն Սաղմոս, ՃԻԱ ։

Ուրախ եղէ ես ոյք ասէին ցիս, ՚ի տուն Տեառն
երթիցուք մեք ։
Հասեալ կային ոտք մեր առ դրունս քո, Երու-
սաղէմ ։
Զերուսաղէմ շինեալ որպէս քաղաք, և բնակու-
թիւն իւր շուրջ զնովաւ ։
Անդ ելին ազգ ազգ Տեառն, վկայութիւնք
Իսրայելի խոստովան լինել անուան Տեառն ։

*Անդ արկեալ են աթոռք դատաստանի, աթոռս
արկեալ 'ի տան Դաւթի։
Հարցէք զողջունէ զԵրուսաղէմի, և զխնութենէ՝
ոյք սիրէք զՏէր.
Եղիցի խաղաղութիւն 'ի զօրութեան քում, եւ
շինութիւն յաշտարակս յամուրս քո։
Վասն եղբարց և ընկերաց իմոց խօսեցայ զխաղա-
ղութիւն, վասն քոյ և վասն տան տեառն Աստու-
ծոյ մերոյ խնդրեցաք զբարութիւն 'ի քէն։*

Կցուրդ ողջունոյն. Ողջոյն քեզ սուրբ եկե-
ղեցի։ Ողջոյն քեզ սեղան սրբութեան։
Ողջոյն ձեզ դասք քահանայութեան. Ես
ձայնապարհորդեցի առ արարիչն իմ։

Եւ տան մին առ մին ողջոյնն. մինչեւ կատարի Սաղմոսն։
Եւ համբուրեն զբոլոր եկեղեցին. և դարձեալ երեսն առաջի
սրբոյ սեղանոյն։

*(Զչորեսին Սաղմոսս և զողջոյնս ասելով՝ շուրջ ածեն զխնկն երիցս անգամ զսեղանովն, կամ թէ 'ի մէջ եկեղեցւոյն ընդ չորս անկիւնսն. որ նշանակէ՝ զհամբուրելն նորին զսեղանն և զբոլոր եկեղեցին և զզօրութիւնսն ամենայն. և զհրաժարական ողջոյնն տալն։) Եւ համբուրեն զմիմեանս քահանայքն. և երկրպագեն փոխանելոյն. և համբուրեն զխաչն և զԱւետարանն և զայլն։ Եւ ապա իջուցանեն 'ի բեմէն՝ փոխելով զՍաղմոսն և զողջոյնն։*

Սաղմոս. ԶԶ։

*Հիմունք նորա 'ի լերանց սուրբ նորա. սիրէ Տէր*

զդրունս Սիովնի առաւել քան զամենայն յարկ-
սըն Յակովբայ ։
Փառաւորեալըն խօսեցաւ վասն քո , ահաւադիկ
քաղաքդ Աստուծոյ ։
Յիշեցի զՌահաբ և զԲաբելոն ոյք ճանաչեն զիս՝
ահա այլազգիք և Տուր և ժողովուրդ Հնդկաց՝
սոքա եղեն անդ ։
Սիովնի ասի մայր , եւ մարդ ծնաւ 'ի նմա , եւ
ինքն հիմունս արկ 'ի նմա Բարձրեալն ։
Տէր պատմեսցէ գրովք ժողովրդեան , իշխանացս
այսոցիկ որ եղեն անդ ։
Որպէս զի ուրախ լիցին 'ի քեզ ամենեքեան ,
որոց բնակութիւն իւրեանց 'ի քէն է ։

Կցուրդ ողբական . Ողջոյն ձեզ մանկունք ե-
կեղեցւոյ ։ Ողջոյն ձեզ հաւատացեալ
եղբարք իմ 'ի Քրիստոս ։ Ողջոյն ձեզ
համօրէն ժողովրդականք . Ես ճանապար-
հորդեցի առ Քրիստոս յոյսն ամենեցուն։

Սաղմոս , ՃԼԸ .

Տէր , փորձեցեր զիս և ծանեար զիս , դու ծա-
նեար զնստել իմ և զյառնել իմ։
Ի միտ առեր զխորհուրդս իմ 'ի հեռաստանէ ,
զշաւիղս իմ և զվիճակս իմ դու քննեցեր . և զա-
մենայն ճանապարհս իմ յառաջագոյն տեսեր , զի
ոչ գոյ նենգութիւն 'ի լեզուի իմում։

Ահա դու, Տէր, ծանեար զկետին իմ և զառաջին իմ, դու ստեղծեր զիս եւ եդիր զձեռն քո 'ի վերայ իմ։

Սքանչելի եղեւ գիտութիւն քո յինէն, զօրացաւ և ոչ հանդարտեմ սմա։

Յո՞ երթայց ես յոգւոյ քումմէ, կամ յերեսաց քոց ես յո՞ փախեայց։

Թէ ելանեմ յերկինս՝ դու անդ ես, թէ իջանեմ 'ի դժոխս՝ և անդր մօտ ես։

Թէ առից զթեւս իմ ընդ առաւօտս, և բնակեցայց յեզերս ծովու։

Սակայն և անդ ձեռն քո առաջնորդեսցէ ինձ, և աջ քո ընկալցի զիս։

Ասացի, խաւար ուրեմն արդեօք ծածկեաց զիս, կամ գիշեր փոխանակ լուսոյ փափկութեան իմոյ։

Խաւարն՝ 'ի քէն ոչ խաւարանայ, և գիշերն որպէս տիւ լուսաւոր եղիցի, և խաւար նորա որպէս զլոյս նորա։

Դու ստացար զերիկամունս իմ, և ընկալար զիս յորովայնէ մօր իմոյ։

Խոստովան եղէց քեզ, Տէր, զի ահեղ և սքանչելի են գործք քո, և անձն իմ սիրեաց յոյժ։

Ո՛չ թաքեաւ ոսկր իմ 'ի քէն զոր արարեր 'ի ծածուկ, և կար զօրութեան իմոյ ընդ ստորինս երկրի։

Կցուրդ ողբական․ Ահա՛ հրաժարեմ 'ի քէն սուրբ եկեղեցի ։ Ահա՛ մեկնիմ 'ի ձէնջ

*սիրելի՛ եղբարք, 'ի կոչումն վերանորոգո-
ղին Քրիստոսի՛ Աստուծոյ մերոյ:*

Սաղմոս. ՃԼԹ:

*Պահեա՛ զիս, Տէր, 'ի ձեռաց մեղաւորի, և 'ի մար-
դոյ չարէ փրկեա զիս:*
*Ապրեցո զիս, Տէր, 'ի մարդոյ չարէ, յառնէ անի-
րաւէ փրկեա զիս:*
*Խորհեցան զանօրէնութիւն 'ի սիրտս իւրեանց.
զօր ամենայն պատրաստեցան 'ի պատերազմ:*
*Սրեցին զլեզուս իւրեանց որպէս զօձին, և թոյնք
իժից 'ի ներքոյ շրթանց նոցա:*
*Պահեա զիս, Տէր, 'ի ձեռաց մեղաւորի, և 'ի մար-
դոյ չարէ փրկեա զիս:*
*Խորհեցան խափանել զգնացս իմ, թաքուցին ամ-
բարտաւանք որոգայթ ինձ:*

Կցորդ ողջոյն. Աղօ՜թս *արարէ՛ք վասն իմ
հա՛րք իմ, եղբա՛րք և որդի՛ք. եւ օրհնեսցէ՛
զձե՛զ Քրիստոս փրկի՛չ մեր. պահեսցէ՛ հաս-
տատուն 'ի հաւատս՝ իւր մինչեւ 'ի սահմա-
նե՛լ կեա կոչմա՛նս այսորիկ. եւ խաղաղու-
թի՛ւն Տեառն եղիցի՛ ընդ ձեզ յաւիտենից
յաւիտենա՛նս ամէ՛ն:*

Եւ տայ տան ողջոյնն: Եւ ամենայն ժողովուրդն համբուրեն զձեռս հանգուցելոյն՝ որպէս և քահանայն. և դնեն զհանգուցեալն 'ի մէջ տաճարին. և մատչի պատարագն:

Իսկ զկնի պատարագին սկսանիցին տալ ։

Խնամով սիրոյն յուր սիրելեացն ըղձըլու-
մնութիւնըն փարատեաց , Թացեալ պատառ-
տայ Յուդայի նըշանակեալ զգողըն մատնիչ .
զոր առեալ եւ մերկացեալ յաստուածային
Հոգւոյն շնորհաց . մատնեցաւ նախանձաւորին
ընդ մատնութեան վարդապետին ։

Ծայրագոյն լուսոյն զրկեալ խաւարմանէքն
արտաքս ելեալ . տէրըն յայտնէր լոյս եղե-
լոյն ըզգայնութակցին 'ի գիշերի . Պետրոս խօ-
սէր խոստանալի և կրշտմբէւր հաւախօսի .
զնուրն յաշխարհէ զփոխին առէր եւ ըզգա-
լուստ Հոգւոյն պատմէր ։

Կեդրոնեա՞ն յայնկոյս ձորոյ 'ի վերնատանն
եւ խորհրդոյ , եմուտ պարտէզ ընդ պար-
տիզի Եմոյծ զԱդամ յանդին դրախտին . մուծ-
ցես և զմեզ , Տէր , ընդ նըմին , ուստի հա-
նէր նախ զմայրն . զի ժառանգել ըզհայ-
րենին արժանացուք մեք վերըստին ։

Հոգայր ըզերիցըն տըրտմաբար երիւքն եղ-
եալ առանձնաբար . փորձել զաշխարհս հո-
գիս յոժար բայց է բնութիւն մարմնոյս տը-
կար . ոչ ոմն ուժեղ և զօրաւոր և ոմն անզօր

վտանգաւոր . այլ մի և նոյն գոլ միաւոր ,
կրէր ընկերըն կամաւոր ։

Զայնիւ մաղթէր աղօթականն վասն իմ առ Հայր իւր էական , ծունրս դնէր խոնարհական որում կրկնի ծունր ամենայն . Եթէ փրկիլ մարդկան հնար է առանց մահուն իմ որ գրեալ է , բաժակ մահուս յինէն անցցէ ոչ իմ կամաւ այլ քոյդ եղիցի ։

Դօղեալ յերկիւղ քրտանց համան ոսոնաձեւ կայլակ վիժման , 'ի զօրանալ հրեշտակ մերձեալ զօրինական գիրըն լցեալ . զի կատարեալ էառ զընծայութիւն աստուածըն բան ըմարդկութեան . պարտ էր զերկիւղ եւ զտկարութիւն յիւրումըն կրել անօրէնութիւն ։

Քարոզ ։

Միաբան աղաչեսցուք զմարդասէրն Աստուած յաղագս ննջեցեալ քահանայիս այսորիկ , զՏէր աղաչեսցուք ։

Սրբասէր քահանայք եւ բազմամբոխ ժողովուրդք , հայցեսցէ՛ք 'ի Քրիստոսէ զի շնորհեսցէ սմա զթողութիւն մեղաց . զՏէր աղա ։

Զի հանգուսցէ զհոգի սորա յերկնային խորանսըն յանսպառ ուրախութիւնսն . զՏէր աղա ։

*Յառաջնումն համարեցի զսա ընդ Մովսիսի եւ ընդ այլ մարգարէիցն · զՏէր աղա ։*
*Յերկրորդումն համարեցի զսա ընդ Պետրոսի և ընդ Պօղոսի և ընդ այլոց սրբոց առաքելոցն · և զաղաչանս մեղուցելոցս ընկալցի 'ի յիշատակ հոգւոց ննջեցելոցն ընդ սուրբս դասելով · զՏէր աղա ։ Եւ ևս միաբան ։ Զանձինս մեր ։ Ողորմեաց մեզ ։*

Աղօթք ։

*Արարչագործ Աստուած, որ 'ի ձեռն աստուածային խորհրդոյ քո զառաջնաստեղծ մարդն կերպարանակից և նմանակից քեզ արարեր, և լուսեղէն փառօք զարդարեցեր, և արարեր զնա հողեղէն պատկերաւն՝ փառակից հրեղինացն, և ծածկեցեր զհողեղէն մարմինն լուսեղէն փառօք ։ Ընդ որ խանդացեալ թշնամւոյն՝ մահաբեր պատրոյն ճաշակմամբ խաբեաց զնա և ընկէց 'ի փառացն ։ Իսկ նորա տեսեալ զինքն մերկացեալ 'ի լուսեղէն զգեստուցն՝ սա-*

զարթապատ լինէր ընդ տնկոյն 'ի դրախտին։ Եւ գոլով նորա լուծեալ 'ի պատուիրանէն եւ արտաքսեալ 'ի դրախտէն՝ ոչ գտանէր՝ զմխիթարութիւն մշտակրութեան, եթէ ոչ էր ասացեալ քո կենարարիդ՝ եթէ հող էիր և 'ի հող դարձցիս։ Ապա այնուհետև ցանկայր մահու հասանել, զի մահուամբն զկենդանութիւն գտցէ։ Իսկ դու, Տէր, գթացար յանարատ ձեռաց քոց ըստեղծուածն. ոչ կարացեր տեսանել զկորուստ նմանակից քոց պատկերին նախաստեղծ մարդոյն. խոնարհեցար յերկնից 'ի հայրական ծոցոյ, եւ զմարմին ծառայի 'ի կուսէն ճշմարտապէս յանձն առեր. հողաստեղծին կերպարանաւ ծածկեցեր զլուսեղէն աստուածութիւնդ՝ զհողեղէն կեր-

պարանս նմանակից քեզ արարեր. զքոյինաստեղծ պատկերն՝ զպատրեալն 'ի պատրողէն՝ առաջին զգեցմամբն նորոգեցեր. և զմեզ նորոգեցեր ընդ նախահօրն մերում Ադամայ 'ի վերայ կենարար փայտին, և արբուցեր մեզ յանմահարար բաժակէդ 'ի կողահոս աղբերէդ. զմեռելութիւնս մեր նորոգեցեր անշնչութեամբ քով 'ի խաչին. և իջանելով քո 'ի գերեզման՝ և յարութեամբ քով 'ի մեռելոց, զարգելեալսն 'ի մեղասէր բանտին 'ի բանսարկուէն ազատեցեր. և զկարծիս կարծեալ իշխանին լուծեր, և զըմբռնեալսն 'ի նմանէ արժանաւորեցեր անեղաշէն դրախտին կենաց: Եւ ըզմեզ կարգեցեր քահանայս 'ի տաճարի փառաց սրբութեան քոյ՝ զոր հիմնեցուցեր 'ի վերայ առա-

քերական վիմի խոստմամբ Կեփայի, եթէ դու ես վէմ, եւ 'ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ. և դրունք դժոխոց զնա մի՛ յաղթահարեսցեն: Որպէս և զծառայս քո, զոր արժանաւորեցեր առնուլ զպատիւ քահանայութեան և զպսակ պարծանաց, և ընտրեցեր զնա լինիլ քեզ սպասաւոր ընդ որդիսն Որոտման: Ուստի նմանեցաւ սա Մելքիսեդեկի՝ լցեալ շնորհօք Հոգւոյդ սրբոյ: Սա՝ նմանեալ Մովսիսի նախամարգարէին, առաջնորդ լինելով ժողովրդեանն 'ի մթապատեալ մեղացն եգիպտական, մուծանելով 'ի տուն Տեառնդ եւ 'ի գաւիթս Աստուծոյդ: Սա՝ նմանեալ Ահարոնի վակասակիր պատմուճանաւն, և ոչ ակամբք երկոտասանիւք ընդելուզեալ, այլ եր-

կոտասան առաքելոցն փառատ-
րութեամբ համեմատեալ, և ոչ
զակունս յանդիմանութեան 'ի
վախճանին կրելով՝ որով զմահ եւ
զկեանս ժողովրդեանն ճանաչէր․
այլ զմարմին և զարիւն Որդւոյդ
Աստուծոյ 'ի վերայ բազկացն կը-
րելով՝ որով զմեզս և զանօրէնու-
թիւնս ժողովրդեան քոյ քաւէր,
և ոչ արեամբ ցլուց եւ զուարա-
կաց, այլ արեամբն Քրիստոսի Աս-
տուծոյդ մերոյ մտանէր 'ի սըր-
բութիւն սրբութեանցն ։ Սա՝
նմանեալ Սամուէլի՝ արկեալ զիւ-
րեաւ կրկնոց և զեփուտ քահա-
նայութեանն յանշարժ տապա-
նակի, հովուէր զժողովուրդ քոյ ։
Սա՝ տաճարի Տեառնդ գործող ։
Սա՝ սեղանոյ Տեառնդ պաշտօն-
եայ ։ Սա՝ պատարագիչ Քրիստո-
սիդ ։ Սա՝ բաշխող մարմնոյ և ար-

եան Տեառնդ։ Սա՝ մկրտիչ ծնեցելոյն աւազանին ջրով եւ հոգւով։ Սա՝ պսակիչ զուգակցելոյն յամուսնութիւն, տեառնագրութեամբ սուրբ խաչին եւ բոլոր պսակաւն։ Սա՝ մեղաւորաց դարձուցիչ՝ որ կոչէր յապաշխարութիւն քաղցրալուր բարբառովն։ Սա՝ ընթերցող մարգարէական և առաքելական տառից։ Սա՝ քարոզող ժողովրդեանն նմանեալ առաքելոյն։ Սա՝ տօնախմբող մարտիրոսացն, յիշատակող սրբոց ճգնաւորացն։ Սա՝ յիշատակող ննջեցելոյն հաշտարար սուրբ պատարագաւն։ Սա՝ փառաբանիչ սրբոյ Երրորդութեանդ վերնայնոյն նմանեալ։ Եւ այժմ, Տէր բարերար, զսա առ քեզ կոչեցեր, եւ խափանեցաւ պաշտօն սորա յեկեղեցւոյ քումմէ և ՚ի ժողո-

վերդենէ քումմէ ։ Վասն որոյ աղաչեմք զքեզ, մարդասէր Տէր, ընկա՛լ զհոգի սորա ընդ ընտրեալս քո եւ ընդ կամարարս անուանդ քում սրբոյ, եւ խառնեա՛ զսա 'ի թիւ աշակերտաց քոց ։ Եւ եթէ յանցեալ ինչ իցէ սորա ըստ մարդկային բնութեանս, թո՛ղ սմա ։ Եւ յանճառ և յահեղ գալստեան քո՝ յորժամ նշան սրբոյ խաչիդ ճառագայթիւք ընդ ամպս երկնից փայլէ կարապետ գալստեան քո, և զօրութիւնք երկնից շարժին, և զօրք հրեշտակաց առաջի ընթանան. եւ հրեշտակապետն հնչեցուցանէ զփողն ազդեցութեանց՝ ազդ առնելով տիեզերաց և յաւիտենից ննջեցելոցն՝ 'ի զարթուցանել 'ի մահահանգիստ քնոյ. և յառնեն մեռեալք 'ի գերեզմանացն, եւ հոգիքն զգենուն զիւ-

րաքանչիւր մարմին, և կան առաջի ահեղ ատենիդ. յայնժամ յանուանէ կոչեա՛ զծառայս քո՝ եւ ընդ աջմէ քոյ կացո՛. և արա՛ օգտաթռիչ թեւօք վերամբառնալ 'ի վերինդ Երուսաղէմ 'ի մայր մեր ամենեցուն, 'ի լուսեղէն առագաստն՝ 'ի յաւիտենական և յանանցանելի լոյսն: Եւ զաշակերտակիցս քո և զուղարկաւորք սորա եւ զյարմարող ծառայս քո հանդերձ երկրպագող ժողովրդեամբս՝ արժանաւորեա՛ երանաւէտ կոչմանդ քո, Քրիստոս Աստուած մեր. զի դու ես Տէր կենաց և Աստուած ողորմութեան: Եւ քեզ ընդ Հօր եւ ընդ Հոգւոյդ սրբոյ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ բառնան քահանայքն, և բերեն 'ի դուրս 'ի տաճարէն 'ի ժամատունն ։ Իսկ եթէ չիցէ ժամատուն՝ դիցեն 'ի յետին դասն . ասելով Շարական խաչի, ԳԶ ։

Փայտ կենաց որ փոխանակ մահացու պըտղոյն ըզՔրիստոս պտղաբերեցեր . պարըսպեալ պահես զմեզ հաւատացեալքս ։ Քեւ բացաւ մեզ ճանապարհ ծառոյն կենաց 'ի սրովբէական պահպանութենէն . պարըս ։ Քեւ ազատեցաւ նախահայրն 'ի ճաշակմանէ պտղոյն . Եւ քեզ երկրպագեն ամենայն հաւատացեալք . պարըս ։

Անուանեալ փայտ գիտութեան ընդմէջ 'ի կենացն հանեալ արտաքսեցոյց . որով յանցեաւ մայրն Եւայ, եւ պատրեաց ըզնախահայրն ։ Իսկ փայտ խաչի քո կենսատու գաւազան զօրութեան կենաց մարդկան եւ յոյս հաստատութեան . առաջնորդ եղեւ մեզ 'ի կեանսն յաւիտենից ։ Ետուր մեզ նշան յաղթող սուրբ զխաչ քո . զի սովաւ մտցուք ընդ նեղ դրունս անձկացեալ ճանապարհին . որում ցանկային երկրածին որդիք մարդկան ։

Եւ թէ յեպիսկոպոսաց իցէ . զաթոռն և զգաւազանն յեկեղեցւոյն դնեն , մինչև այլ ոք յաջորդեսցէ ։

Եւ անդէն 'ի ժամատանն առաջի խաչին որ 'ի դրան տաճարին է . կամ թէ 'ի յետին դասն , այս կանոն կատարի ։

Սաղմոս ԾԹ։

Ետուր երկիւղածաց քոց նշան, զի ապրեսցին յերեսաց աղեղան։
Աստուած, մերժեցեր և աւերեցեր զմեզ, բարկացար և գթացիր ՚ի մեզ։

Ընթերցուած յԱռակաց. Գ. 18.

Փայտ կենաց է ամենեցուն որ պատսպարին ՚ի նա, և որ յենուն ՚ի նա իբրև ՚ի Տէր հաստատութեամբ։ Աստուած իմաստութեամբ հիմունս արկ երկրի, պատրաստեաց զերկինս խորհրդով. հանճարով իւրով զանդունդս պատառեաց, եւ ամպք հոսեցին զանձրեւ։ Որդեակ, մի լուծանիցիս. պահեա զխորհուրդս իմ եւ զիմաստութիւն, զի կեցցէ անձն քո, և շնորհք լիցին ՚ի վերայ պարանոցի քոյ. եղիցի բժշկութիւն մարմնոյ քում, և դարման ոսկերաց քոց։ Զի գնասցես յուսով խաղաղութեան յամենայն ճանապարհս քո, և ոտն քո մի գայթագղեսցի։ Զի եթէ նստիցես՝ աներկիւղ լիցես, եւ եթէ ննջիցես՝ քաղցր ՚ի քուն լինիցիս, եւ ոչ երկիցես ՚ի զարհուրանաց ՚ի վերայ հասելոց եւ յարշաւանաց ամբարշտաց ՚ի վերայ եկելոց։ Զի Տէր եղիցի ՚ի վերայ ամենայն ճանապարհաց քոց, և հաստատեսցէ զոտն քո՝ զի մի գայթագղեսցի։

*Ընթերցուած յԵսայեայ մարգարէէ։ ԿԵ· 22։*

Այսպէս ասէ Տէր․ ըստ աւուրց փայտին կենաց եղիցին աւուրք ժողովրդեան իմոյ, գործք ձեռաց նոցա հնասցին։ Եւ ընտրեալք իմ մի եւս վաստակեսցեն ընդունայն, և ոչ եւս ծնանիցին որդիս յանէծս, զի զաւակ օրհնեալ են յԱստուծոյ՝ եւ ծնունդք նոցա ընդ նոսա։ Եւ եղիցի՝ մինչչեւ կարդացեալ իցէ նոցա՝ ես լուայց նոցա, և մինչդեռ խօսիցին, ասացից՝ թէ զի՞նչ խնդրէք։

*Պօղոսի առաքելոյն ՚ի Կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուած։ Դ․ 9։*

Ինձ այսպէս թուի՝ թէ զմեզ զԱռաքեալս յետնորդս արար Աստուած՝ իբրեւ զմահապարտս․ զի տեսիլ եղեաք աշխարհի և հրեշտակաց եւ մարդկան։ Մեք յիմարք վասն Քրիստոսի, և դուք իմաստունք ՚ի Քրիստոս․ մեք տկարք՝ եւ դուք հզօրք, դուք փառաւորեալք՝ եւ մեք անարգք․ մինչեւ ցայսօր ժամանակի և քաղցեաք, և ծարաւեցաք, և մերկ գնացաք, եւ կափահարեցաք, եւ անհանգիստ եղեաք, եւ աշխատեցաք ձեռօք մերովք․ բամբասէին զմեզ՝ օրհնէաք, հալածէին՝ յանձն առնուաք, հայհոյէին՝ աղաչէաք․ իբրեւ աւակ նշաւակի եղեաք ամե-

նոյն աշխարհի, ամենեցուն փարելի լինել մինչեւ ցայժմ։ Ոչ եթէ յամօթ ինչ առնելով զձեզ՝ գրեմ զայս, այլ իբրեւ զորդիս սիրելիս խրատեմ. թէպէտ եւ բիւր դաստիարակս ունիցիք ՚ի Քրիստոս, այլ ոչ եթէ բազում հարս. զի ՚ի Քրիստոս Յիսուս Աւետարանաւն ես ծնայ զձեզ։ Արդ աղաչեմ զդ ձեզ՝ նմանողք ինձ եղիջիք. որպէս եւ ես Քրիստոսի։

Ալէլուիա. Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց".

Ալէլուիա Օրթի։

Խաղաղութիւն ամենեցուն։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի
որ ըստ Մատթէոսի։ ԻԴ. 29։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ։

Վաղվաղակի յետ նեղութեան աւուրցն այնոցիկ՝ արեգակն խաւարեսցի, և լուսին ոչ տացէ զլոյս իւր, եւ աստեղք անկցին յերկնից եւ զօրութիւնք երկնից շարժեսցին։ Եւ ապա երեւեսցի նշան Որդւոյ մարդոյ յերկինս, և յայնժամ կոծեսցին ամենայն ազգք երկրի, եւ տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ ՚ի վերայ ամպոց երկնից զօրութեամբ և փառօք բազմօք։ Եւ առաքեսցէ զհրեշտակս իւր փողով մեծաւ, և ժողովեսցեն զընտրեալս նորա

*'ի չորից հողմոց՝ 'ի ծագաց երկնից մինչեւ 'ի ծագս նոցա։ Ի թզենւոյ անտի ուսարուք զառակն. զի յորժամ նորա ոստքն կակղասցին եւ տերեւն ցցուիցի, գիտէք թէ մերձ է ամառն։ Նոյնպէս եւ դուք՝ յորժամ տեսանիցէք զայս ամենայն, գիտասջիք թէ մերձ է 'ի դուրս։ Ամէն ասեմ ձեզ՝ եթէ ո՛չ անցցէ ազգս այս, մինչեւ այս ամենայն եղիցի։ Երկինք եւ երկիր անցցեն, եւ բանք իմ մի՛ անցցեն։*

Քարոզ։

*Աղաչեսցուք զամենակալն Աստուած, զի պահպանեսցէ զմեզ նշանաւ խաչին իւրոյ յերեւելի եւ յաներեւոյթ թշնամւոյն. ամենակալ տէր Աստուած մեր կեցո եւ ողորմեա։*

Աղօթք։

*Ճառագայթ համատարած, եւ աթոռ աստուածային, պսակ եկեղեցւոյ, եւ անբարբառ բարեխօս, նաւահանգիստ նաւակոծելոց, ճգնաւորաց ժուժկալութիւն եւ հրաժարելոց յուղարկիչ։ Ի յահաւոր եւ 'ի հրացայտ գալստեան*

երկնաւոր Թագաւորին յորժամ Ճառագայթեալ փայլես ընդ ամպս երկնից հիացուցանող զօրութեամբ, նմին ինքդ զմարմին սորա 'ի խարդախող վիշապէն պահեա՛. և հոգւոյ սորա լե՛ր առաջնորդ: Որ բացող եղեր դրախտին փակելոյ, բա՛ց սմա զդուռն ողորմութեան Տեառն: Որպէս զի արժանի լինելով սորա մտից դրախտին բացելոյ 'ի քէն, փառաւորեսցէ զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին. այժմ և:

Խաղաղութիւն ամենեցուն:

Աստուծոյ երկիրպագեսցուք:

Լուսափայլ աթոռ աստուածային և պատուական զօրութեան, որ 'ի ձեռն Մովսիսի հերձեր զծովն Կարմիր և զզօրութիւն քո ցուցեր Փարաւոնի՝ խորասոյզ ընկղմելով զնա զօրօքն իւրովք, և

Իսրայէլի առաջնորդեցեր։ Որ զվէմն հերձեր և զծարաւի ժողովուրդն արբուցեր։ Որ յեգիպտական սպանող ախտէն ապրեցուցեր զԻսրայէլ, և զթոյնս մահաբեր օձին կապեցեր։ Որ և 'ի նորումս առաւել փայլեցար գերազանց հրաշիւք և անճառ զօրութեամբ՝ երևեալ նշան փրկական ամենայն հաւատացելոց և ախոյեան մշտնջենաւոր, քան 'ի հնումն 'ի ձեռն օրինակացն և նմանութեանց՝ որք առժամանակեայք էին և ստուերք ճշմարտութեան։ Քանզի Արարիչն 'ի վերայ քո մակագրեալ բևեռեցաւ, և կանգնելով քո 'ի վերայ պարտեցելոյն գագաթան Ադամայ, զգլորեալն կանգնեցեր, զվիրաւորեալն բժշկեցեր, զախտն որ 'ի պատրողէն եղեւ՝ լուացեր այնու՝

որ 'ի կողմանս աղբերէն 'ի վերայ
քո հոսեցաւ ։ Դու զխաւարասէր
թշնամին ընկղմեցեր յանդունդս ,
եւ կապեցեր յանլոյծ կապանս ։
Դու զնիգս դժոխոյն խորտակե֊
ցեր , և զարգելեալսն որ 'ի նմա՝
ազատեցեր ։ Դու բացեր զդուռն
անեղաշէն դրախտին , եւ առաջ֊
նորդեցեր աւազակին ։ Դու հա֊
ւատք եւ կնիք ցուցար՝ որք 'ի
Քրիստոս դաւանին ։ Դու օգնա֊
կան հաւատացելոց , և պսակ ե֊
կեղեցւոյ ։ Դու հիմնեցուցիչ
հաւատոյ , դարձուցիչ մոլորելոց ,
եւ ապաւէն վտանգելոց ։ Դու
հիւանդաց բժիշկ , և ախտացե֊
լոց առողջութիւն ։ Դու հաւա֊
տացելոց պարիսպ , և անհաւատից
կործանումն ։ Դու հրափայլ ճա֊
ռագայթ , եւ կարապետ գալըս֊
տեանն Քրիստոսի ։ Դու կենդան֊

եաց հանգուցիչ, և հանգուցելոց առաջնորդ. առաջնորդեա՛ և այժմ հոգւոյ հանգուցելոյս յօթևանս լուսոյ արդարոցն, եւ լեր վասն սորա միջնորդ և բարեխօս առ 'ի քեզ խաչեցեալն Աստուած, զի լուիցէ աղաչանաց միաբան ժողովելոցս, և բացցէ սմա զդուռն կենաց մտին, եւ հանգուսցէ 'ի դասս սրբոց և սիրելեաց իւրոց՝ առնելով նոցա հաղորդ և ուրախակից։ Եւ արդ, Տէր մեր Յիսուս Քրիստոս, զամենայաղթ նշան սուրբ խաչի քո բարեխօս ունելով առ քեզ՝ հայցեմք յամենառատ մարդասիրութենէդ քումմէ, զի 'ի ձեռն սորա առաջնորդեսցես հոգւոյ հրաժարեալ քահանայիս՝ խաղաղութեամբ հասանել 'ի դրախտն լուսոյ՝ ուր ժողովքն են սրբոց։ Եւ 'ի միւսան-

*զամ գալստեան քոյ՝ յորժամ գաս 'ի նորոգել զանարատ ձեռաց քոց ստեղծուածս, և փող ազդեցութեան կոչէ, եւ նորոգին հնացեալ մարմինք. յորժամ նշան տէրունական խաչիդ փայլէ ընդ ամպս երկնից ճառագայթիւք ահեղահրաշ լուսով, և դասք սըրբոյն սրաթռիչ թևօք ամփոփին 'ի լուսոյ ճառագայթիցն, յայնժամ բարեբար և մարդասէր Աստուած, արա՛ զսա արժանի ընդ սուրբս քո թևապարիլ 'ի լոյս ճառագայթից սուրբ խաչիդ։ Եւ զմեզ արժանաւորեա՛ փառաւորել զամենասուրբ զԵրրորդութիւնդ. այժմ և։*

Ճառագայթ փառաց էին որ ըստ բնութեանըս մարդկային տագնապեցար 'ի գիշերին, աղօթեցեր առ Հայր յերկինս. ծագեա 'ի մեզ ըղլոյսդ Երկնային և փարատեա զերկիւղ

չարին. մասունք հոգւոց մեր եւ մարմին յերկիւղ քո սուրբ բեւեռացին:

Մերձեալ Յուդան որ մանանելոց հանդերձ դասուն փարիսեցւոց, անկան նման բառանկելոցն որք յաւիտեան չեն կանգնելոց. Յուդաս նենգաւ համբուրելով առիթ մահու նշան տալով, փոխան սիրոյ ըզնա մատնելով չար ընդ բարւոյ վըճարելով:

Յայնժամ առ գութ սիրոյն Պետրոս ըզծառայն անուն Մաղքոս եհատ սուսերբ զականջն աջոյ, որ ոչ լուաւ Տեառն խրոյ. Իսկ Տէրն մեր արագապէս յունկն մերձեալ բժշկապէս, առողջացոյց աստուածապէս, զոր ոչ տեսին կուրացն հանդէս:

Նոր հօտին փոքու ցըրուեալ քանզի զհովիւըն քաջ հարեալ. Պետրոս միայն ընդհետ երթեալ ՚ի յաղջկանէ վիմին շարժեալ. Նըշանակեալ հաւըն խօսէր առ ՚ի Պետրոս Տէրն ակնարկէր. զլալն յիշէր դառն արտասուէր ՚ի գլորմանէն դարձեալ կանգնէր:

Շնորհեալ վիմին եկեղեցւոյ զոր պահեցեր ՚ի հօսելոյ. եւ կանգնեցեր ՚ի գլորելոյ վասըն սրտին արտասուելոյ. կանգնեա եւ զիս Տէր ընդ նըմին ՚ի գլորմանէ սայթաքու-

զին, տալով աչացս յորդ արտասուս եւ
ջուր նըման ծովու գըլխոյս ։

Ո՞վ կամաւ զանկանելն կապեալ ընձեռս արձակողին, ՚ի յապարանսըն տանէին Կայիափայ եւ Աննային. ծառայն զերեսն այն ապտակէր յորմէ սրովբէն թեւաքօղէր, Թուք արձակեալ պիղծ բերանովն յայն որ
կուրին լոյս ծագեաց թքովն ։

Երգ․ Յորժամ հրեշտակն փողոյն լինի եւ ղեւտականն գիրն յայտնի․ Ճառագայթ սրբոյն խաչին յարեւելից փայլեալ ծագի․ հրեշտակաց գունդք ծառային հրեշտակապետաք պարունակին․
ոլր ։

Հօգւոյն հանգուցելոց ։ Հայր մեր որ յերկինս ։

---

Եթէ ՚ի ժամատան իցէ, տարցեն յառաջ դէպ ՚ի դուռն՝ զերեսն դէպ յարեւելս դնելով ։ Իսկ թէ ՚ի յետոյն դանէ, թողցեն ՚ի նոյն տեղւոջն անշարժ ։

Եւ ասեն Շարական, Գկ ։

Լուսով աստուածութեան քո Քրիստոս․ ըսկսաւորեցեր սուրբ զեկեղեցին․ պահեա ըզսա անշարժ յաւիտեան ։ Տօն է այսօր

*Երուսաղէմ հաւատացելոց բազմութեամբ զնաւակատիս սուրբ եկեղեցւոյ . պահ ։*
*Բացան դրունք հաւատոյ նոր Սիոնի ընդունել զանմահ փեսայդ յառագաստ . բաց խէ զմտրմին քո եւ զարբուն . պահ ։*

Սաղմոս , ճխբ ։

*Ցոյց ինձ ճանապարհ յոր գնացից , զի առ քեզ ,*
*Տէր , համբարձի զանձն իմ ։*
*Տէր , լուր աղօթից իմոց , ունկն դիր խնդրուածաց իմոց ճշմարտութեամբ քով ։*

Ընթերցուած 'ի Գործոց առաքելոց ։ Ի . 17 ։

*Եւ 'ի Միլետեայ յղեալ յԵփեսոս , կոչեաց զերիցունս եկեղեցւոյն ։ Եւ իբրեւ եկին առ նա , ասէ ցնոսա . Դուք ձեզէն գիտէք յօրէ յառաջնմէ յորմէ եկի յԱսիա , որպէս ընդ ձեզ զամենայն ժամանակն եղէ , ծառայել Տեառն ամենայն խոնարհութեամբ և բազում արտասուօք և փորձութեամբք՝ որ դիպեցան ինձ 'ի նենգութեանց Հրէից ։ Որպէս ոչ ինչ զանգիտեցի յօգտակարացն չպատմել ձեզ , և ուսուցանել ձեզ հրապարակաւ և առտնին , տալ վկայութիւն Հրէից և հեթանոսաց զապաշխարութեանն՝ որ առ Աստուած , և ըզհաւատոցն՝ որ 'ի Տէր մեր Յիսուս Քրիստոս ։*

Եւ արդ ահաւասիկ ես կապեալ Հոգւովն՝ երթամ յԵրուսաղէմ, և որ ինչ անդ ընդ իս անցանելոց է՝ չգիտեմ. բայց զի Հոգին սուրբ ըստ քաղաքաց վկայէ ինձ և ասէ, եթէ կապանք և նեղութիւնք մնան քեզ։ Այլ և ոչ իւիք համարիմ զանձն իմ պատուական, որպէս զկատարել զընթացս իմ ուրախութեամբ՝ եւ զպաշտօնն զոր առի ՚ի տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ, վկայ լինել աւետարանի շնորհացն Աստուծոյ։ Եւ արդ ահաւասիկ գիտեմ ես, եթէ ոչ եւս տեսանէք զերեսս իմ դուք ամենեքեան, յորս շրջեցայ քարոզել զարքայութիւնն Աստուծոյ։ Վասն որոյ և վկայութիւն դնեմ ձեզ յաւուր յայսմիկ, զի սուրբ եմ յարենէ ամենեցուն. քանզի ոչ խորշեցայ ՚ի չպատմելոյ ձեզ զամենայն կամսն Աստուծոյ։ Զգոյշ կացէք անձանց եւ ամենայն հօտին, յորում եդ զձեզ Հոգին սուրբ տեսուչս՝ հովուել զժողովուրդ Տեառն, զոր ապրեցոյց արեամբ իւրով։ Քանզի գիտեմ ես, եթէ յետ իմոյ մեկնելոյ՝ գայցեն գայլք յափշտակողք ՚ի ձեզ որ ոչ խնայեսցեն հօտին, և ՚ի ձէնջ յարիցեն արք որ խօսիցին թիւրս, ձգել զաշակերտան զկնի իւրեանց։ Վասն այսորիկ արթուն կացէք, եւ յիշեցէք՝ զի զերեամ մի զցայգ և զցերեկ ոչ դադարեցի արտասուօք

խրատել զմի մի ուրաքանչիւր։ Եւ արդ յանձն առնեմ զձեզ Աստուծոյ եւ բանի շնորհաց նորա, որ կարողն է շինել եւ տալ ձեզ ժառանգութիւն ընդ սուրբս ամենեսեան։ Արծաթոյ կամ ոսկւոյ կամ հանդերձից՝ ոչ ուրուք 'ի ձէնջ ցանկացայ. դուք ինքնին գիտէք՝ զի զպէտս իմ եւ որոց ընդ իս էին՝ պաշտեցին ձեռքս այս։ Եւ զամենայն ինչ ցուցի ձեզ, զի այսպէս պարտ է վաստակել, եւ դարմանել զհիւանդս, եւ յիշել զբանն տեառն Յիսուսի զոր ինքն իսկ ասաց. երանելի է մանաւանդ տալն քան առնուլն։ Եւ զայս իբրեւ ասաց, եդեալ ծունր ամենեքումբք՝ եկաց յաղօթս։ Բազում լալիւն եղեւ ամենեցուն, եւ անկեալ զպարանոցաւն Պաւղոսի համբուրէին զնա. մորմոքէին մանաւանդ 'ի վերայ բանին զոր ասէր. թէ ոչ եւս տեսանելոց են զերեսս նորա. եւ յուղարկեցին զնա 'ի նաւանդր։

Պօղոսի առաքելոյն 'ի Կողոսացւոց թղթոյն է ընթերցուած։ Գ. 1։

Եթէ յարեայք ընդ Քրիստոսի, ապա զվերինն խնդրեցէք՝ ուր Քրիստոսն նստի ընդ աջմէ Աստուծոյ. զվերինն խորհեցարուք, մի զայս որ յերկրի աստ է. քանզի մեռայք, եւ

կեանքն ձեր ծածկեալ են ընդ Քրիստոսի յԱստուած ․ խոկ յորժամ Քրիստոս յայտնեսցի կեանքն ձեր, յայնժամ և դուք ընդ նմա յայտնեսջիք փառօք ։

Ալէլուիա ․ Սաղմոս ՃԲ ․ Օրհնեա՛, անձն իմ, զՏէր ․ և ամենայն ոսկերք իմ զանուն սուրբ նորա ։ Օրհնեա՛, անձն իմ, զՏէր ․ և մի՛ մոռանար զամենայն տուրս նորա ։

Ալէլուիա Օրթի ․
Խաղաղութիւն ամենեցուն ։

Սրբոյ աւետարանին Յիսուսի Քրիստոսի
որ ըստ Յովհաննու ։ ԺԶ ․ 33 ․

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ ։

Զայս խօսեցայ ընդ ձեզ՝ զի ընդ իս խաղաղութիւն ունիցիք ․ յաշխարհի աստ նեղութիւն ունիցիք, այլ քաջալերացարուք զի ես յաղթեցի աշխարհի ։ Զայս իբրեւ խօսեցաւ Յիսուս, ամբարձ զաչս իւր յերկինս և ասէ ․ Հայր, հասեալ է ժամ, փառաւորեա զորդի քո, զի եւ որդի քո փառաւորեսցէ զքեզ ․ որպէս ետուր նմա իշխանութիւն ամենայն մարմնոյ, զի ամենայնի զոր ետուր նմա, տացէ զկեանսն յաւիտենականս ։ Այս են յաւիտենական կեանք, զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ Աստուած, և զոր առաքեցեր ըզ-

Յիսուս Քրիստոս ։ Ես զքեզ փառաւորեցի յերկրի, զգործն կատարեցի՝ զոր ետուր ցիս զի արարից. և այժմ փառաւորեա զիս, Հայր, առ 'ի քէն փառօքն զոր ունէի յառաջ քան զլինելն աշխարհի առ 'ի քէն ։ Յայտնեցի զանունն քո մարդկան, զորս ետուր ինձ յաշխարհէ. քո էին, և ինձ ետուր զնոսա, և զբանն քո պահեցին ։ Արդ գիտացին՝ եթէ զամենայն ինչ զոր ետուր ինձ, ետու նոցա. և նոքա ընկալան, և ծանեան ճշմարտութեամբ՝ թէ առ 'ի քէն ելի. եւ հաւատացին՝ եթէ դու առաքեցեր զիս ։ Արդ ես վասն նոցա աղաչեմ, և ոչ վասն աշխարհի աղաչեմ. այլ վասն նոցա զորս ետուրն ինձ, զի քո են. և որ ինչ իմ է, ամենայն քո է. եւ որ ինչ քո է, այն իմ է. և փառաւորեալ եմ 'ի նոսա ։ Եւ ես ոչ եւս եմ յաշխարհի, և նոքա յաշխարհի են, և ես առ քեզ գամ. Հայր սուրբ, պահեա զնոսա յանուն քո, որով ետուրն ինձ. զի եղիցին մի որպէս և մեք մի եմք ։ Մինչ էի յաշխարհի ընդ նոսա, ես պահէի զնոսա յանուն քո՝ որով ետուրն ինձ. և պահեցի. և ոչ ոք 'ի նոցանէ կորեաւ, բայց որդին կորստեան, զի գիրն լցցի ։

Բայց արդ առ քեզ գամ. եւ զայս խօսիմ յաշխարհի, զի ունիցին զուրախութիւնն իմ

լիով յանձինս իւրեանց։ Ես ետու նոցա զբանն քո, և աշխարհս ատեաց զնոսա. զի չեն յաշխարհէ, որպէս եւ ես չեմ յաշխարհէ։ Ոչ զայս աղաչեմ զի բարձցես զնոսա յաշխարհէ, այլ զի պահեսցես զնոսա 'ի չարէ։ Յաշխարհէ աստի չեն, որպէս և ես չեմ յաշխարհէ։ Սուրբ արա զնոսա ճշմարտութեամբ քով, զի քո բանդ ճշմարտութիւն է։ Որպէս զիս առաքեցեր յաշխարհ, եւ ես առաքեցի զնոսա յաշխարհ. և 'ի վերայ նոցա ես սուրբ առնեմ զանձն իմ, զի եղիցին և նոքա սրբեալք ճշմարտութեամբ։ Այլ ոչ վասն նոցա միայն աղաչեմ, այլ և վասն ամենայն հաւատացելոց բանիւն նոցա յիս. զի ամենեքին մի լիցին, որպէս դու Հայր յիս՝ և ես 'ի քեզ, զի և նոքա 'ի մեզ լիցին. զի և աշխարհ հաւատասցէ եթէ դու առաքեցեր զիս։ Եւ ես զփառսն զոր ետուր ինձ՝ ետու նոցա, զի իցեն մի՝ որպէս և մեք մի եմք. ես 'ի նոսա, և դու յիս, զի եղիցին կատարեալք 'ի մի։ Եւ գիտասցէ աշխարհ՝ եթէ դու առաքեցեր զիս, եւ սիրեցի զնոսա որպէս դու զիս սիրեցեր։ Հայր, զորս ետուրն ինձ, կամիմ՝ զի ուր ես եմ, եւ նոքա իցեն ընդ իս. զի տեսանիցեն զփառսն զիմ, զոր ետուրն ցիս. զի սիրեցեր զիս յառաջ քան զլինելն աշխարհի։ Հայր

արդար, և աշխարհ զքեզ ոչ ծանեաւ. այլ ես զքեզ ծանեայ, և նոքա ծանեան՝ եթէ դու առաքեցեր զիս: Եւ ծանուցի նոցա զանուն քո եւ ծանուցից, զի սէրն զոր սիրեցեր զիս՝ ՚ի նոսա լիցի, և ես ՚ի նոսա: Զայս իբրեւ ասաց Յիսուս, ել աշակերտօքն հանդերձ յայնկոյս ձորոյն Կեդրոնի՝ ուր էր պարտէզ, յոր եմուտ ինքն և աշակերտքն իւր:

Քարոզ:

Վասն ՚ի վերուստ խաղաղութեան եւ փրկութեան անձանց մերոց, զՏէր աղաչեսցուք:
Վասն լսելի լինելոյ տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց, զՏէր աղաչեսցուք:
Վասն քաւիչ և ներող լինելոյ Աստուծոյ ՚ի վերայ մեղաց մերոց, զՏէր աղաչեսցուք:
Վասն թողլոյ մեզ զամենայն յանցանս մեր, ըզկամայ և զակամայ, զՏէր աղաչեսցուք:
Վասն զի մի՛ ընդ խոտանս գտանիցիմք յաւուրն պատասխանատուութեան, զՏէր աղաչեսցուք:
Վասն հոգւոցն: Եւ ևս: Զանձինս մեր: Ողորմեաց:

Աղօթք:

Եկեալ եմք երկրպագանել առա-ջի սուրբ փառաց աթոռոյ քոյ ՚ի խորանս սրբութեան քոյ. և արտասուալից հառաչանօք հայցեմք

'ի քէն, Տէր բարեգութ, զի ընկալցիս զպաղատանս մեր՝ զոր մատուցանեմք առաջի քոյ գթութեանդ։ Քանզի ծառայս քո զոր կոչեցեր յառաջնորդութիւն ժողովրդեան քում և 'ի սպասաւորութիւն սրբոյ եկեղեցւոյ՝ հովուել զժողովուրդս քո, ահա ըստ հրամանի քում կատարեալ զժամանակս իւր եկն առ քեզ։ Արդ, քաղցր և բարերար Տէր, զպատարագս եւ զնուէրս վասն մեղաց զոր մատուցեալ է առաջի քո, և զյիշատակս ննջեցելոց զոր 'ի վերայ սեղանոյդ սրբոյ անուանդ քում կատարեալ է, ընկալ 'ի հաճոյս քեզ· և ողորմեա ըստ մեծի ողորմութեան քում· և հոգւոյ սորա առաջնորդեա 'ի յերկիր ուղիղ՝ որ տանի 'ի կեանսն յաւիտենից 'ի Քրիստոս Յիսուս 'ի Տէրդ մեր· որում

վայելէ փառք իշխանութիւն և պատիւ այժմ և։

Խաղաղութիւն ամենեցուն։

Աստուծոյ երկիրպագեցուք։

Յոյս արարածոց և փրկիչ աշխարհի, որ վասն մեղաւորաց խոնարհեցար յանձառ փառաց և մարմնացար յանարատ կուսէն. եկիր կամաւ 'ի չարչարանս խաչի, եդար 'ի գերեզմանի, մտեր 'ի մէջ դժոխոց, եւ զթշնամին կապեցեր յանլոյծ կապանս. յարեար 'ի մեռելոց և մեզ նորոգութիւն խոստացար 'ի միւսանգամ գալըստեանդ։ Յիշեա՛ զծառայս քո զայս՝ որ 'ի սնոտի կենցաղոյս փոխեցաւ. և զքահանայութիւնս զոր կատարեաց յաշխարհի, ընկա՛լ քեզ 'ի հաճոյս. և տուր սմա բաժին ընդ արժանաւորս եւ ընդ սիրելիս անուանդ քում, որք սըր-

բութեամբ պաշտեցին զքեզ։ Եւ
զոր ինչ յանցեալ իցէ բանիւք՝
կամ գործովք՝ կամ մտածու-
թեամբ, թող սմա. քանզի դու
ես ողորմած եւ անոխակալ Տէր,
և քեզ վայել է փառք՝ իշխա։

Զա̊ր կապանա՜ց մարդկան լուծիչ որ կապե՛-
ցար ընդ կապելոյն, զի՛ս արձակեա յինքնա՛-
կապէս մե՛ղաց կապից դժնդակայնոյն. որ ընդ
մեղօք պարտաւորին կացեր անմե՛ղդ 'ի յա-
տենին. յորժամ փառօք գաս հայրենին մի
դատեսցես զիս ընդ նոսին։

Պա̊տկառանօ՜ք հինն Ադամայ որ ձաղե՛ցար
վասըն նորա, ջընջեա զամօթ մեղա՛ց լըրբին
որով զերեսս իմ ծածկեցին. որ ներեցեր
չար ծառային ածել ձեռօ՛ք քեզ ապտակին.
հա՛ր ուժգնակի զդէ՛մս չարին որպէս եւ զիս
եհա՛ր ուժգին։

Ջա̊հըն լուսոյ յառաւօտին 'ի յուրբա՛թուն
հընոյ զատկին, կա՛յր առաջի դատաւորին
ծառայն նըստէ՛ր 'ի յատենին. 'ի հարցանել
Պիղատոսի Տէրն ոչ տանէ՛ր պատասխանի. զի

կանխատաց գիրըն լըցի, ողջ՛ ես մարդ որ
ոչ խօսի :

Ռօմկակա՜ն դասք զինուորացն արկին հա՛ն–
դերձ նախատանաց, այնմ որոյ զգեստըն է՛
լոյս փառաց իբրեւ զօթոց զինքեամբ արկած.
'Ի ծունր իջեալ կատակէին ըզգլուխն եղե–
գամբ հարկանէին. պըսակ 'ի փըշոց բոլորէին
ըզփուշ մեղացըն բարձողին :

Սօսկալի՜ն սերովբէից բանն այր ինքեամբ
ըզփայտ խաչին, մինչ 'ի տեղի Գողգոթային
յորում եղեալ մարդըն տապին. Եւ տուն
ըմպել գինի զմըռսեալ եւ կերակուր լեղեաւ
խառնեալ, որով զպըտուղն դառըն ճաշակ
փոխեաց մեզ քաղցր եւ ախորժակ :

Վերնակա՜նքըն զարհուրեալ տեսին ըզ–
Տէրըն մերկացեալ, եւ ըզհանդերձսըն բա–
ժանեալ պատմուճանին վիճակ արկեալ.
ըզձեռսն եւ զոտսն ծակեցին ըստ յայտնա–
պէս Դաւթեան ձայնին. ընդ փայտ խաչին
բեւեռեցին զմատունսն որ գրեաց 'ի տախ–
տակին :

Երգ. Թագաւո՛ր փառա՛ց Քրիստո՛ս որ
ժամանեալ գաս 'ի յերկնից. 'ի վերայ
թեւո՛ց հողմո՛ց քո հայրենի կերպա–

բանօք ․ եւ անունս հրափորձութեամբ ըղձքըննութիւն որդւոյ մարդկան ․ ողոր ։

Հոգւոյն հանգուցելոյ ։ Քրիստոս որդի Ա ։

Եւ դէտանագրէն ղդին ոճնայն քահանայն ․ և ապա ասէն ․

Հայր մեր որ յերկինս ։

---

Եւ տանին յարեւելեան կողմն ասելով Շարական, ԱՋ ։

Որ զանարատ բազուկս քո ՚ի խաչին տարածեցեր Քրիստոս աստուած, եւ նշան յաղթութեան ետուր մեզ ․ ողորմեա ընկեա-նըս մեր պահեա ։ Որ զաշխարհակեցոյց բազ-կատարածութիւն խաչի քո Քրիստոս աստու-ած գաւազան զօրութեան ետուր մեզ ․ ողորմեա ։ Որ ըղձեւեան ՚ի ճաշակմանէ փայ-տին յանցանաց կենաց փայտին կենա-գործեցեր ․ ողորմեա ըղ ։

Եւ դարձուցեն զերես հանգուցելոյն դէպ յարեւմուտս ։
Ապա ասեն Սաղմոս ողբաձայն, ՃԻԳ ։

Ողորմութիւն է մեզ յանուանէ Տեառն ․ այն որ արար զերկինս եւ զերկիր ։
Փոխ ․ Եթէ ոչ Տէր էր ընդ մեզ ։

Ալէլուիա Օրթի։

Խաղաղութիւն ամենեցուն։

Սրբոյ աւետարանին Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մատթէոսի։ ԺԳ. 43։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ։

Յայնժամ արդարքն ծագեսցեն իբրեւ զարեգակն յարքայութեան երկնից. որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։ Դարձեալ՝ նման է արքայութիւն երկնից գանձի ծածկելոյ յագարակի, զոր գտեալ մարդոյ՝ թագոյց. եւ ՚ի խնդութենէ անտի երթայ վաճառէ զամենայն ինչ զոր ունի, եւ գնէ զագարակն զայն։ Դարձեալ՝ նման է արքայութիւն երկնից առն վաճառականի, որ խնդրիցէ մարգարիտս գեղեցիկս։ Եւ գտեալ մի պատուական մարգարիտ՝ երթեալ վաճառեաց զամենայն զոր ինչ ունէր, եւ գնեաց զայն մարգարիտ։ Դարձեալ՝ նման է արքայութիւն երկնից ուռկանի արկելոյ ՚ի ծով՝ եւ յամենայն ազգաց ժողովելոյ. զոր՝ իբրեւ լցաւ՝ հանեալ ՚ի ցամաք, եւ նստեալ ժողովեցին զբարի բարին յամանս, եւ զխոտանն ՚ի բաց ընկեցին։ Այնպէս եղիցի ՚ի կատարածի աշխարհիս. ելցեն հրեշտակք եւ մեկնեսցեն զչարս ՚ի միջոյ արդարոց, եւ արկցեն զնոսա ՚ի հնոց հրոյն. անդ եղիցի լալ եւ կրճել ատամանց։ Ասէ ցնոսա Յիսուս. Իմա֊

ցարո՞ւք զայս ամենայն։ Ասեն ցնա. Այո՛, Տէր։ Եւ նա ասէ ցնոսա. Վասն այսորիկ ամենայն դպիր աշակերտեալ արքայութեան երկնից, նման է առն տանուտեառն՝ որ հանէ 'ի գանձէ իւրմէ զնոր և զհին։

Քարոզ·

Վասն 'ի գիշերի և 'ի տուընջեան և յամենայն ժամու խօսել մեզ զբանն Տեառն, զՏէր աղաչեսցուք։
Վասն չանկանելոյ մեզ 'ի փորձութիւն, որում ոչ կարեմք հանդուրժել, զՏէր աղա.
Վասն անբիծ և անդատապարտ կալ մեզ առաջի ահեղ ատենին Քրիստոսի, զՏէր աղա։
Վասն առաջնորդելոյ մեզ 'ի նաւահանգիստն կենաց անվախճանից, զՏէր աղա.
Վասն արժանի լինելոյ մեզ վերին կոչմանն եւ երկնից արքայութեանն, զՏէր աղա.
Վասն հոգւոյն։ Եւ ևս։ Զանձինս մեր։ Ողորմեաց։

Աղօթք·

Աստուած հոգւոյ եւ ստեղծիչ մարմնոց, Տէր ես կենդանեաց և յարութիւն մեռելոց։ Աստուած, 'ի քէն արձակին հոգիք, և քո հրամանաւդ կառավարին մարմինք։ Հաստատեցեր զմարդն շը-

նորհօք, եւ ստեղծեր զնա ողորմութեամբ։ Բանդ քո կարգեաց զարարածս, և կազմեաց զաշխարհըս։ Զամենայն ինչ արարեր վասն մարդոյ, և զմարդն 'ի փառս Աստուծոյդ։ Գեղեցիկ կերպարանօք նկարեցեր զմարդն առաջին, զոր հաստատեցեր և արարեր կենդանի և անմահ, և կացուցեր տէր ամենայնի։ Դարանակալ եղեւ թշնամին արդարութեան. խաբեալ ընկէց 'ի փառացն եւ 'ի կենացն. և եհան 'ի դրախտէն փափկութեան։ Եկն միածին Որդիդ քո սիրելի, եւ զգեցաւ զմարմին պարտաւոր, և նորոգեաց զնա 'ի կեանս. զկործանեալն կանգնեաց, և զմահկանացուն անմահ արար, զթշուառացեալն փառաւորեաց, և նստոյց ընդ աջմէ Հօրդ իւրոյ։ Քանզի ընդ ունկն լսելեացն եմուտ

մահ, և ընդ ունկն լսելեացն ծագ-եաց կեանք. ընդ ունկն Եւայի բարբառ մահու. եւ ընդ ունկն Մարիամու աւետիք կենաց։ Թու-գաւորեաց մահ յանցանօք, Թա-գաւորեցին կեանք շնորհօք. յան-հընազանդութենէ եմուտ մահ, և 'ի հնազանդութենէ գալուստ կենաց. ժպրհեցաւ և յանցեաւ Ադամ, զի եղեւ ցանկացող աս-տուածութեան. աստուածու-թեան ոչ եհաս, և յիւրոյն եւս անկաւ։ Ի մեղս մեր մեռանիմք, և ողորմութեամբ քով յառնեմք. 'ի յանցանս մեր եղծանիմք, և 'ի կամս քո նորոգիմք։ Լռեալ դա-դարին ամենայն մարմինք. իջանեն 'ի հող և ապականին. սերմանին 'ի հող՝ նմանութեամբ սերման-եաց երկրի, և սպասեն անձրեւիդ մեծի. զի ելցեն իբրև զբոյս յերկ-

*րէ ։ Վերանան սուրբքն յերկրէ 'ի բարձունս, և միայն մեղաւորքն յերկրի․ արդարքն վայելեն 'ի փառըս և 'ի կեանս, և մեղաւորքն հաշին և մաշին 'ի տանջանս ։ Արդ, յորժամ այս ամենայն լինի, դու, բարերար Աստուած, տուր ծառայիս քո (այս անուն) հանգուցեալ քահանայիս, զի յարիցէ աշալըրջութեամբ երեսաց, և կացցէ ընդ աջմէ քումմէ և ժառանգեսցէ զարքայութիւնդ՝ 'ի վայելել զանսպառ ուրախութիւնսդ ընդ սուրբս քո՝ և ընդ նոսին փառաւորել զամենասուրբ զԵրրորդութիւնդ․ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից․ ամէն ։*

*Տարածեալ ձեռք ընդ ձեռաց ոտք ընդ ոտից ընթանալեաց, փայտ ընդ փայտի դառըն պըտղս կեանք ընդ մահու փոխարկելով․ 'ի մէջ երկուց անօրինաց կայր մերկացեալ*

տուողն օրհնեաց, զոր ոչ տեսին անգղըն կու-
րաց բայց 'ի միտն յաւանդակաց ։

Բոպէից արեգականն զոսկին տարար գլխերա-
նման, զըստուերըն քօղ արկ մերկութեան
զի մի տեսցէ անկն անարժան. 'ի մէջօրէայն
նըսեմացաւ, յորժամ Ադամ մեղօք մեռաւ.
'ի յինններորդն 'ի լոյս դարձաւ, յորժամ մա-
հուամբ մահըն լուծաւ ։

Յօդէր արտօսըր ցաւագին մայր Տեառն, որ
կայր մերձ առ խաչին, յորժամ լսէր ըզ-
ծարաւին բարբառելոյ Իւր միածնին. Ե-
տուն քացախ խառնեալ լեղի այնմ՝ որ բըղ-
խեաց գետ յադենին, եւ 'ի վիմէն վըտակ
բարի արբոյց տոհմին դաւանողաց ։

Իրւծեալ յերրորդ ժամու ծածին զմիտըս
նախնեաց մօրն Եւային, 'ի վեցն անկեալ մարդն
առաջին հաւանական բանիւ նորին. 'ի սոյն
ժամու Տէրն 'ի խաչին զի քաւեսցէ զմեղըս
նոցին. եւ յորժամ ել Ադամըն հին, եդ
զաւազակն 'ի մէջ դրախտին ։

Փարելի բարբառ ընդ խմ էլի էլի առ Հայր
գոչէր, զհոգին կամաւ իւր աւանդէր, զհո-
գիս մարդկան նոյն ընծայէր. Երկիր հի-
մամբք սասանեցաւ, և փարագոյրն ընդ մէջ

*Հերձան, վէմք 'ի յինքեանց պատառեցան,*
*Եւ գերեզմանք մահու բացան:*

*Քարոզէ 'ի սքանչելեացս Աստուած մարմ-*
*նով վասն իմ խաչեալ, մերով բնութեամբըս*
*մեռանի, Աստուած անմահ խոստովանի,*
*կործանարարն կողին աղբերբք եկեղեցի*
*իւր հաստատի. ջրովըն մաքրի, զարիւնն*
*ըմպէ, զՈրդի ընդ Հօր փառաւորէ:*

*Երգ. Զարհուրեցան զօրք երկնայինն*
*յորժամ տեսին զՏէրդ 'ի խաչին. արե-*
*գական լոյս քող արկեալ եւ լոյս լուսա-*
*նին նսեմացեալ. յահեղ փառաց ատա-*
*ուածորդւոյդ խաւար եղեւ ընդ տիե-*
*զերս. օղոր:*

*Հոգւոյն հանգուցելոց: Քրիստոս որդի Ա.:*

Եւ փոխանորդքն դբին ամենայն քահանայքն. և ապա ասեն.

*Հայր մեր որ յերկինս:*

---

*Եւ ապա տանին 'ի կողմն հիւսիսոյ՝ ասելով*
Շարական խաչի, Ակ:

*Խաչ քո եղեցի մեզ ապաւէն բոցանիշ*
*փայլմամբն իւրով. խորտակեաց ըզԹշնա-*
*մին, եւ եղծ ըզգաստանեք անուանեալ*

փայտըն կե՛նաց 'ի փրկութի՛ւն տիեզերաց։ Վերացեա՛լ ցընծան երկի՜նք, եւ երկիր ուրախանա՛յ ընդ յայտնիլ սրբոյ խաչին սե-ւակնաձեւ քաւութեա՛ն, որ զաշխարհըս լուսաւորեա՞ց արեգակնակերպ ճառագայ-թիւք։ Ցընծացա՛ւ Երուսաղէ՜մ, բերկրեցան հաւատացեալք, նորահրաշ զարդարեցան, քանզի տեսին զյաղթող նշանն. արարածք ամենա՞յն 'ի լուսոյն պայծառացա՛ն։

Եւ դարձուցեն զքրեան դէպ 'ի հարաւ ։
Եւ ասեն Սաղմոս օրհնութեան, ճխե ։

Երանի ա՛զգի որո՛ւմ տէր Աստուած ցա՛նկո-բա՛յ օգնակա՛ն է նորա։ Եւ յոյս նորա 'ի տէր Աստուած է։ Փոխ. Օրհնեա՛, անձն իմ, զՏէր"։

Ալէլուիա Օրթի.
Խաղաղութիւն ամենեցուն ։
Սրբոյ աւետարանին Յիսուսի Քրիստոսի
որ ըստ Մարկոսի ։ ԺԳ. 32 ։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ ։

Այլ վասն աւուրն այնորիկ և ժամու ոչ ոք գիտէ, ո՛չ հրեշտակք յերկինս եւ ո՛չ Որդի, բայց միայն Հայր։ Զգոյշ եղերուք, հսկեցէք և կացէք յաղօթս. զի ո՛չ գիտէք երբ ժամա-

նակն լցէ ։ Որպէս այր մի գնացեալ 'ի տար աշխարհ, թողուցու զտուն իւր, եւ տացէ ծառայից իւրոց իշխանութիւն, և իւրաքանչիւր զգործ իւր, եւ դռնապանին պատուէր տայցէ՝ զի արթուն լինիցի ։ Արդ արթուն կացէք, զի ոչ գիտէք երբ տէր տանն գայցէ, յերեկորեայ, եթէ 'ի մէջ գիշերի, եթէ 'ի հաւախօսի, եթէ ընդ առաւօտս. գուցէ եկեալ յանկարծակի՝ գտանիցէ զձեզ 'ի քուն ։ Բայց զոր ձեզդ ասեմ, ամենեցուն ասեմ՝ արթուն կացէք ։

Քարոզ ։

վասն ուղղելոյ զգնացս մեր 'ի ճանապարհս խաղաղութեան, զՏէր աղաչեսցուք ։
վասն ցրելոյ 'ի մէնջ զամենայն խորհուրդս չարին, զՏէր աղաչեսցուք ։
վասն պարգեւելոյ մեզ առողջ խորհուրդս և առաքինի վարս, զՏէր աղաչեսցուք ։
Վասն պահելոյ զմեզ ընդ հովանեաւ ամենազօր աջոյն իւրոյ, զՏէր աղաչեսցուք ։
Վասն խորտակելոյ զհակառակորդն վաղվաղակի ընդ ոտիւք մերովք, զՏէր աղաչեսցուք ։
Վասն հոգւոյն։ Եւ եւս։ Զանձինս մեր։ Ողորմեաց։

Աղօթք ։

Օրհնեալ ես արդարադատ և ո-

ղորմած Աստուած. միայն անո-
խակալ և բարեգութ. որ յակ-
նարկելդ քո հաստատեցան հի-
մունք երկրի։ Քո ձեռամբդ արա-
րեր զմարդն, և քո նախախնամու-
թեամբդ իշխան եւ տէր կացու-
ցեր զնա ՚ի դրախտին փափկու-
թեան։ Սակայն չարին մախացեալ
ընդ փառս պատուին զոր ՚ի քէն
ընկալաւ, եհեղ ՚ի նա զթոյնս դառ-
նութեան, և խաբմամբ օձաջան
պատրանօքն ետ նմա ճաշակել ՚ի
ծառոյն գիտութեան. որով մեր-
կացեալ ՚ի լուսեղէն փառացն՝ զա-
նիծից եւ զցաւոց ժառանգեաց
զկեանս։ Իսկ դու յառաջատես
եղեալ՝ հրամայեցեր մահու փո-
խել զնա ՚ի զազրալից կենցաղոյս.
որպէս զի մի՛ անմահ լիցի չարու-
թիւնն, որ ՚ի մեզ սերմանեցաւ։
Ըստ նոյնոյ օրինակի և սպասաւոր

սրբոյ սեղանոյ քոյ փոխեցաւ ահա առ քեզ՝ ըստ կետի սահմանադրութեան քոյ։ Եւ այժմ աղաչեմք զքեզ, տէր Աստուած մեր, կցորդ լեր և մխիթարիչ ծառայիս քոյ (այս անուն) հանգուցեալ քահանայիս. զի դու ես կեանք և յարութիւն. զի եթէ մինչ ոչն էր՝ արարեր, զիա՞րդ եղծանես զպատկեր կերպարանաց քոց։ Աղաչեմք զքեզ, Տէր, Նորոգեա զծառայս քո. զի վայելէ իսկ թագաւորիդ նորոգել զպատկեր իւր հնացեալ. Նորոգեա՛, Տէր, զպատկեր քո որ հնացեալ է 'ի մեղս. զի մեծ են այս երախտիքս քան զառաջին պարգևսն քո. զի անդ հաստատելով հաստատեցեր, և աստ զհնացեալս նորոգես։ Որպէս զի գտեալ սորա զմեծ զողորմութիւն 'ի քէն՝ հանցէ զօրհնութիւն և

զփառս Հօր և Որդւոյ և Հոգւոյդ սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Նորոգող տիեզերաց որ զգեցուցեր մեզ լոյս փառաց, արկար ըզքեւ 'ի զինուորաց քղամիդ կարմիր նախատանաց. մերկեա յինէն ըզքուրձ մեղաց, ըզտրտմութիւն սրտամբ ներկած. եւ ըզգեցո զուրախալին ըզպատմուճանն իմ զառաջին:

Երկնաւոր թագաւորդ 'ի ծունր իջեալ խաղ առնէին, ծածկեալ ըզգլուխդ կըռփէին, և եղեգամբ հարկանէին. եւ զիս անկեալ մինչ 'ի գետին 'ի հնազանդել կամաց չարին, մի թողուցուս խաղալ ամին, այլ կանգնեսցես զիս վերստին:

Բամբեալ բոլորդ քո մարմին յետ վիրաց դատաւորին, սաստիկ էառ զհարուած գանին վասն գանից նախաստեղծին. զիս որ յոտից մինչեւ ցըգլուխս ցաւօք ներզիմ անհընարին, առողջացո դարձեալ կըրկին որպէս շնորհօք յառաջին:

Սըրբափայլ պըճնեալ զարդուն զոր զգեցուցեր Ահարոնին, փոխան պըսակ 'ի փշոց

եդին մըշակք այգւոյն Իսրայէլին. ընդփուշ մեղաց հանցես յինէն զոր յիս եհար իմ Թըշնամին. եւ ողջացո զխայթուած վիրին, զի սպիք մեղացըն ջընջեսցին:

Երգ. Ուրախացան ազգք մարդկան յորժամ լուան զքո յարութիւնդ. նորափետուր զարդարեցան 'ի յարութեան սուրբ միածնիդ. օղոր:

Հոգւոյն հանգուցելոց: Քրիստոս որդի Աս:

Եւ տէառնագրեն զդէմն ամենայն ժողովրդեան. Եւ ապա ասեն.

Հայր մեր որ յերկինս:

---

Եւ տանին 'ի կողմն հարաւոյ՝ ասելով Շարական խաչի, ԲՁ:

Այսօր խընդրի պատուական փայտ խաչին աւանդեալն 'ի Գողգոթա 'ի ձեռն աստուածասէր դըշխոյին. Եկայք հաւատացեալք երկրպագեսցուք աստուածային սուրբ նըշանիս: Այսօր ընծայէ Գողգոթայ ըզծածկեալն 'ի յերկրի, վերաբերեալ անուշահոտ խընկովք 'ի ձեռն երանելւոյն Յուդայի. Եկայք հաւա: Այսօր 'ի ձեռըն փըրկականն սուրբ խաչին կենագործի պատանին մեռեալ, և ողբայ սատանայ ընկործա-

Նմա՛ն իւր․ ի՛նչ մե՛ք Քրիստոսի հաւատացեալք երկրպագեմք։

Եւ դարձուսցեն զերեսն դէպ ՚ի հիւսիս։
Եւ ասեն Սաղմոս ողբաձայն, ՃԼԸ։

Ա՛նդ պարտա՛ստեա՛ց Տէ՛ր զօ՛րհնութի՛ւն, և՛ զկեա՛նսն յաւիտենի՛ց։

Փոխ․ Զի՞ բարի կամ զի՞ վայելուչ, զի բնակին եղբարք ՚ի միասին։

Ալէլուիա Օրթի։

Խաղաղութիւն ամենեցուն։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի
որ ըստ Ղուկասու։ իբ․ 24։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ։

Եղեւ և հակառակութիւն ՚ի մէջ նոցա, թէ ո՛վ ՚ի նոցանէ համարիցի մեծ։ Եւ նա ասէ ցնոսա․ Թագաւորք ազգաց տիրեն նոցա, և որ իշխենն նոցա՝ բարերարք կոչին․ այլ դուք ոչ այնպէս․ այլ որ մեծն է ՚ի ձեզ՝ եղիցի իբրեւ զկրտսերն, և առաջնորդն իբրեւ զսպասաւորն։ Ո՞վ է մեծ, բազմեա՞լն՝ եթէ սպասաւորն․ ո՞չ ապաքէն բազմեալն․ բայց ես եմ ՚ի միջի ձերում իբրեւ զսպասաւոր։ Եւ դուք էք՝ որ ցանդ կայք ընդ իս ՚ի փորձութիւնս իմ․ եւ ես ուխտեմ ձեզ՝ որպէս և Հայր իմ

ուխտեաց ինձ զարքայութիւն . զի ուտիցէք եւ ըմպիցէք 'ի սեղան իմ յարքայութեանն իմում , եւ նստիցիք յերկոտասան աթոռ՝ դատել զերկոտասան ազգ Իսրայելի։

Քարոզ։

Վասն գտանելոյ մեզ զշնորհս և զողորմութիւն 'ի բարերար Տեառնէ մերմէ , զՏէր աղաչեսցուք։

Վասն փրկելոյ զմեզ 'ի զրպարտութենէ մարդկան և յորոգայթից սատանայի , զՏէր աղա։

Վասն ամենայն անձանց քրիստոնէից եւ տանց հաւատացելոց , զՏէր աղա։

Վասն որք 'ի լերինս յայրս և 'ի փապարս բնակեալ են սուրբ հարքն մեր , զՏէր աղա։

Վասն որք սաղմոսիւք եւ օրհնութեամբ կատարեն զամենայն ժամանակս կենաց իւրեանց , զՏէր աղա։

Վասն հոգւոցն։ Եւ եւս։ Զանձինս մեր։ Ողորմեաց։

Աղօթք։

Օրհնեալ ես տէր Աստուած ամենակալ արարիչ ամենայն արարածոց, դատաւոր կենդանեաց և մեռելոց. որ իշխանդ ես հոգւոց և մարմնոց։ Որ մարդասիրապէս գթայար 'ի տկարութիւնս , եւ

յայց ելեր մեզ կորուսելոցս. վերըստին կանգնեցեր զմեզ 'ի գլորմանէ մեղաց մերոց. եդեր զթըշնամին 'ի ներքոյ ոտից մերոց։ Խաչեալ 'ի վերայ փայտին կենաց՝ և խաչակցեալ զհնութիւնս մեր առ 'ի հերքումն ամենաչար պատրողին՝ իջեր 'ի գերեզման. աւերեցեր զդժոխս. եղեր առաջին պտուղ ննջեցելոց քոյով աստուածահրաշ յարութեամբդ. եւ վերածեր զստուերանմանեալքս 'ի խաւարի. զմահկանացուս անմահացուցեր յուսով 'ի ձեռն կենսաբեր յարութեան քոյ։ Ընկալ և այժմ զհոգի ծառայիս քոյ (այսանուն). քահանայիս 'ի բարի, և դասաւորեա՛ ընդ սուրբս քո։ Թող սմա, Տէր ողորմած, զյանցանս սորա զկամայ եւ զակամայ. զի դու ես քաւիչ մեղաց մերոց և կատարիչ

*խնդրուածայ, և ապաւէն յու-
սացելոց քոց։ Լուր մեզ, Տէր, և
ընկա՛լ զհոգի հանգուցելոյս մե-
րոյ քոյով զթութեամբ. և գրեա՛
զյիշատակ սորա անմոռաց յիշ-
մամբ առաջի սուրբ փառաց ա-
թոռոյ քոյ. զի սրբեալ 'ի մեղաց՝
սուրբ սրտիւ և անկեղծ հաւա-
տով՝ արդարութեամբ և անբը-
ծութեամբ արժանի եղիցի երկ-
նաւոր պարգևացդ ընդ ամենայն
սուրբս քո. և ընդ նոսին գոհա-
նալով փառաւորեսցէ զքեզ ընդ
Հօր և ընդ սրբոյ Հոգւոյդ. այժմ
և միշտ և յաւի։*

Ե°տուն ըմպե՜լ քեզ ըզլե՛ղին և ըզքա՛ցախն
'ի ծարաւին. որբե՛ր կամաւ զի քա՛ղցրացես
ճաշա՛կք պըտղյն դա՛ռնագունին. ըզդառ-
նութիւն թիւնաւո՛րին զոր 'ի մա՛րմնս հոգ-
ւոյս արկե՛ն, հե՛րքեա՛ 'ի բաց հանդե՛րձ ավլի՛ն,
և քա՛ղցրա՛ցի սէր քո՛ 'ի սմի՛ն։

Սաեղնեալ ծառդ մնհամբերին այնմ որ բնակեալ ՚ի մէջ դրախտին, փոխան բարձեր ընդփոյթ խաչին, ՚ի Գողգոթա հաներ տեղին. զնմ առ ՚ի մեղս անկեալ զոգի և ծանրագոյն բարձող բեռին, բարձ ՚ի յուսոյդ բառ ոչխարին, հան ՚ի յերկինս յուխտեալ տեղին :

Ի՜ յուրբաթու ժամ Երրորդին բեւեռեցար Տէր, ՚ի խաչին. ըմծեր զկապանս նախամարդծին, և կատարեցեր ընդթշնամին. զնս ամրացո ընդ հովանեաւ կենդանարար քո նշանին. Եւ ՚ի ծագելն յարուցեալ լուսաւորեա լուսով նորին :

Ի՜րանեալ ուսովալին բացեր ընդդուռն անդին դրախտին. ըստ հաւատոյ աւրատ նորին կատարեցեր ընդխնդրելին. տուր և ինձ, Տէր, ընդ նմին լսել ընդնոյն պատասխանին. այսօր ընդ իս էյես յանդին ՚ի հայրենիս քո անուշին :

Երգ. Ա՜հեղ խորհուրդ քահանայից բարգաւաճ կայ ՚ի բեմին. անուշին սուրբ սեղանոյն հուր չիջանի խաւար մերժի. որոտմեամբ հոգւոյն ուրախանայ կոյս թագուհին մեղաց լինի. օրհնեա : Հոգւոյն հանգուցելոց : Քրիստոս որդի Աս :

Եւ պետաւագրէն ղդբին ամենայն ժամանայն. և ապա ասեն.

Հայր մեր որ յերկինս։

---

Եւ տանին յարեւմտից կողմն՝ ասելով Շարական խաչի, Բկ։

Խաչըն կենարար որ եղեւ մեզ փրկութիւն. սովաւ ամենեքեան ըզքեզ բարեբանեմք։ Որ ՚ի Հօրէ լուսոյ լոյս ծագեցեր ՚ի յերկրի, և գաւազան զօրութեան հաստատեցեր. սովաւ։ Որ լուսափայլ ծագմամբ հրաշափառապէս մեզ ցուցաւ ՚ի յօգնութիւն ընդդէմ թշնամւոյն. սովաւ։

Եւ դարձուցեն զերեսն դէպ յարեւելս։

Եւ ասեն Սաղմոս ողբաձայն, ՃԼԳ։

Օրհնեսցէ զձեզ Տէր ՚ի Սիօնէ. այն որ բնակեալն է յԵրուսաղէմ։ Փոխ. Աստ օրհնեցէք"։

Ալէլուիա Օրթի։

Խաղաղութիւն ամենեցուն։

Սրբոյ աւետարանին Յիսուսի Քրիստոսի
որ ըստ Յովհաննու։ Զ. 35։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Ասէ ցնոսա. Ես եմ հացն կենաց. որ գայ

*առ իս՝ ոչ քաղցիցէ, եւ որ հաւատայ յիս՝ ոչ երբէք ծարաւեսցի։ Այլ ասացի ձեզ՝ եթէ տեսէք զիս, և ոչ հաւատայք։ Զամենայն զոր տայ ինձ Հայր՝ առ իս եկեսցէ, և որ գայ առ իս՝ ոչ հանից արտաքս։ Զի իջի ես յերկնից՝ ոչ զի զկամս իմ արարից, այլ զկամս այնորիկ որ առաքեացն զիս։ Այս են կամք Հօր իմոյ որ առաքեացն զիս, զի զամենայն զոր ետ ցիս Հայր՝ ոչ կորուսից 'ի նմանէ, այլ յարուցից զնա յաւուրն յետնում։ Այս են կամք Հօր իմոյ, զի ամենայն որ տեսանիցէ զՈրդի եւ հաւատասցէ 'ի նա, ընկալցի զկեանսն յաւիտենականս. եւ ես յարուցից զնա յաւուրն յետնում։*

Քարոզ։

*Վասն 'ի վերուստ խաղաղութեան եւ փրկութեան անձանց մերոց, զՏէր աղաչեսցուք։*

*Վասն լսելի լինելոյ տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց, զՏէր աղաչեսցուք։*

*Վասն քաւիչ և ներող լինելոյ Աստուծոյ 'ի վերայ մեղաց մերոց, զՏէր աղաչեսցուք։*

*Վասն թողլոյ մեզ զամենայն յանցանս մեր, ըզկամայ և զակամայ, զՏէր աղաչեսցուք։*

*Վասն զի մի' ընդ խոտանս գտանիցիմք յաւուրն պատասխանատուութեան, զՏէր աղաչեսցուք։*

*Վասն հոգւոցն։ Եւ եւս։ Զանձինս մեր։ Ողորմեաց։*

Աղօթք։

Յոյս կենաց և ընդունող աղօթից, տէր Աստուած մեր, կարդամք և պաղատիմք առաջի քոյ բարերարութեանդ. որ վասն յանցանաց մերոց խոնարհեցար 'ի փառաց քոց՝ զմերոյս զգեցար մարմին, զի զմեզ ազատեսցես 'ի յանցանաց մեղաց մերոց։ Որ եկիր 'ի խնդիր մոլորեալ ոչխարին՝ բառնալով 'ի վերայ փառաւոր ուսոյդ, զի զառողջութիւն շնորհեսցես վիրաւորելոյն։ Եւ որ կարծեալ իշխանն էր աշխարհի, խաչիւ եւ մահուամբ բարձեր 'ի միջոյ, եւ աւարեր խաղաղութիւն յերկինս և յերկրի։ Ի քո անարատ 'ի կողդ ընկալար զխոցումն գեղարդեանն. որ անպարտաւորելիդ էիր, պարտաւորեցար, զի զմեզս կողածնին չարչարանօք քո բարձցես, և նոյն

կենացն հուպ արասցես ։ Ննջեցեր ընդ մեռեալս. անմահդ անշնչացար՝ որ մեռելոց յոյսդ ես, և կնիք անլուծանելի մինչև յօր կրկնակի գալստեան քո. 'ի գերեզմանի եդար ընդ մեռեալսն կնքեալ վիմաւ, զի 'ի հողոյ 'ի նորոգութիւն կենաց եկեսցեն ։ Որ խոստացար զարարածս միանգամայն նորոգել և կեցուցանել, զպակասնեալն 'ի հողոյ առնել անապական, զոր աստուածային բանիւդ ասացեր զյարութիւն շնորհել մեռելոց ։ Եւ զփրկելիսն քո, որք հաւատային գալստեան քում առանց երկուանալոյ, և պահեցին զպատուիրանս քո, և հաղորդ եղեն քեզ 'ի չարչարանս և 'ի մահ, հրաւիրեսցես 'ի մահուանէ 'ի կեանս, 'ի խաւարէ յանբաւ և յանճառ լոյսդ, 'ի վայե-

լել զփառս արքայութեան քո. որպէս եւ ասացեր. թէ ուր ե՛սն եմ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի։ Արդ՝ յիշեա՛ զհոգի ծառայիս քո՝ որ ըստ մեծի հրամանացդ քոց յայսմ կենցաղոյս առ քեզ փոխեցաւ. և ելից զժամանակս կենաց աշխարհիս՝ դառնալ 'ի նոյն հող՝ ուստի ստեղծաւ, և եդաւ 'ի հող մահու՝ որ է՛ մայր մեր ամենեցուն եւ առագաստ մարմնոց մերոց։ Եւ 'ի միւսանգամ գալստեանն քո՝ յորժամ երեւիս փառօք եւ թագաւորութեամբդ քով՝ եւ 'ի նոյն հողոյ ստեղծանես անապական զհողացեալ մարմինս, արժանի՛ արա զսա լսել զձայն աւետաւոր յարութեան ընդ սրբոցն և առաքինեաց՝ որք լսցեն ընդ աջմէ մեծութեան փառաց քոց։ Աղաչեմք զքեզ եւ

խնդրեմք ՚ի քէն, մի՛ յանարժա-
նութիւնս մեր հայելով՝ արգել-
ցես զշնորհս մարդասիրութեան
քո․ այլ արասցես ըստ մեծի ո-
ղորմութեան քում։ Ջնջեա՛ զձե-
ռագիր յանցանաց հրաժարեալ
(այս անուն) քահանայիս․ և թող զմե-
ղըս սորա՝ զկամայ եւ զակամայ,
զգիտութեան և զանգիտութեան։
Բարեխօսութեամբ սուրբ Աստ-
ուածածնիդ անարատ կուսի եւ
մօր քո՝ եւ ամենայն սրբոց քոց,
յիշեա՛ զհրաժարեալ հոգիս, որ
առ քեզ փոխեցաւ։ Տէր և դա-
տաւոր, լո՛ւր պաղատանաց պաշ-
տօնէից ժողովրդեանս, և դասա-
ւորեա՛ զհոգի սորա ՚ի դասս ընտ-
րելոց քոց։ Աստուած և ստեղծիչ
ամենայնի, արա՛ զսա արժանի լսել
զձայն աստուածային փողոյ յա-
րութեան․ վերանորոգեա՛ վայել-

չապէս 'ի հողոյ ծնանիլ զնոյն մարմին, նորոգիլ 'ի փառս քո. զվտանգ մահու զոր թշնամին ապականեաց՝ բարձ 'ի սմանէ քո անուամբդ մկրտելոյս, որ 'ի մէնջ հրաժարեաց առ քեզ գալով. եւ թող զմեղս սորա, և թեթեւացո՛ զծանրութիւն բեռին մեղաց սորա։ Եւ թողութիւն շնորհեա՛ ամենայն ժողովրդեանս, զի օրհնեալքըս 'ի սմանէ և մկրտեալքս արժանաւորք լիցին արքայութեանդ երկնից։ Զմեղսաքաւիչ պատարագն մատուցեալ 'ի սմանէ յաղագս հոգւոց ննջեցելոցն, ընկալցի՛ս և թողութիւն շնորհեասցես ամենեցուն առ հասարակ։ Ո՛վ Տէր ամենայնի՝ Աստուած և արարիչ բոլորից, տո՛ւր մխիթարութիւն և սփոփանս ժողովրդեանս քահանայիս, որք լալով և

արտասուօք մորմոքին վասն հրա-
ժարման սորա։ Եւ զմեզ զհաւա-
տացեալքս 'ի քեզ օրհնեմ. զի
ամենասրբոյ Երրորդութեանդ
տացուք ամենեքեան զփառս և
զիշխանութիւն և զպատիւ. այժմ
և միշտ և յաւի։

Խաղաղութիւն ամենեցուն։
Աստուծոյ երկիրպագեսցուք։

Օրհնեալ ես տէր Աստուած, ա-
րարիչ ամենայն արարածոց, որ ա-
րարեր զերկինս և զերկիր և զա-
մենայն որ 'ի նոսա. և դարձեալ
առեր զհողն յերկրէ, և ստեղծեր
զմարդն կենդանի և խօսուն. և
եդեր զնա 'ի դրախտին փափկու-
թեան գործել զնա և պահել։ Եւ
յանցանել նորա զպատուիրանաւ
քո՝ մահու տիրացուցեր զնա, 'ի
դառնալ յերկիր ուստի առաւ։
Եւ իջանելովդ քո 'ի հող մահու՝

վերակոչեցեր զմեռեալ բնութիւնս 'ի կեանս և յանապականութիւն։ Եւ այժմ ըստ նոյնոյ աստուածային անդարձ վճռոյ՝ կոչեցեր զծառայս քո դառնալ 'ի հող յորմէ ստեղծաւ. զի 'ի միւսանգամ գալստեան քո 'ի հնչել տիեզերալուր բարբառոյ փողոյն ազդեցութեան՝ նորոգեսցի անմահութեամբ 'ի վերանալ 'ի կեանս անապական։ Վասն որոյ աղաչեմք զքեզ, մարդասէր Տէր, արա՛ այցելութիւն ծառայիս քո այսօրիկ 'ի յայնմ աւուրն մեծի՝ ներելով ամենից սխալմանց սորին, և բանալով սմա զմուտ յաւիտենական կենացդ։ Եւ մխիթարեա՛ զժողովուրդս քո՝ որք եկեալ եմք յուղարկել զսա զհետ ամենայն ննջեցելոց որբոց։ Եւ այժմ, մարդասէր Տէր, տո՛ւր համ-

բերութիւն սոցա, և մխիթարեա՛ զսոսա ողորմութեամբ քով, եւ զհոգի ծառայիս քոյ հանգո՛ ընդ սուրբս քո։ Աստուած յաւիտենական, որ արժանի արարեր զծառայս քո դառնալ 'ի հող ուստի ստեղծեր, հանգո՛ զհոգի սորա, և պահեա՛ անարատ իբրեւ զգանձս պատուականս աստուածութեանդ քոյ. զի ծառայ քո է՝ և հաւատացեալ է 'ի տէրդ մեր Յիսուս Քրիստոս. յիշեմք զքեզ, Տէր, 'ի վերայ հանգուցեալ քահանայիս այսօրիկ։ Յիշեա՛, Տէր, զհոգի սորա և խառնեա՛ 'ի դասս հրեշտակաց քոց եւ 'ի գունդս այնոցիկ՝ որք սիրեցին զօր երևելոյ գալստեան քոյ։ Եւ 'ի գոչել աստուածայինդ փողոյ երևմամբ սուրբ խաչին՝ 'ի լուսոյն պայծառասցի. տեսանելով սա զանանց լոյսն և զանապա-

կան գեղ կերպարանին · և զուարթերես կացցէ ընդ աջմէ ահաւոր բեմիդ, եւ առանց ամօթոյ տեսցէ զթագաւորդ երկնաւոր, և լուիցէ զձայնդ աւետաւոր թէ՝ եկա՛յք օրհնեա՛լք Հօր իմոյ, ժառանգեցէ՛ք զյաւիտենական ուրախութիւնն · եւ գոհանալով փառաւորեսցէ զՔեզ ընդ Հօր և ընդ Հոգւոյդ սրբոյ ·

այժմ և միշտ և յաւէ։

Եթէ վախճանեալն Առաջնորդ իցէ և տէր վիճակի, և կամ Կաթուղիկոս՝ զայս Աղօթս եւս կարդա։

Աստուած բազումողորմ, աստուած արարիչ մշտնջենաւոր, որ պատուեցեր զմարդն փառօք, և պսակեցեր շնորհօք և իմաստութեամբ, ընտրեցեր Հոգւովդ քով զմարգարէսն՝ և օծեր իւղով սրբութեան զքահանայս · կոչեցեր

զատաքեալն 'ի քարոզութիւն աւետարանի փառաց քոց, և յօրինեցեր զվարդապետս տեսուչս ժողովրդեանն քո՝ զոր փրկեցեր արեամբ Միածնիդ քո: Դու, Տէր, ընտրեցեր (զայս անուն) քահանայս, որ այցելութեամբ հովուեաց զժողովուրդս քո. և ըստ հրամանի տեսչութեան կոչեցեր 'ի հանգիստ քո՝ փոփոխմամբ ժամանակեայ մահու՝ որով առ քեզ գայ ամենայն մնեզի: Արդ՝ ահա այժմ հրաժարիմք և հրաժարեցուցանեմք արտասուօք, և աղաչեմք 'ի մէջ եկեղեցւոյ քոյ սրբոյ. որպէս ետուր զսա մեզ 'ի սփոփանս եւ 'ի վայելչութիւն հոգւոց մերոց, որպէս պահեցեր զմեզ աղօթիւք սորա 'ի փորձութեանց յերեւելեաց և յաներեւութից, տուր մեզ և յաջորդ ող սորին աթոռոյս

ընտրեալ հովիւ՝ եւ պաշտօնեայ անբիծ և ուղղափառ. և մի՛ Թողուր զվիճակ հօտի քոյ ՚ի նախախնամող վերակացութենէ Հոգւոյդ սրբոյ ։ Եւ զհոգի սորա բնակեցո՛ ՚ի պատրաստեալ օթեւանս կամարարաց քոց. և զմարդկօրէն սխալանս սորա անտես արա ։ Զի դու ես քաւիչ մեղաց. որ միայն ունիս զիշխանութիւն արձակել զվտանգեալս ՚ի բանսարկուէն ։ Պայծառացո զյիշատակ սորա ՚ի մէջ եկեղեցւոյ քոյ և ժողովրդեանս, և առաջնորդեա սմա Հոգւովդ քով սրբով ՚ի յերկիր ուղիղ՝ որ հանգուցանես զտարժանեալս ՚ի մարմնի ։ Զի դու ես յարութիւն եւ կեանք ամենեցուն. և քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւի ։

Բարբառելովդ զէլս էլին հիմունք երկրի տատանէին, և վարագոյր հին օրինին վերուստ 'ի վայր պատառէին. արդ ընդ վիմացն որ շարժէին, շարժեա զանշարժ սիրտս 'ի բանին. ընդ պատառել վարագուրին զիմ պատառեա ըզգիր պարտին։

Արեգակն լոյս քող արկեալ խաւարանայր միջօրէին. և գերեզմանք բանային, մարմինք սրբոցն յառնէին. ընդ խաւարել լուսաւորացն մաքրեա յինէն զգործ խաւարին. ընդ մեռելոցն որք յառնէին, կանգնեա զմեղօք մեռեալ հոգիս։

Նոր սիրոյ պատուիրանին գործով լցող եղեր բանին, աղօթելով առ Հայր յերկինս Թողուլ ըզմեղս որ 'ի խաչին. ինձ որ հոգւովս հաւատացեալ երկրպագեմ քեզ միածին, Թող ըզլուծումն հրամանին, մի յիշեսցին մեղքն առաջին։

Սարսեցին սանդարամետք 'ի յաւանդելն առ Հայր զհոգիդ, որ 'ի դժոխս իջեր ներքին 'ի բանտ մահու և խաւարին. կապեալ զիշխանն մահածին հաներ զհոգիսն որ 'ի բանտին. և զիս հանցես, Տէր, ընդ նոսին բանտէ մեղաց աղջամղջին։

Երգ. Մովսէս աստուածախօս և Ահարոն ըղ Ղեւտացին, մարգարէքն Իսրայէլի եւ քահանայք հին օրինին, յառաջագոյն մեզ ծանուցին եւ ըղգալուստ սուրբ միածնիդ, 'ի փրկութիւն, մեզ յայտնեցին յանպատմ կերպարանին. օղոր:

Օրհնութիւն Տեառնագրութեան:

Հոգւոցն հանգուցելոց: Քրիստոս որդի Ած: Հայր մեր որ յերկինս:

---

Յետ այսորիկ սկսանին ասել զերեք Ամբիծն մինչեւ ցիշխանք հալածեցինն: Եւ բառնան քահանայքն և տանին 'ի հանգըստեան վէմն. ասելով Շարական, Դ.Ձ:

Այսօր ժողովեալ սրբոցն 'ի միասին երանելի առաքելքն եւ սուրբ կուսանքն զանհաղգեստուք պայծառացեալք լուսանիւն ըղլապտերս իւրեանց. եւ միաձայնեալ ասէին օրհնեալ ես ամենօրհնեալդ 'ի կանայս: Այսօր դնելով ըղսուրբ կոյսն տադրանին գերեզմանին, սպասէին եւ ակնունէին Տեառն իւր իւրքնին գոլով, գեր 'ի վերոյ տեսեալ զարարիչն եկեալ բազում հրեշտակօք. եւ նոցա միա: Այսօր տեսեալ

ըզսուրբ կուսին թռուցեալ յօդս, և ամ-
պեղէն կառօքն 'ի վեր համբարձեալ յեր-
կինս. մտանելով յերկնային խորանն ընդ
իմաստուն կուսանսն. Եւ նոյն: Այսօր ընդ
բազմաչեայ քրովբէսն և ընդ վեցթեւեան
սրովբէսն մրցանելով յեօթնաստեղեան խո-
րանսն. տեսանելով զանազան աթոռսն զոր
պատրաստեալ է քեզ տէրն Յիսուս. Երգեմք
և մեք ասելով. Օրհ:

Այսօր զպատիճըն յանցանաց նախամօրն
ըզկուսութեանցն մայրն փոխադրեաց
բանն աստուած, յերկնային դասելով
յաստուածակերտ խորանն և յաննպատուած
'ի կեանս. վասն որոյ հրճուողական ձայ-
նիւ քեզ երգէ եկեղեցի սուրբ ըզընտիր
զօրհնաբանութիւն: Այսօր տիրամայր սըր-
բուհին կոյսն աւանդեալ ըզսրբբանեալ հո-
գին 'ի ձեռսն հրեշտակական դասուցն, որ-
պէս գերարփի փայլեալ, ահեղիցն նը-
մանեալ հրեղինաց դասուցն. Վասն: Այսօր
վերհամբարձեալ ըզմաքրական մարմինն աս-
տուածամօր կուսին անմարմին զուարթ-
նոցն, ամփոփեալ 'ի տեղի գերակայիցն յերե-
ւելի ըզգայութեանցս անձառելիցն մտանել

հաղորդս․ վասն։ Այսօր յուսապատար խըն-դութեամբ և յաւէժաբար հընչմամբ նը-ւագեմք քեզ հողեղէնքս ընդ հրաշուն սեռոյն, տօնախմբելով զյիշատակ կուսի աղախնոյ և մօր քո․ վասն որոյ։

Եւ ապա զհարցն ասէին իւր սարօքն․ և թէ ոչ բաւակա-նացի․ զՀանգստեան ԳՋ․ Շարականն ևս ասեն․ որքան պիտոյ է․ Յորժամ հարկանի փոց փաշատեան․ (և այլն որ զկնի)։ Եւ ՚ի Ճանապարհին ՚ի չորս տեղիս հանգիստ առնեն և չորս փոխ Աւետարան կարդան․

Հանգիստ առաջին։ Օրթի։

Խաղաղութիւն ամենեցուն․

Սրբոյ աւետարանիս Յիսուսի քրիստոսի
որ ըստ Մատթէոսի։ ԺԱ․ 25․

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Յայնմ ժամանակի պատասխանի ետ և ասէ․ Գոհանամ զքէն, Հայր, Տէր երկնի և երկրի․ զի ծածկեցեր զայս յիմաստնոց և ՚ի գիտնոց, և յայտնեցեր տղայոց․ այո, Հայր, զի այսպէս հաճոյ եղեւ առաջի քո։ Ամենայն ինչ տուաւ ինձ ՚ի Հօրէ իմմէ։ Եւ ոչ ոք ճանաչէ զՈրդի՝ եթէ ոչ Հայր, և ոչ զՀայր ոք ճանաչէ՝ եթէ ոչ Որդի և ում Որդին կամիցի յայտնել։ Եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք,

և ես հանգուցից զձեզ. առէք զլուծ իմ 'ի ձեզ, և ուսարուք յինէն՝ զի հեզ եմ և խոնարհ սրտիւ, եւ գտջիք հանգիստ անձանց ձերոց, զի լուծ իմ քաղցր է, եւ բեռն իմ փոքրոգի :

Հոգւոյն հանգու : Հայր մեր որ յերկինս :

---

Հանգիստ երկրորդ : Օրթի :

Խաղաղութիւն ամենեցուն :

Սրբոյ աւետարանին Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մարկոսի : Դ. 26 :

Տէրն մեր Յիսուս Քրիստոս :

Եւ ասէր. Այսպէս է արքայութիւն Աստուծոյ, որպէս զի այր մի արկանիցէ սերմանիս յերկիր, և ննջիցէ և յառնիցէ զցայգ և զցերեկ. և սերմանիքն բուսանիցին և աճիցեն, եւ նա ոչ գիտէ՝ թէ երկիրն ինքնին բերէ զպտուղ. նախ զխոտն, և ապա զհասկն, և ապա ցորեան ատոք 'ի հասկին. այլ յորժամ տայցէ զպտուղն, վաղվաղակի առաքէ մանգաղ, զի հասեալ են հունձք : Եւ ասէր. Ո՞ւմ նմանեցուսցուք զարքայութիւնն Աստուծոյ, կամ որո՞վ առակաւ առակեսցուք զնա : Որպէս հատն մանանխոյ՝ որ յորժամ սերմանիցի յերկրի, փոքրագոյն է քան զամենայն սերմա-

նիս՝ որ են յերկրի , եւ յորժամ սերմանիցի , բուսանի և լինի մեծ քան զամենայն բանջար և արձակէ ոստս մեծամեծս , մինչեւ բաւական լինել ընդ հովանեաւ նորա Թռչնոց երկնից բնակել ։ Եւ այնպիսի առակօք խօսէր ընդ նոսա զբանն , որպէս կարող լինէին լսել . եւ առանց առակի ոչ ինչ խօսէր ընդ նոսա , բայց առանձին աշակերտացն իւրոց մեկնէր զամենայն ։

Հոգւոցն հանգու ։ Հայր մեր որ յերկինս ։

---

Հանգիստ երրորդ ։ Օրթիւ ։

Խաղաղութիւն ամենեցուն ։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի
որ ըստ Ղուկասու ։ ի . 34 ։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ։

Պատասխանի ետ նոցա եւ ասէ . Որդիք աշխարհիս այսորիկ կանայս առնեն եւ արանց լինին , իսկ որ արժանի լինիցին այնմ աշխարհի հասանել եւ յարութեանն որ 'ի մեռելոց , ոչ կանայս առնեն և ոչ արանց լինին ։ Քանզի եւ ոչ մեռանել եւս կարեն , զի հաւասար Հրեշտակաց են՝ և որդիք Աստուծոյ . քանզի յարութեան որդիք են ։ Այլ զի յառնեն մե-

*ռեալք, և Մովսէս գուշակեաց 'ի մորենւոջն, որպէս ասէ զտեառնէ Աստուծոյ Աբրահամու, և՛զԱստուծոյ Սահակայ, և զԱստուծոյ Յակովբայ: Եւ Աստուած չէ մեռելոց՝ այլ կենդանեաց. զի ամենեքին նմա կենդանի են: Պատասխանի ետուն նմա ոմանք 'ի դպրացն՝ եւ ասեն. Վարդապետ, բարւոք ասացեր: Եւ ոչ եւս ոք իշխէր հարցանել զնա և ոչինչ:*

*Հոգւոյն հանգուցելոց: Քրիստոս որդի Ա.:*

---

Հանգիստ չորրորդ: Օրհն.:

Խաղաղութիւն ամենեցուն:

Սրբոյ աւետարանին Յիսուսի Քրիստոսի
որ ըստ Յովհաննու: Զ. 35:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս:

*Պատասխանի ետ և ասէ ցնոսա. Ամէն ամէն ասեմ ձեզ՝ ոչ կարէ Որդի մարդոյ առնել յանձնէ և ոչինչ, եթէ ոչ տեսանիցէ զՀայրն զի առնէ. զի զոր նոյն առնէ, զնոյն և Որդին նմին նման գործէ: Զի Հայր սիրէ զՈրդի, և զամենայն ինչ ցուցանէ նմա՝ զոր ինքն առնէ. և մեծամեծս եւս քան զսոյնս ցուցանէ նմա զգործս, ընդ որ դուքդ զարմանայք: Զի որպէս Հայր յարուցանէ զմեռեալս և կենդանի*

առնէ, նոյնպէս և Որդի զորս կամի կենդանի առնէ։ Եւ ոչ եթէ Հայր դատի զոք, այլ զամենայն դատաստանն ետ Որդւոյ իւրոյ. զի ամենեքեան պատուեսցեն զՈրդի, որպէս պատուեն զՀայրն. որ ոչ պատուէ զՈրդին, ոչ պատուէ զՀայր զառաքիչն նորա։

Հոգւոյն հանգուցելոց։ Հայր մեր որ յերկինս։

Ապա ասասցեն Շարական Հանգստեան. ԴԶ։

Ի հանգիստ քո Տէր, ուր ամենայն սուրբք քո հանգչին. հանգո զհոգիս ծառայից քոց ընդ սուրբս քո մարդասէր։ Դու Աստուած որ իջեր 'ի դժոխս, զերկունըս մահու լուծեր, ըզկապեալսն արձակեցեր. և զհոգիս ծառայից քոց հանգո ընդ։ Ընդ հոգւոյն արդարոց կատարելոց և զհոգիս ծառայից քոց հանգո ընդ։

Եւ յորժամ մերձենան 'ի գերեզմանն՝ ասեն։

Մերձեցայ ես 'ի դուռն գերեզմանի, եւ եհաս ինձ ժամանակ մերձանել 'ի յարգանդ երկրի յորմէ առեղծեալ եմք ամենեքեան. բժիշկ իմաստուն և ճարտարա-

պետ , ընդունելեա զհոգւոյ իմ զհիւանդութիւն . արարող եւ յոյս փրկութեան մերոյ : Եղիցին ձեռքն քո պահապան անձին իմոյ , եւ աջ քո բարի առաջնորդեսցէ ինձ 'ի յարդարութիւն . բըժիշկ : Բըղխեսցես առ իս ըզգութ մարդասիրութեանդ . եւ յաղբերէդ կենաց ըմպեսցես զմեղս անձին իմոյ . բըժիշկ : Կեցցէ անձն իմ ծըհնեսցէ ըզքեզ զամենայն աւուրս կենաց իմոց . եւ առ քեզ ապաւինիմ հոգի եւ բանաւոր հօտի , դարձո զմոլորեալս 'ի հօտ քո Քրիստոս . բըժիշկ :

Եւ եդեալ զգագաղն յայն գերեզմանին , եւ պար առեալ շուրջանակի՝ ասեն կանոնագլուխ , Դզ :

Իշխանք հալածեցին զիս 'ի նանիր . ալէլուիա . ալէլուիա . եւ 'ի բանից քոց երկեաւ սիրտ իմ ։
Ալէլուիա ։
Ցնծացայ ես 'ի բանս քո , որպէս այն՝ որ գտանէ աւար բազում ։ Ալէլուիա ։
Զմեղս ատեցի եւ անարգեցի , եւ զօրէնս քո սիրեցի ։ Ալէլուիա ։
Եօթն անգամ յաւուր օրհնեցից զքեզ , վասն իրաւանց եւ արդարութեան քո ։ Ալէլուիա ։
Խաղաղութիւն բազում է այնոցիկ , ոյք սիրեն

զօրէնս քո, և ոչ գոյ 'ի նոսա գայթակղութիւն։
Ալէլուիա։

Սպասեցի փրկութեան քում, Տէր, և զպատուիրանս քո սիրեցի։ Ալէլուիա։

Պահեաց անձն իմ զվկայութիւնս քո, և սիրեաց զնոսա յոյժ։ Ալէլուիա։

Պահեցից զպատուիրանս եւ զվկայութիւնս քո. զի ամենայն ճանապարհք իմ առաջի քո են։ Ալէ"։

Մերձեսցին խնդրուածք իմ առաջի քո, Տէր. ըստ բանի քում իմաստուն արա զիս։ Ալէ", ալէ", ալէ"։

Մտցեն աղօթք իմ առաջի քո, Տէր, և բանիւ քով փրկեա զիս։ Ալէ"։

Բղխեսցեն շրթունք իմ զօրհնութիւնս քո, յորժամ ուսուսցես ինձ զարդարութիւնս քո։ Ալէ"։

Խօսեսցի լեզու իմ զբանս քո. զի ամենայն պատուիրանք քո արդարութեամբ են։ Ալէ"։

Եղիցի ձեռն քո 'ի կեցուցանել զիս, զի զպատուիրանս քո ընտրեցի։ Ալէ"։

Ցանկացայ փրկութեան քում, Տէր, և օրէնք քո խօսք իմ էին։ Ալէ"։

Կեցցէ անձն իմ օրհնեսցէ զքեզ, եւ իրաւունք քո օգնեսցեն ինձ։ Ալէ"։

Մոլորեցայ ես որպէս զոչխար կորուսեալ. խնդրեա զծառայս քո, զի զպատուիրանս քո ես ոչ մոռացայ։ Ալէ"։

Փառք Հօր և։ Այժմ և։ Ալէ"։

Սարկաւագն. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղա։

Քահանայն. Օրհնութիւն և փառք Հօր և Որդ։

Եւ ––ւէն Էրէ․ Շարական Աւագ օրհնութեան․ Դ.կ ։

Ի վերանալ յինէն աւուրց իմոց, Տէր, օգնեա ինձ միայն մարդասէր։ Զչարչարանս խաչին և մահու յանձն առեր, Տէր, օգ.։ Բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնի եւ միշտ կուսի, Տէր օգ.։

Ամենասուրբ երրորդութեանդ երկրպագեն զօրք երկնայինք, և սոսկծուածք անճառ բառ ձեռամբ փառաւորելով զտէրութիւնդ քո հանապազ։ Ամենազօր խաչին քո, Տէր, երկրպագեսցուք․ որով բարձեր ըզդատակնիք մահու քո մարդածնոյս․ փառաւու ։ Ամենօրհնեալ Աստուածամայր Մարիամ, քերովբէական աթոռ աղաչեա մերոյ ողորմե-նութեան․ զոր երանեցին ամենայն ազինք հանապազ։

Մարգարէն 'ի փորոյ կիտին աղաղակէր և ասէր, Տէր, նայեաց յիս եւ մի տար զիս հրզօրիս այս։ Զայն բարձի 'ի խորոց անդնդոց առ աստուած ողորմած․ եւ ձայն աղաղակի իմոյ հասցէ 'ի լսելիս քո Տէր։ Բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնի եւ միշտ կուսի աղաչեմ․ Տէր,

փրկեա զմս ՚ի յորոգայթէ աներևոյթ թշնամւոյն ։

Քարոզ․

Վասն ցօղելոյ ՚ի մեզ զցօղն ողորմութեան, և փրկելոյ զմեզ ՚ի հրոյն յաւիտենից․ զՏէր աղաչեսցուք ։

Վասն երևելոյ մեզ ճառագայթից սուրբ խաչին, որ փայլէ յարևելից ՚ի միւսանգամ գալստեանն Տեառն․ զՏէր աղա ։

Վասն ահագին գոչման փողոյն աւետաւոր հրեշտակին՝ որ ժողովէ զմարդիկ ՚ի կեանսն յաւիտենից․ զՏէր աղա ։

Վասն լսելոյ սմա զձայն երանաւէտ փողոյն որ ասէ՝ եկա՛յք օրհնեալք Հօր իմոյ՝ ժառանգեցէք զարքայութիւնն․ զՏէր աղա ։

Վասն հոգւոյն ։ Եւ ևս ։ Զանձինս մեր ։ Ողորմեաց ։

Աղօթք ։

Տէր Աստուած մեր և յոյս, որ նստիս յաթոռս քրովբէական, և օրհնիս ՚ի դասուց հրեշտակաց և փառաբանիս ՚ի մարդկանէ․ և ծառայեալ անուն քո ընդ ամենայն տիեզերս, եւ ընդունիս զթու-

թեամբ ղաղաչանս մարդկան։ Եւ այժմ մարդասիրութեամբ քով թո՛ղ զյանցանս սորա զծածուկ եւ զյայտնի. զի ոչ ոք է առանց մեղաց 'ի վերայ երկրի. այլ դու՝ որ մեղաց սրբիչ ես եւ քաւիչ, թո՛ղ զմեղս եւ քաւեա՛ զանօրէնութիւնս սորա։ Եւ վասն զի կացուցեր զսա քահանայ և հովիւ ժողովրդեան քում, ուստի՝ զորս զմեղս 'ի ժողովրդենէ քումմէ խնդրուածօք խնդրեալ իցէ սորա 'ի քէն 'ի ձեռն սուրբ պատարագին զենման Որդւոյ քո 'ի վերայ սրբոյ սեղանոյն առ 'ի քաւել, հաշտեա, Տէր, և թող նոցա՝ որ անկարօտդ ես յամենայնի։ Եւ զանուն սորա գրեա՛ 'ի դպրութեան կենաց, և զհոգի սորա ընկա՛լ 'ի խորանս սրբոց քոց. զի և մեք գոհանալով փառաւորեսցուք

զքեզ ընդ Որդւոյ եւ ընդ սրբոյ Հոգւոյդ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Խաղաղութիւն ամենեցուն։
Աստուծոյ երկիրպագեսցուք։

Տէր Աստուած լուսաւորիչ հոգւոց և պահապան մարմնոց. որ և զմարմինս արանց արդարոց փառաւորեցեր՝ որք զքեզ բարեպաշտութեամբ փառաւորեցին. ցուցանելով ամենեցուն՝ եթէ ոչ միայն յոգիս, այլ և 'ի մարմինս արդարոց յայտնին զօրութիւնք, առ 'ի բարեպաշտիլ առ քեզ։ Եւ այժմ աղաչեմք, զքեզ, մարդասէր Տէր և բարերար, ընկա՛լ զաղաչանս ժողովրդեան քոյ. և դասաւորեա՛ 'ի դասս սրբոց քոց առաքելոց, մարգարէից և մարտիրոսաց։ Եւ զմեզ զամենեսեան զհաւատացեալքս 'ի քեզ արժանաւորեա՛ փառա-

ւորել զՀայր եւ զՈրդի եւ զսուրբ Հոգին. այժմ եւ միշտ եւ յաւի-տեանս յաւիտենից. ամէն։

Յետ այսորիկ սկսանին ասել՝ Սաղմոս ողբաձայն, ՃԺԴ։

Դա՛րձ անձն իմ ՚ի հանգի՛՛ստ քո՛՝ զի Տէր կոչեա՛ց զքե՛զ։

Սիրեցի՛ զի լուիցէ Տէր զձայն աղօթից իմոց. զի խոնարհեցո՛յց զունկն իւր առ իս, եւ ես յաւուրս իմ կարդացի՛ առ նա։

Շրջեցա՛ն զինեւ երկունք մահու, եւ վիշտք դժոխոց գտի՛ն զիս։

Ձնեղութի՛ւն եւ զանձկութիւն գտի, եւ զա-նուն Տեառն կա՛րդացի։

Ո՛ Տէր, փրկեա զանձն իմ. ողորմած Աստուած մեր, ողորմի եւ պահէ զտղա՛յս Տէր։

Ե՛ս խոնարհ եղէ՝ եւ Տէր կեցո՛յց զիս։

Դա՛րձ անձն իմ ՚ի հանգիստ քո՛, զի Տէր կոչեա՛ց զքե՛զ։

Ընթերցուածս ՚ի չորրորդ Թագաւորութեանց։ ԺԳ. 14։

Եւ Եղիսէէ հիւանդացաւ հիւանդութիւն, որով եւ մեռաւ իսկ. եւ էջ առ նա Յովաս ար-քայ Իսրայելի, եւ ելաց ՚ի վերայ երեսաց

նորա՝ և ասէ. Հայր՝ Հայր, կառքդ Իսրայելի և հեծեալք նորա: Եւ ասէ ցնա Եղիսեէ. Ա՛ռ դու զաղեղն քո և զնետս քո: Եւ առ զաղեղն և զնետս: Եւ ասէ ցարքայն Իսրայելի. Մուտ ընդ աղեղնդ ձեռօք քովք: Եւ եմուտ ընդ աղեղնն ձեռօք իւրովք. և եդ Եղիսեէ զձեռն իւր ՚ի վերայ ձեռաց արքային, և ասէ. Բաց զպատուհանդ որ է ընդ արեւելս: Եւ եբաց: Եւ ասէ Եղիսեէ. Ձգեա՛: Եւ ձգեաց: Եւ ասէ. Նետ փրկութեան Տեառն, և նետ փրկութեան ընդդէմ ասորւոց. եւ հարցես զԱսորիս յԱփէկ մինչև ՚ի սպառ: Եւ ասէ ցնա Եղիսեէ. Ա՛ռ դու քեզ նետս: Եւ առ: Եւ ասէ ցարքայն Իսրայելի. Զգեա և հա՛ր զգետինդ: Եւ եհար արքայն երիցս և եկաց. և տրտմեցաւ ՚ի վերայ նորա այրն Աստուծոյ, և ասէ. Եթէ հարեալ էիր հնգիցս կամ վեցիցս, յայնժամ հարկանէիր զԱսորիս մինչև ՚ի սպառ. և արդ երիցս հարցես զԱսորիս: Եւ մեռաւ Եղիսեէ և թաղեցին զնա: Եւ մեկնակաղէնքն Մովաբու եկին յերկիրն ՚ի գալ տարւոյն. և եղեւ ՚ի թաղել նոցա զայր մի, և ահա տեսին զմեկնակաղէնսն և ընկեցին զայրն ՚ի գերեզմանն Եղիսէի. եւ գնաց եւ մերձեցաւ յոսկերսն Եղիսէի և կենդանացաւ, և կանգնեցաւ ՚ի վերայ ոտից իւրոց:

Ընթերցուած յԱռակաց ։ Իմաս․ Բ․ 23․

Զի Աստուած հաստատեաց զմարդն յանեղծութեան, և 'ի պատկեր խւրոյ բարերարութեանն արար զնա ։ Իսկ նախանձու բանսարկուին եմուտ մահ յաշխարհ, և փորձեն զնա՝ որ նորա վիճակին սակի են ։ Բայց ոգիք արդարոց 'ի ձեռին Աստուծոյ են, եւ ոչ մերձեսցի 'ի նոսա մահ ։ Թուեցան յաչս անզգամոց թէ մեռան, և համարեցան չարչարանք ելք նոցա՝ և գնալն 'ի մէնջ բեկումն, բայց նոքա են 'ի խաղաղութեան ։ Զի թէպէտ և յաչս մարդկան տանջեցան, այլ յոյս նոցա լի է անմահութեամբ ։ Եւ սակաւիկ ինչ խրատեալք՝ գտցեն զմեծ բարութիւն․ զի Աստուած փորձեաց զնոսա, և եգիտ զնոսա իւր արժանիս ։ Իբրեւ զոսկի 'ի բովս քննեաց զնոսա, և որպէս զողջակէզ զոհի ընկալաւ զնոսա ։ Ի ժամանակի այցելութեան իւրեանց պայծառասցին ։

Ընթերցուած յԵսայեայ մարգարէէ ։ Կ․ 21 ։

Այսպէս ասէ Տէր․ և կատարեսցին աւուրք սգոյ քոյ․ և ժողովուրդ քո ամենեքին արդար, և յաւիտեանս ժառանգեսցեն զերկիր, պահել զնորատունկ գործոյ ձեռաց իւրեանց 'ի փառս ։ Սակաւաւորն հազարաւոր եղիցի, և կրտսերն յազգ մեծ․ զի ես Տէր ընդ ժա-

մանուկս ժամանակս ժողովեցից զնոսա։ Հոգի Տեառն 'ի վերայ իմ՝, վասն որոյ եւ օծ իսկ զիս. աւետարանել աղքատաց առաքեաց զիս, բժշկել զբեկեալս սրտիւք, քարոզել գերեաց զթողութիւն եւ կուրաց տեսանել, կոչել ամ Տեառն ընդունելի եւ օր հատուցման Աստուծոյ մերոյ, մխիթարել զամենայն սգաւորս, տալ սգաւորաց Սիոնի փառս. փոխանակ մոխրոյն՝ օծումն ուրախութեան, և սգաւորացն հանդերձ փառաց՝ փոխանակ ոգւոցն վհատութեան։ Եւ կոչեսցին նոքա ազգք արդարութեան՝ տունկ Տեառն 'ի փառս, եւ շինեսցեն զաւերակն յաւիտենից, եւ զյառաջագոյն աւերեալսն կանգնեսցեն, և նորոգեսցեն զքաղաքս աւերեալս ազգաց մինչեւ յազգս։ Եւ եկեսցեն օտարածինք հովիւք խաշանց քոց, և այլազգիք մաճկալք և այգեգործք քո։ Բայց դուք՝ քահանայք Տեառն կոչեսջիք, պաշտօնեայք Աստուծոյ մերոյ անուանեսջիք, զզօրութիւն ազգաց կերիջիք, և մեծութեամբ նոցա սքանչելի լինիջիք։ Փոխանակ ամօթոյ ձերոյ՝ կրկին ուրախութիւն, և փոխանակ անարգանաց ձերոյ՝ ցնծութիւն, եւ ապա զերկիրն յերկրորդում ժառանգեսցեն, և ուրախութիւն յաւիտենից 'ի վերայ գլխոյ նոցա։

Ընթերցուած յԵրեմիայ մարգարէէ ։ Ողբ. Գ. 18 ։

Յիշեցի յաղքատութենէ իմմէ եւ 'ի հալածանաց իմոց . դառնութիւն և բարկութիւն յուշ եղեն ինձ միանգամայն . ձանձրացաւ յիս անձն իմ. զայս ինչ կարգեցի 'ի սրտի իմում, վասն այսորիկ համբերից նմա ։ Ողորմութիւնք Տեառն անսպառ են, եւ ոչ նուազեն գթութիւնք նորա . 'ի նորոգումն առաւօտու բազմանայ ճշմարտութիւն քո, Տէր . ասաց անձն իմ՝ բաժին իմ է նա, վասն այնորիկ ակնկալայց նմա ։ Բարերար է Աստուած 'ի վերայ համբերողաց իւրոց . զի անձն որ խնդրէ զնա՝ բարի է որ համբերէ նմա ճշմարտութեամբ, եւ հանգչի նա 'ի փրկութեան Տեառն ։ Բարի է մարդոյ առնուլ ըզլուծ խոնարհութեան 'ի մանկութենէ իւրմէ ։ Նստցի միայն լռիկ 'ի տան իւրում, զի առձամբ իւրով առ յանձն զլուծ քո ։ Տացէ հողոյ զբերան իւր, վասն զի կայ յոյս . Կարդացի զանուն քո, Տէր, 'ի գբոյ տառապանաց, և դու լուար ձայնի իմում . մի թաքուցաներ զանուն քո 'ի խնդրուածաց իմոց, այլ ընդարձակեա ինձ և փրկեա զիս . դու յօգնել ինձ մերձեցար, և ասացեր՝ բամ յորում աւուր կարդացես առ իս, մի երկնչիս ։ Դատեա,

Տէր, զդատաստան անձին իմոյ. փրկեցեր զկեանս իմ, տեսեր զխռովութիւնս իմ. դատեցար, Տէր, զդատաստանս իմ, տեսեր զամենայն իրաւունս իմ, հայեցար յամենայն խորհուրդս իմ:

Պօղոսի առաքելոյն 'ի Կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուածս: ԺԵ. 51:

Արդ խորհուրդ մի ասեմ ձեզ. ամենեքեան ննջեսցուք, այլ ոչ եթէ ամենեքեան: Նորոգեսցուք յանկարծակի յական թօթափել 'ի փող յետին. քանզի փող հարկանի, եւ մեռեալք յարիցեն առանց ապականութեան, և մեք նորոգեսցուք: Զի պարտ է ապականութեանս այսմիկ զգենուլ զանապականութիւն, եւ մահկանացուիս այսմիկ զգենուլ զանմահութիւն: Այլ յորժամ մահկանացուս այս զգեցցի զանմահութիւն, և ապականութիւնս զանապականութիւն, յայնժամ եղիցի բանն որ գրեցաւ, եթէ ընկլաւ մահ 'ի յաղթութիւն: Ո՞ւր է, մահ, յաղթութիւն քո. ո՞ւր է, դժոխք, խայթոց քո. խայթոց մահու՝ մեղք են, և զօրութիւն մեղաց՝ օրէնք: Այլ շնորհք Աստուծոյ՝ որ ետ մեզ զյաղթութիւն 'ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. որում փառք յաւիտեանս, ամէն:

*Ալէլուիա. Սաղմոս Հ: Ի քեզ, Տէր, յուսացայ մի՛ ամաչեցից յաւիտեան՝ յարդարութեան քում փրկեա՛ և ապրեցո՛ զիս:*

*Ալէլուիա Օրհնի:*

*Խաղաղութիւն ամենեցուն:*

Սրբոյ աւետարանին Յիսուսի Քրիստոսի
որ ըստ Մատթէոսի: ԺԹ. 27:

*Առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս:*

*Յայնժամ պատասխանի ետ Պետրոս և ասէ ցնա. Ահաւասիկ մեք թողաք զամենայն և եկաք զհետ քո, արդ զի՞նչ լինիցի մեզ: Ասէ ցնոսա Յիսուս. Ամէն ասեմ ձեզ. զի դուք որ եկիք զհետ իմ, 'ի միւսանգամ գալստեան՝ յորժամ նստցի որդի մարդոյ յաթոռ փառաց իւրոց, նստջիք եւ դուք յերկոտասան աթոռ՝ դատել զերկոտասան ազգն Իսրայէլի: Եւ ամենայն որ ոք եթող զտուն կամ զեղբարս կամ զքորս կամ զհայր կամ զմայր կամ զկին կամ զորդիս կամ զագարակս վասն անուան իմոյ, հարիւրապատիկ առցէ՝ և զկեանսն յաւիտենականս ժառանգեսցէ: Բազումք եղիցին առաջինք յետինք, և յետինք առաջինք:*

*Քարոզ:*

*Վասն 'ի գիշերի և 'ի տունջեան և յամենայն ժամու խօսել մեզ զբանն Տեառն, զՏէր աղաչեսցուք:*

Վասն չանկանելոյ մեզ 'ի փորձութիւն, որում ոչ կարեմք հանդուրժել, զՏէր աղա։

Վասն անբիծ և անդատապարտ կալ մեզ առաջի ահեղ ատենին Քրիստոսի, զՏէր աղա։

Վասն առաջնորդելոյ մեզ 'ի նաւահանգիստն կենաց անվախճանից, զՏէր աղա։

Վասն արժանի լինելոյ մեզ վերին կոչմանն եւ երկնից արքայութեանն, զՏէր աղա։

Վասն հոգւոցն։ Եւ եւս։ Զանձինս մեր։ Ողորմեաց։

Աղօթ+ ։

Փառք քեզ Թագաւոր յաւիտենական Աստուած՝ և արարող բոլորից գոյութեանց, Հայր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. քեզ խոնարհեցուցանեմք զծունր սըրտից մերոց ամենայն միաբան հաւատացեալքս, և աղաչեմք զանբաւ ողորմութիւն քո։ Հանգո՛ զհոգի ծառայիս քոյ յարքայութեան քում 'ի թիւ այնոցիկ՝ որք կարգեցան յաջակողմեան Միածնիդ քոյ. յորժամ կոչես զսա

յերկնից 'ի պատրաստ բնակութենէ քումմէ 'ի դատաստան յաւուրն յետնում, ուր գետք հրեղէնք և հեղեղք բոցեղէնք յորդեռանդ բարկութեամբ զամենայն երկիր հրդեհեալ կիզուն։ Յայնմ աւուր, բարեգութ Տէր, գթա՛ 'ի գինս արեան Միածնի քոյ տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի, որ նորոգեաց զտիեզերս կամաւոր խոնարհութեամբ իւրով։ Ընդ որում եւ որով գոհութիւն եւ օրհնութիւն վերընծայի քեզ Հօր և կենդանատու սուրբ Հոգւոյդ. այժմ և միշտ։

Խաղաղութիւն ամենեցուն։

Աստուծոյ երկիրպագեսցուք։

Աստուած ճշմարտութեան եւ Տէր ողորմութեան, հայեա՛ց 'ի պատրաստ բնակութենէ քումմէ 'ի պաղատանս ժողովրդեան քոյ`

զոր մատուցանեմք հաւատով վասն ծառայիս քոյ (այս անուն) քահանայի։ Զի դու կացուցեր զմարդիկ հողեղէն սպասաւոր անտեսանելի փառաց էութեան քոյ։ Դու կոչեցեր զնախամարգարէն Մովսէս 'ի մորենւոյն ձայնիւդ քով, և առաքեցեր զնա փրկիչ ժողովրդեան քոյ։ Դու ընտրեցեր զԱհարոն և զորդիս նորա 'ի պաշտօն սրբութեան, եւ փառաւորեցեր զնա մեծարեալ օծմամբ և վակասակիր պսակօք. քոյին տեսչութեամբ հրամայեցեր նմա ելանել 'ի լեառըն. և աւանդեցեր զհոգի նորա առ քեզ. եւ ընդ ամրածածուկ աջովդ քով ամփոփեցեր զմարմին նորա։ Եւ ահա այժմ ծառայս քո և առաջնորդ հօտի քոյ՝ զոր ընտրեցեր 'ի գլուխ ժողովրդեան, կատարեաց զսպարէզ նախաշաւիղ

*օրհնագրութեան քոյ· և ճեպեաց հոգի սորա ըստ հրամանի կոչման քոյ՝ հանգուցեալ 'ի տաժանմանց մարմնական աղետից։ Արդ աղաչեմք զգթութիւն քո, Տէր, ընկալ զսա յանտրտում ուրախութիւնս, և զուարճացո զհոգի սորա յանանց խոստմանց քոց վայելս։ Յիշեա՛, Տէր, զուխտ եւ զժառանգութիւն քո, զոր փրկեցեր արեամբ քով։ Օրհնեա՛, Տէր, և զբնակութիւն սորա և զոսկերս, եւ պահպանողական աջովդ վերակացու լեր հոգւոյ և մարմնոյ սորա· զի դու ես վերակացու և ժողովարան քոյոց կամարարաց՝ եւ շտեմարան անկողոպտելի· որ ամփոփես նախագահութեամբ զվաստակաւորս, քո և հանգուցանես 'ի գրգանս մշտնջենաւորական փափկութեանդ՝ որ միայ*

և պահի յուսացելոց 'ի Քրիստոս Յիսուս 'ի տէրդ մեր։ Եւ զմեզ արժանաւորս արա գնալ 'ի ճանապարհս քո, և 'ի դէպ ժամանակի ընդ սուրբս քո հասանել 'ի խոստացեալ հանգիստն, եւ ընդ նոսին գոհացողական երգով փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Աղբերա՜ցն անմահական որ յե՛տ մա՛հուն անմահարա՛ր, բղխեալ 'ի քէն վը՛տակ կրկին 'ի նորո՛գումըն կողածնին. բա՛ց ըղբերա՛ն իմ յո՛րբեւուցումըն քո արեա՛ն կենարարին. լուա դարձեալ յաւա՛զանին թէ ո՛չ շնորհօք

այլ արտասուօք։

Յանմահի՜դ մեռանե՛լոյ զմեռեալ հո՛գիս կենդանացո՛. Թաղմամբ 'ի նոր գերե՛զմանի թաղեալս 'ի՛ մեղս վերածեա՛. 'ի՛ գբի ներքնումն իջանե՛լով 'ի գբոյ մե՛ղաց վերաբերեա՛. 'ի ստուե՛ր մա՛հու քո՛ բնա՛կելով լուսաւորեա՛ և զի՛ս հոգւո՛վ։

Արդ իմ առ քեզ աղաղակէ բանդ որ ընդ Հօր 'ի սկզբանէ. որ կամաւոր վասն մարդկան կրեցեր մարմնով զայս ամենայն. ինձ լսելի արա ըզձայն յարքայութեանդ քո կոչմանն, ընդ ժողովոյն անդ անդրանկացն օրհնել ըզքեզ միշտ յաւիտեան:

Երգ. Ի վերինն Երուսաղէմ 'ի բնակարանս հրեշտակաց ուր Ենովք եւ Եղիաս կան ծերացեալ աղաւնակերպ, 'ի դրախտին եղեմական պայծառացեալ արժանացո. ողոր:

Հոգւոյն հանգուցելոց: Քրիստոս որդի Ա.ս:

Ապա ասեն Սաղմոս, ՃԱ:

Աւուրք իմ որպէս հովանի անցին. եւ ես որպէս խոտ ցամաքեցայ: Փոխ. Տէր, լուր աղօթից իմոց, աղաղակ իմ առ քեզ եկեսցէ, մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն:

Ընթերցուած յՈվսեայ մարգարէէ: Ժ. 12:

Այսպէս ասէ Տէր. Սերմանեցէք ձեզ յարդարութիւն, եւ հնձեցէք զպտուղ կենաց. լուսաւոր արարէք ձեզ զլոյս գիտութեան. խնդրեցէք զՏէր՝ մինչեւ եկեսցեն առ ձեզ արդիւնք արդարութեան:

Մահ Ովսէայ մարգարէի ։

Ովսէ էր 'ի Բէլամովթայ , 'ի ցեղէն Իսաքարայ . և չատ մարգարէացաւ 'ի վերայ Իսրայելի ։ Մեռաւ խաղաղութեամբ և թաղեցաւ յերկրի իւրում փառաւորապէս ։ Եւ ետ նշան՝ թէ եկեսցէ Տէր յերկիր՝ և ընդ մարդկան շրջեսցի . և կաղնին որ 'ի Սելով՝ բաժանեսցի յերկոտասան մասն , և եղիցի երկոտասան կաղնի , և գնեսցեն երթիցեն և հնազանդեսցին երեւելոյն Աստուծոյ . և նովաւ կեցցէ ամենայն մարդ ։

Ընթերցուած յԱմովսայ մարգարէ է ։ Ը . 10 ։

Այսպէս ասէ Տէր . Ատեցին 'ի դրունս զյանդիմանիչս , եւ զբանս սուրբս պիղծս արարին ։ Վասն այնորիկ որ իմաստունն է՝ 'ի ժամանակին յայնմիկ լռեսցէ , զի ժամանակն չար է ։ Խնդրեցէք զբարի եւ մի՛ զչար՝ զի կեցջիք , եւ եղիցի ընդ ձեզ տէր Աստուած ամենակալ ։

Մահ Ամովսայ մարգարէի ։

Ամովս էր 'ի Թեկուայ . և Ամասիա արքայ բազում անգամ կոչկոճէր զնա ։ Եւ յետոյ սպան զնա որդի նորա՝ բակեղբ ջախջախեալ զծամելիսն ։ Որ ոգւով եկն յերկիր իւր . և յետ սակաւաւուրց մեռաւ և թաղեցաւ անդ ։

Ընթերցուած 'ի Միքիայ մարգարէ է ։ Է . 7 ։

Այլ ես Տեառն ակնկալայց , սպասեցից Աստուծոյ

փրկչի իմոյ, և լուիցէ ինձ տէր Աստուած իմ։ Մի՛ ոտնհար լինիր ինձ, թշնամի իմ, զի գլորեցայ, միւսանգամ կանգնեցայց. զի թէ նստայց 'ի խաւարի՝ Տէր է իմ լոյս։ Բարկութեան Տեառն համբերից՝ զի մեղայ նմա, մինչեւ արդարացուսցէ զդատաստան իմ, և արասցէ ինձ իրաւունս, և հանցէ զիս 'ի լոյս, և տեսից զարդարութիւն նորա։

Մահ Միքիայ մարգարէի։

Միքիաս էր 'ի Մորաթթայ, 'ի ցեղէն Եփրեմի։ Եւ բազում ինչ արարեալ նորա ընդ Աքայաբ, եւ յետոյ սպանաւ 'ի Յովրամայ որդւոյ նորա՝ ընկեցիկ եղեալ 'ի վախէ. վասն զի յանդիմանեալ էր զնա 'ի վերայ ամբարշտութեան հօր իւրոյ. և թաղեցաւ յերկրի իւրում, մօտ 'ի շիրիմս յենակիմայ։

Ընթերցուած Յովելեայ մարգարէ է։ Բ. 12։

Եւ արդ ասէ տէր Աստուած ձեր. դարձարուք առ իս յամենայն սրտէ ձերմէ, պահօք և լալով և կոծելով։ Պատառեցէք զսիրտս ձեր՝ և մի՛ զհանդերձս, և դարձարուք առ տէր Աստուած ձեր. զի ողորմած և գթած է, երկայնամիտ, և բազումողորմ, և զղջանայ 'ի վերայ չարեաց մարդկան։

Մահ Յովելեայ մարգարէի։

Յովէլ էր յազգէն Ռուբէնի, յագարակէն Բե-

*թագուրայ։ Մարգարէացաւ վասն սովու եւ նուազութեան զոհից, եւ վասն չարչարանաց մարգարէին արդարոյ, և թէ Նովաւ նորոգին ամենայն արարածք 'ի փրկութիւն։ Մեռաւ խաղաղութեամբ, և թաղեցաւ յագարակի իւրում փառաւորապէս։*

Ընթերցուած յԱբդիու մարգարէ է։ Ա. 21։

*Այսպէս ասէ Տէր. Եւ ելցեն ապրեալք 'ի լեռնէն Սիոնի՝ առնուլ վրէժ 'ի լեռնէն Եսաւայ, և եղիցի Տեառն արքայութիւն։*

Մահ Աբդիու մարգարէի։

*Աբդիու էր յերկրէն Սիկիմայ, յագարակէն Բեթ-քարիմայ։ Սա էր աշակերտ Եղիայի. բազում վիշտս կրեաց վասն նորա, զի ապրեցուցէ զնա։ Սա էր երրորդ յիսնապետն՝ յոր խնայեաց Եղիա, և էջ առ Ոքոզիա։ Եւ յետոյ թողեալ զսպասաւորութիւն արքային՝ մարգարէանայր։ Մեռաւ խաղաղութեամբ և թաղեցաւ առ հարս իւր։*

Ընթերցուած և մահ Յովնանու մարգարէի։

*Յովնան էր յերկրէն Կարիաթարիմայ, որ է մերձ Ցազովտոս՝ 'ի քաղաքն այլազգեաց 'ի ծովեզերին։ Եւ ընկեցիկ եղեալ 'ի կիտէն արտաքս՝ չոգաւ 'ի Նինուէ։ Եւ անտի դարձեալ՝ ոչ մնաց յերկրի իւրում. այլ առեալ զմայր իւր՝ չոգաւ պանդըխտեցաւ 'ի Սուր, 'ի գաւառին այլազգեաց ընդ հեթանոսս։ Բանզի ասէր՝ թէ այսպէս բարձից*

զՆախատրինս իմ. զի ստեցի 'ի մարգարէանալն իմում վասն Նինուէի մեծի քաղաքին։ Յայնժամ յանդիմանէր Եղիա զԱքայաբ և զկին նորա զԵզաբէլ, եւ կոչեաց սով 'ի վերայ երկրի։ Վասն որոյ փախուցեալ եկն 'ի Սարեփթա եւ եգիտ անդ զայրին հանդերձ որդւովն, և բնակեցաւ անդ Եղիա, քանզի ոչ կամէր լինել ընդ անթլփատսն։ Եւ օրհնեաց զնոսա վասն օտարընկալութեանն. քանզի յառաջագոյն ճանաչէր ըզնոսա 'ի վաղուց հետէ։ Եւ իբրեւ մեռաւ Յովնան, յարոյց զնա Աստուած 'ի ձեռն Եղիայի, և եցոյց նմա՝ թէ ոչ ոք կարէ փախչել յԱստուծոյ։ Եւ իբրեւ յարեաւ Յովնան յետ սովոյն, եկն յերկիրն Յուդայ. և մեռաւ մայր նորա 'ի ճանապարհին, եւ թաղեաց զնա մօտ 'ի կաղնին Դեբորայ։ Եւ բնակեցաւ Յովնան յերկրին Սարարայ, եւ մեռաւ անդ՝ եւ թաղեցաւ յերկրին Կենազայ դատաւորին յաւուրս անիշխանութեանն։ Եւ ետ նշան Երուսաղէմի, զի յորժամ տեսցեն զքար զի գոչեսցէ, և զբոտոտ զի 'ի փայտէ աղաղակեսցէ, մերձ լինել փրկութեան։ Յայնժամ տեսցեն զԵրուսաղէմ տապալեալ 'ի հիմանց, և մըտցեն 'ի նա հեթանոսք յերկրպագութիւն Տեառն. և առեալ զքարինս նորա դիցեն 'ի կողմն արեւելից. և անդ եղիցի երկրպագութիւն օծելոյն՝ վասն պղծելոյն Երուսաղէմի եւ աւերածոյն 'ի գազանաց՝ և յամենայն գարշելեաց. և յայնժամ եկեսցէ կատարած ամենայն երկրի։

Ընթերցուած ՚ի Նաւումայ մարգարէ է ։ Ա․ 7։

Քաղցր է Տէր որոց սպասեն նմա յաւուր նեղութեան, և ճանաչէ զերկիւղածս իւր․ եւ հեղեղաւ ճանապարհաց արասցէ վախճան յարուցելոց ՚ի վերայ, և զթշնամիս նորա խաւար հալածեսցէ։ Զի՞նչ խորհիք զՏեառնէ, կատարած ինքն արասցէ․ եւ ոչ խնդրեսցէ կրկին զնոյն վրէժխնդրութիւն ՚ի նեղութեան։

Մահ Նաւումայ մարգարէի։

Նաւում էր յԵղկասայ՝ որ է յայնկոյս Յորդանանու ՚ի Բեթաբրայ, ՚ի ցեղէն Շմաւոնի։ Սա հանդերձ Յովնանու ետ նշան Նինուէի․ եթէ ՚ի քաղցր ջրոյ, և ՚ի հրոյ գետնականէ կորիցէ․ որպէս եղեւն իսկ։ Զի ծովակն՝ որ շուրջ զնովաւն էր՝ հեղեղեաց և կորոյս զնա, և հուր յանապատէ եկեալ՝ զբարձրաւանդակս նոցա այրեաց։ Մեռաւ խաղաղութեամբ եւ թաղեցաւ յագարակի իւրում փառաւորապէս։

Ընթերցուածս յԱմբակումայ մարգարէ է ։ Ա․ 1։

Մինչեւ յե՞րբ, Տէր, աղաղակիցեմ՝ և ո՛չ լուիցես, գոչիցեմ առ քեզ զրկեալ՝ և ո՛չ փրկիցես։ Ընդէ՞ր ցուցեր ինձ աշխատութիւնս և վաստակս, տեսանել զթշուառութիւն և զամբարշտութիւն։

Մահ Ամբակումայ մարգարէի։

Ամբակում էր յազգէն Շմաւոնի, յագարակէն

Բեսուքարայ։ Սա ետես յառաջագոյն զգերութիւնն· և վասն աւերածոյն Երուսաղէմի սգացաւ յոյժ։ Եւ յորժամ եկն Նաբուգոդոնոսոր յԵրուսաղէմ, փախեաւ յՈւստրակինա՝ և եղեւ պանդուխտ յերկիրն Իսմայէլի։ Եւ իբրեւ դարձան քաղդէացիքն 'ի տեղիս իւրեանց, և մնացորդք Հրէիցն որք էին յԵրուսաղէմ, իջին յԵգիպտոս, յայնժամ դարձեալ Ամբակում եկն յերկիր իւր՝ և պաշտէր զհնձողս ագարակի իւրոյ։ Իբրեւ էառ զխորտիկն՝ մարգարէացաւ ընտանեաց իւրոց եւ ասաց· երթամ ես յերկիր հեռաստան, և վաղվաղակի դառնամ և գամ. և եթէ յամեցից՝ դուք տարէք ճաշ հնձողացն։ Եւ երթեալ նորա 'ի Բաբելովն 'ի ձեռն Հրեշտակին որ առաջնորդեաց նմա, տարաւ զճաշն Դանիէլի։ Դարձեալ չոգաւ առ հնձողսն՝ և տարաւ նոցա այլ խորտիկս, ոչ յամեալ ինչ զսովորական ժամն։ Եւ իմացաւ թէ վաղվաղակի դարձցի ժողովուրդն 'ի Բաբելովնէ· և յետ երկուց ամաց դարձան։ Եւ ետ Ամբակում նշան որոց 'ի Հրէաստանի, եթէ 'ի կատարածի մարգարէիցն որդի Աստուծոյ յարիցէ՝ և ուսուսցէ 'ի տաճարին· և որք հաւատան 'ի նա՝ տեսցեն զլոյս, և որք ոչ լսեն նմա՝ եղիցին 'ի խաւարի։ Եւ վասն վախճանի տաճարին յառաջագոյն ասաց՝ թէ յարեւմտից ազգաց աւերեսցի։ Յայնժամ վարագոյր տաճարին առէ 'ի մանր ծուէնս պատառեսցի· եւ ելեալ Հոգւոյն սրբոյ 'ի տաճարէն՝ և աղխաւեղագէսք երկուց սեանցն

բարձյին և գինյին յանապատն, ուր 'ի սկզբանէ ցուցաւ խորանն վկայութեան։ Եւ նորօք ծանիցի Տէր, և լուսաւորեսցէ զփախուցեալսն յօձէն և պատսպարեսցէ զնոսա յարդարութիւն յաւիտենից։ Մեռաւ խաղաղութեամբ և թաղեցաւ յագարակի իւրում փառաւորապէս։

Ընթերցուածս 'ի Սոփոնիայ մարգարէէ։ Ա. 7։

Երկերուք յերեսաց տեառն Աստուծոյ. զի մերձ է օր Տեառն. զի պատրաստեաց Տէր զզոհս իւր, և հրաւիրեաց զկոչնականս իւր. եւ եղիցի յաւուր զոհի Տեառն՝ խնդրեցից զվրէժ յիշխանաց և 'ի տանէ թագաւորին, և յամենայնէ որ զգեցեալք են զհանդերձս օտարս. ասէ Տէր ամենակալ։

Մահ Սոփոնիայ մարգարէի։

Սոփոնիաս էր 'ի ցեղէն Շմաւոնի, յագարակէն Մարաթայ։ Սա մարգարէացաւ վասն քաղաքին Երուսաղէմի, և վասն փրկութեան մտին հեթանոսաց, և վասն ամօթոյ ամբարշտաց, և դատաւորին ամենայն չնչոյ՝ որդւոյն Աստուծոյ։ Մեռաւ խաղաղութեամբ և թաղեցաւ յագարակի իւրում փառաւորապէս։

Ընթերցուածս յԱնգեայ մարգարէէ։ Բ. 10։

Եւ 'ի տեղւոջդ յայդմիկ տաց խաղաղութիւն, ասէ Տէր ամենակալ. եւ խաղաղութիւն ոգւոց

*փրկութիւն ամենայնի՝ որ գործիցէ յարուցանել զտաճարդ զայդ ։*

Մահ Անգեայ մարգարէի ։

*Անգէաս մարգարէ էր 'ի ցեղէն Ղեւեայ 'ի քահանայից անտի. և ծնաւ 'ի Բաբիլոն ։ Եւ մինչդեռ մանուկն էր՝ եկն 'ի Բաբելոնէ յԵրուսաղէմ. եւ յայտնապէս մարգարէացաւ վասն դարձի ժողովրդեանն, և ետես զշինուած տաճարին ։ Մեռաւ խաղաղութեամբ և թաղեցաւ յԵրուսաղէմ 'ի գերեզմանս քահանայիցն փառաւորապէս. քանզի և նա էր յազգէ քահանայիցն ։*

Ընթերցուածս 'ի Զաքարիայ մարգարէէ ։ Է . Թ ։

*Այսպէս ասէ Տէր ամենակալ. Դատաստան արդար դատեցարուք, և ողորմութիւն և գթութիւն արարէք իւրաքանչիւր եղբօր իւրոյ. զայրին և զորբն և զպանդուխտն և զտնանկն մի՛ յաղթահարէք, և ոխս չարեաց ընկերի իւրում մի՛ ոք կալցի 'ի սիրտ իւր ։*

Մահ Զաքարիայ մարգարէի ։

*Զաքարիաս էր յազգէն Ղեւեայ. եւ ծնաւ 'ի Կարգդի յերկրին քաղդէացւոց ։ Շատ մարգարէացաւ վասն ժողովրդեանն. եւ ետ նշան 'ի հաստատութիւն բանիցն ։ Սա ասաց զՅովսեդեկեայ՝ թէ ծնցի որդի, եւ յԵրուսաղէմ քահանայասցի անարատութեամբ յօրինակ ճշմարիտ*

քահանայապետին։ Սա և զՍաղաթիէլ օրհնեաց, և անուանեաց Զօրաբաբէլ։ Եւ առ Կիւրոսիւ ետ նշան 'ի յաղթութիւն. եւ վասն սպասաւորութեան նորա յառաջագոյն ասաց՝ զոր առնելոց էր յԵրուսաղէմ, և օրհնեաց զնա յոյժ։ Եւ զհանդերձեալսն յԵրուսաղէմ մարգարէացաւ վասն կատարածի նորին և սկզբան հեթանոսաց, եւ վասն դատարկութեան քահանայից, և մարգարէից, և չարաթուց, և վասն կրկին դատաստանին նշանակեաց։ Մեռաւ խաղաղութեամբ 'ի բարւոք ծերութեանն, և թաղեցաւ մերձ յԱնգէ։

Ընթերցուածս 'ի Մաղաքիայ մարգարէէ. Ա. 6։

Այսպէս ասէ Տէր ամենակալ. Որդի փառաւոր առնէ զհայր, և ծառայ երկնչի 'ի տեառնէ իւրմէ. իսկ արդ՝ եթէ Հայր եմ ես, ո՞ւր է փառքն իմ. և եթէ Տէր եմ, ո՞ւր է պատիւն իմ, ասէ Տէր ամենակալ։

Մահ Մաղաքիայ մարգարէի։

Մաղաքիաս յետ դարձի գերութեանն ծնաւ 'ի Սափիրա՝ յազգէն Ղեւեայ։ Եւ մինչդեռ մանուկն էր՝ բարի վարս եցոյց յանձին. և ամենայն ժողովուրդն պատուէր զնա իբրեւ զանարատ և զհեզ. եւ կոչեցին զնա Մաղաքիաս՝ որ թարգմանի հրեշտակ. քանզի էր գեղեցիկ տեսլեամբ։ Եւ որպէս ինքն ասաց 'ի մարգարէանալն իւրում, 'ի նմին աւուր երեւեալ հրեշտակ Տեառն՝

երկրորդէր զբանս նորա ։ Եւ զհրեշտակն ոչ ոք տեսանէր յանարժանիցն , այլ զձայնն միայն լսէին , որ եղեւ յաւուրս անխլխանութեանն ․ որպէս և գրեալ է 'ի սփրափոտին , այսինքն է 'ի դատաւորացն ։ Եւ մինչդեռ մանուկն էր՝ յաւելաւ առ հարս իւր , եւ թաղեցաւ յագարակի իւրում ։

Պօղոսի առաքելոյն 'ի կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուածս ։ ԺԵ․ 12 ։

Ապա եթէ Քրիստոս քարոզի թէ 'ի մեռելոց յարուցեալ է , զիա՞րդ ասեն ոմանք 'ի ձէնջ՝ եթէ յարութիւն մեռելոց չիք ․ եթէ յարութիւն մեռելոց չիք , ապա և Քրիստոս չէ յարուցեալ ․ և եթէ Քրիստոս չիցէ յարուցեալ , ընդունայն է քարոզութիւնն մեր , ընդունայն են և հաւատքն ձեր ․ և գտանիցիմք սուտ վկայք Աստուծոյ , զի վկայեցաք զԱստուծոյ՝ եթէ յարոյց զՔրիստոս ․ զոր ոչն արդեօք յարոյց՝ եթէ մեռեալք ոչ յառնիցեն ։ Իսկ եթէ մեռեալք ոչ յառնեն , ապա եւ Քրիստոս չէ յարուցեալ ․ եւ եթէ Քրիստոս չիցէ յարուցեալ , ընդունայն են հաւատքն ձեր , և տակաւին 'ի նմին 'ի մեղս կայցէք ։ Իսկ արդ որ ննջեցինն 'ի Քրիստոս՝ կորեա՞ն արդեօք ․ եթէ այսու կենօքս միայն յուսացեալ եմք 'ի Քրիստոս , ողորմելի եմք քան զամենայն մարդիկ ։ Այլ արդ Քրիստոս յարուցեալ է 'ի մեռելոց , առաջին պտուղ ննջեցելոց ․ քանզի մարդով ե-

ղեւ մահ, և մարդով յարութիւն մեռելոց. որպէս Ադամաւն ամենեքին մեռանին, նոյնպէս և Քրիստոսիւ ամենեքին կենդանասցին, իւրաքանչիւր յիւրում կարգի. նախ Քրիստոս, եւ ապա քրիստոսեանք ՚ի գալստեան նորա, և ապա կատարած։

Ալէլուիա. Բաղձանայք քո զգեցցին զարդարութիւն, և սուրբք քո ցնծալով ցնծասցեն։

Ալէլուիա Օրթի։

Խաղաղութիւն ամենեցուն։

Սրբոյ աւետարանին Յիսուսի Քրիստոսի
որ ըստ Յովհաննու։ Ե. 24։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Ամէն ամէն ասեմ ձեզ, զի որ զբանն իմ լսէ, և հաւատայ այնմ որ առաքեացն զիս, ընդունի զկեանսն յաւիտենականս. և ՚ի դատաստան ոչ մտանէ, այլ փոխեցաւ ՚ի մահուանէ ՚ի կեանս։ Ամէն ամէն ասեմ ձեզ, զի գայ ժամանակ՝ և արդէն իսկ է, յորժամ մեռեալք լուիցեն ձայնի Որդւոյն Աստուծոյ, և որք լուիցենն՝ կեցցեն։ Զի որպէս Հայր ունի կեանս յանձին իւրում, նոյնպէս ետ և Որդւոյ ունել կեանս յանձին իւրում։ Եւ իշխանութիւն ետ նմա դատաստան առնել. եւ զի

որդի մարդոյ է , ընդ այն զի՞ զարմանայք . զի եկեսցէ ժամանակ՝ յորում ամենեքին որ ՚ի գերեզմանս կայցեն , լուիցեն ձայնի նորա , և եկեսցեն արտաքս . որոց բարիս գործեալ իցէ՝ ՚ի յարութիւն կենաց , եւ որոց զչար արարեալ՝ ՚ի յարութիւն դատաստանաց ։ Ոչ կարեմ ես յանձնէ առնել և ոչինչ . այլ որպէս լսեմ՝ դատիմ , և դատաստան իմ արդար է . զի ոչ խնդրեմ զկամս իմ , այլ զկամս այնորիկ՝ որ առաքեաց զիս ։

Քարոզ ։

Վասն հրաժարելոյ անձանց ննջեցելոց ՚ի Քրիստոս , զՏէր աղաչեսցուք ։

Վասն որք ւքին զապականացու կենցաղս և հետեւեցան ՚ի վիճակս արդարոց , զՏէր աղա ։

Վասն առաջնորդելոյ սմա յանստուեր օթեւանս զոր պատրաստեաց ՚ի տան Հօր իւրոյ Որդին միածին , զՏէր աղա ։

Վասն արժանի լինելոյ սմա լսել զձայն կենդանարար փողոյն և յափշտակիլ ամպօք ընդ առաջի Տեառն յօդս , զՏէր աղա ։

Վասն դասելոյ սմա յաջակողման դասուն ՚ի դասս առաքելոց և մարգարէից , զՏէր աղա ։

Վասն հոգւոյն հանգուցելոյ ։ Եւ եւս միաբան ։ Զանձինս մեր և զմիմեանս ։ Ողորմեաց մեզ Տէր ։

Աղօթք։

Տէր երկնի եւ երկրի, որ զամենայն արարածս յոչընչէ արարեր. առեր հող յամենասուրբ ձեռս քո, արարեր զմարդն, և անուանեցեր զանուն նորա Ադամ. ըստ պատկերի քում եւ ըստ նմանութեան արարեր զնա։ Եւ վասն յանցանաց նորա՝ հաներ զնա 'ի դրախտէն փափկութեան, ասելով՝ հող էիր և 'ի հող դարձցիս։ Եւ արդ՝ ահաւասիկ ծառայս քո դարձաւ 'ի հող ըստ հրամանի քում։ Վասն որոյ աղաչեմք զքեզ, Տէր բարերար, առաքեա զհոգիդ քո սուրբ 'ի հողս յայս և 'ի տապանս. և օրհնեա՛ զսա 'ի բնակութիւն ծառայիս քոյ. զի մտանելով 'ի սա ոսկերաց սորա՝ ընկալցի զքարուոք հանգիստն յառատ բարերարութենէդ քումմէ։ Եւ հանգո՛ զհո-

զի սորա յօթեւանս սրբոց քոց առաքելոց եւ մարգարէից։ Եւ թող սմա զյանցանս իւր՝ զոր մեղաւ առաջի քո գիտութեամբ եւ անգիտութեամբ, զգործոց, զբանից եւ զմտածութեանց. զի հաւատաց յամենասուրբ Երրորդութիւնդ ՚ի ձեռն միածնի Որդւոյ քոյ տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի։ Ընդ որում քեզ Հօր և Հոգւոյդ սրբոյ վայելէ փառք՝ իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւի։

Զհանդուրժեալ բնութեամբ բարութն ունել միայն զանձառ բարին, այլ ստեղծեալ զմարդ յիւր պատկերին ՚ի վեցերորդն առաւօտին. եւ ՚ի յերրորդ ժամ զկողածնն ՚ի յօգնութիւն եւ հողածնին. զորս ՚ի դրախտին եդ վայելել, բայց ՚ի պտղոյն մահու արգել։

Պապանձեալ առ դատողին յետ յանցանացն Ադամըն հին, զկինըն պատճառ եդ-

եալ խաբմամբն և կնոջն զօձըն դաւաճան. որով երկիրս այս անիծաւ, փուշ և տատասկ ՚ի սմա բուսաւ. վճռիւ մահու մարդոյն տըւաւ, դառնալ ՚ի հող ուստի ստեղծաւ։

(Լման տուն)։

Երգ. Տէրումնահազդ որդ չարչարանօք ՚ի յանձն առեր ըզմահ խաչին, եւ փայտին բարձող եղեր վասն Ադամայ նախաստեղծին. օրհ։

Հոգւոյն հանգուցելոյս։ Քրիստոս որդի Ա.ս։

Եւ քէառնագրէն ղդին ամենայն ժահանայժն. և տղա տէին.

Հայր մեր որ յերկինս։

---

Ապա տուն Շարական Հանգստեան, ԲՋ։

Որ կոչեցեր առ քեզ, Տէր, ըզտիեզերս ամենայն, ընկալ ըզմեր ըզննջեցեալսն ՚ի գոգ նահապետին Աբրահամու, ողորմած Տէր փրկիչ և բարերար։ Որ Թողութեանց ես տըւող առատուած, Թող զմեղս մեր ննջեցելոցն, կարող յամենայնի և հզօր. օրհ։ Որ լուսոյ ես տիեզերաց Քրիստոս Աստուած, լուսաւորեա և ըզմեր ըզննջեցեալսն լուսով երանութեան զուարթնոցն. օրհ։

Սարկաւագն . Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ։

Առեալ քահանային երիցս անգամ զհող 'ի յամին՝
խաչակնքէ ասելով ։

Օրհնեամ, Տէր, ողորմութեամբ քով զհողս ծառայիս քոյ . և յիշեամ զսա, զի հող էր՝ և ըստ հրամանի քում 'ի հող դարձաւ ։

Արկանէ զհողն 'ի գերեզմանն խաչանման ։ Եւ ապա իջուցանեն զննջեցեալն 'ի գերեզման ։ Եւ ասեն Սաղմոս ։

Տէր հովուեսցէ զիս, և ինձ ինչ ոչ պակասեսցէ ։
Ի վայրի դալարւոջ բնակեցոյց զիս, և առ ջուրս հանգստեան սնոյց զիս ։

Դարձոյց զանձն իմ առ իս, առաջնորդեաց ինձ 'ի ճանապարհս արդարութեան վասն անուան իւրոյ ։

Թէպէտ և գնայցից ես 'ի մէջ ստուերաց մահու, ոչ երկեայց 'ի չարէ՝ զի դու, Տէր, ընդ իս ես ։

Ցուպ քո և գաւազան՝ նոքա մխիթարեսցեն զիս ։

Պատրաստ արարեր առաջի իմ զսեղան՝ ակն յանդիման նեղչաց իմոց ։

Օծեր իւղով զգլուխ իմ, բաժակ քո որպէս անապակ արբեցոյց զիս ։

Ողորմութիւն քո, Տէր, զհետ իմ եկեսցէ զամենայն աւուրս կենաց իմոց, բնակել ինձ 'ի տան Տեառն ընդ երկայն աւուրս ։

Ցոյց ինձ ճանապարհ յոր գնացից, զի առ քեզ Տէր, համբարձի զանձն իմ ։

*Փրկեա զիս 'ի թշնամեաց իմոց, Տէր, զի զքեզ ապաւէն ինձ արարի։*

*Ուսո ինձ առնել զկամս քո, զի դու ես Աստուած իմ։*

*Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ յերկիր ուղիղ։ Վասն անուան քո, Տէր, կեցուսցես զիս արդարութեամբ քով, հանցես 'ի նեղութենէ զանձն իմ։ Ողորմութեամբ քով սատակեսցես զթշնամիս իմ. կորուսցես զամենայն նեղիչս անձին իմոյ, զի ես ծառայ քո եմ։*

Մաղթանք։

*Տէր, ուղղեա զգնացս մեր 'ի ճանապարհս խաղաղութեան. Տէր, ուղղեա և առաջնորդեա հոգւոց մերոց եւ ամենայն հաւատացելոց գնալ յարդարութեան ճանապարհն և 'ի կեանսն յաւիտենից։*

Քարոզ։

*Աղաչեսցուք զամենակալն Աստուած՝ զի յաջողեսցէ ուղղեսցէ զճանապարհս ծառայից իւրոց 'ի բարի և 'ի խաղաղութիւն։ Ամենակալ տէր Աստուած մեր, կեցո և ողորմեա։*

Աղօթք։

*Առաջնորդ կենաց և պարգեւիչ խաղաղութեան, Քրիստոս Աստուած մեր, առաջնորդեա մեզ գնալ 'ի ճանապարհս քո արդարութեան. եւ խաղա-*

ղութեամբ ժամանել 'ի նաւահանգիստ կենաց և փրկութեան շնորհօք ողորմութեան քոյ· զի դու ես օգնական և փրկիչ մեր, եւ քեզ վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ· այժմ եւ միշտ և յաւիտեանս յաւիտենից· ամէն։

Դարձեալ Աղօթք։

Օրհնեալ ես, տէր Աստուած փրկիչ մեր, որ յամենայն ժամ ընդ մեզ ես, և ոչ երբէք թողուս 'ի ձեռանէ քումմէ զայնոսիկ՝ որք հաւատով և ճշմարտութեամբ կարդան առ քեզ։ Աղաչեմք և խնդրեմք 'ի քէն, Տէր, ճանապարհորդակից լեր ծառայից քոց քոյին վերակացութեամբ՝ պահելով 'ի խաղաղութեան· և առաջնորդեա մեզ միասանգամ խաղաղութեամբ եւ խնդութեամբ հասանել յիւրաքանչիւր 'ի բնակութիւնս 'ի Քրիստոս Յիսուս 'ի Տէր մեր, որում վայելէ փառք իշխանութիւն և պատիւ· այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից· ամէն։

Հայր մեր որ յերկինս։

---

Յետ այսորիկ ասեն Շարական ողբաձայն, Բկ։

Մերձեցաւ անձըն իմ 'ի հող յորմէ առեղծայ· քանզի պատուիրանաւն մեղայ, եւ ճաշակեցի ըզդառնութիւն մահու· Տէր յոյս իմ օգնեա ինձ։

Սաղմոս. Մերձեցաւ անձն իմ 'ի հող, Տէր, կեցո
զիս ըստ բանի քում։
Զճանապարհս իմ պատմեցի քեզ՝ և լուար ինձ,
ուսո՛ ինձ զարդարութիւնս քո։
Ի ճանապարհս արդարութեանց քոց իմաստուն
արա զիս, և քննեցից զսքանչելիս քո։
Տքնեցաւ անձն իմ առ 'ի ձանձրանալ, հաստա-
տեա զիս 'ի բանս քո։

Զճանապարհս քո ես ոչ պահեցի, քանզի
ոչ ժամանեցի ապաշխարել. այլ հեղգացայ.
այլ առ քեզ միայն պաղատիմ, Հայր Երկնա-
ւոր. Տէր յոյս իմ օգնեա ինձ։

Սաղմոս. Զճանապարհս մեղաց 'ի բաց արա յինէն,
և յօրէնս քո ողորմեա ինձ։
Զճանապարհս ճշմարտութեան քոյ ընտրեցի,
և զիրաւունս քո ես ոչ մոռացայ։
Մերձեցայ ես 'ի վկայութիւնս քո, Տէր, մի՛ յա-
մօթ առներ զիս։
Ի ճանապարհս պատուիրանաց քոց ընթացայ,
զի անդորր արարեր սրտի իմոյ։

Օրէնսգէտ արա զիս, Տէր, 'ի ճանապար-
հի քում. քանզի խնդրեցի գալ առ
քեզ. դառնալ անդրէն 'ի հող յորմէ առեղ-
ծայ. այլ առ քեզ միայն պաղատիմ, Հայր
Երկնաւոր. Տէր յոյս իմ օգնեա ինձ։

Սաղմ. Օրհնեալ ես դու, Տէր, 'ի ճանապարհս իրաւանց քոց, և խնդրեցից զնա յամենայն ժամ։
Իմաստուն արա զիս, և քննեցից զօրէնս քո, և պահեցից զնա բոլորով սրտիւ իմով։
Առաջնորդեա ինձ 'ի շաւիղս պատուիրանաց քոց, զի ընդ նոսա հաճեցայ։
Խոնարհեցո զսիրտ իմ 'ի վկայութիւնս քո, և մի՛ յագահութիւն։

Ապա ծածկէն զգերեզմանն՝ տարածանելով 'ի վերայ զշուրջն ։
Եւ ասեն Սաղմոս ողբաձայն ։

Եդին զնա 'ի գբի ներքնումն 'ի խաւարի և 'ի ստուերս մահու ։
Տէր Աստուած փրկութեան իմոյ 'ի տուէ կարդացի և գիշերի առաջի քո ։ (Լման տուն) ։

Ընթերցուած 'ի Յոբայ ։ ԻԱ. 31 ։

Ո՛ պատմեսցէ յանդիման նորա զճանապարհս նորա, և զոր ինչ ինքն գործեաց՝ ո՛ հատուսցէ նմա ։ Եւ ինքն 'ի գերեզմանս գնաց, և 'ի տապանի արթնեցաւ, և քաղցրացան նմա խիճք հեղեղատի ։ Եւ զհետ նորա ամենայն մարդ գնասցէ, և յառաջ քան զնա անթիւք ։

Պօղոսի առաքելոյն 'ի Տիմոթէոսի երկրորդ թղթոյն է ընթերցուած ։ Դ. 1 ։

Զայս վկայութիւն դնեմ առաջի Աստուծոյ և Յիսուսի Քրիստոսի, որ դատելոց է զկենդանիս

*և զմեռեալս 'ի յայտնութեան իւրում և յարքայութեան. և դու քարոզեա զբանն, հաս 'ի վերայ ժամու և տարաժամու, յանդիմանեա, սաստեա, մխիթարեա, ամենայն երկայնմտութեամբ եւ վարդապետութեամբ։ Քանզի եկեսցէ ժամանակ՝ զի ողջմտութեան վարդապետութեանն ոչ անսայցեն, այլ ըստ իւրաքանչիւր ցանկութեանց կուտեսցեն իւրեանց վարդապետս՝ ըստ մարմաջելոյ լսելեաց իւրեանց, և 'ի ճշմարտութենէ անտի դարձուցանիցեն զլսելիս եւ յառասպելս կրծանեսցին։ Այլ դու զուարթ կաց յամենայնի, ճգնեաց, զգործս աւետարանչի գործեա, ըզպաշտօնդ քո կատարեալ կալ։ Զի ես այսուհետեւ նուիրեալ եմ, եւ ժամանակ դարձի իմոյ հասեալ կայ. զբարւոք պատերազմ պատերազմեցայ, զընթացսն կատարեցի, զհաւատսն պահեցի։ Այսուհետեւ կայ մնայ ինձ արդարութեան պսակն, զոր հատուսցէ ինձ Տէր յաւուր յայնմիկ արդարն դատաւոր. ոչ միայն ինձ, այլ և ամենեցուն որ սիրեցին զյայտնութիւն նորա։*

Ալէլու-իա. *Տէր, հա՛ն 'ի բանտէ զանձն իմ, գոհանամ զանուանէ քումմէ։*

Ալէլուիա Օրթի.

Խաղաղութիւն ամենեցուն։

Սրբոյ աւետարանին Յիսուսի Քրիստոսի
որ ըստ Մատթէոսի ։ Իե · 31 ։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ ։

Եւ յորժամ եկեսցէ որդի մարդոյ փառօք իւրովք՝ եւ ամենայն հրեշտակք ընդ նմա, յայնժամ նստցի յաթոռ փառաց իւրոց. եւ ժողովեսցին առաջի նորա ամենայն ազգք, եւ մեկնեսցէ զնոսա ՚ի միմեանց, որպէս հովիւ զի մեկնէ զօդիս յայծեաց. և կացուսցէ զօդիսն ընդ աջմէ իւրմէ և զայծիսն ՚ի ձախմէ ։ Յայնժամ ասասցէ Թագաւորն ցայնոսիկ՝ որ ընդ աջմէն իցեն. եկայք օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ արքայութիւնն ՚ի սկզբանէ աշխարհի ։ Զի քաղցեայ՝ և ետուք ինձ ուտել, ծարաւեցի՝ և արբուցէք ինձ, օտար էի՝ և ժողովեցէք զիս, մերկ՝ եւ զգեցուցէք զիս, հիւանդ էի՝ և տեսէք զիս, ՚ի բանտի էի՝ և եկիք առ իս ։ Յայնժամ պատասխանի տայցեն նմա արդարքն և ասասցեն. Տէր, ե՞րբ տեսաք զքեզ քաղցեալ՝ և կերակրեցաք, կամ ծարաւի՝ եւ արբուցաք, ե՞րբ տեսաք զքեզ օտար՝ եւ ժողովեցաք, կամ մերկ՝ և զգեցուցաք, ե՞րբ տեսաք զքեզ հիւանդ կամ ՚ի բանտի, և եկաք առ քեզ ։ Պատասխանի տացէ Թագաւորն՝ և ասասցէ ցնո-

սա ․ ամէն ասեմ ձեզ, որովհետեւ արարէք միում յեղբարցս այսցիկ փոքրկանց՝ ինձ արարէք ։ Յայնժամ ասասցէ եւ ցայնոսիկ՝ որ ընդ ահեկէն լիցին ․ երթայք յինէն, անիծեալք, 'ի հուրն յաւիտենական, որ պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա ։ Զի քաղցեայ՝ և ոչ ետուք ինձ ուտել, ծարաւեցի՝ և ոչ արբուցէք զիս, օտար էի՝ և ոչ ժողովեցէք զիս, մերկ էի՝ եւ ոչ զգեցուցէք զիս, հիւանդ և 'ի բանտի՝ և ոչ տեսէք զիս ։ Յայնժամ պատասխանի տացեն և նոքա և ասասցեն ․ Տէ՛ր, ե՞րբ տեսաք զքեզ քաղցեալ կամ ծարաւի կամ օտար կամ մերկ կամ հիւանդ կամ 'ի բանտի, եւ ոչ պաշտեցաք զքեզ ։ Յայնժամ պատասխանի տացէ նոցա և ասասցէ ․ ամէն ասեմ ձեզ, որովհետեւ ոչ արարէք միում 'ի փոքրկանցս յայսցանէ, եւ ոչ ինձ արարէք ։ Եւ երթիցեն նոքա 'ի տանջանս յաւիտենականս, եւ արդարքն 'ի կեանս յաւիտենականս ։

Ապա ասեն Շարական Սնեցի, Դկ ։

Ո՞ր յանըստուե՜ր 'ի՞ լուսո՜յն ընկա՛լար ըմծա-ումբ՞ն շնորհաց՝ ո՞վ երանելդ տէ՛ր Յո՞վ-աննէս, ե՞ւ հրաշազա՛րդ գծմար յե՞րջանիկ

դասս առաքելոցն. հայցեմք ՚ի Տեառնէ
զթողութիւն յանցանաց։ Ո՞վ փարեցայք ըղ-
սորասփելի պատրանացն զանմատոյց լու-
սոյն, և մերժեցայք որպէս զմոլի ՚ի հուր.
լուսազարդեալք երեւեցայք ՚ի մէջ սրբոցն
որպէս յաստեղս արեգակն. հայցեմք։ Ո՞վ ՚ի
կենդանի աղբերէն արբեալք ըմբռնմամբն
շնորհաց, և ՚ի Թեւս հոգւոյն համբերէք յանկ-
մանելն. աւետարանեցէք մեծորընչենաւ-
ւորականց Հօր զէականցն որդին. հայցեմք։

Մի ոմն ՚ի գլխաւորացն ընթեռնու ՚ի վերայ գերեզմանին։

Հանգիստ երանելւոյն Յովհաննու առաքելոյն
և աստուածաբան աւետարանչին։

Էր ընդ եղբարս երանելին Յովհաննէս մե-
ծաւ ուրախութեամբ ՚ի Տէր։ Եւ յաւուր
միում կիրակէի, ընդ ժողովել եղբարցն առ
նա՝ սկսաւ խօսել ընդ նոսա այսպէս։ Եղ-
բարք իմ և ծառայակիցք և ժառանգակիցք և
հաղորդք Տեառն արքայութեանն, գիտէք ե-
թէ որքան զօրութիւնս ՚ի ձեռն իմ ետ ձեզ
Աստուած։ Քանի՜ նշանս, քանի՜ արուեստս,
որչափ շնորհս, որպիսի վարդապետութիւնս,
վերակացութիւնս, հանգիստս, սպասաւորու-
թիւնս, փառս, հաւատս, միաբանութիւնս,

ձիրս, պարգեւս։ Ո՞րչափ, և քանիցս տեսիք աչօք ձերովք զտուեալն ձեզ՝ որք ոչ երեւելին աչացս այսոցիկ, և ոչ ականջացս այսոցիկ լսելի լինին։ Արդ՝ հաստատեցարուք 'ի նա, յիշելով զնա յամենայն գործս ձեր. գիտացէք զխորհուրդս մատակարարութեանն որ եղեւ առ մարդիկ, թէ զի՞ր աղագաւ արար Տէր։ Աղաչէ զձեզ ինքնին Տէր 'ի ձեռս իմ, եւ մաղթէ կալ մնալ ձեզ առանց թշնամանաց, առանց նենգութեան, առանց անառակութեան։ Քանզի գիտէ զթշնամանսն որ 'ի ձէնջ. գիտէ եւ զանարգութիւնն, գիտէ եւ զնենգութիւնն, գիտէ եւ զանառակութիւնն՝ 'ի տունգանելն ձեր 'ի սուրբ պատուիրանաց նորա։ Ա՛րդ՝ մի՛ տրտմեսցի 'ի ձէնջ բարերարն Աստուած, գթածն, ողորմածն, սուրբն, յատակն, անարատն, անհիւթն, միայնն, մինն, անփոփոխն, առոյգն, աննենգն, անցաւումն, որ 'ի վեր է քան զամենայն ասելի և իմանալի անուն Աստուածն իմ Յիսուս։ Ուրախ լիցի 'ի բարւոք կրօնաւորութեան ձերում. խընդասցէ 'ի սուրբ կեանս ձեր. հանգիցէ 'ի պարկեշտ վարս ձեր. անհո՛գ լիցի 'ի ժուժկալութեան ձերում. հաճեսցի 'ի միաբանութեան ձերում. ժպտեսցի 'ի զգաստութեան ձերում. բերկրեսցի 'ի սիրելն ձեր զնա։ Զայս այժմ

խօսիմ՝ ընդ ձեզ եղբարք. փութասջի՛ք յառաջիկայ գործն ձեր արդէն իսկ կատարել 'ի Տէր: Քանզի զի՞նչ այլ ինչ ունիցիմ ասել ձեզ. ունիք զԱստուծոյ մերոյ զգրաւականն, ունիք զբարերարութեան նորա զտուրս, ունիք զանհրաժեշտ գալուստն նորա: Զի թէ ոչ եւս մեղիցէք, զոր յանգիտութեանն գործեցիք՝ թողուցու ձեզ. ապա թէ գիտացեալ զնա՝ և 'ի նմանէ զողորմութիւն գտեալ՝ նոյնպէս վարիցիք, և զառաջինն եւս համարեսցի ձեզ, և ո՛չ ընկալջիք զողորմութիւն 'ի նմանէ: Եւ զայս ասացեալ առ նոսա՝ յաղօթս եկայց այսպէս:

Ո՛ որ զպատեան զայս հիւսեցեր քոյին հիւսմամբդ, Յիսուս: Ո՛ որ զբազում ծաղիկս զայս յանթառամելի ծաղկովդ յօդեցեր: Ո՛ որ սերմանեցեր զկենդանարար բանս քո զայսոսիկ: Ո՛ որ միայնդ ես խնամակալ քոյոյ ծառայից, և բժիշկ՝ որ ձրի բժշկես: Ո՛ որ միայնդ ես բարերար եւ անամբարտաւան: Ո՛ որ միայնդ ես ողորմած և մարդասէր: Ո՛ որ միայնդ ես փրկիչ և արդար: Ո՛ որ միշտ ես եւ յամենեսեան, եւ յամենայն ուրեք մերձ ես, Աստուած իմ՝ Յիսուս. դու քոյով պարգեւօքդ ծածկեա զամենեսեան՝ ոյք 'ի քեզ յուսան. զի դու գիտես զչարախօսին մերոյ յամենայն ուրեք զմեքենայս եւ զդաւութիւն: Եւ ապա խնդրեայ

հայ` և գոհացայ այսպէս։ Զի՞ր օրհնութիւն, կամ զի՞ր պատարագ, կամ զի՞ր գոհութիւն 'ի բերկրանել հացխ մատուսցուք քեզ. այլ միայն զքեզ տէր Յիսուս անուանեսցուք։ փառաւորեմք, Տէր, զքո սատացեալդ Հօր զանուն։ փառաւորեմք զմուտ դրանն քոյ։ փառաւորեմք զյարութիւնն քո, որ քեւ ցուցաւ մեզ։ փառաւորեմք զճանապարհն քո։ փառաւորեմք զսերմն քո, զբանն, զշնորհն, ըզհանոն, զա՛ղն, զանխոս մարգարիտն, զգանձն, զարօրն, զուռկանն, զմեծութիւնն, զխոնարհութիւնն` որ վասն մեր կոչեցար որդի մարդոյ. զճշմարտութիւնն, զհանգիստն, զգիտութիւնն, զզօրութիւնն, զպատուիրանն, զհամարձակութիւնն, զազատութիւնն, զառ 'ի քեզ փախուստն։ Զի դու ես, Տէր, արմատ անմահութեան եւ աղբիւր անապականութեան, եւ հիմն յաւիտենից. անուանեալ այսու ամենայնիւ վասն մեր` որպէս զի մեր կոչեցեալ զքեզ այսքիւք զմեծութիւն քո, որ է անտես 'ի մէնջ 'ի ժամանակիս յայսմիկ, և սրբոց միայն տեսանելի 'ի քեզ կերպարանեցելոյն։ Եւ բեկեալ զհացն կարկառեաց նոցա 'ի վերայ իւրաքանչիւրոյն աղօթս առնելով` արժանի լինել շնորհացն Տեառն եւ սրբոյ գոհութեանն. Ճաշակեալ եւ ինքն

*նոյնպէս, և ասացեալ՝ Թէ և ինձ մասն ընդ ձեզ լիցի, սիրելիք իմ, և խաղաղութիւն Տեառն ընդ ձեզ։ Եւ ասէ ցՔրիստոս. Ա՛ռ դու ընդ քեզ երկուս յեղբարցդ հանդերձ երկու որԹովք և փայտատովք, և եկ զհետ իմ։ Եւ Քրիստոս առանց յապաղելոյ արար զոր հրամայեաց նմա ծառայն Աստուծոյ Յովհաննէս։ Եւ եկեալ երանելին Յովհաննէս գնայր առաջի դոցա. հրամայեաց բազմութեանն մեկուսանալ յինքենէ։ Եւ հասեալ 'ի շիրիմ ինչ եղբօր ուրումն՝ ասաց ցպատանիսն. բրեցէք, որդեակք. և նոքա բրեցին։ Իսկ նա ստիպէր զնոսա և ասէր, խորագոյն լիցի բրածդ։ Եւ 'ի բրելն նոցա խօսէր ընդ նոսա զբանն կենաց, և յորդորէր զեկեալսն ընդ նմա 'ի տանէն՝ շինելով և հաստատելով զնոսա 'ի մեծուԹիւն Տեառն, եւ ապօԹս առնելով 'ի վերայ իւրաքանչիւր ուրուք ամենեցուն։ Իսկ մեք ոչ ինչ իմանայաք ամենեւին։ Եւ իբրև կատարեցին զբրածն պատանիքն շուրջանակաւ որպէս և նա կամէր, մերկանայր երանելին զհանդերձսն իւր զոր զգեցեալ էր, և տարածանէր իբրև զանկողին ինչ 'ի խորութեան բրածին։ Եւ միայն նափորտամբն կացեալ 'ի խորափոսին՝ համբարձ զձեռս իւր 'ի վեր, և յաղօԹս եկաց այսպէս։ Ո՛ր ընտրեցեր զմեզ յառա-*

քեւութիւն հեթանոսաց ։ Ո՛ որ առաքեցեր զմեզ յաշխարհ, Աստուած ։ Ո՛ որ ցուցեր ըզքեզ 'ի ձեռն մարգարէից քոց ։ Ո՛ որ ոչ դադարիս երբէք 'ի խնամոց , այլ միշտ կեցուցանես զկորուսեալսն ։ Ո՛ որ 'ի ձեռն ամենայն բնութեանց զքեզ ծանուցեր ։ Ո՛ որ և անասնոց անգամ քարոզեցար ։ Ո՛ որ զանապատ և զվայրենի հոգին կզօն և հանդարտ արարեր ։ Ո՛ որ ծարաւելոյն քոյով բանիւդ զքեզ խակ ետուր ։ Ո՛ որ մեռելոյն արագ յայտնեցար ։ Ո՛ որ ընկղմելոյն յանօրէնութիւն արագօրէն ցուցար ։ Ո՛ որ հերքելոյն բնաւին 'ի սատանայէ ծանուցար փրկիչ ։ Ո՛ որ յաղթեցեր հակառակորդին՝ տալով զօգնութիւն 'ի քեզ ապաւինելոյն ։ Ո՛ որ ետուր նմա զքո ձեռնդ , և յարուցեր զնա 'ի դժոխական խոցս ։ Ո՛ որ ոչ թողեր զնա 'ի մարմնի կրօնաւորիլ ։ Ո՛ որ ցուցեր նմա զթշնամին իւր ։ Ո՛ որ զգիտութիւն քո սուրբ ցուցեր սիրելեաց քոց ։ Ո՛ որ հայրդ ես որոց 'ի վեր քան զերկինս , եւ Աստուած երկնաւորաց ։ Ո՛ որ օրէնքդ ես եթերականաց , և ընթացք օդականաց , պահապան երկնաւորաց , և երկիւղ սանդարամետականաց ։ Ընկա՛լ զհոգի ծառայիս քոյ Յովհաննու՝ թերեւս արժանի եղելոյ 'ի քէն ։ Ո՛ որ զնա պահեցեր մինչեւ 'ի

ժամանակս յայս անփորձ 'ի խառնակութենէ կանանց ։ Ո՛ որ և զհայիլն ինձ 'ի կին մարդծանր գրեցեր ։ Ո՛ որ յառժամանակեայ պատրանացս փրկեցեր զիս , եւ 'ի մշտնջենական կենանս առաջնորդեցեր ։ Ո՛ որ 'ի մարմնաւոր աղտեղութենէ ողոշեցեր զիս ։ Ո՛ որ 'ի դառն մահուանէ զերծուցեր զիս , և 'ի քեզ միայն հաստատեցեր ։ Ո՛ որ զծածուկ ախտ հոգւոյ իմոյ սանձեցեր , և զյայտնի գործս տրա խափանեցեր ։ Ո՛ որ նեղեցեր եւ հալածեցեր զխռովարարն որ յիս ։ Ո՛ որ անբիծ զճանապարհս իմ որ առ քեզ հաստատեցեր ։ Ո՛ որ առանց սայթաքելոյ պահեցեր զշաւիղս իմ որ առ քեզ ։ Ո՛ որ աներկմիտ ետուր զհաւատս իմ որ առ քեզ ։ Ո՛ որ զսուրբ գիտութիւնն որ 'ի քեզ՝ սահմանեցեր ինձ ։ Ո՛ որ իւրաքանչիւր գործոց արժանաւոր վարձս հատուցանես ։ Ո՛ որ եդեր յոգւոջ իմում մի ինչ ստացուած պատուական համարիլ քան զքեզ ։ Եւ արդ , Տէր իմ Յիսուս Քրիստոս , զմատակարարութիւնն զոր ընկալայ 'ի քէն՝ կատարեցի ․ արժանի արա զիս քում հանգստեանդ դքո ողորմութիւնդ շնորհելով ինձ, որ է անփախուստ և անճառ փրկութիւն ։ Եւ 'ի գալս իմում առ քեզ ընկրկեսցի հուրն , վանեսցի խաւարն , տկարասցի վիհն , խամրասցի հնոցն ,

շիջցի գեհեանն, ամաչեսցեն հրեշտակք չարին, երկիցեն դեւք, զմրեսցին իշխանքն, ընկճեսցին զօրութիւնք, աջակողմեանքն կասցեն, ձախակողմեանքն մի՛ մնասցեն, բանսարկուն պապանձեսցի, սատանայ զարհուրեսցի, սրամտութիւն նորա տաչորեսցի, մոլորութիւն նորա սուզեսցի, տանջանարանք նորա խափանեսցին, յարձակմունք նորա ակարասցին, մանկունք նորա չարչարեսցին, եւ ամենայն արմատք նորա տարախուսեսցին։ Եւ տուր ինձ զճանապարհս իմ որ առ քեզ՝ անբասիր և անբռնադատ վճարել. առնուլ զայն զոր խոստացար այնոցիկ՝ որք սրբութեամբ կեցին, եւ պարկեշտութեամբ սիրեցին զքեզ, Տէր։ Եւ ապա կնքեալ զկնքն ասաց. դու լեր ընդ իս Տէր իմ Յիսուս Քրիստոս. և կողմնեցաւ 'ի խուրախոյն՝ ուր զհանդերձն տարածեաց։ Եւ ասաց ցմեզ. խաղաղութիւն ընդ ձեզ եղբարք իմ։ Եւ մինչդեռ ուրախ էաք և լայաք, աւանդեաց զհոգին իւր երանելին Յովհաննէս 'ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. որում փառք յաւիտեանս. ամէն։

Սարկաւագն. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղա.

Եւ դարձեալ հող օրհնէ քահանայն երիցս, և արկանէ խաչաձեւ 'ի վերայ մարմնոյն՝ ասելով։

Օրհնութիւն աստուածային իջցէ 'ի հող մա-

հու սրբին, եւ բուսուսցէ յօրն վերջին անուամբ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։

Ապա ասեն Շարական, Բկ։ Ձայնիւ։

Ողորմած Աստուած քաւեա զանօրէնութիւնս իմ։

Հաւատ ունելով հոգւոյ խաղաղութեան երթ առ արարիչն հայցելով, Աստուած իմ հանգո։

Ես ասացի 'ի զարմանալ իմում, թէ ամենայն մարդ սուտ է։

Հաւատ ունելով հոգւոյ խաղաղութեան երթ առ արարիչն հայցելով, Աստուած իմ հանգո։

Զճանապարհս իմ ուղիղ արա ինձ ըստ բանի քում, և մի տիրեսցեն ինձ ամենայն մեղք։

Հաւատ ունելով հոգւոյ խաղաղութեան երթ առ արարիչն հայցելով, Աստուած իմ հանգո։

Որ ետուր հոգի, Յիսուս, ըզսա պահեա, զի քոյ Խաչին և յարութեանդ հաւատայ, Թագաւոր երկնաւոր, հանգո ըզհոգի սորա յիշելով սորա զհաւատս։

Ի քաղաքի Տեառն զօրութեանց և 'ի քաղաքի

Թագաւորին մեծի՝ ուր ժողովք սրբոյն են ՚ի խաղաղութեան, գնասցես յուսով, և հանգիցես ընդ հրեշտակաց դասս տեսանել զլոյսն յաւիտենից ։

Մերձեցաւ անձն իմ ՚ի հող յորմէ առեղծեր զիս, և հոգւոյս մերկանալ յինէն. Տէր, զապաւինեալս յիշեա ՚ի քում գալստեանն ։

Ստեղծուած եմ անարատ ձեռացդ քոց մի անտես առներ, այլ խնայեա յիս յահագին աւուրն. Տէր զապաւի ։

Յորժամ գաս փառօք Հօր դատել զտիեզերս ամենայն, և հարկանի փող հնչման յարութեան. Տէր զապաւի ։

Փառք. Այժմ. Ընդ Քրիստոսի պահելով յաղթող լսցուք փողձողին. Եւ ընդ հրեշտակս երգեսցուք փառք ՚ի բարձունս Աստուծոյ ։

Եւ զկնի ծածկեն հող զգերեզմանն, և ասեն Զքառ․ ՚ի Բարյաւնան, զի մխիթարեսցին սիրտք վշտացելոցն ։

Փառք պատիւ և երկրպագութիւն ՚ի բարձունս Հօր և ։

Եղին զիս ՚ի գբի ներքնումն, ՚ի խաւարի և ՚ի ստուերս մահու ։

Տէր Աստուած փրկութեան իմոյ ՚ի տուէ կարդացի, և գիշերի առաջի քո ։

Ալէլուիա Օրթի։

Խաղաղութիւն ամենեցուն։

Սրբոյ աւետարանին Յիսուսի Քրիստոսի
որ ըստ Ղուկասու։ ԺԲ. 32։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ։

Մի՛ երկնչիր հօտ փոքրիկ, զի հաճեցաւ Հայր ձեր տալ ձեզ զարքայութիւն։ Վաճառեցէք զինչս ձեր, և տուք ողորմութիւն. և արարէք ձեզ քսակս առանց հնանալոյ, գանձ անպակաս յերկինս. ուր ոչ գող մերձենայ, եւ ոչ ցեց ապականէ։ Զի ուր գանձն ձեր է, անդ եւ սիրտք ձեր եղիցին։ Եղիցին գօտիք ձեր պնդեալ ընդ մէջս, եւ ճրագունք լուցեալք եւ դուք նմանողք մարդկան որ ակն ունիցին տեառն իւրեանց՝ թէ երբ դառնայցէ ՚ի հարսանեաց, զի յորժամ գայցէ և բաղխիցէ, վաղվաղակի բանայցեն նմա։ Երանի իցէ ծառայիցն այնոցիկ, զորս եկեալ Տէրն գտցէ արթունս. ամէն ասեմ ձեզ, զի գօտի ընդ մէջ ածցէ, և բազմեցուսցէ զնոսա, և անցեալ պաշտիցէ զնոսա. եւ եթէ յերկրորդ կամ յերրորդ պահու եկեսցէ եւ գտցէ այնպէս, երանելի են ծառայքն այնոքիկ։ Բայց զայն գիտասջիք, եթէ գիտէր տանուտէրն յորում ժամու գող գայ, չտայր թոյլ ական հատա-

*նել 'ի տան խուռամ։ Եւ դուք եղերուք պատրաստք, զի յորում ժամու ոչ կարծիցէք՝ գայ որդի մարդոյ։*

Քարոզ։

Վասն 'ի վերուստ պահպանութեան առ 'ի Տեառնէ անձանց մերոց, և հաճոյական աղօթս առնելոյ, զՏէր աղաչեսցուք։

Վասն ընդունելոյ Տեառն զհոգի հանգուցելոյս 'ի հանգիստն արդարոց, զՏէր աղա։

Վասն արժանի լինելոյ սմա խաղաղութեամբ եւ մեծաւ յուսով սպասել տեառնագալուստ փողոյն, զՏէր աղա։

Վասն քաղցրաբարբառ լսելոյ սմա զձայն երանաւէտ կոչմանն՝ եթէ արիք ահա՛ գայ Քրիստոս, զՏէր աղա։

Վասն համարձակապէս տեսանելոյ սմա զանապական պսակն և զանստուեր լոյսն, զՏէր աղա։

Վասն տալոյ սմա տեղի հանգստեան 'ի հայրական խնամոցն յաջագահ դասուն, զՏէր աղա։

Վասն պարգեւելոյ սմա զերկնային պսակն կենաց և անմահութեան, զՏէր աղա։

Վասն առաքման շնորհաց մեծի եւ ամենազօր աջոյն Քրիստոսի 'ի հողանիւթեայ յարկս յայս, զՏէր աղա։

Վասն կնքելոյ զգերեզմանս զայս խաչիւն իւրով մինչև 'ի գալուստն իւր սուրբ, զՏէր աղա։

Վասն առաքելոյ զշնորհս Հոգւոյն սրբոյ 'ի սիրտըս լողաց հաւատացելոց անուան իւրոյ սրբոյ, զՏէր աղա.

Վասն մխիթարելոյ զվշտագնեալս սրտիւք 'ի ձեռն ողորմութեան իւրոյ, զՏէր աղա.

Վասն հոգւոցն. Եւ ևս. Զանձինս մեր. Ողորմեա.

Աղօթք.

Վասն կնքելոյ զգերեզմանն, զոր արարեալ է տեառն Բարսղի հայրապետին կեսարու կապադովկացւոյ:

Գոհանամք զքէն Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ յայց ելեր եւ արդարութեամբ քով փրկեցեր զմեզ 'ի մեքենայից սատանայի. զի նախանձեցաւ և եհան զմեզ պատրանօք 'ի յաւէժական կենացն՝ արտաքսահմանելով զմեզ 'ի կորուստ եւ յապականութիւն: Այլ դու, բարերար և մարդասէր Աստուած, ոչ թողեր զնորագաւնութիւն թունիցն 'ի մեզ յարակայ: Վասն որոյ մահ կոչեցեր եւ հեղեր 'ի

վերայ արարածոյ քոյ, զի մի՛ անմահ մնասցէ չարութիւնն պատահեալ. այլ բառնալով զմեզ 'ի կենացս յայսցանէ, և հատանելով 'ի մեղաց՝ եղեւ փրկութիւն բարերարիդ պատուհասն: Իսկ 'ի վախճան աւուրցս այսոցիկ առաքեցեր զՈրդիդ քո սիրելի 'ի կերպարանս մահու մեղաց, որ եւ դատապարտեաց զմեղս մարմնով իւրով, եւ կամաւոր խաչելութեամբն իւրով խորտակեաց զզօրութիւնս դժոխոց. եղեւ առաջին պտուղ ննջեցելոց, եւ աստուածահրաշ յարութեամբն իւրով հրաւիրեաց զմեզ յիւր անմահութիւնն: Յոր հաւատացեալ ծառայս քո այս՝ մկրտեցաւ 'ի մահ Քրիստոսի քոյ, և լցեալ զժամանակ կենցաղավարութեան իւրոյ՝ փոխեցաւ 'ի կէտս սահմա-

նադրութեան քո ։ Վասն որոյ աղաչեմք զքեզ, Հայր սուրբ, միջնորդութեամբ մարմնոյ և արեան Որդւոյ քո Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, հայեա՛ց 'ի խոստովանողս անուանդ քո, եւ թո՛ղ սմա զամենայն պարտիս՝ զկամայ և զակամայ՝ զոր վիրաւորեաց անմարմին թշնամին պատրանօք խաբմամբ. զի դու միայն սուրբ եւ բարերար Տէր ես։ Եւ որպէս յանգոյութենէ 'ի գոյութիւն ածեր զամենայն, և այժմ զվէրս սորա բժշկեա՛, և խաղաղութեամբ անցո ընդ խաւարային իշխանութիւնսն. զի մի՛ զիւրեա՛նց չարութիւնն 'ի ծառայս քո գտցեն. այլ ջնջեա՛ զձեռագիր նորա ներգործութեանն զոր 'ի սմա սերմանեցին, եւ տո՛ւր սմա ճանապարհ բարի։ Բացակա՛յ եղիցի 'ի սմանէ

*հրեղէն սուրն, որ պահէ զճանապարհ ծառոյն կենաց, պատկառելով 'ի փրկական նշանէ խաչին, որ զկենաց պտուղն մեզ ընծայեցոյց՝ առհաւատչեայ յաւէժական կենացն եւ առաջնորդ ։ Յոր ապաւինեալ ծառայս քո՝ սովահացէ՛ 'ի պահեստ, ուր սուրբքն ամենայն հաւաքեալ՝ սպասեն մեծի հարսանեացն, յերեւիլ Որդւոյ քոյ եւ Փրկչի մերոյ Յիսուսի Քրիստոսի 'ի ձայն փողոյ մեծի ։ Որոյ 'ի յակնարկելն՝ սաստանին տարրեղէն արարածք և գալարին երկինք, նսեմանան լուսաւորք, թօթափին աստեղք, ցոլանան գետք հրեղէնք, եւ երեւին բանակք անմահից, սասանի երկիր, և բանին կնքեալ գերեզմանք, և շինին հողացեալ մարմինք, և հոգիքն սլացեալք իբրեւ զարծուիս*

անդր հասանեն, և զգենուն զանապական մարմին 'ի վայրկեան ժամանակի, և ժամանեն յիւրաքանչիւր տեղիս: Աղաչեմք զքեզ, Տէր, ժամանեցո՛ զծառայս քո յանսպառ ուրախութիւնդ, և զմեզ զամենեսեան զհաւատացեալս 'ի քեզ խաղաղութեամբ պահեա՛ և մխիթարեա հոգւով և մարմնով. զի արժանաւոր լիցուք փառաւորել զքեզ ընդ Որդւոյ և ընդ սուրբ Հոգւոյդ. այժմ և միշտ և յաւի:

Խաղաղութիւն ամենեցուն:

Աստուծոյ երկիրպագեսցուք:

Օրհնեալ ես, տէր Աստուած մեր, որ նեղելոց ես անդորրութիւն, եւ ընդունող ես հոգւոյն հանգուցելոց: Ընկա՛լ զհոգի ծառայիս այսորիկ 'ի բարի, եւ փարատեցո՛ զսուգ եւ զտրտմութիւն

'ի սիրելեաց սորա, որք հետեւեցան յուղարկել զսա ընդ երկայնաձիգ ճանապարհն, և մորմոքին 'ի վերայ անդառնալի ուղեգնացութեան սորա, և վասն յաւէժ անջատելոյ 'ի սմանէ առ ժամանակ մի՝ մինչչեւ իւրեանց յուղի անկեալ յայսմ բազմաժողով ծովածուփ կենցաղոյս ։ Եւ զչափաւոր արտասուս սոցա ընկալ քեզ 'ի հաճոյս, և մի՛ 'ի զայրացումն. և մխիթարեալ սփոփեա՛ զլքեալ սիրտս սոցա՝ գալստեամբ քոյոյ շնորհիդ. և զօրացուցե՛ս զտարակուսեալ ոգի սոցա առաքմամբ Հոգւոյդ սրբոյ ։ Եւ կնքեալ պահեա՛ զգերեզմանս փակեալս յանուն քո սուրբ՝ նշանաւ ամենայաղթ խաչի քոյ մինչեւ յօր վերջնում մեծի կրկնակի գալըստեան քոյ ։ Զի քո ամենակարող

զօրութեամբդ՝ եղեմնապատ և ձիւնաթագեալ պահպանին ամենայն արմատք, և սերմանիք թաղեալ յերկիր մեռանին, մինչեւ 'ի ժամանակս գարնանային որոտընդոստ յարութեանն զուարճացեալ պայծառանան, զորս կարգեցեր մեզ 'ի տպաս պիտոյից: Այսպէս և դու խոնարհեցար 'ի հայրական ծոցոյ պատկերակից մեզ լինելով, հատդ անմահութեան զմահ յանձն առեր՝ զի բազում արասցես արդիւնս. իջեր 'ի գերեզման, լուծեր զերկունս մահու, զդժոխս աւերեցեր, որ երկրպագիս յերկնաւորաց և յերկրաւորաց և 'ի սանդարամետականաց. եւ լի են ամենայն երկինք և երկիր փառօք քովք: Արդ՝ պահեա, ամենազօր Տէր, զհոգի սորա առ ամենայն սրբոց և սիրողաց

անուանդ քում։ Եւ զգերեզման ծառայիս քո կնքեալ պահեսցես, որ փակես զխորս և կնքես ամենազօր աջովդ քով. երկինք և երկնից երկինք և երկիր հաստատեալ կան բանիւ քով. այսպէս անշարժ եղիցի կնիք Տէրութեան քո 'ի վերայ բնակութեանս սորա եւ պահարանի ծառայիս քո։ Եւ մի իշխեսցէ մերձենալ 'ի սա պիղծ և անմաքուր դեւն՝ որպէս 'ի մարմինս և յոգիս հեթանոսաց, որք ո՛չ ունին զծնունդ սուրբ աւազանին, եւ զկնիքն ահաւոր եւ պատկառելի 'ի վերայ գերեզմանաց իւրեանց։ Քանզի այս ծառայս քո կոչեցեալ հրաւիրեցաւ 'ի քոյոց հրաւիրողացն, և հաւատացեալ 'ի քեզ 'ի կենդանութեան իւրում թաղեցաւ ընդ քեզ մկրտութեամբ 'ի մահ, եւ

սերմանեալ պահեցաւ 'ի քէն անդրէն յերկիր։ Վասն որոյ լո՛ւր աղաչանաց մերոց, մարդասէր Տէր, և թո՛ղ զամենայն մեղս սորա զոր մեղաւ, եւ քաւի՛չ լեր ամենայն սխալանաց սորա, եթէ կամաւ եւ եթէ ակամայ, եթէ բանիւ և եթէ գործով, եթէ խորհրդով և եթէ մտածութեամբ. զամենայն կտակ չարին պատառեա՛, և զձեռագիր մեղացն ջնջեա, Տէր, և զախտս հնութեանն լուա՛. զի անպատկա՛ռ լիցի 'ի մեծի որոտընդոստ աւուրն վերջնում ընդ համօրէն պահպանեցելոցն 'ի քէն, ընդ առաջ ելանել քեզ նորափետուր արփիափայլ հրաշիւք՝ զարդարեալ 'ի զարդ անկողոպտելի. յորժամ գաս Աստուածդ 'ի մէջ աստուածացելոցն 'ի բաժանել և որոշել զպատիւ զանազան սիրե-

լեայց քոց։ Եւ զմեզ զամենեսեան զհաւատացեալս 'ի քեզ արժանի արա զայս ահաւոր եւ զսոսկալի օրս հանապազ տպաւորել առաջի աչաց մերոց. 'ի յամենայն զգալի և պատրողական կենցաղավարութիւնս պատսպարեա՛ զմիտս եւ զգայարանս մեր։ Պատկերացո, Տէր, զանհրաժեշտ գալուստ քո առաջի աչաց մերոց. քաղցրութեամբ քով քաւի՛չ լեր գործելոց մեղաց մերոց. 'ի հանդերձեալ գեհենոյն պահեա՛ զմեզ, և ժամանեցո՛ զմեզ զամենեսեան արժանաւորապէս հանդիպիլ քում գալստեանդ։ Ամենագութ Տէր, նորոգեա՛ զմարմին խոնարհութեան մերոյ ըստ անեղծ փառաց քոց Քրիստոս Աստուած մեր։ Ընդ որում Հօր՝ միանգամայն և Հոգւոյդ սրբոյ վայելէ փառք իշխանութիւն եւ

պատիւ, այժմ և միշտ և յաւի-
տեանս յաւիտենից. ամէն:

Տէ՛ր յետ ստեղծման արարածոց հանգեաւ յեօթն օրն ՚ի գործոց. այն որ հանգիստ աշխատելոց և կամքն գործ է եղելոց. ուստի եւ մեզ յոյս հանգստութեան ետ հանգըստեամբքն շաբաթուն, թէ՛ աստ գործել զգործս աստուծոյ անդ է հանգչել ընդ Աս-
տուծոյ:

Բարունաքար վարդապետիմք, յօրինակէ տեառն խրատիմք. որ ՚ի յերկրորդ արարչութեան յետ կատարման տնօրէնութեան, յեօթներորդ օր հանգստեան իջեալ մարմնով ՚ի գերեզման, զկապեալ հոգիսն վերածեաց, զանանց հանգիստն
պատրաստեաց:

Փառաց ՚ի փառս բարձրանան, աջակողմեանքն վերանան, յորժամ լսեն զերանական ձայն օրհնութեան ՚ի քէն կոչման. ընդունելոյս մեր լսեցո զաստուածային բարբառդ քո. դասաւորեա ընդ վերնոյն
Երգել ըղփառս ընդ զուարթնոցն:

Քահանայք և ժողովուրդք հայցեմք ՚ի քէն

Տէր բարեգութ, ընդ նընջեցեալըն հաւատով ընկալ ըզմեզ նովին յուսով, յերուսաղէմ քաղաք վերին յորում արդարքըն ժողովին. փառս վերերգել միշտ ընդ նոսին Երրորդութեանդ երրեակ անձին :

Երգ. Ի գնել բեմին բազմի փեսային և անաչառատըն զարդարի, գօրբրեղեան փողին գոչէին սուրբք ամենայն ընդ հաւաքին, արդարոց դասքըն բերկրին, իսկ մեղաւորքըն թախանձին. որոր :

Հոգւոյն հանգու : Հայր մեր որ յերկինս :

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ։

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգ ։

Օրհնեսցի և կնքեալ պահեսցի գերեզման և ոսկերք ծառայիս Աստուծոյ նշանաւ սուրբ խաչիս, և բանիւ սուրբ Աւետարանիս, յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ :

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ։

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգ ։

Օրհնեսցի և կնքեալ պահեսցի դամբարան և ոսկերք ծառայիս Աստուծոյ նշանաւ սուրբ խաչիս, և բանիւ սուրբ Աւետա :

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ։

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյ ։

Օրհնեսցի եւ կնքեալ պահեսցի շիրիմ եւ ոսկերք ծառայիս Աստուծոյ Նշանաւ սուրբ Խաչիս, և բանիւ սուրբ Աւետարանիս ։

Կեցուսցէ և ողորմեսցի ։

Աներարժ եղիցի կնիք տէրութեան 'ի վերայ բնակարանի ծառայիս Աստուծոյ՝ մինչեւ եկեալ Նորոգողն և Հարստարապետն ամենեցուն Տէրն մեր Յիսուս Քրիստոս՝ նորոգեսցէ հայաբական փառօք 'ի փառս, ամէն ։

Քարոզ ։

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ։ Խնդրեսցուք հաւատով 'ի Հօրէ վասն քաւութեան մեղաց և թողութեան յանցանաց, փրկելոյ զմեզ 'ի վշտաց եւ 'ի նեղութեանց, իջանելոյ 'ի վերայ մեր ողորմութեան եւ գթութեան տեառն Աստուծոյ ամենակալին, կեցո՛ և ողորմեա՛ ։

Աղօթք ։

Հայր գթութեանց և Աստուած ամենայն մխիթարութեանց, որ

մխիթարես զմեզ յամենայն նեղութիւնս մեր։ Որ հարկանես, Տէր, և դու ինքնին բժշկես, և ոչ երբէք թողուս 'ի ձեռանէ քումմէ զստեղծուածս քո։ Տուր մեզ, Տէր, գթութեամբ քով հոգի զգաստութեան, հոգի մխիթարութեան. քեւ մխիթարեա՛ զվշտագնեալս սրտիւք, և բժշկեա՛ զվէրս սոցա։ Զի հաստատուն քո յուսովդ առողջացեալք 'ի սգոյ և 'ի տրտմութեանց՝ փառաւորեսցեն զամենասուրբ զԵրրորդութիւնդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Հայր մեր որ յերկինս։

# ԱՅԳՈՂՔ ՔԱՀԱՆԱՅԱԹԱՂԻ

Իսկ յերկրորդում աւուրն երթան 'ի հանգիստն ։
Եւ յերթալն տան ցԱմբիծսն , զկնի ․

Աղօթք Յովնանու մարգարէին ։

Ի նեղութեան իմում ես առ Տէր կարդացի․ լուաւ Աստուած յանդնդոց դժոխոց աղաղակի իմում։

Լուր , Տէր , ձայնի իմում․ զի ընկեցեր զիս 'ի խորս ծովու , և շրջանք գետոց պաշարեցին զիս։

Ամենայն զբօսանք քո և ալիք քո անցին 'ի վերայ իմ, և ասացի թէ՝ մերժեցայ ուրեմն յերեսաց աչաց քոց։

Արդ իցէ՞ թէ յաւելից հայել 'ի տաճար սուրբ քո , զի հեղձան զինեւ ջուրք մինչեւ յանձն իմ, և անդունդք անհնարինք պաշարեցին զիս։

Եմուտ գլուխ իմ ընդ փապարս լերանց , իջի ես 'ի խորս երկրի և տեսի զնիգս նորա , զի էին որպէս աղխք յաւիտենից ․ և ելցեն յապականութենէ կեանք իմ։

Առ քեզ , տէր Աստուած իմ, 'ի նուաղել անձին իմոյ կարդացի , և զքեզ, Տէր , յիշեցի , և մտցեն աղօթք իմ 'ի տաճար սուրբ քո ։

Զի ոչ պահէին զունայնութիւն և զստութիւն,
յողորմութենէ իւրեանց մերժեցան։
Այլ ես 'ի ձայն օրհնութեան խոստովան եղէց
քեզ, մատուցից պատարագս Տեառն, և կատա-
րեցից զուխտ իմ 'ի փրկութեան։
Փառք Հօր և Որդւոյ և։ Այժմ և միշտ և։

Շարական, ԲՁ։

Ի նեղութեան իմում աղաղակեցի առ տը-
ւողըն կենդանութեան, եւ լուաւ ձայ-
նի աղօթից իմոց, եւ եհան ըզկեանս իմ
յապականութենէ։ Յորժամ ընկլայ ես 'ի
խորս անդընդոց, ըմբռնեցայ 'ի ժանիս վի-
շապին. եւ փրկեաց զիս փրկիչն աշ-
խարհի, եւ։ Միայն օրհնեալ սրբուհիդ 'ի
կանայս, բնակարան և առագաստ տիրաչին,
բարեխօսեա առ Տէր վասն անձանց մե-
րոց, զի փրկեսցէ զմեզ 'ի սատանայեաց
գեհենոյն։

Զկնի սորին Զճառ 'Ի բարձունսն. և հող լնուն 'ի վերայ
գերեզմանին։

Սաղմոս, ԻԹ. կցուրդ։

Ընդ երեկոյս հանգիցեն լալիք, առաւօտու
եղիցի ուրախութիւն։

*Բարձր առնեմ զքեզ, Տէր, զի ընկալար զիս,*
*եւ ոչ ուրախ արարեր զթշնամին իմ յիս։*

Ընթերցուած ի Ծննդոց։ ԼԲ. 24։

Եւ մնաց Յակոբ միայն. եւ մարտնեաւ այր մի ընդ նմա մինչեւ ցառաւօտ. եւ իբրեւ ետես թէ ոչ յաղթէ նմա, բուռն եհար զամոլաջլէ զլատի նորա, եւ ընդարմացոյց զամոլաջիլ զլատին Յակոբայ ՚ի կռուելն խրում ընդ նմա։ Եւ ասէ ցնա. Արձակեա զիս՝ քանզի այգ եղեւ։ Եւ նա ասէ. Ոչ արձակեցից զքեզ՝ թէ ոչ օրհնեսցես զիս։ Եւ նա ասէ ցսա. Զի՞նչ անուն է քո։ Եւ սա ասէ ցնա. Յակոբ։ Եւ ասէ ցնա. Յայսմհետէ ոչ կոչեսցեն զանուն քո Յակոբ, այլ Իսրայէլ եղիցի անուն քո. զի ժուժկալեցեր ընդ Աստուծոյ, եւ ընդ մարդկան զօրաւոր լիջիր։ Եհարց Յակոբ եւ ասէ. Պատմեա ինձ զանուն քո։ Եւ ասէ. Զի՞ հարցանես զանուանէ իմմէ։ Եւ օրհնեաց զնա անդ։ Եւ կոչեաց Յակոբ զանուն տեղւոյն այնորիկ՝ Տեսիլ Աստուծոյ. զի տեսի զԱստուած դէմ յանդիման, եւ ապրեցաւ անձն իմ։ Եւ ծագեաց նմա արեւ իբրեւ էանց տեսիլն Աստուծոյ։

Ընթերցուած յԵսայեայ մարգարէ է։ ԿԶ. 18։

Այսպէս ասէ Տէր. Գամ ժողովել զամենայն

ազգս և զլեզուս. եկեսցեն և տեսցեն զփառս իմ. և թողից 'ի վերայ նոցա նշան: Եւ առաքեցից 'ի նոցանէ փրկեալս յազգս, 'ի Թարսիս և 'ի Փուդ և 'ի Լուդ և 'ի Մոսոք և 'ի Թոբէլ, և յԵլլադա և 'ի կղզիս հեռաւորս՝ որոց չիցէ լուեալ զանուն իմ, և ոչ տեսեալ զփառս իմ. և պատմեսցեն զփառս իմ և զանուն իմ 'ի մէջ ազգաց: Եւ ածցեն զեղբարս իւրեանց յամենայն ազգաց պատարագ Տեառն, հեծեալս կառօք՝ հանդերձ պալարակապ երիվարօք հովանոցօք 'ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, ասէ Տէր, որպէս մատուցին որդիքն Իսրայէլի զպատարագս իւրեանց ինձ սաղմոսիւք 'ի տուն Տեառն: Եւ 'ի նոցանէ առից ինձ 'ի քահանայս և 'ի ղեւտացիս՝ ասէ Տէր: Զոր օրինակ երկինք նոր և երկիր նոր, զոր ես առնեմ կալ առաջի իմ, ասէ Տէր, նոյնպէս կացցէ զաւակն ձեր: Եւ եղիցի՝ ամիս յամսոյ և շաբաթ 'ի շաբաթէ՝ եկեսցէ ամենայն մարմին երկիր պագանել առաջի իմ յԵրուսաղէմ, ասէ տէր Աստուած: Եւ ելցեն և տեսցեն զոսկերս մարդկան առ իս յանցուցելոց, զի որդն նոցա ո՛չ վախճանեսցի, եւ հուր նոցա ո՛չ շիջցի, և եղիցին 'ի տեսիլ ամենայն մսեղեաց:

Պետրոսի առաքելոյն 'ի կաթուղիկեայց երկրորդ թղթոյն է ընթերցուածս։ Գ. 1։

Զայս ձեզ, սիրելիք, երկրորդ թուղթ գրեմ, որով զարթուցից 'ի յիշատակ զհաստատուն միտս ձեր, յիշել զյառաջագոյն ասացեալ պատգամս 'ի սրբոց մարգարէից, և յԱռաքելոցն ձերոց՝ զպատուէրս Տեառն եւ փրկչին։ Բայց զայս նախ գիտասջիք, զի յաւուրս յետնոց եկեսցեն արհամարհօղք, այպանօղք, որ ըստ իւրեանց ցանկութեանցն գնասցեն. և ասիցեն, ո՞ւր են աւետիք գալստեան Նորա. զի յորմէ հետէ հարքն ննջեցին՝ ամենայն ինչ նոյնպէս կայ մնայ 'ի սկզբանէ արարածոց։ Եւ զայն մոռացեալ լիցէ նոցա՝ որք զայն կամին, եթէ երկինք եղեն 'ի սկզբանէ, եւ երկիր 'ի ջրոյ, և ջուրք հաստատեալ կան բանիւն Աստուծոյ. վասն որոյ երբեմն աշխարհ ջրհեղեղաւ ապականեալ կորեաւ։ Եւ այժմ երկինք եւ երկիր նովին բանիւ գանձեալ են, հրոյ պահեալք յօրն դատաստանի, և կորստեան ամպարիշտ մարդկան։ Եւ այս եւս մի լիցի 'ի ձէնջ ծածկեալ, սիրելիք, զի մի օր Տեառն իբրեւ զհազար ամ է, և հազար ամ իբրեւ զմի օր։ Ոչ յամեցուցանէ Տէր զաւետիսն՝ որպէս ոմանք յամր համարին, այլ երկայնամիտ

լինի առ ձեզ. քանզի ոչ կամի եթէ ոք կո-
րիցէ, այլ զամենեցուն հասանել յապաշխա-
րութիւն:

Այլ եկեսցէ օր Տեառն իբրեւ գող. յո-
րում երկինք տագնապաւ անցցեն, եւ բնու-
թիւնք հրով կիզեալ լուծցին, եւ երկիր՝ եւ որ
միանգամ 'ի նմա գործք գտանիցին: Եւ 'ի
լուծանել այսպէս այսր ամենայնի, որպիսի՞
ինչ պարտ իցէ ձեզ գտանել. այլ սուրբ եւ
աստուածապաշտ կարգաւ ակն ունել, եւ փու-
թալ հասանել գալստեան աւուրն Տեառն.
յորում երկինք հրայրեացք լուծանիցին, եւ
բնութիւնք հրդեհեալ հալեսցին: Նորոյ երկ-
նից եւ նորոյ երկրի ըստ աւետեացն հայեցեալ
սպասեմք, յորս արդարութիւնն բնակէ: Վասն
որոյ, սիրելիք, այսոցիկ սպասեալ՝ փոյթ յան-
ձին ունիջիք՝ անբիծք եւ անարատք գտանել
նմա 'ի խաղաղութիւն, եւ զՏեառն երկայն-
մտութիւնն՝ փրկութիւն համարեսջիք:

Պօղոսի առաքելոյն 'ի Թեսաղոնիկեցւոց երկրորդ թղթոյն է ընթերցուածս: Ա. 3:

Գոհանալ պարտիմք զԱստուծոյ յամենայն
ժամ վասն ձեր, եղբարք, որպէս եւ արժան
իսկ է. զի եւս քան զեւս աճէն հաւատքդ
ձեր, եւ յաճախէ սէր իւրաքանչիւր ձեր ա-

մենեցուն առ միմեանս։ Որպէս և մեզ ձեօք պարծել յեկեղեցին Աստուծոյ՝ վասն համբերութեան ձերոյ եւ հաւատոյ՝ յամենայն հալածանս ձեր և 'ի նեղութիւնս, որում դուքն համբերէք․ յօրինակ արդար դատաստանին Աստուծոյ․ արժանի լինել ձեզ արքայութեանն Աստուծոյ, վասն որոյ եւ զնեղութիւնդ կրէք․ եթէ պարտ է առաջի Աստուծոյ՝ հատուցանել նեղչացն ձերոց նեղութիւն, և ձեզ նեղելոցդ հանգիստ ընդ մեզ՝ 'ի յայտնութեանն Տեառն մերոյ Յիսուսի, յերկնից Հրեշտակօք զօրութեան իւրոյ․ 'ի բոց հրոյ առնուլ զվրէժս յայնցանէ՝ որք ոչ ճանաչեն զԱստուած, և որ ոչ հնազանդին Աւետարանին Տեառն մերոյ Յիսուսի։ Որք տացեն վըրէժս 'ի սատակումն յաւիտենից՝ յերեսաց Տեառն և 'ի փառաց զօրութեան նորա, յորժամ գայցէ փառաւոր լինել 'ի մէջ սրբոց իւրոց, եւ սքանչելի 'ի մէջ ամենայն հաւատացելոց․ զի հաւատարիմ եղև վկայութիւնն մեր 'ի վերայ ձեր յաւուր յայնմիկ։ Յոր և աղօթս առնեմք վասն ձեր յամենայն ժամ, զի զձեզ արժանիս արասցէ կոչմանն ձերում Աստուած, մինչև լցցէ զամենայն հաճութիւն բարութեան, և զգործս հաւատոյն զօրութեամբ․ զի փառաւոր լիցի անուն Տեառն

մերոյ Յիսուսի Քրիստոսի 'ի ձեզ, և դուք 'ի նմա, ըստ շնորհացն Աստուծոյ մերոյ և տեառն Յիսուսի Քրիստոսի։

Աղաչեմ զձեզ, եղբարք, վասն գալստեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ մերոյ ժողովելոյն առ նա, մի վաղվաղակի խռովել ձեզ 'ի մտաց և մի զարհուրել, մի հոգւով և մի բանիւ և մի թղթովք՝ իբրեւ թէ 'ի մէնջ. որպէս թէ եկեալ հասեալ իցէ օր Տեառն։ Մի ոք զձեզ խաբեսցէ եւ մի իւիք իրօք։

Ալէլուիա. Տէր, լո՛ւր աղօթից իմոց, աղաղակ իմ առ քեզ եկեսցէ. մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն.

Ալէլուիա Օրթի։

Խաղաղութիւն ամենեցուն.

Սրբոյ աւետարանին Յիսուսի Քրիստոսի
որ ըստ Յովհաննու։ ԺԲ. 24.

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ։

Ամէն ամէն ասեմ ձեզ. եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի, ինքն միայն կայ. ապա եթէ մեռանիցի՝ բազում արդիւնս առնէ։ Որ սիրէ զանձն իւր՝ արձակէ զնա, եւ որ ատեայ զանձն իւր յաշխարհիս

յայսմիկ՝ ՚ի կեանսն յաւիտենականս պահեսցէ զնա։ Եթէ ոք զիս պաշտիցէ, զկնի իմ եկեսցէ. և ուր եմ եմ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի. եթէ ոք զիս պաշտիցէ, պատուեսցէ զնա Հայրն իմ։

Բայց այժմ անձն իմ խռովեալ է. և զի՞նչ ասացից՝ եթէ Հայր ապրեցո զիս ՚ի ժամանակէ աստի յայսմանէ. այլ վասն այնորիկ եկի ՚ի ժամս յայս։ Հայր, փառաւորեա զանուն քո։ Եկն բարբառ յերկնից. Եւ փառաւոր արարի, եւ դարձեալ փառաւոր արարից։ Եւ ժողովուրդն որ կայր եւ լսէր, ասէին՝ որոտումն լինել. կէսքն ասէին, Հրեշտակ խօսեցաւ ընդ նմա։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ. Ոչ վասն իմ ինչ եկն բարբառս այս, այլ վասն ձեր։ Այժմիկ դատաստան է աշխարհիս այսորիկ, այժմիկ իշխան աշխարհիս այսորիկ ընկեսցի արտաքս. և ես յորժամ բարձրացայց յերկրէ, զամենեսին ձգեցից առ իս։ Զայս ասէր, նշանակեալ թէ որով մահու մեռանելոց իցէ։ Պատասխանի ետ նմա ժողովուրդն. Մեք լուաք յօրինաց՝ եթէ Քրիստոս յաւիտեան կայ, և դու զիա՞րդ ասես՝ թէ պարտ է բարձրանալ որդւոյ մարդոյ. ո՞վ է այն որդին մարդոյ։ Ասէ ցնոսա Յիսուս. Փոքր մի եւս ժամանակ լոյս ընդ ձեզ է. գնացէք մինչդեռ

զլոյսն ունիք, զի մի խաւար ձեզ հասցէ. զի որ գնայ ՚ի խաւարի, ոչ գիտէ յո՛ երթայ։ Մինչդեռ զլոյսն ընդ ձեզ ունիք՝ հաւատացէք ՚ի լոյսն, զի որդիք լուսոյ եղիջիք։

Քարոզ.

Վասն ուղղելոյ զգնացս մեր ՚ի ճանապարհս խաղաղութեան, զՏէր աղաչեսցուք։
Վասն ցրելոյ ՚ի մէնջ զամենայն խորհուրդս չարին, զՏէր աղաչեսցուք։
Վասն պարգեւելոյ մեզ առողջ խորհուրդս և առաքինի վարս, զՏէր աղաչեսցուք։
Վասն պահելոյ զմեզ ընդ հովանեաւ ամենազօր աջոյն իւրոյ, զՏէր աղաչեսցուք։
Վասն խորտակելոյ զհակառակորդն փաղփաղակի ընդ ոտիւք մերովք, զՏէր աղաչեսցուք։
Վասն հոգւոյն։ Եւ եւս։ Զանձինս մեր։ Ողորմեաց։

Աղօթք.

Տէր Աստուած յաւիտենական, անսկիզբն և անպատճառ յաւիտենական, կատարեալ զօրութիւն, ինքնագոյ բնութիւն, Հայր ամենակալ, հանդերձ Միածնիւդ քով և կենդանարար Հոգւովդ սրբով

միաբուն զօրութեամբ առեալ հող յերկրէ արարեր զմարդն և բնակեցուցեր զնա 'ի բարեվայելուչ և 'ի սաղարթազուարճ դրախտին փափկութեան. ուր ոչ գոյր պէտք դեղոց, զի ոչ գոյին իսկ ախտք հիւանդութեանց և ոչ մահ. քանզի մերժեալք էին ցաւք և տրտմութիւնք և հեծութիւնք. վասն զի ամենակեցոյց աչք քո հանապազ 'ի վերայ նորա հայէին: Առ որս ձոխացեալ Ադամայ մոռացաւ զպատուիրանադրութիւն քո, զոր եդեր նմա, եւ հաւանեալ կնոջն դաւաճանութեան օձին 'ի բանսարկուին հնարից, որ խորամանկութեամբն իւրով 'ի պատճառս աստուածանալոյ ընկէց զնա 'ի փառաց վայելչութեան նորա: Իսկ դու, տէր Աստուած մեր, բարե-

գութ և ողորմած՝ հանեալ եղեր զնա արտաքոյ դրախտին փափկութեան յերկիր, ուստի առաւ։ Եւ իբրեւ տիրեալ այնպէս բռնութեան չարին ՚ի բոլոր ազինս՝ որով ամենեքեան ծառայեցին մահու, ապա գթացար հայրախնամ ողորմութեամբ քով. ընդ հարսն մեր հաճեցար, և կոչեցեր զքեզ Աստուած Աբրահամու, Իսահակայ և Յակոբայ, Աստուած կենդանեաց և մեռելոց. վասն զի ամենեքեան քեզ կենդանիք են։ Քանզի տեսեալ ամենաբաւ մարդասիրութիւնդ քո զաշխարհս ամենայն կործանեալ ՚ի պատրող թշնամւոյն՝ առաքեցեր զմիածին Որդիդ քո մարմնանալ ՚ի մերմէ բնութենէս։ Որոյ եկեալ էառ զկերպարանս ծառայի ՚ի սուրբ և յանշաղախ կուսէն Մարիամայ,

և կրեալ 'ի մարմնի իւրում զամենայն պարտիս մեր, զոր պարտէաք վասն յանցանաց նախահօրն, ելեալ բեւեռեցաւ կամօք իւրովք 'ի վերայ խաչափայտին՝ ընդ որում սպան զթշնամութիւն մեր, և եբարձ զխայթոց մեղաց մերոց · իջանելով 'ի գերեզման, աւերեաց զբռնութիւն մահու հզօր զօրութեամբ իւրով. յարուցեալ յերրորդ աւուր նստաւ ընդ աջմէ քումմէ, եւ մեզ խոստացաւ յարութիւն հաւատացելոցս յամենասուրբ Երրորդութիւնդ 'ի միւսանգամ գալստեանն իւրում փառօք Հօրդ և հրեշտակօք սըրբովք 'ի յաւուրն յետնում: Եւ արդ, տէր Աստուած ամենակալ, գթա՛ 'ի ծառայս քո, որ եթող զանցաւոր զկեանս իւր ըստ հրամանի քոյ, եւ դարձաւ 'ի հող,

*ուստի ստեղծաւ։ Իսկ ժողովեալ ծառայքս քո ’ի տեղի հանգստեան սորա՝ աղաչեմք եւ խնդրեմք ’ի քէն, առաքեա՛ զՀոգիդ քո սուրբ ’ի վշտագնեալս սրտիւք, և բժշկեա՛ զվէրս հոգւոց և մարմնոց. զի դու ես, տէր Աստուած, որ հարկանես և բժշկես, և ոչ ոք է որ հանէ զմեզ ’ի ձեռաց քոց։ Այցելեա, Տէր, և բարերարեա ’ի վերայ մեր, ծագելով առ մեզ զառաւօտու զողորմութիւնս քո, դադարեցուցանել զսուգ լալոյ երեկոյին, առ ’ի ցնծութիւն առաւօտուն մեծի՝ յորժամ կոչես զընտրեալս քո ’ի մահուանէ ’ի կեանս յաւիտենից։ Ընկալ, Տէր, եւ դասաւորեա զծառայս քո ընդ սուրբս քո բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնին. զի քեզ վայելէ փառք իշխա-*

նութիւն եւ պատիւ . այժմ եւ միշտ և յաւի։

Խաղաղութիւն ամենեցուն։

Աստուծոյ երկիրպագեսցուք։

Գոհանամք զքէն, տէր Աստուած մեր, որ վասն ճշմարտութեան քոյ լուծեր 'ի հող զմահկանացու բնութիւնս մեր, զպատրեալս 'ի բանսարկու թշնամւոյն . որում ասացեր իսկ աստուածային բանիւ քով . եթէ հող էիր և 'ի հող դարձցիս . ըստ որում խոնարհեցան անձինք մեր, և յերկիր կցեցան մէջք մեր։ Այլ զի միւսանգամ կամեցար նորոգել և կեցուցանել զմեզ, դու ինքնին առաքեցար 'ի հայրական ծոցոյ . իջեր 'ի գերեզման և ընդ մեռեալս համարեցար, զի զմեզ նմանակիցս արասցես քեզ և հաղորդ աստուածութեան քոյ 'ի փող յետին,

յայնմ գիշերի՝ յորում գաս պսակել զաշխատեալքս քո, և հատուցանել արդար դատաստանաւ քով: Յայնմ աւուր գթա՛ ի հոգի հանգուցելոյս, եւ հանգո՛ ընդ սուրբս քո յարքայութեան քում: Եւ զմեզ արժանի՛ արա փառաւորել զքեզ ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյդ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ապա ասեն. Աստուած անեղ անժաման»: Երգ: (յ՚ԷՋ 11): Հոգւոյն հանգու»: Եւ օրհնեն զգերեզմանն. (որպէս էր եղեալ գոյ յառաջին աւուր չորեքն):

Զկնի ասեն. Հայր մեր որ յերկինս:



# ԵՐՐՈՐԴ ԱՒՈՒՐՆ

Երթան 'ի գերեզմանն, եւ 'ի գնալն ասեն ՅԱՄԲԻԾՍՆ, եւ զՅովհաննու ի ննջութեանն. (որպէս եւ յերկրորդ օրն)։ Ապա ասեն զհանգստեան Շարական, և զփառք 'ի բարձունս. և հող ընուն 'ի վերայ գերեզմանին։
Եւ ապա այս կանոն կատարի։

Սաղմոս, ճիթ.

*Ի խորոց կարդացի առ քեզ Տէր Տէր, լուր"։*
*Եղիցին ականջք քո 'ի լսել զձայն աղօթից"։*

*Ընթերցուած յԵսայեայ մարգարէէ։* ԿԵ. 16.

Այսպէս ասէ Տէր. Մոռասցին զնեղութիւնն առաջին, եւ ոչ եւս անկցի 'ի սիրտս նոցա։ Զի եղիցին երկինք նոր և երկիր նոր, և ոչ եւս յիշեսցեն զառաջինսն. և ոչ եւս անկցի 'ի սիրտս նոցա. այլ ուրախութիւն և ցնծութիւն գտցեն 'ի նմա, զոր ես հաստատեցից։ Եւ դարձցին՝ եւ եկեսցեն 'ի Սիովն ցնծութեամբ, և ուրախութիւն յաւիտենից 'ի վերայ գլխոց նոցա. զի 'ի վերայ գլխոց նոցա օրհնութիւն և ցնծութիւն, և ուրախութիւն հասցէ նոցա. մերժեցան ցաւք եւ տրտմութիւնք և հեծութիւնք։

Պօղոսի առաքելոյն 'ի Կողոսացւոց թղթոյն է ընթերցուածս ։ Գ․ 1 ։

Եթէ յարեայք ընդ Քրիստոսի, ապա զվերինն խնդրեցէք՝ ուր Քրիստոսն նստի ընդ աջմէ Աստուծոյ․ զվերինն խորհեցարուք, մի զայս որ յերկրի աստ է․ քանզի մեռայք, և կեանքն ձեր ծածկեալ են ընդ Քրիստոսի յԱստուած․ իսկ յորժամ Քրիստոս յայտնեսցի կեանքն ձեր, յայնժամ եւ դուք ընդ նմա յայտնեսջիք փառօք ։

Ալէլուիա․ Ձայնիւ իմով ես առ Տէր կարդացի"։

Ալէլուիա Օրթի ։

Խաղաղութիւն ամենեցուն ։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Յովհաննու ։ Ժէ․ 17։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ ։

Հայր, սուրբ արա զնոսա ճշմարտութեամբ քով, զի քո բանդ ճշմարտութիւն է ։ Որպէս զիս առաքեցեր յաշխարհ, և ես առաքեցի զնոսա յաշխարհ․ եւ 'ի վերայ նոցա ես սուրբ առնեմ զանձն իմ, զի եղիցին և նոքա սրբեալք ճշմարտութեամբ ։ Այլ ոչ վասն նոցա միայն աղաչեմ, այլ և վասն ամենայն հաւատացելոց բանիւն նոցա յիս․ զի ամենեքին մի իցեն,

որպէս դու Հայր յիս՝ և ես 'ի քեզ, զի և նոքա 'ի մեզ լիցին. զի և աշխարհ հաւատասցէ թէ դու առաքեցեր զիս։ Եւ ես զփառսն զոր ետուր ինձ՝ ետու նոցա, զի լիցին մի՝ որպէս և մեք մի եմք. ես 'ի նոսա, և դու յիս, զի եղիցին կատարեալք 'ի մի։ Եւ գիտասցէ աշխարհ՝ եթէ դու առաքեցեր զիս, և սիրեցի զնոսա որպէս դու զիս սիրեցեր։ Հայր, զորս ետուրն ինձ, կամիմ՝ զի ուր եսն եմ, և նոքա լիցին ընդ իս. զի տեսանիցեն զփառսն զիմ, զոր ետուրն ցիս. զի սիրեցեր զիս յառաջ քան զլինելն աշխարհի։

Քարոզ։

Վասն գտանելոյ մեզ զշնորհս և զողորմութիւն 'ի բարերար Տեառնէ մերմէ, զՏէր աղաչեսցուք։
Վասն փրկելոյ զմեզ 'ի զրպարտութենէ մարդկան և յորոգայթից սատանայի, զՏէր աղա։
Վասն ամենայն անձանց քրիստոնէից եւ տանց հաւատացելոց, զՏէր աղա։
Վասն որք 'ի լերինս յայրս և 'ի փապարս բնակեալ են սուրբ հարքն մեր, զՏէր աղա։
Վասն որք սաղմոսիւք եւ օրհնութեամբ կատարեն զամենայն ժամանակս կենաց իւրեանց, զՏէր աղա։
Վասն հոգւոյն հանգուցելոց։ Եւ եւս միաբան։ Զանձինս մեր և զմիմեանս։ Ողորմեաց մեզ Տէր։

Աղօթք։

Ամենազօր Տէր, որ իշխանդ ես կենաց և մահու, և մարդասիրապէս խոնարհեցար 'ի մահկանացու բնութիւնս մեր. մինչև 'ի գերեզման իջանելով զփորձ առեր անապական և աստուածային մարմնովդ զմերոյ բնութեանս առանց մեղաց։ Արդ՝ ընկալ ըզխոստովանող մարմինս որոշեալ 'ի հող ըստ դարձի մահկանացու բնութեանս, որ 'ի քէն ընկալաւ զդատավճիռ։ Եւ ողորմութեամբ քով շնորհեա՛ ծառայիս քո յարդար դատաստանիդ բարւոք պատասխանատրութեամբ կալ առաջի ահաւոր բեմիդ՝ և ընդունել զողորմութիւն ընդ սուրբս քո, և փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ Հոգւոյդ սրբոյ՝ այժմ և միշտ և յաւի։

Խաղաղութիւն ամենեցուն ։

Աստուծոյ երկիրպագեսցուք ։

Որ աղբիւրդ ես կենաց և պարգեւատու՝ որք ճշմարտապէս ճանաչեն զՀոգիդ սուրբ, որով կընքեցաւ ծառայս քո (այս անուն) քահանայ 'ի սուրբ աւազանին զգենլով զքո դրոշմ. և պաշտելով զհաւատ սուրբ քրիստոնէութեան՝ արժանի եղեւ քո առատապարգև շնորհիդ քահանայական կոչմանս այսորիկ. և 'ի կատարման իւրում յուղարկեցաք քո յուսովդ 'ի հանդերձեալ յաշխարհն ։ Աղաչեմք զքեզ բարերար և բազումողորմ Աստուած Հոգիդ սուրբ, մի թողուր զսա 'ի պահպանողական զօրութենէդ քումմէ արտաքս. այլ հանգիցէ 'ի պատրաստ բնակութիւնսդ՝ ուր զսուրբս քո ժողովես եւ հանգուցանես, եւ

*պահպանես յանդորրութեան։ Եւ յորժամ առաքիս 'ի սրբութենէդ քումմէ 'ի նորոգել զերեսս երկրի, և ստանաս զքո զընտրեալսն, խառնեա՛ զսա 'ի դասս ընտրելոց քոց. անցո՛ զպատուհասիւ, զերծո՛ 'ի դատապարտութենէ մեղաց. որպէս զի քեզ յանձն առնելով զհոգի սորա՝ հաւատացուք լսելի լինիլ ազօթից մերոց. զի դու ես կենդանարար և նորոգիչ հոգւոց մերոց. և քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։*

Ուսհ գործեալ''։ Երգ։ (յ՛Էջ 67)։ Հոգւոցն հանգու''։
Եւ ԽՆԿԷՆ ԶԳԵՐԵԶՄԱՆՆ և ասէն. Հայր մեր որ յերկինս։

# ՉՈՐՐՈՐԴ ԱՒՈՒՐՆ

Երթան 'ի գերեզմանն, և առեն զԱմբիծսն, և զՇարական Հանգստեան, և զՓառք 'ի բարձունս. և հող լնուն 'ի վերայ գերեզմանին. (որպէս և յանցեալ աւուրն)։

Ապա այս կանոն կատարի։

Սաղմոս կցորդ. ՃԽԲ։

*Հոգի քո սուրբ եւ բարի առաջնորդեսցէ ինձ յերկիր ուղիղ։*
*Տէր, լուր աղօթից իմոց. ունկն դիր խնդրուածայ իմոց ճշմարտութեամբ քով։*

Ընթերցուածս յԵսայեայ մարգարէէ։ ԾԱ. 9.

Զարթիր զարթիր, Երուսաղէմ, եւ զգեցիր զզօրութիւն բազկի քո. զարթիր իբրեւ յաւուրցն իսկզբանէ, իբրեւ յազգացն յաւիտենից։ Ո՞չ դու այն ես՝ որ տաշեցեր զլայնութիւնն, վանեցեր զվիշապն. ո՞չ դու այն ես՝ որ աւերեցեր զծովն՝ զբազմութիւն ջուրցն անդնդոց, որ արարեր զխորս ծովուն ճանապարհ անցից փրկելոցն եւ ապրելոց։ Զի 'ի Տեառնէ եղեցի դարձ, եւ եկեսցեն 'ի Սիոն ցնծութեամբ և ուրախութեամբ յաւիտենից. զի 'ի վերայ գլխոց նոցա օրհնութիւն,

եւ ուրախութիւն հասցէ նոցա . մերժեցան ցաւք և տրտմութիւնք և հեծութիւնք :

Պօղոսի առաքելոյն 'ի փիլիպպեցւոց թղթոյն է ընթերցուածս : Գ . 7 :

Այլ որ ինչ ինձ շահն էր , զայն վնաս համարիմ վասն Քրիստոսի . այլ եւ համարիմ իսկ զամենայն վնաս՝ վասն առաւել գիտութեանն Յիսուսի Քրիստոսի Տեառն իմոյ . վասն որոյ յամենայնէ զրկեցայ՝ և համարիմ կղկղանս , զի զՔրիստոս շահեցայց , եւ գտայց 'ի նմա , իբրեւ ոչ եթէ զիմ արդարութիւն՝ որ յօրինաց անտի է՝ ունիցիմ , այլ զհաւատոցն Քրիստոսի՝ որ յԱստուծոյ արդարութիւնն է . հաւատովք ճանաչել զնա , եւ զզօրութիւն յարութեան նորա , և զհաղորդութիւն չարչարանաց նորա , կերպարանակից լինիլ մահու նորա , թէ որպէս հասից 'ի մեռելոցն յարութիւն : Ուստի և փրկչին ակն ունիմք՝ տեառն Յիսուսի Քրիստոսի . որ նորոգեսցէ զմարմին խոնարհութեան մերոյ , կերպարանակից լինիլ մարմնոյ փառաց իւրոյ . ըստ զօրութեանն՝ առ 'ի կարող լինելոյ հնազանդեցուցանել ընդ իւրեւ զամենայն :

Ալէլուիա : Սաղմոս ՃԺԵ : Հաւատացի՝ զոր և խօսեցայ և ես խոնարհ եղէ յոյժ :

Ալէլուիա Օրթի։

Խաղաղութիւն ամենեցուն։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի
որ ըստ Յովհաննու։ Ը. 31։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ։

Եթէ դուք կայջիք 'ի բանի իմում, ճըշմարիտ աշակերտք իմ էք. և ծանիջիք զճշմարտութիւնն, եւ ճշմարտութիւնն ազատեսցէ զձեզ։ Պատասխանի ետուն նմա եւ ասեն. Զաւակ Աբրահամու եմք, և ոչ ումեք երբէք ծառայեցաք. զիա՞րդ ասես եթէ ազատք լինիջիք։ Պատասխանի ետ նոցա Յիսուս. Ամէն ամէն ասեմ ձեզ, թէ ամենայն որ առնէ զմեղս՝ ծառայ է մեղաց։ Եւ ծառայն ոչ յաւիտեան կայ 'ի տան, իսկ որդին 'ի յաւիտեան կայ. իսկ արդ եթէ որդին զձեզ ազատեցուսցէ, ճշմարիտ ազատք լինիջիք։

Քարոզ։

Վասն 'ի վերուստ խաղաղութեան եւ փրկութեան անձանց մերոց, զՏէր աղաչեսցուք։
Վասն լսելի լինելոյ տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց, զՏէր աղաչեսցուք։
Վասն քաւիչ և ներող լինելոյ Աստուծոյ 'ի վերայ մեղաց մերոց, զՏէր աղաչեսցուք։

Վասն թողլոյ մեզ զամենայն յանցանս մեր, ըղ-կամայ և զակամայ, զՏէր աղաչեսցուք։
Վասն զի մի՛ ընդ խոտանս դատնիցիմք յաւուրն պատասխանատուութեան, զՏէր աղաչեսցուք։
Վասն հոգւոյն։ Եւ եւս։ Զանձինս մեր։ Ողորմեաց։

Աղօթք։

Տէր Աստուած մեր, ամենայն իրօք արդարքն դասեալք ընդ հրեշտակս՝ զուգահաւասարեալ զքեզ օրհնեն, մինչ հեշտացուցանես զնոսա յաւէժ պայծառութեամբ քով, և իւրաքանչիւր ոք պայծառանայ վայելուչ փառօք Աստուածութեան քոյ՝ տեսանելով զինքն որպէս զլուսաւոր հրեշտակս․ այնուհետեւ փախըստական լինին ցաւք եւ տրտմութիւնք եւ հեծութիւնք պատրաստութեամբ լուսոյ և խնդութեամբ քով, Տէր։ Քանզի և Մովսէս ՚ի միումն վայրկենի տեսող եղեալ փառաց քոց, Տէր, ՚ի վերայ

երկրի մինչ էր 'ի մահկանացու մարմինս մեր, ոչ կարէին հայիլ յերեսս նորա. իսկ որք արժանի լինիցին հայիլ յերեսս քո, Աստուած, ո՞րպիսի արդեօք լինիցին: Ա՛րդ՝ ուրախութեամբ գոհանամք զքէն, Տէր, որ արժանի արարեր զմեզ մասին ժառանգութեան վիճակի սրբոցն 'ի լոյս, եւ փրկեցեր զմեզ յիշխանութենէ խաւարի, եւ փոխեցեր յարքայութիւն Որդւոյ քոյ սիրելւոյ Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի: Որում վայելէ փառք իշխանութիւն և պատիւ այժմ և

միշտ և յաւի:

Խաղաղութիւն ամենեցուն:

Աստուծոյ երկիրպագեսցուք:

Անկանիմ առաջի քոյ մարդասիրութեանդ, և աղաչեմք զքո գըթութիւնդ. հայեաց, Տէր, ողոր-

մութեամբ քով 'ի հոգի ննջեցելոյս այսորիկ: Բազմագութ Տէր, որ յոյսդ ես հաւատացելոց, ներեա՛ յանցանաց սորա և թո՛ղ սմա բարեխօսութեամբ ընտրելոց քոց, ներող և երկայնամիտ Տէր, քաղցրր և բազումողորմ Աստուած, 'ի գալստեան Որդւոյ քո՝ որ ճաշակեաց զմահ և էջ 'ի գերեզման, զի հանցէ զկապեալսն քաջութեամբ խւրով: Եւ այժմ, տէր Աստուած, գթա՛ 'ի հոգի հանգուցելոյս, եւ յիշեա՛ զսա յաւուրն այցելութեան, և դասաւորեա՛ ընդ սուրբս քո շնորհօք եւ մարդասիրութեամբ Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի. որում վայելէ փառք իշխանութիւն և պա:

Ճանապարհ մոլորելոց": Երգ: (յ'Էջ 54:) Հոգւոյն հան":
Եւ ջնջէն զգերեզմանն և ասէն. Հայր մեր որ յերկինս:

# ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱԻՈՒՐՆ

## ԿԱՐԳ

*Երթան 'ի գերեզմանն, և առեն ցԱմբիծսն, և զՇարական Հանգստեան, և զփառք 'ի բարձունս, և հող լնուն 'ի վերայ գերեզմանին. (որպէս և յանցեալ աւուրսն)։*

*Ապա այս կանոն կատարի։*

Սաղմոս, իթ։

*Ընդ երեկոյս հանգիցեն լալիք, առաւօտու եղիցի ուրախութիւն։*

*Բարձր առնեմ զքեզ, Տէր, զի ընկալար զիս, և ոչ ուրախ արարեր զթշնամին իմ յիս։*

*Ընթերցուած յԵսայեայ մարգարէէ։* Կ. 19։

*Այսպէս ասէ Տէր. Ո՛չ ևս եղիցի քեզ արեգակն 'ի լոյս տունջեան, և ո՛չ ծագումն լուսնի տացէ քեզ լոյս 'ի գիշերի. այլ եղիցի քեզ Տէր լոյս յաւիտենական, և փառք քո Աստուած։ Ո՛չ մտցէ քեզ արեգակն, և լուսին 'ի քէն մի պակասեսցէ. զի եղիցի քեզ Տէր լոյս յաւիտենական։*

Պօղոսի առաքելոյն ՚ի Հռովմայեցւոց Թղթոյն է ընթերցուածս : Ը. 10 :

Իսկ եթէ Քրիստոս ՚ի ձեզ է, ապա մարմին մեռեալ է վասն մեղաց. և հոգին կենդանի է վասն արդարութեան : Եթէ հոգի այնորիկ որ յարոյց զՅիսուս ՚ի մեռելոց՝ բնակեալ է ՚ի ձեզ, ապա և որ յարոյց զՔրիստոս ՚ի մեռելոց՝ կենդանացուսցէ զմահկանացու մարմինս ձեր բնակեալ ոգւովն իւրով ՚ի ձեզ : Այսուհետև, եղբարք, պարտապան եմք, ոչ մարմնով ըստ մարմնոյ կեալ. զի եթէ ըստ մարմնոյ կեցէք, մեռանելոց էք. իսկ եթէ հոգւով զգործս մարմնոյ սպանանիցէք, կեցջիք : Զի որ հոգւովն Աստուծոյ վարին՝ նոքա են որդիք Աստուծոյ :

Ալէլուիա. Օրհնեցէք զՏէր ամենայն ազինք, գովեցէք զնա ամենայն ժողովուրդք :

Ալէլուիա Օրթի :

Խաղաղութիւն ամենեցուն :

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Ղուկասու : ԻԱ. 34 :

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ :

Զգոյշ լերուք անձանց, գուցէ ծանրանայցեն սիրտք ձեր շուայտութեամբ և արբեցու-

թեամբ և հոգովք աշխարհականօք. և յանկարծակի հասանիցէ 'ի վերայ ձեր օրն այն. զի իբրև զորոգայթ հասանիցէ 'ի վերայ ամենեցուն որ բնակեալ են ընդ ամենայն երեսս երկրի ։ Արթուն կացէք այսուհետև, յամենայն ժամ աղօթս արարէք, զի արժանի լինիջիք զերծանել յայնմ ամենայնէ որ լինելոց է, և կալ առաջի որդւոյ մարդոյ ։ Եւ 'ի տուէ 'ի տաճարին ուսուցանէր, և զգիշերս ելեալ ագանէր 'ի լերինն՝ որ կոչէր ձիթենեաց ։ Եւ ամենայն ժողովուրդն կանխէր ընդ առաւօտս առ նա 'ի տաճարն՝ լսել 'ի նմանէ ։

Քարոզ։

Խնդրեսցուք հաւատով միաբանութեամբ 'ի Տեառնէ, զի ողորմութեան զշնորհն իւր արասցէ 'ի վերայ մեր Տէրն ամենակալ, կեցուսցէ և ողորմեսցի ։

Աղօթք։

Գոհանամք զքէն, Ճշմարիտ Աստուած, որ ծանուցար ազգի մարդկան՝ զխթալով 'ի ստեղծուածս անարատ ձեռաց քոց. առաքեցեր զՈրդին քո սիրելի, որ եկն և էջ

՚ի գերեզման. զդրունս դժոխոց խորտակեաց կենսաբեր յարութեամբն իւրով, և քաղցր ձայնիւ կոչեաց առ ինքն ասելով, եկա՛յք առ իս ամենայն աշխատեալք եւ բեռնաւորք, եւ ես հանգուցից զձեզ: Հանգո, տէր Աստուած, ըզնընջեցեալս զայս ՚ի ձեռն Միածնի քոյ, զհաւատացեալս ՚ի քեզ՝ զոր գնեաց պատուական արեամբն իւրով. եւ արժանաւորեա՛ յաւուր միւսանգամ գալստեանդ լսել զձայն երկնաւոր կոչմանդ որ ասէ. եկա՛յք օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէ՛ք զպատրաստեալ ձեզ զարքայութիւնն: Եւ զմեզ զժողովուրդս քո՝ որք եկեալ եմք աղաչել զքեզ, պահեա՛ ամենազօր աջովդ քով մինչեւ յօր կոչման քոյ: Զի զքեզ փառաւորեսցուք զճշմարիտդ Աստուած՝ հանդերձ

Որդւով եւ ամենասուրբ Հոգ-ւովդ. այժմ և միշտ և յաւի ։

Խաղաղութիւն ամենեցուն ։

Աստուծոյ երկրպագեսցուք ։

Յիշեա, Տէր, զհոգի քահանայիս այսորիկ առաջի սուրբ փառաց քոց. եւ եթէ մարդկօրէն ինչ յանցեալ իցէ սորա, բանիւ, կամ գործով, կամ մտածութեամբ, շնորհեա՛ յանցանաց սորա զթողութիւն. որ ոչ յումեքէ այլ գելուս զգթութիւն քո ։ Ընկալ զհոգի սորա ընդ սուրբս քո, եւ զմեզ արժանի՛ արա փառաւորել զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգիդ այժմ և միշտ և յաւի ։

Ժողովեալքս"։ Երգ ։ (Յ՚Էջ 34)։ Հոգւոյն հանգու"։
Եւ կնքէն զգերեզմանն և տանէն. Հայր մեր որ յերկինս ։

# ՎԵՑԵՐՈՐԴ ԱԽՈՒՐՆ

## ԿԱՐԳ

Երթան 'ի գերեզմանն, և առեն ցԱմբիծսն, և զՇարական Հանգստեան, և զփառք 'ի բարձունսն, և հող լնուն 'ի վերայ գերեզմանին, (որպէս և յանցեալ աւուրսն)։

Ապա այս կանոն կատարի։

Սաղմոս, ՃԺԴ. Կցորդ։

*Սիրեցի զի լուիցէ Տէր զձայն աղօթից իմոց. զի խոնարհեցոյց զունկն իւր առ իս, և ես յաւուրս իմ կարդացի առ նա։*

*Շրջեցան զինեւ երկունք մահու, եւ վիշտք դժոխոց գտին զիս։*

Ընթերցուած յԵսայեայ մարգարէէ։ ԻԵ. 9։

*Եւ ասասցեն յաւուր յայնմիկ. ահաւասիկ տէր Աստուած մեր յոր յուսացեալ էաք, և ապրեցուսցէ զմեզ. զի սա է Տէր, և սպասէաք սմա. և ցնծասցուք և ուրախ եղիցուք 'ի փրկութեան մերում։ Եւ տացէ մեզ հանգիստ Աստուած 'ի լերին սրբութեան իւրոյ, եւ մնացէ 'ի նա ժողովուրդ, որ պահէ զարդարութիւն և առնէ զճշմարտութիւն. վերակացու լիցի նոցա, և պահէ 'ի խաղաղութեան։ Եւ արդ մխիթարեցից զձեզ ասէ Տէր, յամենայն արտմութեանց ձերոց։*

Յակոբու առաքելոյն ՚ի կաթուղիկեայ թղթոյն է ընթերցուածս: Ե. 7.

Երկայնամիտ լերուք, եղբարք իմ, մինչեւ ՚ի գալուստն Տեառն. ահա մշակ երկայնամտեալ սպասէ պատուական պտղոյն երկրի, մինչեւ առցէ զկանուխ եւ զանագան: Երկայնամըտեցէք եւ դուք, հաստատեցէք զսիրտս ձեր. զի գալուստն Տեառն մերձեալ է: Մի՛ տրտմեցուցանէք զմիմեանս, եղբարք, զի մի՛ դատիցիք. ահաւասիկ դատաւորն առ դուրս կայ: Օրինակ առէք, եղբարք, չարչարանաց եւ երկայնմտութեան զմարգարէսն, որք խօսեցան յանուն Տեառն: Ահաւասիկ երանեմք համբերողաց. զհամբերութիւնն Յոբայ լուարուք՝ եւ զկատարումն Տեառն տեսէք. զի բազմագութ է Տէր եւ ողորմած:

Ալէլուիա. Բարձր առնեմ զքեզ, Տէր, զի ընկալար զիս եւ ոչ ուրախ արարեր զթշնամին իմ յիս:

Ալէլուիա Օրթի.

Խաղաղութիւն ամենեցուն.

Սրբոյ աւետարանին Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մատթէոսի: ԻԴ. 30:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ:

Եւ տեսցեն զորդի մարդոյ եկեալ՝ ի վերայ ամպոց երկնից զօրութեամբ եւ փառօք բազմօք:

Եւ առաքեսցէ զհրեշտակս իւր փողով մեծաւ, և ժողովեսցեն զընտրեալս նորա 'ի չորից հողմոց՝ 'ի ծագաց երկնից մինչև 'ի ծագս նոցա ։ Ի թզենւոյ անտի ուսարուք զառակն. զի յորժամ նորա ոստքն կակղասցին և տերևն ցցուիցի, գիտէք թէ մերձ է ամառն ։ Նոյնպէս և դուք՝ յորժամ տեսանիցէք զայս ամենայն, գիտասջիք թէ մերձ է 'ի դուրս ։ Ամէն ասեմ ձեզ՝ եթէ ոչ անցցէ ազգս այս, մինչև այս ամենայն եղիցի ։ Երկինք և երկիր անցցեն, և բանք իմ մի՛ անցցեն ։

Քարոզ ։

Վասն 'ի գիշերի և 'ի տունջեան և յամենայն ժամու խօսել մեզ զբան Տեառն, զՏէր աղաչեսցուք ։

Վասն չանկանելոյ մեզ 'ի փորձութիւն, որում ոչ կարեմք հանդուրժել, զՏէր աղա ։

Վասն անբիծ և անդատապարտ կալ մեզ առաջի ահեղ ատենին Քրիստոսի, զՏէր աղա ։

Վասն առաջնորդելոյ մեզ 'ի նաւահանգիստն կենաց անվախճանից, զՏէր աղա ։

Վասն արժանի լինելոյ մեզ վերին կոչմանն և երկնից արքայութեանն, զՏէր աղա ։

Վասն հոգւոյն հանգուցելոյ՝ որք ճշմարիտ և ։

Եւ ևս միաբան վասն ճշմարիտ և սուրբ հա ։

Զանձինս մեր և զմիմեանս տեառն Աստուծոյ ։

Ողորմեա՛ց մեզ տէր Աստուած մեր ըստ մեծի ։

Աղօթք ։

Փառաւորեմք զքեզ, փառաց Թագաւոր, յոյս եւ ակնկալութիւն ամենայն արարածոց 'ի քեզ յուսով յուսացաք ։ Որ փոխանակ ապականացու կենցաղոյս զանապական և զանվախճան կեանսդ շնորհեցեր, և փոխանակ սնոտի և տխրական կենացս պարգեւեցեր մեզ զվերինն Երուսաղէմ ։ Վասն որոյ աղաչեմք զքեզ, Տէր, թող զմեղս և քաւեա՛ զանօրէնութիւնս սորա, եւ արժանաւորեա՛ զսա հանգչել յանտրտում ուրախութեանդ, 'ի Քրիստոս Յիսուս 'ի տէր մեր. որում վայելէ փառք իշխանութիւն և պատ ։

Խաղաղութիւն ամենեցուն ։

Աստուծոյ երկիրպագեսցուք ։

Աղաչեմք զքեզ, ողորմած Աստուած, գթա՛ 'ի հոգի ննջեցելոյս

(այս անուն) քահանայիս, որ 'ի ձեռն կոչման քո փոխեցաւ յանցաւոր աշխատութենէս՝ հաւատացեալ 'ի ճշմարիտդ Աստուած, և ջնջեա՛ զձեռագիր անօրէնութեան սորա զոր յանցեալ իցէ առաջի քո. և գրեա՛ զանուն սորա 'ի դպրութիւն կենաց, զի դու ես կեանք և յարութիւն մեռելոց, և զհաւատացեալ ժողովուրդս ընդ հովանեաւ քաղցի քո պահեա, Քրիստոս Աստուած մեր: Եւ քեզ հանցուք զօրհնութիւն եւ զփառս ընդ Հօր եւ ընդ սուրբ Հոգւոյդ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աստուած անեղ": Երգ: (յ'էջ 11): Հոգւոյն հանգու":
Եւ ինքն պահպանեսցէ զմեզ և ամէն. Հայր մեր որ յերկինս:

# ԵՕԹՆԵՐՈՐԴ ԱԻՈՒՐՆ

## ԿԱՐԳ

Երթան 'ի գերեզմանն . և առեն ցԱմբիծսն . և զՇարական Համգստեան . և զփառք Դ քարոզոնն . և հող ընուն 'ի վերայ գերեզմանին . (որպէս և յանցեալ աւուրսն)։
Ապա այս կանոն կատարի ։

Սաղմոս . Հոգի քո սուրբ և բարի առաջնորդեսցէ ինձ 'ի յերկիր ուղիղ ։
Ցոյց ինձ ճանապարհ յոր և գնացից , զի առ քեզ , Տէր , համբարձի զանձն իմ ։

Ընթերցուած յԵսայեայ մարգարէէ ։ Կ . 21 ։

Եւ կատարեսցին աւուրք սգոյ քոյ . և ժողովուրդ քո ամենեւին արդար , և յաւիտեանս ժառանգեսցեն զերկիր , պահել զնորատունկ գործոց ձեռաց իւրեանց 'ի փառս ։ Ցակաւաւորն հազարաւոր եղիցի , եւ կրտսերն յազգ մեծ . զի ես Տէր ընդ ժամանակս ժամանակս ժողովեցից զնոսա ։ Հոգի Տեառն 'ի վերայ իմ , վասն որոյ եւ օծ զիս զիս . աւետարանել աղքատաց առաքեաց զիս , բժշկել զբեկեալս սրտիւք , քարոզել գերեաց զթողութիւն եւ կուրաց տեսանել , կոչել սամ Տեառն ընդունելի եւ օր հատուցման Աստուծոյ մերոյ ,

մխիթարել զամենայն սգաւորս, տալ սգաւո֊
րաց Սիովնի փառս. փոխանակ մոխրոյն՝ օծումն
ուրախութեան, և սգաւորացն հանդերձ փա֊
ռաց՝ փոխանակ ոգւոյն վհատութեան: Եւ
կոչեսցին նոքա ազգք արդարութեան՝ տունկ
Տեառն 'ի փառս:

Պետրոսի առաքելոյն 'ի կաթուղիկեայ երկրորդ
թղթոյն է ընթերցուածս: Ա. 3:

Որպէս ամենայն ինչ մեզ՝ իւրոյ աստուածե֊
ղէն զօրութեանն առ 'ի կեանս և աստուած֊
պաշտութիւն շնորհեալ, 'ի ձեռն գիտու֊
թեան այնորիկ որ կոչեաց զմեզ յիւր 'ի
փառսն եւ 'ի վայելչութիւն. որովք մեծա֊
մեծքն և պատուականն աւետիք պարգեւեալ
են մեզ. զի նոքիմբք աստուածեղէն բնու֊
թեանն լինիցիք հաղորդակիցք, փախուց֊
եալք 'ի ցանկութեանց աշխարհիս և յապա֊
կանութեանց: Եւ ամին այսմիկ զամենայն
փոյթ 'ի մէջ առեալ՝ ձերովքն հաւատովք
մատակարարեցէք զառաքինութիւնն, եւ ա֊
ռաքինութեամբն զգիտութիւն, եւ գիտու֊
թեամբն զժուժկալութիւն, եւ ժուժկալու֊
թեամբն զհամբերութիւն, եւ համբերու֊
թեամբն զաստուածպաշտութիւն, եւ աստ֊
ուածպաշտութեամբն զեղբայրսիրութիւն, և

*եղբայրսիրութեամբն զսէր ։ Զայսոսիկ ձեր յանձին կալեալ և ՚ի սոյն յաճախեալ, ոչ դատարկս եւ անպտուղս հաստատիցեն զձեզ ՚ի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի գիտութիւնն։*

*Ալէլուիա. Տէր, լո՛ւր աղօթից իմոց, ո՛ւնկն դիր խնդրուածաց իմոց ճշմարտութեամբ քով։*

*Ալէլուիա Օրթի ։*

*Խաղաղութիւն ամենեցուն ։*

Սրբոյ աւետարանին Յիսուսի Քրիստոսի որ ըստ Յովհաննու ։ Ա. 35 ։

*Մկրտիչ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ։*

*Ի վաղիւ անդր կայր Յովհաննէս, և յաշակերտաց անտի նորա երկու. եւ նայեցեալ ընդ Յիսուսի՝ զի գնայր, ասէ. Ահաւասիկ Քրիստոս Գառն Աստուծոյ։ Լուան ՚ի նմանէ երկու աշակերտքն՝ զի խօսէր, և գնացին զհետ Յիսուսի։ Իբրեւ դարձաւ Յիսուս, և ետես զնոսա՝ զի երթային զհետ նորա, ասէ ցնոսա. Զի՞նչ խնդրէք ։ Նոքա ասեն ցնա. Ռաբբի, որ թարգմանեալ կոչի՝ Վարդապետ, ո՞ւր են օթեվանք քո։ Ասէ ցնոսա. Եկայք և տեսէք։ Եկին և տեսին՝ ուր էին օթեվանք նորա. և առ նմա ագան այն օր, զի ժամ էր իբրեւ տասներորդ ։ Էր Անդրէաս՝ եղբայր Սիմովնի*

Վիմի՝ մի յերկուց անտի, որ լուանն 'ի Յովհաննէ և գնացին զկնի նորա ։

Քարոզ։

Վասն ուղղելոյ զգնացս մեր 'ի ճանապարհս խաղաղութեան, զՏէր աղաչեսցուք ։
Վասն ցրելոյ 'ի մէնջ զամենայն խորհուրդս չարին, զՏէր աղաչեսցուք ։
Վասն պարգևելոյ մեզ առողջ խորհուրդս և առաքինի վարս, զՏէր աղաչեսցուք ։
Վասն պահելոյ զմեզ ընդ հովանեաւ ամենազօր աջոյն իւրոյ, զՏէր աղաչեսցուք ։
Վասն խորտակելոյ զհակառակորդն վաղվաղակի ընդ ոտիւք մերովք, զՏէր աղաչեսցուք ։
Վասն հոգւոցն։ Եւ ևս։ Զանձինս մեր։ Ողորմեաց։

Աղօթք ։

Արարչագործ Աստուած, որ մարդասիրութեամբդ քո խոնարհեցար յերկնից, զկերպարանս ծառայի առեր, եղեր մարդ անճառ միաւորութեամբ վասն մերոյ փրկութեան, չարչարեցար, բևեռեցար 'ի խաչին, զմահ ճաշակեցեր, եդար 'ի գերեզմանի,

և յարուցեալ երեքօրեայ ազատեցեր զազգս մարդկան 'ի մահուանէ ։ Ծառայս քո, զոր ընտրեցեր 'ի քահանայութիւն, խըրատել 'ի հրահանգս աստուածպաշտութեան զփրկեալ քո ժողովուրդս. որ էառ զկարգ հրեշտակաց, և ծառայեաց եկեղեցւոյ քում սրբոյ՝ հանապազ զփառաբանութիւն մատուցանելով ամենասուրբ Երրորդութեանդ. արդ ըստ անսուտ բանի քոյ դարձաւ 'ի հող ուստի առաւ ։ Եւ արդ, Տէր բարերար, ընկալ զաղաչանս մեր ամենեցուն 'ի հաճոյս քո, և խառնեա՛ զհոգի սորա 'ի գունդս ամենայն մարտիրոսաց ։ Մի՛ ամաչեսցէ սա 'ի հրապարակախօս ատենի քոյ. զի դու միայն ես առանց մեղաց և քաւիչ մեղուցելոց ։ Եւ քեզ վայելէ փառք

իշխանութիւն և պատիւ այժմ
և միշտ և յաւիտեանս յաւիտե-
նից․ ամէն։

Խաղաղութիւն ամենեցուն։

Աստուծոյ երկիրպագեսցուք։

Բարերար Աստուած և ամենայն
բարեաց առաջնորդ, որ յօրինե-
ցեր մեզ ճանապարհ կենաց եւ-
արդարութեան․ զի դու իսկ գը-
նացեր մարմնով ընդ անձուկ ճա-
նապարհս, և նովաւ ջանացան սի-
րելիք քո նեղութեամբ մարմնոյ
մտանել 'ի հանգիստ քո սուրբ։
Որպէս ծառայս քո այս, որ ընտ-
րեաց բարի յօժարութեամբ հը-
րաժարիլ յաշխարհէ, և ոչ պա-
րապեցաւ 'ի յաւելորդ զբաղ-
մունս․ այլ խոնարհեցաւ ընդ
լծով ծառայութեան պատուի-
րանի քոյ, և տանջեցաւ 'ի ճգ-
նութիւնս համբերութեան պա-

հոց և ծարաւոյ, տքնութեան և աղօթից. եւ այժմ 'ի հրամանէ ակնարկութեան քո աւարտեցաւ 'ի մարմնի: Եւ մեք ժողովեալքս 'ի յուղարկումն եղբօրս մերոյ, լալով և արտասուօք հողով ըղ-հողս ծածկեմք, և աղօթիւք զհո-գի սորա յուղարկեմք 'ի ձեռն քա-հանայական շնորհիս. որով պա-ղատիմք առ քեզ, տէր Աստուած մեր, հայեաց 'ի բարձրութենէ քումմէ 'ի խոնարհ քո ժողովուրդս, և ընկա՛լ զաղաչանս մեր՝ զոր մա-տուցանեմք վասն վախճանի եղ-բօրս մերոյ: Մի՛ լիցի իշխանու-թիւն սատանայի և դիւաց նորա 'ի վերայ սորա, և մի՛ արտմեցու-ցէ զհոգի սորա հոգի չարու-թեան. այլ հոգի քո բարի առաջ-նորդեսցէ սմա յերկիր ուղիղ, և յուսով հանգիցէ 'ի դասս սրբոց

քոց և յերևելի փառս քո, Քրիստոս Աստուած փրկիչ մեր։ Տուր սմա համարձակութեամբ կալ առաջի աստուածութեանդ քոյ. անտե՛ս արա զյանցանս սորա, բարեգութ Տէր, զկամայ և զակամայ։ Մի՛ մտանէր 'ի դատաստան ընդ ծառայիս քոյ, զի ո՛չ արդարանայ առաջի քո ամենայն մսեղի. այլ ըստ մեծի ողորմութեանդ քոյ մարդասիրեա, և ընկալ 'ի յարկս սրբոց հարցն բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնին, և սրբոց քոց առաքելոց և մարգարէից և սրբոց մարտիրոսացն։ Զի դու ես տէր Աստուած բազումողորմ և մարդասէր, դատաւոր և փրկիչ և կարող յամենայնի. և քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

*Եթէ փոխանակն Հայրապետ կամ Առաջնորդ իցէ, զայս Աղօթս եւս ընթերցի։*

Հայր երկնաւոր փրկիչ եւ ողորմած, որ 'ի նմանութիւն քոյոյ պատկերիդ ստեղծեր զմարդն 'ի հողոյ, եւ կացուցեր զնա տէր 'ի վերայ ամենայն ստեղծուածոց քոց. որ 'ի մարդկանէ ընտրեցեր մարգարէս և առաքեալս, հովիւս և վարդապետս. որ և զծառայս (այս անուն) շնորհեցեր մեզ առաջնորդ և հովիւ հոգեւոր, և այժմ փոխեցեր 'ի մէնջ։ Շնորհեա՛ սմա լինիլ ընդ սուրբս քո հանապազ, եւ զժողովուրդս քո յանձն արա ուղղափառ հովուի, զի հովուեսցէ յերկիւղդ քո սուրբ։ Եւ զտեղի բնակութեան սորա պահեա՛ անդրդուելի յերեւելի և յաներեւոյթ թշնամեացն՝ մինչեւ յօր կրկնակի գալստեան քո։ Եւ զժո-

ժողովուրդս քո օրհնեմ և մխիթարեա. զի դու ես ճշմարիտ մխիթարութիւն յուսացելոցս 'ի քեզ: Եւ քեզ ընդ Որդւոյ և ընդ սրբոյ Հոգւոյդ վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Խաղաղութիւն ամենեցուն:

Աստուծոյ երկիրպագեսցուք:

Փառաւորեմք զանճառ բարերարութիւնդ քո սուրբ, Որդի Աստուծոյ, որ լուսաւորեցեր զհաւատացեալս անուանդ քում սրբոյ, եւ փրկեցեր 'ի խաւարային իշխանութենէ և 'ի գայթակղութենէ սատանայի: Գոհանամք ըզքէն, Տէր, և աղաչեմք ամենայն սրտիւք մերովք, հանգո՛ զծառայս քո (այս անուն) որ կատարեաց զկեանս իւր խոստովանութեամբ քո, և

գրեա՛ զանուն սորա ՚ի դպրութիւն կենաց, և ջնջեա՛ զձեռագիր յանցանաց սորա։ Եւ զոր ինչ ՚ի մեղանչական կենցաղումս մեղուցեալ իցէ սորա, բանիւ կամ գործով կամ մտածութեամբ, ներեա՛ և թող սմա քոյով բարերարութեամբդ։ Աղաչեմք զքեզ, մարդասէր Տէր, կարգեա՛ զհոգի սորա ընդ արդարս քո, և լուսաւորեալ պայծառացո ընդ բարեգործողսն և ընդ ճշմարիտ պատուիրանապահսն քո։ Եւ որպէս արժանի արարեր զսա ուխտի կրօնից, և վարուց ժուժկալութեան, եւ ժառանգութեան աստիճանի սուրբ առաջնորդացն, արա՛ արժանի և նոցին սուրբ պսակացն, և կատարեա՛ ՚ի բարի զխնդրուածս ծառայից քոց, եւ հանգո՛ զհոգի սորա ընդ սուրբս քո. զի ընդ նո-

սրն փառաւորեսցէ զքեզ ընդ Հօր և ընդ սուրբ Հոգւոյդ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Ուան գործեալ"։ Երգ։ (յ՛Էջ 67)։ (Եւ թէ կամիս Գանձ ասա)։ Հոգւոյն հանգուս"։ Եւ կնքէն զգերեզմանն և ասէն. Հայր մեր որ յերկինս։



# ՀՆԳԵՏԱՍԱՆ ԱԽՈՒՐՆ

## ԿԱՐԳ

Երթան 'ի գերեզմանն, և առեն զԱմբիծսն, և զՇարական Հանգստեան 'ի ձայնէն։ Եւ այս կանոն կատարի։

Սաղմոս, ՃԱ։

Տէր, լուր աղօթից իմոց, աղաղակ իմ առ քեզ եկեսցէ, մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն։ Յաւուր նեղութեան իմոյ խոնարհեցո առ իս զունկն քո, յորում աւուր կարդամ առ քեզ՝ վաղվաղակի լուր ինձ։

Ընթերցուած յԷսայեայ մարգարէէ։ ԾԷ. 16։

Այսպէս ասէ Տէր. Հոգի յինէն ելցէ, եւ զամենայն շունչ ես արարի։ Վասն մեղաց առ սակաւ մի տրտմեցուցի զնա, հարի զնա՝ և դարձուցի զերեսս իմ 'ի նմանէ, և տրտմեցաւ և գնաց թախծեալ առաջի իմ զճանապարհս իւր։ Զճանապարհս սորա տեսի, և բժշկեցի զնա. մխիթարեցի զնա, և ետու նմա մխիթարութիւն ճշմարտութեան. և սգաւորաց նորա հաստատեցի պտուղ, խաղաղութիւն 'ի վերայ խաղաղութեան՝ հեռաւորաց եւ մերձաւորաց, ասէ Տէր, եւ ես բժշկեցից զնոսա։

Պօղոսի առաքելոյն ՚ի Կորնթացւոց երկրորդ թղթոյն է ընթերցուածս։ Ա. 3։

Օրհնեալ է Աստուած և հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, հայր գթութեանց եւ Աստուած ամենայն մխիթարութեան, որ մխիթարէն զմեզ յամենայն նեղութիւնս մեր, առ ՚ի կարող լինելոյ մեզ մխիթարել զայնոսիկ՝ որ յամենայն նեղութիւնս իցեն, մխիթարութեամբն որով մեք մխիթարիմք յԱստուծոյ. զի որպէս առաւելան չարչարանքն Քրիստոսի ՚ի մեզ, նոյնպէս և ՚ի ձեռն Քրիստոսի առաւել լցի և մխիթարութիւնն մեր։ Զի եթէ նեղիմք, վասն ձերոյ մխիթարութեան եւ փրկութեան. և եթէ մխիթարիմք, վասն ձերոյ մխիթարութեան. որ յաջողեալն է համբերութեամբ նոյնին չարչարանաց, զոր և մեքն չարչարիմք. և յոյս մեր հաստատուն է վասն ձեր. քանզի գիտեմք՝ եթէ որպէս կցորդ էք չարչարանացն, նոյնպէս և մխիթարութեանն։ Քանզի ոչ կամիմ՝ ագէտ լինել ձեզ, եղբարք, վասն նեղութեան մերոյ եղելոյ յԱսիա. զի առաւել քան զկար մեր ծանրացաք, մինչեւ անյոյս լինելոյ մեզ և ՚ի կենաց։ Այլ անձամբ յանձինս զվճիռ մահու ընկալաք, զի մի յանձինս ապաստան իցեմք, այլ յԱստուած՝ որ

յարուցանէ զմեռեալս, որ յայնպիսի մահուանէ փրկեաց զմեզ՝ եւ փրկեսցէ. քանզի յուսացեալ եմք՝ եթէ տակաւին փրկեսցէ օգնականութեամբ աղօթից ձերոց վասն մեր։

Ալէլուիա. Ի խորոց կարդացի առ քեզ Տէր Տէր, լուր ձայնի իմում։

Ալէլուիա Օրթի։

Խաղաղութիւն ամենեցուն։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի
որ ըստ Յովհաննու։ Ի. 26։

Յետ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ յետ ութ աւուր դարձեալ էին 'ի ներքս աշակերտքն, և Թովմաս ընդ նոսա. գայ Յիսուս դրօքն փակելովք, և եկաց 'ի մէջ և ասէ. Ողջոյն ընդ ձեզ։ Ապա ասէ ցԹովմաս. Բեր զմատունս քո և արկ այսր, և տես զձեռս իմ. և բեր զձեռն քո՝ և մխեա 'ի կողս իմ. և մի լինիր անհաւատ՝ այլ հաւատացեալ։ Պատասխանի ետ Թովմաս և ասէ ցնա. Տէր իմ և Աստուած իմ։ Ասէ ցնա Յիսուս. Այդ զի տեսեր զիս եւ հաւատացեր, երանի որոց ոչ իցէ տեսեալ՝ և հաւատասցեն։

Քարոզ։

Վասն գտանելոյ մեզ զշնորհս և զողորմութիւն 'ի բարերար Տեառնէ մերմէ, զՏէր աղաչեսցուք։

Վասն փրկելոյ զմեզ 'ի զրպարտութենէ մարդկան և յորոգայթից սատանայի, զՏէր աղա։

Վասն ամենայն անձանց քրիստոնէից եւ տանց հաւատացելոց, զՏէր աղա։

Վասն որք 'ի լերինս յայրս և 'ի փապարս բնակեալ են սուրբ հարքն մեր, զՏէր աղա։

Վասն որք սաղմոսիւք եւ օրհնութեամբ կատարեն զամենայն ժամանակս կենաց իւրեանց, զՏէր աղա։

Վասն հոգւոյն հանգուցելոց։ Եւ եւս միաբան։ Զանձինս մեր և զմիմեանս։ Ողորմեաց մեզ Տէր։

Աղօթ․։

Յոյս արարածոց և փրկիչ աշխարհի Աստուած իմ Յիսուս, որ մարդասիրութեամբդ քո վասն մեր մեռելոցս մեղօք՝ զմահ յանձն առեր, և կենարար յարութեամբդ քո վերածեր զբնութիւնս մեր զստուերանստեալս 'ի խաւարի․ զդժոխս աւերեցեր, զսատանայ կապեցեր, և զամենեսեան յարուցեալ լուսաւորեցեր, եւ կեանս անապականս խոստացար սիրե-

լեաց .քոյ 'ի միւսանգամ գալըստեան .քոյ ։ Դու Տէր, եւ այժմ օրհնեա՛ զտեղի բնակութեան սորա. և զոսկերս սորա պահեսցես անապական եւ անփնաս ամենազօր աջով .քով սրբով, և հոգւոյ սորա առաջնորդեսցես յերկիր ուղիղ. զի ընդ սուրբս .քո փառաւորեսցէ զ.քեզ Քրիստոս ընդ Հօր և սուրբ Հոգւոյդ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Խաղաղութիւն ամենեցուն ։

Աստուծոյ երկիրպագեսցուք ։

Որ զանպատում եւ զանհաս եւ զանբաւ պարգեւս շնորհես ամենեցուն, որք ճշմարտապէս ճանաչեն զ.քեզ Տէր. որ յայտնի ծագես զլոյս .քո 'ի վերայ արդարոց և մեղաւորաց. որ կանգնես զգլորեալս, և բժշկես զբեկեալս սրտիւք ։ Տուր մեզ, Տէր, և այժմ

աղաչեմք զքեզ հոգի զգաստու-
թեան, հոգի մխիթարութեան.
և մխիթարեալ սփոփեա՛ զվշտա-
գնեալս սրտիւք: Զի միւսանգամ
հաստատուն յուսով քո առողջա-
ցեալք՝ կացցուք առաջի քո զը-
ւարթ և պայծառ 'ի միւսանգամ
գալստեան քում. զի ընդ սուրբս
քո փառաւորեսցուք զքեզ ընդ
Հօր և ընդ սուրբ Հոգւոյդ այժմ
և միշտ և յաւիտեանս յաւիտե-
նից. ամէն:

Աստուած անեղ անժամա՛": Երգ: (յ՛էջ 11): Հոգւոյն
հանգու՛": Եւ օրհնէն զգերեզմանն. և այլն.
Հայր մեր որ յերկինս:

# ՔԱՌԱՍՕՐԻ՛Ն ԱԽՈՒՐ՛Ն

## ԿԱՐԳ

Երթան 'ի գերեզմանն, և առեն ցԱմբիոնն, և ղՇարական Հանգստեան 'ի ձայնէն։

Ապա այս կանոն կատարի։

Սաղմոս, ՁԳ։

Երանի ամենեցուն որ բնակեալ են 'ի տան Տեառն, յաւիտեանս յաւիտենից օրհնեսցեն զնա։
Ո՛րպէս սիրելի են յարկք քո, Տէր զօրութեանց, ցանկայ և փափագէ անձն իմ 'ի գաւիթս քո։

Ընթերցուած յԵսայեայ մարգարէէ։ ԾԶ. 1։

Այսպէս ասէ Տէր. զգոյշ կացէք իրաւանց և գործեցէք զարդարութիւն, զի եկեալ հասեալ է փրկութիւն իմ, եւ յայտնելոց է ողորմութիւն իմ։ Երանի՛ առն որ առնիցէ զայն, և մարդոյ որ կացցէ 'ի նմին, և պահիցէ զշաբաթս իմ և ոչ պղծիցէ. և պահիցէ զձեռս իւր յառնելոյ զամենայն անօրէնութիւն։

Պօղոսի առաքելոյն 'ի Թեսաղոնիկեցւոց առաջին թղթոյն է ընթերցուածս։ Դ. 12։

Ոչ կամիմ, եղբարք, եթէ տգէտք լիցէք վասն ննջեցելոցն. զի մի՛ տրտմիցէք որպէս եւ

*տուքն որոց ոչ գոյ յոյս։ Եթէ հաւատամք՝ եթէ Յիսուս մեռաւ և յարեաւ, նոյնպէս և Աստուած զննջեցեալսն 'ի ձեռն Յիսուսի ածցէ ընդ նմա։ Բայց զայս ասեմք Տեառն բանիւ, թէ մեք որ կենդանիքս եմք մնացեալք՝ 'ի գալստեանն Տեառն ոչ ժամանեմք ննջեցելոցն. զի ինքն Տէր հրամանաւ՝ 'ի ձայն հրեշտակապետի և 'ի փող Աստուծոյ իջանէ յերկնից, եւ մեռեալք 'ի Քրիստոս յարիցեն յառաջագոյն։ Ապա և մեք որ կենդանիսն մնացեալ լիցիմք՝ նոքօք հանդերձ յափշտակեսցուք ամպովք ընդ առաջ Տեառն յօդս, եւ այնպէս յամենայն ժամ ընդ Տեառն լինիցիմք։ Այսուհետեւ մխիթարեցէք զմիմեանս բանիւքս այսոքիւք։*

Ալէլուիա. *Մերձեսցին խնդրուածք իմ առաջի քո Տէր, ըստ բանի քում իմաստուն արա զիս։*

Ալէլուիա Օրթի.

Խաղաղութիւն ամենեցուն։

Սրբոյ աւետարանին Յիսուսի Քրիստոսի
որ ըստ Մարկոսի։ Դ. 26.

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

*Եւ ասէր. Այսպէս է արքայութիւն Աստուծոյ, որպէս զի այր մի արկանիցէ սերմանիս յերկիր, և ննջիցէ և յառնիցէ զցայգ և զցերեկ. և*

սերմանիքն բուսանիցին և աճիցեն, և նա ոչ գիտէ՝ թէ երկիրն ինքնին բերէ զպտուղ. նախ զխոտն, եւ ապա զհասկն, եւ ապա ցորեան ատոք 'ի հասկին. այլ յորժամ տայցէ զպտուղն, վաղվաղակի առաքի մանգաղ, զի հասեալ են հունձք։ Եւ ասէր. Ո՞ւմ նմանեցուսցուք զարքայութիւնն Աստուծոյ, կամ որով առակաւ առակեսցուք զնա։ Որպէս հատն մանանխոյ՝ որ յորժամ սերմանիցի յերկրի, փոքրագոյն է քան զամենայն սերմանիս՝ որ են յերկրի, և յորժամ սերմանիցի, բուսանի և լինի մեծ քան զամենայն բանջար և արձակէ ոստս մեծամեծս, մինչեւ բաւական լինել ընդ հովանեաւ նորա թռչնոց երկնից բնակել։ Եւ այնպիսի առակօք խօսէր ընդ նոսա զբանն, որպէս կարող լինէին լսել. և առանց առակի ոչ ինչ խօսէր ընդ նոսա, բայց առանձինն աշակերտացն իւրոց մեկնէր զամենայն։

Քարոզ։

Վասն 'ի վերուստ խաղաղութեան եւ փրկութեան անձանց մերոց, զՏէր աղաչեսցուք։

Վասն լսելի լինելոյ տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց, զՏէր աղաչեսցուք։

Վասն քաւիչ և ներող լինելոյ Աստուծոյ 'ի վերայ մեղաց մերոց, զՏէր աղաչեսցուք։

Վասն թողլոյ մեզ զամենայն յանցանս մեր, ըզ-

կամայ և զակամայ, զՏէր աղաչեսցուք։
Վասն զի մի՛ ընդ խոտանս գտանիցիմք յաւուրն պատասխանատուութեան, զՏէր աղաչեսցուք։
Վասն հոգւոյն հանգուցելոյ։ Եւ եւս միաբան։
Զանձինս մեր և զմիմեանս։ Ողորմեա մեզ Տէր։

Աղօթք։

Որ արարիչդ ես ամենայն արարածոց, և ստեղծիչ ազգի մարդկան. որ կեանքդ ես մահկանացուաց, և շտեմարան և սփոփիչ հոգւոց մարդկան. որ սրբոց քոց Տէրդ ես, և յոյս և ակնկալութիւն ամենայն արարածոց. որ փրկելոց քոց առաջնորդ ես արդարութեամբ քով. որ լուսաւորեցեր զազգս որդւոց մարդկան, և փոխեցեր յիշխանութենէ խաւարի յարքայութիւն քո։ Դու Տէր, և այժմ ընկալ զխնդրուածս մեր, և հանգո՛ զհոգի սորա առ ամենայն սրբոց և սիրելեաց անուան քոյ։ Եւ զգերեզման ծա-

ուայխ քոյ կնքեալ պահեսցես․ զի միշտ պահեսցին նշխարք ոսկերաց սորա մինչեւ յօր վերջնում կրկին գալստեան քոյ։ Եւ հոգւոյ սորա առաջնորդեա՛ յերկիր ուղիղ բարեխօսութեամբ սրբոց քոց․ զի քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից․ ամէն։

Խաղաղութիւն ամենեցուն։

Աստուծոյ երկիրպագեսցուք։

Տէր Աստուած, որ Տէր ես հոգւոյ և ստեղծիչ մարմնոյ, հանգո՛ զհոգի ծառայիս քոյ ընդ սուրբս քո․ զի դու ես հանգուցիչ քոյոյ կամարարաց, և սփոփիչ և մխիթարիչ հոգւոյ հանգուցելոյ։ Ընկա՛լ և այժմ զխնդրուածս մեր, եւ կատարեա ՚ի բարի զաղօթս

*մեր. զի դու ես Տէր դատաւոր կենդանեաց և մեռելոց, և իշխան հոգւոց և մարմնոց։ Եւ քեզ վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։*

Ճանապարհ մոլորե"։ Երգ։ (յէջ 54)։ Հոգւոյն հանգու"։
Եւ նորէն զգերեզմանն և այլն. Հայր մեր որ յերկինս։



# ՏԱՐԵԼԻՑ

Երթան 'ի գերեզմանն, և առեն ցԱմբիծսն. և զՇարական Հանգստեան 'ի ձայնէն: Եւ այս կանոն կատարի:

Սաղմոս, ԻԹ:

Ընդ երեկոյս հանգիցեն լալիք, առաւօտու եղիցի ուրախութիւն:

Բարձր առնեմ զքեզ, Տէր, զի ընկալար զիս, և ոչ ուրախ արարեր զթշնամին իմ յիս:

Ընթերցուած յԵսայեայ մարգարէէ: ԾԲ. 7:

Իբրեւ զի գեղեցիկ են 'ի վերայ լերանց ոտք աւետարանչի համբաւոյն խաղաղութեան, իբրեւ աւետարանչի բարութեանց. զի լսելի արարից զփրկութիւն քո, ասել ցՍիոն թէ Թագաւորեսցէ քեզ Աստուած: Զի ձայն պահապանաց քոց բարձրացաւ, և 'ի նոյն բարբառ առհասարակ ցնծասցեն. զի դէմ յանդիման տեսցեն զժամանակ յորում ողորմեսցի Տէր Սիոնի: Լերինք գոչեսցեն աւերակօքն հանդերձ Երուսաղէմի զցնծութիւն, զի ողորմեցաւ նմա Տէր, և փրկեաց զԵրուսաղէմ: Եւ յայտնի արասցէ Տէր զբազուկ իւր սուրբ առաջի ամենայն ազգաց, և տեսցեն ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ:

Պօղոսի առաքելոյն յԻբրայեցւոց թղթոյն է
ընթերցուած ։ Զ. Թ։

Բայց հաստատեալ եմ վասն ձեր, սիրելիք, 'ի լաւ անդր եւ որ լինի է փրկութեամբ, զի թէպէտ և այսպէս խօսիմք, ոչ եթէ անիրաւ ինչ է Աստուած՝ մոռանալ զգործս ձեր և ըզ-սէրն զոր ցուցէք յանուն նորա. զի պաշտէիք զսուրբսն և պաշտէք. և մեք ըղձանամք, զի իւրաքանչիւր ոք 'ի ձէնջ զնոյն փոյթ ցուցանիցէ 'ի հաստատութիւն յուսոյն մինչեւ ցըվախճան. զի մի հեղգամիտք լինիցիք։ Նմանօղք եղերուք այնոցիկ որ հաւատովքն և երկայնմտութեամբ ժառանգեցին զաւետիսն։

Ալէլուիա. Աստուած, ողորմեա՛ մեզ և օրհնեա ըզ-մեզ. երեւեցո զերեսս քո 'ի մեզ և ողորմեա մեզ։

Ալէլուիա Օրթի։

Խաղաղութիւն ամենեցուն ։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի
որ ըստ Մատթէոսի ։ ԺԱ. 25 ։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ։

Յայնմ ժամանակի պատասխանի ետ Յիսուս և ասէ. Գոհանամ զքէն, Հայր, Տէր երկնի և երկրի. զի ծածկեցեր զայս յիմաստնոց և 'ի գիտնոց, և յայտնեցեր տղայոց. այո՛, Հայր, զի այսպէս հաճոյ եղեւ առաջի քո։ Ամենայն

ինչ տուաւ ինձ 'ի Հօրէ իմմէ։ Եւ ոչ ոք ճանաչէ զՈրդի՝ եթէ ոչ Հայր, և ո՛չ զՀայր ոք ճանաչէ՝ եթէ ոչ Որդի եւ ում Որդին կամիցի յայտնել։ Եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ. առէք զլուծ իմ 'ի ձեզ, և ուսարուք յինէն՝ զի հեզ եմ և խոնարհ սրտիւ, և գըտջիք հանգիստ անձանց ձերոց. զի լուծ իմ քաղցր է, և բեռն իմ փոքրոգի։

Քարոզ։

Վասն 'ի գիշերի և 'ի տուընջեան և յամենայն ժամու խօսել մեզ զբանՏեառն, զՏէր աղաչեսցուք։
Վասն չանկանելոյ մեզ 'ի փորձութիւն, որում ոչ կարեմք հանդուրժել, զՏէր աղա։
Վասն անբիծ և անդատապարտ կալ մեզ առաջի ահեղ ատենին Քրիստոսի, զՏէր աղա։
Վասն առաջնորդելոյ մեզ 'ի Նաւահանգիստ կենաց անվախճանից, զՏէր աղա։
Վասն արժանի լինելոյ մեզ վերին կոչմանն եւ երկնից արքայութեանն, զՏէր աղա։
Վասն հոգւոցն։ Եւ ևս։ Զանձինս մեր։ Ողորմեաց։

Աղօթ․։

Արարիչ յաւիտենից և ստեղծիչ ազգի մարդկան, որ խոնարհեցար յանճառ փառաց 'ի հողեղէն բը-

նութիւնս մեր, ազատել զմեզ յանիծիցն Ադամայ. եւ խոստացար անսուտ բանիւ քո 'ի միւսանգամ գալստեանդ նորոգել զապականեալս մեզօք։ Եւ այժմ, ողորմած Տէր, գթա 'ի հոգի ննջեցելոյս, որ այժմ 'ի ձեռն կոչման քոյ փոխեցաւ յանցաւոր կենցաղոյս 'ի քեզ հաւատացեալ, ճշմարիտդ Աստուած։ Եւ ջնջեա՛ զձեռագիր անօրէնութեան սորա, զոր յանցեալ է առաջի քո, և գրեա՛ զանուն սորա 'ի դպրութիւն կենաց։ Զի դու ես յարութիւն և կեանք ամենայն ննջեցելոց. եւ քեզ վայելէ փառք, իշխանութիւն և պա։

Խաղաղութիւն ամենեցուն։

Աստուծոյ երկիրպագեսցուք։

Յիշեա, Տէր, զհոգի ծառայիս քոյ (այս անուն) քահանայիս, զոր կարգե-

ցեր սպասաւոր եկեղեցւոյ քում սրբոյ, և քարոզ ժողովրդեան քում համառօտել զբանն ճշմարտութեան քոյ. և այժմ ըստ հրամանի քոյոյ կոչմանդ մերձեցաւ 'ի հող ուստի ստեղծեր զսա: Ընկալ և դասաւորեա՛ զհոգի սորա ընդ այլ ճշմարիտ վերակացուսն, որք հաճոյ եղեն քեզ. և ներեա՛ յանցանաց սորա բարեխօսութեամբ ընտրելոց քոց: Եւ զմեզ զամենեսին զհաստատեալս 'ի քեզ օրհնեա՛. զի արժանի լիցուք փառաւորել զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգիդ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ժողովեալքս": Երգ: (յ'Էջ 34): Հոգւոյն հանգու":
ԵՒ ԴՆԻՆ ԶԳԵՐԵԶՄԱՆՆ և ասեն. Հայր մեր որ յերկինս:

# ԱՄԲԻԾՔ
## Ա.

---

Սաղմոս, ՃԺԸ։

Ալէլուիա ալէլուիա։

Երանեալ են ամբիծք 'ի ճանապարհի, եւ ո՛յք
գնան յօրէնս Տեառն։
Երանի ո՛յք քննեն զվկայութիւնս նորա, բոլո-
րով սրտիւ իւրեանց խնդրեսցեն զնա։
Ոչ թէ որ գործեն զանօրէնութիւն, 'ի ճանա-
պարհս նորա գնասցեն։
Դու պատուիրեցեր զպատուիրանս քո, 'ի պահել
ինձ յոյժ։
Երանի թէ յաջողեալ էին ճանապարհք իմ, պա-
հել ինձ զարդարութիւնս քո։
Յայնժամ ես ոչ ամաչէի 'ի զգուշանալ ինձ 'ի
պատուիրանս քո։
Խոստովան եղէց քեզ, Տէր, յուղղութիւն սրտի
իմոյ, որպէս ուսայց զիրաւունս արդարու-
թեան քո։
Զիրաւունս քո պահեցի, մի՛ թողուր զիս մին-
չեւ իսպառ։
Ի՞ւ ուղղեսցէ երիտասարդ զճանապարհս իւր,
այլ 'ի պահել զբանս քո։

Բոլորով սրտիւ իմով խնդրեցի զքեզ, մի՛ մերժեր զիս 'ի պատուիրանաց քոց։

Ի սրտի իմում թագուցի զբանս քո, որպէս զի մի՛ մեղայց քեզ։

Օրհնեալ ես դու, Տէր, ուսո ինձ զարդարութիւնս քո։

Շրթամբք իմովք պատմեցից զամենայն իրաւունս բերանոյ քո։

Ի ճանապարհս վկայութեանց քոց զուարճացայ, որպէս յամենայն 'ի մեծութեան։

Ի պատուիրանս քո հոգացայ, եւ զգուշացայ 'ի ճանապարհս քո։

Զիրաւունս քո խօսեցայ, և ոչ մոռացայ զբանս քո։

Հատո ծառայի քում, զի կեցից և պահեցից զբանս քո։

Զարթո զաչս իմ, և նայեցայց 'ի սքանչելիս օրինաց քոց։

Պանդուխտ եմ ես յերկրի, մի՛ թագուցաներ յինէն զպատուիրանս քո։

Փափաքեաց անձն իմ, 'ի ցանկալ ինձ յիրաւունս քո յամենայն ժամ։

Սաստեցեր ամբարտաւանից, անիծեալ ոյք խոտորեցան 'ի պատուիրանաց քոց։

Ի բաց արա յինէն զնախատինս եւ զարհամարհանս, զի զվկայութիւնս քո խնդրեցի։

Քանզի նստան իշխանք և չարախօսէին զինէն, այլ ծառայ քո խորհէր յիրաւունս քո։

Զի վկայութիւնք քո խօսք իմ էին, և խորհուրդք

իմ արդարութիւն քո։

Մերձեցաւ անձն իմ 'ի հող, Տէր, կեցո զիս ըստ բանի քում։

Զճանապարհս իմ պատմեցի քեզ՝ և լուար ինձ, ուսո ինձ զարդարութիւնս քո։

Ի ճանապարհս արդարութեանց քոց իմաստուն արա զիս, և քննեցից զսքանչելիս քո։

Տքնեցաւ անձն իմ առ 'ի ձանձրանալ, հաստատեա զիս 'ի բանս քո։

Զճանապարհս մեղաց 'ի բաց արա յինէն, և յօրէնս քո ողորմեա ինձ։

Զճանապարհս ճշմարտութեան քո ընտրեցի, և զիրաւունս քո ես ոչ մոռացայ։

Մերձեցայ ես 'ի վկայութիւնս քո, Տէր, մի' յամօթ առներ զիս։

Ի ճանապարհս պատուիրանաց քոց ընթացայ, զի անդորր արարեր սրտի իմոյ։

Օրէնսդէտ արա զիս, Տէր, 'ի ճանապարհս իրաւանց քոց, և խնդրեցից զնա յամենայն ժամ։

Իմաստուն արա զիս, եւ քննեցից զօրէնս քո, և պահեցից զնա բոլորով սրտիւ իմով։

Առաջնորդեա ինձ 'ի շաւիղս պատուիրանաց քոց, զի ընդ նոսա հաճեցայ։

Խոնարհեցո զսիրտ իմ 'ի վկայութիւնս քո, եւ մի' յագահութիւն։

Դարձո զաչս իմ զի մի' տեսից զնանրութիւն, 'ի ճանապարհս քո կեցո զիս։

Հաստատեա ծառայի քում՝ զբան քո յերկիւղ քո։

Հան յինէն զնախատինս զոր եւ կարծեցի, զի դատաստանք քո քաղցր են ։

Ահա ցանկացայ պատուիրանաց քոց, յարդարութեան քում կեցո զիս ։

Եկեսցէ 'ի վերայ իմ ողորմութիւն քո, Տէր, և փրկութիւն քո ըստ բանի քում ։

Տաց պատասխանի որք նախատեն զիս բանիւք, զի ես 'ի բանս քո յուսացայ ։

Մի' 'ի բացեայ առներ 'ի բերանոյ իմմէ զբան ճշմարտութեան մինչեւ յոյժ, զի յիրաւունս քո յուսացայ ։

Պահեցի զօրէնս քո յամենայն ժամ, յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից ։

Գնայի ես յանդորրու, զի զպատուիրանս քո խնդրեցի ։

Խօսէի զվկայութիւնս քո առաջի թագաւորաց, և ոչ ամաչէի ։

Խորհէի 'ի պատուիրանս քո զոր սիրեցի ։

Համբարձի զձեռս իմ 'ի պատուիրանս քո զոր սիրեցի, և խորհէի յարդարութեան քում ։

Յիշեա զբան ծառայի քո, յոր և յուսացուցեր զիս ։

Սա մխիթարեաց զիս 'ի խոնարհութեան իմում, զի բան քո կեցոյց զիս ։

Ամբարտաւանք անիրաւեցան յիս յոյժ, այլ յօրինաց քոց ես ոչ խոտորեցայ ։

Յիշեցի զիրաւունս քո յաւիտենից, Տէր, և մխիթարեցայ ։

Տրտմութիւն կալաւ զիս 'ի մեղաւորաց, և որք

Թողին զօրէնս քո։
Գովելի են ինձ իրաւունք քո, 'ի տեղւոջ պան-
դըխտութեան իմոյ։
Յիշեցի 'ի գիշերի զանուն քո, Տէր, և պահեցի
զօրէնս քո։
Սա եղեւ ինձ ճանապարհ 'ի կեանս, զի զարդա-
րութիւնս քո խնդրեցի։
Փառք Հօր և Որդւոյ և։ Այժմ և միշտ և։

## Բ.

Ալէլուիա ալէլուիա։

Բաժին իմ ես դու, Տէր, ասացի պահել ինձ
զօրէնս քո։
Աղաչեցի զերեսս քո բոլորով սրտիւ իմով, ողոր-
մեա ինձ ըստ բանի քում։
Խորհեցայ 'ի ճանապարհս իմ, և դարձուցի զոտս
իմ 'ի վկայութիւնս քո։
Պատրաստեցայ եւ ոչ խռովեցայ, զի պահեցի
զպատուիրանս քո։
Տոռունք մեղաց պատեցան զինեւ, այլ զօրէնս
քո ես ոչ մոռացայ։
Ի մէջ գիշերի յառնէի խոստովան լինիլ առ քեզ,
վասն իրաւանց և արդարութեան քո։
Հաղորդ էի ես ամենայն երկիւղածաց քոց, որոց

պահեալ է զպատուիրանս քո։

Ողորմութեամբ Տեառն լի եղեւ երկիր, զարդարութիւնս քո ուսո ինձ։

Քաղցրութիւն արարեր ընդ ծառայի քում, Տէր, ըստ բանի քում։

Քաղցրութիւն զխրատ եւ զգիտութիւն ուսո ինձ, զի 'ի պատուիրանս քո ես հաւատացի։

Մինչչեւ խոնարհեալ էի ես մեղայ, վասն այսորիկ զբանս քո պահեցի յոյժ։

Քաղցր ես դու, Տէր, և քաղցրութեամբ քով ուսո ինձ զարդարութիւնս քո։

Բազմացան յիս անիրաւութիւնք ամբարտաւանից, այլ ես բոլորով սրտիւ իմով քննեցի զպատուիրանս քո։

Մածան որպէս կաթն սիրտք նոցա, այլ ես զօրէնս քո խօսեցայ։

Բարի է ինձ, զի խոնարհ արարեր զիս, որպէս ուսայց զարդարութիւնս քո։

Բարի են ինձ՝ օրէնք բերանոյ քո, քան զհազարս ոսկւոյ և արծաթոյ։

Ձեռք քո արարին եւ ստեղծին զիս, իմաստուն արա զիս՝ և ուսայց զպատուիրանս քո։

Երկիւղածք քո տեսցեն զիս և ուրախ եղիցին, զի ես 'ի բանս քո յուսացայ։

Ծանեայ, Տէր, զի արդարութեամբ են դատաստանք քո· յիրաւի խոնարհեցուցեր զիս։

Եղիցի ողորմութիւն քո 'ի մխիթարել զիս, ըստ բանի քում զծառայս քո։

Եկեսցեն յիս գթութիւնք քո եւ կեցից, զի օրէնք քո խօսք իմ էին ։

Ամաչեսցեն ամբարտաւանք որ 'ի տարապարտուց անիրաւեցան յիս, այլ ես հոգացայց 'ի պատուիրանս քո ։

Խրատեսցեն զիս երկիւղածք քո, և ոյք ճանաչեն զվկայութիւնս քո ։

Եղիցի սիրտ իմ անբիծ յարդարութեան քում, զի մի՛ ամաչեցից ։

Կարօտացաւ անձն իմ 'ի փրկութիւնս քո, զի ես 'ի բանս քո յուսացայ ։

Սպասեցին աչք իմ բանի քում, ասացի՝ ե՞րբ մխիթարեսցէ զիս ։

Եղէ ես որպէս տիկ 'ի պարզի, զի զարդարութիւնս քո ես ոչ մոռացայ ։

Քանի՞ ինչ են աւուրք ծառայի քո, ե՞րբ արասցես ինձ իրաւունս 'ի հալածչաց իմոց ։

Պատմեցին ինձ անօրէնք զխորհուրդս, այլ ոչ որպէս զօրէնս քո ։

Ամենայն պատուիրանք քո ճշմարիտ են, 'ի նանիր հալածեցին զիս, օգնեա ինձ ։

Փոքր մի եւս և կորուսանէին զիս յերկրի, այլ ես ոչ թողի զպատուիրանս քո ։

Ըստ ողորմութեան քում կեցո զիս, և պահեցից զվկայութիւնս բերանոյ քոյ ։

Յաւիտեան, Տէր, բան քո կայ յերկինս, ազգէ մինչեւ յազգ է ճշմարտութիւն քո ։

Հաստատեցեր զերկիր, եւ կայ ։

Հրամանի քում մնայ տիւ, զի ամենայն ծառայք քո են։

Եթէ ոչ օրէնք քո խօսք իմ էին, կանխաւ ես արդեօք կորուսեալ էի 'ի խոնարհութեան իմում։

Յաւիտեան ոչ մոռացայ զարդարութիւնս քո, զի նոքօք կեցուցեր զիս։

Քո եմ ես և կեցո զիս, զի զարդարութիւնս քո խնդրեցի։

Ինձ սպասեցին մեղաւորք 'ի կորուսանել, զի զվկայութիւնս քո ես 'ի միտ առի։

Յամենայն կատարածի տեսի զվախճան, յոյժ անդորր էին ինձ պատուիրանք քո։

Որպէս սիրեցի զօրէնս քո, զօրհանապազ խօսք իմ էին։

Քան զթշնամիս իմ իմաստուն արարեր զիս 'ի պատուիրանս քո, զի յաւիտեան իմ էին։

Քան զամենայն ուսուցիչս իմ իմաստուն եղէ, զի վկայութիւնք քո խօսք իմ էին։

Քան զծերս իմաստուն եղէ, զի զպատուիրանս քո քննեցի։

Յամենայն ճանապարհաց չարաց արգելի զոտս իմ, որպէս զի պահեցից զբանս քո։

Յիրաւանց քոց ես ոչ խոտորեցայ, զի դու օրէնսդէտ արարեր զիս։

Ո՛րպէս զի քաղցր են 'ի քիմս իմ բանք քո՝ քան զմեղր բերանոյ իմոյ։

Ի պատուիրանաց քոց իմացեալ՝ ատեցի զամենայն ճանապարհս չարաց, զի դու օրէնսդէտ

արարեր զիս։

Ճրագ է բան քո ոտից իմոց, եւ լոյս տայ շաւղաց իմոց։

Երդուայ և հաստատեցի, զի պահեցից զամենայն իրաւունս արդարութեան քո։

Խոնարհ եղէ մինչեւ յոյժ, Տէր, կեցո զիս ըստ բանի քում։

Ընդ կամս բերանոյ իմոյ հաճեա, Տէր, և զիրաւունս քո ուսո ինձ։

Անձն իմ 'ի ձեռս քո յամենայն ժամ, և զօրէնս քո ես ոչ մոռացայ։

Եդին ինձ մեղաւորք որոգայթ, 'ի պատուիրանաց քոց ես ոչ մոլորեցայ։

Ժառանգեցի զվկայութիւնս քո յաւիտեան, զի ցնծութիւն է սրտի իմոյ։

Խոնարհեցուցի զսիրտ իմ առնել զարդարութիւնս քո յաւիտեան, վասն հատուցման։

Զանօրէնս ատեցի, եւ զօրէնս քո սիրեցի։

Օգնական և փրկիչ իմ ես դու, և ես 'ի բանս քո յուսացայ։

Ի բաց եղերուք յինէն, չարք, և քննեցից զպատուիրանս Աստուծոյ իմոյ։

Օգնեա ինձ ըստ բանի քում և կեցո զիս, և մի՛ յամօթ առներ զիս 'ի յուսոյ իմմէ։

Օգնեա ինձ և ապրեցո զիս, և խորհեցայց յիրաւունս քո յամենայն ժամ։

Անարգեցեր զամենեսեան որ ապստամբ եղեն յարդարութեանց քոց, զի անիրաւութեամբ

էին խորհուրդք նոցա։
Ցանցաւորս համարեցայ զամենայն մեղաւորս երկրի, վասն այսորիկ սիրեցի զպատուիրանս քո։
Բեւեռեա ընդ երկիւղ քո զմարմին իմ, զի 'ի դատաստանաց քոց երկեայց յոյժ։
Փառք Հօր և Որդւոյ և։ Այժմ և միշտ և։

## Գ.

Ալէլուիա ալէլուիա։

Արարի իրաւունս և արդարութիւն, մի' մատներ զիս 'ի ձեռս նեղչաց իմոց։
Ընկալ զծառայս քո 'ի բարի, զի մի' ամբարտաւանք զրկեսցեն զիս։
Սպասեցին աչք իմ փրկութեան քում, Տէր, և բանից արդարութեան քո։
Արա ընդ ծառայի քում ըստ ողորմութեան քում, զարդարութիւնս քո ուսո ինձ։
Ծառայ քո եմ ես, իմաստուն արա զիս, և ծանեայց զվկայութիւնս քո։
Ժամ է պաշտել զՏէր, խափանեցին զօրէնս քո։
Վասն այսորիկ սիրեցի զպատուիրանս քո, քան զամենայն ոսկի եւ տպազիոն։
Ամենայն պատուիրանք քո աջողեցան ինձ, զի ատեցի ես զճանապարհս չարաց։

*Սքանչելի են վկայութիւնք քո, վասն այսորիկ սիրեաց զնոսա անձն իմ։*

*Յայտնութիւն բանից քոց լուսաւոր եւ իմաստուն առնէ զտղայս։*

*Զբերան իմ բացի եւ առի զհոգի, 'ի պատուիրանս քո փափագեաց անձն իմ։*

*Նայեա առ իս և ողորմեա ինձ, ըստ իրաւունս սիրողաց անուան քում։*

*Զճանապարհս իմ ուղիղ արա ինձ ըստ բանի քում, և մի' տիրեսցեն ինձ ամենայն մեղք։*

*Փրկեա զիս 'ի զրպարտութենէ մարդկան, եւ պահեցից զպատուիրանս քո։*

*Երեւեցո զերեսս քո 'ի ծառայս քո, և ուսո ինձ զարդարութիւնս քո։*

*Վտակք ջուրց իջին յաչաց իմոց, զի ոչ պահեցին զօրէնս քո։*

*Արդար ես դու, Տէր, և ուղիղ են դատաստանք քո։*

*Պատուիրեցեր զարդարութիւն վկայութեանց քոց, և ճշմարիտ են յոյժ։*

*Մաշեաց զիս նախանձ քո, զի մոռացան զբանս քո թշնամիք իմ։*

*Ընտրեալ են բանք քո յոյժ, և ծառայ քո սիրեաց զսա։*

*Մանուկ եմ ես և արհամարհեալ, և զարդարութիւնս քո ես ոչ մոռացայ։*

*Արդարութիւն քո արդարութիւն յաւիտենից, և օրէնք քո ճշմարիտ են։*

Նեղութիւնք և վիշտք գտին զիս, և պատուիրանք քո խօսք իմ էին։

Արդարութեամբ են վկայութիւնք քո յաւիտեան, իմաստուն արա և կեցո զիս։

Կարդացի առ քեզ բոլորով սրտիւ իմով, լուր ինձ, Տէր, զի զարդարութիւնս քո խնդրեցի։

Աղաղակեցի առ քեզ և փրկեա զիս, և պահեցից զվկայութիւնս քո։

Կանխեցի տարաժամու՝ աղաղակեցի, եւ ես 'ի բանս քո յուսացայ։

Կանխեցին աչք իմ առաւօտուց 'ի խօսել ինձ զբանս քո։

Զայնի իմում լուր, Տէր, ըստ ողորմութեան քում, Տէր, յիրաւունս քո կեցո զիս։

Մերձեցուցին յիս հալածիչք իմ զանօրէնութիւն, զի յօրինաց քոց հեռի եղեն։

Մերձ ես դու, Տէր, և ամենայն պատուիրանք քո ճշմարիտ են։

Իսկզբանէ ծանեայ 'ի վկայութեանց քոց, զի յաւիտեան հաստատեցեր զնոսա։

Տես զխոնարհութիւն իմ և փրկեա զիս, զի զօրէնս քո ես ոչ մոռացայ։

Դատեա զդատաստան իմ և փրկեա զիս, և ըստ բանի քում կեցո զիս։

Հեռի է 'ի մեղաւորաց փրկութիւն, զի զիրաւունս քո ոչ պահեցին։

Գթութիւնք քո բազում են, Տէր, և ըստ իրաւանց քոց կեցո զիս։

Բազում են որ հալածեն և նեղեն զիս, 'ի վկայութեանց քոց ես ոչ խոտորեցայ։

Հայէի յանագորոյնս և մաշէի, զի զպատուիրանս քո ոչ պահեցին։

Տես զի զպատուիրանս քո սիրեցի, Տէր, ողորմութեամբ քո կեցո զիս։

Սկիզբն բանից քոց ճշմարտութիւն է, յաւիտեան են ամենայն իրաւունք արդարութեան քո։

Իշխանք հալածեցին զիս 'ի նանիր, և 'ի բանից քոց երկեաւ սիրտ իմ։

Ցնծացայ ես 'ի բանս քո, որպէս այն որ գտանէ աւար բազում։

Զմեղս ատեցի և անարգեցի, և զօրէնս քո սիրեցի։

Եօթն անգամ յաւուր օրհնեցից զքեզ, վասն իրաւանց և արդարութեան քո։

Խաղաղութիւն բազում է այնոցիկ որ սիրեն զօրէնս քո, և ոչ գոյ 'ի նոսա գայթակղութիւն։

Սպասեցի փրկութեան քում, Տէր, և զպատուիրանս քո սիրեցի։

Պահեաց անձն իմ զվկայութիւնս քո, և սիրեաց զնոսա յոյժ։

Պահեցի զպատուիրանս եւ զվկայութիւնս քո, զի ամենայն ճանապարհք իմ առաջի քո են։

Մերձեսցին խնդրուածք իմ առաջի քո, Տէր, ըստ բանի քում իմաստուն արա զիս։

Մտցեն աղօթք իմ առաջի քո, Տէր, և բանիւ քով փրկեա զիս։

Բղխեսցեն շրթունք իմ զօրհնութիւնս քո, յոր-

ժամ ուսուսցես ինձ զարդարութիւնս քո ։
Խօսեսցի լեզու իմ զբանս քո , զի ամենայն պա-
տուիրանք քո արդարութեամբ են ։
Եղիցի ձեռն քո 'ի կեցուցանել զիս , զի զպա-
տուիրանս քո ընտրեցի ։
Ցանկացայ փրկութեան քում, Տէր , և օրէնք քո
խօսք իմ էին ։
Կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զքեզ , և իրաւունք
քո օգնեսցեն ինձ ։
Մոլորեցայ ես որպէս զոչխար կորուսեալ, խըն-
դրեա զծառայս քո , զի զպատուիրանս քո ես
ոչ մոռացայ ։

Փառք Հօր և Որդւոյ և ։ Այժմ և միշտ և ։



ՀԱՅԿ. ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ